II. Հաշվետու եռամսյակում կատարված տնտեսական գործառնությունները.

N	Տնտեսական գործառնությունների անվանումը	Գումարը, դրամ
1	2	3
1.	Պահեստ են մուտքագրվել նյութեր. ա) 4 տ. պողպատյա ժապավեն, ստացված «Սիբիրմեդ» կազմակերպությունից բ) 3 տ. ձուլված թուջ, ստացված «Մետալուրգ» կազմակերպությունից Ընդամենը	20 000 12 000 32 000
2.	Պահեստից նյութերը բաց են թողնվել արտադրություն. ա) 2,5 տ. ձուլված թուջ բ) 4,5տ. պողպատյա ժապավեն գ) 1,9 տ. այլ նյութեր Ընդամենը	10 000 22 500 3 800 36 300

3	Փոխանցվել է հաշվարկային հաշվից մատակարարների պարտքի մարման դիմաց.	
	ա) «Սիբիրմեդ» ՓԲԸ-ին	40 000
	բ) «Մետալուրգ» ԲԲԸ-ին	60 000
	Ընդամենը	100 000
4.	Պահեստ են մուտքագրվել նյութեր.	
	ա) 2տ. պողպատյա ժապավեն «Սիբիրմեդ» ՓԲԸ -ից	10 000
	բ) 4 տ. ձուլված թուջ «Մետալուրգ» ԲԲԸ-ից	16 000
	Ընդամենը	26 000
5	Պահեստից նյութերը բաց են թողնվել արտադրություն.	
	ա) 1,5 տ. պողպատյա ժապավեն	7 500
	բ) 4 տ. այլ նյութեր	8 000
	Ընդամենը	15 500
6	Հաշվարկվել է աշխատավարձ հիմնական արտադրության բանվորներին	300 000
7	Կատարվել են հատկացումներ սոցապին հիմնական	
1	2	3
	արտադրության բանվորների համար	8 000
8	Պահեստ է մուտքագրվել հիմնական արտադրությունում թողարկված պատրաստի արտադրանքը	75 000

ԽՆԴԻՐ 2.20

Ստորև բերված տվյալների հիման վրա

- բացել սինթետիկ և անալիտիկ հաշիվները և գրանցել սկզբնական մնացորդները,
- ձևակերպել և այդ հաշիվներում գրանցել տնտեսական գործառնությունները,
- սինթետիկ և անալիտիկ հաշիվներում որոշել շրջանառությունները և վերջնական մնացորդները՝
- կազմել սինթետիկ և անալիտիկ հաշիվների շրջանառության տեղեկագրերը,
- կազմել հաշվապահական հաշվեկշիռ հաշվետու ժամանակաշրջանի վերջի դրությամբ.

Տվյալներ I. «Անահիտ» կարի ֆաբրիկայի հաշվապահական հաշվեկշիռը 200Xթ դեկտեմբերի 31-ի դրությամբ.

ԱԿՏԻՎ	Գումարը, հազ. դրամ
I. Ոչ ընթացիկ ակտիվներ	
Հիմնական միջոցներ	360 000
Ընդամենը ոչ ընթացիկ ակտիվներ	360 000
II. Ընթացիկ ակտիվներ	
Նյութեր	42 000
Անավարտ արտադրություն	4 000
Արտադրանք	29 800
Դրամական միջոցներ և դրանց համարժեքներ	154 200
Ընդամենը ընթացիկ ակտիվներ	230 000
Հ Ա Շ Վ Ե Կ Շ Ի Ռ	590 000

ՊԱՍԻՎ	Գումարը, հազ. դրամ
III. Սեփական կապիտալ	
Կանոնադրական կապիտալ	237 000
Կուտակված շահույթ	64 000
Ընդամենը սեփական կապիտալ	301 000
IV. Ոչ ընթացիկ պարտավորություններ	
Երկարաժամկետ բանկային վարկեր	250 000
Ընդամենը ոչ ընթացիկ պարտավորություններ	250 000
V. Ընթացիկ պարտավորություններ	
Կրեդիտորական պարտքեր գնումների գծով	39 000
Ընդամենը ընթացիկ պարտավորություններ	39 000
Հ Ա Շ Վ Ե Կ Շ Ի Ռ	590 000

Դրամական միջոցներ հոդվածի վերծանումը՝ դրամարկը 3200 դրամ,
հաշվարկային հաշիվ 151 000 դրամ:

II. «Նյութեր» սինթետիկ հաշվի մնացորդի վերծանումը 200Xթ. դեկտեմբերի 31-ի դրությամբ

Նյութերի անվանումը	Չափի միավորը	Գինը, դրամ	Քանակը	Գումարը, դրամ
1	2	3	4	5
Դրապ	մետր	3000	25	75 000
Մետաքս	մետր	1500	40	60 000
Կիսաբրդյա	մետր	1750	60	105 000
Տրիկոտաժ	մետր	800	50	40 000
Բրդյա	մետր	1400	100	140 000
Ընդամենը	մետր	X	X	420 000

III. «Արտադրանք» սինթետիկ հաշվի մնացորդի վերծանումը 200Xթ. դեկտեմբերի 31-ի դրությամբ.

Արտադրանքի անվանումը	Չափի միավորը	Գինը, դրամ	Քանակը	Գումարը, դրամ
1	2	3	4	5
Վերարկու (կանացի)	հատ	40 000	3	120 000
Կոստյում (կանացի)	հատ	20 000	5	100 000
Շրջագգեստ	հատ	13 000	6	78 000
Ընդամենը		X	X	298 000

IV.«Կրեդիտորական պարտք գնումների գծով» սինթետիկ հաշվի մնացորդի վերծանումը 200Xթ. դեկտեմբերի 31-ի դրությամբ.

Մատակարարի անվանումը	Գումարը, դրամ
«Սետաքս» ՓԲԸ	260 000
«Մուշ» ՍՊԸ	130 000
Ընդամենը	390 000

V.«Անահիտ» կարի ֆաբրիկայի հաշվետու տարվա է եռամսյակում տեղի ունեցած տնտեսական գործառնությունները.

N	Տնտեսական գործառնությունների անվանումը	Գումարը, դրամ
1	2	3
1	Ստացվել և պահեստ են մուտքագրվել նյութեր	
	ա) դրապ «Մուշ» ՍՊԸ-ից՝ 100մ	300 000
	բ) մետաքս «Սետաքս» ՓԲԸ-ից՝ 100մ	150 000
	Ընդամենը	450 000
2	Պահեստից նյութերը բաց են թողնվել արտադրություն.	
	ա) բրդյա գործվածք, 40մ	56 000
	բ) կիսաբրդյա գործվածք , 10մ	17 500
	գ) տրիկոտաժ, 20մ	16 000
1	2	3
	դ) մետաքս, 10մ	15 000
	Ընդամենը	104 500
3.	Հաշվարկվել է հիմնական արտադրության աշխատողներին աշխատավարձ	450 000
4.	Կատարվել են հատկացումներ պարտադիր սոցիալական ապահովագրությանը	108 000
5.	Պահեստից նյութերը բաց են թողնվել արտադրություն	
	ա) դրապ, 10մ	30 000
	բ) կիսաբրդյա գործվածք, 20մ	35 000
	Ընդամենը	65 000
6.	Թողարկվել է պատրաստի արտադրանք	
	ա) կանացի վերարկու, 4 հատ	160 000
	բ) կանացի կոստյում, 10 հատ	200 000
	գ) շրջագգեստ, 20 հատ	260 000
	Ընդամենը	620 000
7	Փոխանցվել է հաշվարկային հաշվից մատակարարի պարտքի մարման դիմաց.	
	ա) «Սետաքս» ՓԲԸ-ին	260 000
	բ) «Մուշ» ՍՊԸ-ին	430 000
	Ընդամենը	690 000
8	Հաշվարկային հաշվից ստացվել և մուտքագրվել է դրամարկղ կանխիկ դրամ աշխատավարձ վճարելու նպատակով	450 000
9.	Վճարվել է աշխատողներին աշխատավարձ	450 000

10	Հաշվարկային հաշվում ստացվել է բանկի կարճաժամկետ վարկի գումարը	600 000
11.	Անավարտ արտադրության մնացորդը տեղափոխվել է հաշվեկշռային հաշիվ	?

ԽՆԴԻՐ 2.21

Ստորև բերված տվյալների հիման վրա.

- բացել սինթետիկ և անալիտիկ հաշիվները և գրանցել սկզբնական մնացորդները,
- ձևակերպել և այդ հաշիվներում գրանցել տնտեսական գործառնությունները,
- սինթետիկ և անալիտիկ հաշիվներում որոշել շրջանառությունները և վերջնական մնացորդները:
- կազմել սինթետիկ և անալիտիկ հաշիվների շրջանառության տեղեկագրերը:

Տվյալներ Սինթետիկ հաշիվների մնացորդները.

Հաշվի ծածկագիրը	Հաշվի անվանումը	Գումարը, դրամ
2113	Նյութեր, ենթահաշիվ «Վառելիք»	8 900 000
521	Կրեդիտորական պարտքեր գնումների գծով	7 500 000

«Նյութեր» սինթետիկ հաշվի «Վառելիք» ենթահաշվի մնացորդի վերծանումը.

Վառելիքի անվանում	Չափի միավոր	Գինը, դրամ	Քանակը	Գումարը, դրամ
1	2	3	4	5
Բենզին	լիտր	380	4 000	1 520 000
Դիզելային վառելիք	լիտր	410	18 000	7 380 000
Ընդամենը				8 900 000

«Կրեդիտորական պարտք գնումների գծով» սինթետիկ հաշվի մնացորդի վերծանումը

Մատակարարի անվանումը	Գումարը, դրամ
«Հայգյուղմատ» ՍՊԸ	2 800 000
Տոհմաբուծական ֆերմա	1 600 000
«Լյուքս» ՍՊԸ	3 100 000
Ընդամենը	7 500 000

Հաշվետու ժամանակաշրջանում կատարվել են հետևյալ տնտեսական գործառնությունները.

N	Տնտեսական գործառնությունների անվանումը	Գումարը, դրամ
1	2	3
1.	Տոհմաբուծական ֆերմայից ստացվել և մուտքագրվել է կենդանիների մատղաշ, որի դիմաց վճարումը դեռևս չի կատարվել	1 400 000

2	Գյուղատնտեսական աշխատանքների կատարման համար ծախսվել է վառելիք	
	ա) բենզին 2 000 լիտր բ) դիզելային վառելիք 7 000 լիտր	760 000 2 870 000
	Ընդամենը	3 630 000
3	«Լյուքս» ՍՊԸ-ից ստացվել և մուտքագրվել է.	
	ա) բենզին 1 500 լիտր բ) դիզելային վառելիք 6 000 լիտր	570 000 2 460 000
	Ընդամենը	3 030 000
4.	«Հայգյուղմատ» ՍՊԸ-ից ստացվել է տեղակայման ենթակա սարքավորում: Վճարումը պետք է կատարվի 30 օրվա ընթացքում.	300 000
5.	Հաշվարկային հաշվից փոխանցվել է պարտքի մարման դիմաց.	
	ա) «Հայգյուղմատ» ՍՊԸ-ին բ) Տոհմաբուծական ֆերմային գ) «Լյուքս» ՍՊԸ-ին	2 800 000 2 600 000 4 100 000
	Ընդամենը	9 500 000
6	Բանկի կարծաժամկետ վարկի հաշվին փոխանցվել է կանխավճար «Աթենք» ՍՊԸ-ին նյութեր ձեռք բերելու համար	1 000 000
7	Ավտոպարկին բաց է թողնվել	
	ա) բենզին 500 լիտր	190 000
1	2	3
	բ) դիզելային վառելիք 1 000 լիտր	410 000
	Ընդամենը	600 000
8.	«Հաստոց» ԲԲԸ-ից ստացվել և շահագործման է հանձնվել հիմնական միջոց	530 000

ԽՆԴԻՐ 2.22

Ստորև բերված տվյալների հիման վրա.

- բացել սինթետիկ և անալիտիկ հաշիվները և գրանցել սկզբնական մնացորդները,
- ձևակերպել և այդ հաշիվներում գրանցել տնտեսական գործառնությունները,
- սինթետիկ և անալիտիկ հաշիվներում որոշել շրջանառությունները և վերջնական մնացորդները,
- կազմել սինթետիկ և անալիտիկ հաշիվների շրջանառության տեղեկագրերը,
- կազմել հաշվապահական հաշվեկշիռ հաշվետու ժամանակաշրջանի վերջի դրությամբ:

Տվյալներ. I. Կազմակերպության հաշվեկշիռը 200Xթ դեկտեմբերի 31-ի դրությամբ.

ԱԿՏԻՎ	Գումարը, հազ. դրամ
I. Ոչ ընթացիկ ակտիվներ	
Հիմնական միջոցներ	260 450

Ընդամենը ոչ ընթացիկ ակտիվներ	260 450
II. Ընթացիկ ակտիվներ	
Նյութեր	15 100
Այլ դեբիտորական պարտքեր	50
Դրամական միջոցներ և դրանց համարժեքներ	24 400
Ընդամենը ընթացիկ ակտիվներ	39 550
Հ Ա Շ Վ Ե Կ Շ Ի Ռ	300 000
ՊԱՍԻՎ	Գումարը, հազ. դրամ
III. Սեփական կապիտալ	
Կանոնադրական կապիտալ	275 000
Կուտակված շահույթ	
Ընդամենը սեփական կապիտալ	275 000
IV. Ոչ ընթացիկ պարտավորություններ	
Երկարաժամկետ բանկային վարկեր	
Ընդամենը ոչ ընթացիկ պարտավորություններ	
V. Ընթացիկ պարտավորություններ	
Կարճաժամկետ բանկային վարկեր	10 000
Կրեդիտորական պարտքեր գնումների գծով	15 000
Ընդամենը ընթացիկ պարտավորություններ	25 000
Հ Ա Շ Վ Ե Կ Շ Ի Ռ	300 000

Դրամական միջոցներ հողվածի վերծանումը՝ դրամարկղ՝ 400 հազ. դրամ, հաշվարկային հաշիվ՝ 24 000 հազ. դրամ:

II. «Նյութեր» սինթետիկ հաշվի անալիտիկ հաշիվների մնացորդների վերծանումը.

Նյութերի անվանումը	Գինը, հազ.դրամ	Քանակը	Գումարը, հազ. դրամ
Չուզում, տոննա (I և V տարբ.)	100	40	4 000
Պղնձյա քիթեղ, տ (I և V տարբ.)	500	20	10 000
Քարածուխ, տ (II տարբ.)	12	80	960
Փայտանյութ, խոր. մ (II տարբ.)	10	14	140
Ընդամենը	X	X	15 100

III. «Կրեդիտորական պարտքեր գնումների գծով» սինթետիկ հաշվի անալիտիկ հաշիվների մնացորդների վերծանումը (երրորդ տարբերակ)

Սատակարարի անվանումը	Գումարը, հազ.դրամ
«Հանածո» ՍՊԸ	12 400
«Էներգոս» ԲԲԸ	2 600
Ընդամենը	15 000

III. «Ընթացիկ դեբիտորական պարտքեր առհաշիվ տրված գումարների գծով» հաշվի (չորրորդ տարբերակ).

Հաշվետու անձի Ա.Ա.Յ.	Գումարը, հազ. դրամ	
	դեբետ	կրեդիտ
Գրիգորյան Ա.Բ.-արտադրամասի ինժեներ	5	
Հակոբյան Զ.Ա.-պահեստապետ	45	
Ընդամենը	50	

IV. Տնտեսական գործառնությունները 200Xթ. հունվար ամսին.

N	Տնտեսական գործառնությունների բովանդակությունը	Գումարը ըստ տարբերակների, (հազ. դրամ)*				
		I	II	III	IV	V
1	2	3	4	5	6	7
1.	Արտադրանքի թողարկման համար պահեստից բաց է թողնվել հիմնական արտադրություն.					
	ա) չուգուն	2 000 (20տ)				3 000 (30տ)
	բ) պղնձյա թիթեղ	2 500 (5տ)				4 000 (8տ)
	Ընդամենը	4 500	11 000	8 000	10 400	7 000
2.	Արտադրանքը թողարկող բանվորներին					
1	2	3	4	5	6	7
	հաշվարկվել է աշխատավարձ	8 000	15 000	10 000	14 000	16 000
3	Կատարվել են հատկացումներ սոցիալական ապահովագրությանը արտադրանքը թողարկող բանվորների համար	410	760	510	710	810
4.	Հաշվարկային հաշվից փոխանցվել է մատակարարի պարտքի մարման դիմաց.					
	ա) «Հանածո» ՍՊԸ			12 400		
	բ) «Էներգո» ԲԲԸ		-	2 600		
	Ընդամենը	4 000		15 000	7 300	9 100
5.	Դրամարկղից տրվել է Զ.Ա.Հակոբյանին տնտեսական ծախսերի համար	50	40	40	50	50

6.	Մուտքագրվել է «Հանածո» ՍՊԸ-ից . ա) չուգուն	3 000 (30տ)				5 000 (50տ)
	բ) պղնձյա թիթեղ	5 000 (10տ)				6000 (12տ)
	Ընդամենը	8 000		6 000		11 000
7.	Պահեստից բաց է թողնվել հիմնական արտադրություն վառելիք.					
	ա) քարածուխ		240 (20տ)			
	բ) փայտանյութ		70 (70խոր.մ)			
	Ընդամենը		310		600	
8.	Ինժեներ Ա.Բ.Գրիգորյանը առհաշիվ գումարի մնացորդը վերադարձել է դրամարկը				5	
9.	Ծախսվել է տնտեսական					
1	2	3	4	5	6	7
	կարիքների համար պահեստապետ Ջ.Ա.Հակոբյանի կողմից	50	40	40	50	50
10.	Մուտք է եղել «Հանքագործ» ԲԸ-ից քարածուխ, 50տ		600	600	00	
11.	Դրամարկից վճարվել է պահեստապետ Ջ.Ա.Հակոբյանին ավել ծախսված գումարի դիմաց				5	

* Գործառնությունների վերաբերյալ քանակական տվյալները բերված են նույն սյունակում, փակագծերում:

ՍՏՈՒԳՈՂԱԿԱՆ ԱՌԱՋԱԴՐԱՆՔՆԵՐ, ՀԱՐՑԵՐ ԵՎ ՏԵՍՏԵՐ

Ստուգողական առաջադրանքներ

Առաջադրանք 1

Ներքոհիշյալ տվյալների հիման վրա կազմել կազմակերպության հաշվապահական հաշվեկշիռը 200X թ -ի դեկտեմբերի 31-ի դրությամբ:

ՀՀ	Տնտեսական միջոցները և դրանց գոյացման աղբյուրների անվանումը	Գումարը, դրամ
1	Ոչ նյութական ակտիվներ	700 000
2	Անավարտ ոչ ընթացիկ նյութական ակտիվներ	2 000 000
3	Պահեստամասեր	150 000
4	Կանոնադրական կապիտալ	5 000 000
5	Հիմնական միջոցներ	1 000 000
6	Դեբիտորական պարտքեր նյութական վնասի փոխհատուցման գծով	20 000
7	Պարտք քյուլջեին հարկերի գծով	170 000
8	Հիմնական նյութեր	780 000
9	Բանկի վարկեր, մարման ժամկետը վեց ամիս	400 000
10	Պարտք աշխատողներին աշխատավարձի վճարման գծով	1 500 000
11	Գնորդների պարտքը արտադրանքի վաճառքի գծով	560 000
12	Նախորդ տարիների շահույթ	120 000
13	Պահուստային կապիտալ	510 000
14	Պատրաստի արտադրանք	320 000
15	Դրամական միջոցներ հաշվարկային հաշվում	2 300 000
16	Ստացված կանխավճարներ	150 000
17	Կանխիկ դրամական միջոցներ դրամարկղում	20 000
	Հաշվեկշռի հանրագումարը	7 850 000

Առաջադրանք 2

Կազմել Կարի արտադրական միավորման հաշվեկշիռը 200Xթ. դեկտեմբերի 31-ի դրությամբ, օգտագործելով գլուխ 1-ի, առաջադրանք 1-ի և առաջադրանք 3-ի ելակետային տվյալները:

Առաջադրանք 3

Կազմել կազմակերպության հաշվեկշռի հաշիվը 200Xթ. դեկտեմբերի 31-ի դրությամբ, օգտագործելով գլուխ 1-ի, առաջադրանք 2-ի և առաջադրանք 4-ի ելակետային տվյալները:

Առաջադրանք 4

Ստորև բերված տվյալների հիման վրա, որոշել թե տվյալ տնտեսական գործառնությունները հաշվեկշռում ինչպիսի՞ փոփոխություններ են առաջացնում:

Տվյալներ. Կազմակերպության տնտեսական գործառնությունները 200Xթ. հունվար ամսում.

Չ/Չ	Տնտեսական գործառնության բովանդակությունը	փոփոխությունը (+; -)		միտոզտ ցուցիչ
		աճ	հրահր	
1.	Դրամարկղից տրվել է առհաշիվ գումար			
2.	Դրամարկղից վճարվել է աշխատողներին աշխատավարձ			
3.	Շահույթի հաշվին ավելացել է կանոնադրական կապիտալը			
4.	Մատակարարից ապառիկ ստացվել և մուտքագրվել են պահեստ պահեստամասեր			
5.	Հաշվարկային հաշվից փոխանցվել է պարտքը բանկին կարճաժամկետ վարկի գծով			
6.	Հիմնական արտադրությունից ստացվել և մուտքագրվել է պահեստ պատրաստի արտադրանք			

Առաջադրանք 5

Ցույց տալ, թե տվյալ տնտեսական գործառնությունները, ինչպիսի՞ փոփոխություններ են առաջացնում հաշվապահական հաշվեկշռում: Օգտագործել առաջադրանք 4-ի աղյուսակի ձևը

Տվյալներ տնտեսական գործառնություններ

1. Հաշվետու ամիսը ձեռք է բերել նյութեր:
2. Հաշվարկային հաշվից փոխանցվել է մատակարարին կանխավճար:
3. Պահեստից բաց են թողնվել հիմնական արտադրություն նյութեր:
4. Դրամարկղից հաշվարկային հաշիվ է վերադարձվել կանխիկ դրամի մնացորդը:
5. Ձեռք են բերվել սարքավորումներ, որոնց դիմաց վճարում դեռ չի կատարվել:
6. Բանկի կարճաժամկետ վարկի հաշվին մարվել է մատակարարի պարտքը:
7. Հաշվարկային հաշվից փոխանցվել և մարվել է բյուջեի պարտքը հարկերի գծով:
8. Հաշվարկային հաշվից մարվել է պարտքը ապառիկ ձեռք բերված նյութերի դիմաց:

Առաջադրանք 6

Պահանջվում է կազմակերպության տրված տվյալների հիման վրա

- բացել հաշվապահական հաշիվներ, դրանցում գրանցել սկզբնական մնացորդները,
- արտացոլել հաշվապահական հաշիվներում եռամսյակի ընթացքում կատարված տնտեսական գործառնությունները կրկնակի գրանցման եղանակով,
- հաշվապահական հաշիվներում որոշել եռամսյակի շրջանառությունները և վերջնական մնացորդները,
- կազմել սինթետիկ հաշիվների շրջանառության տեղեկագիրը,
- հաշվապահական հաշիվների տվյալների հիման վրա կազմել կազմակերպության հաշվապահական հաշվեկշիռը հաշվետու տարվա մարտի 31-ի դրությամբ:

Տվյալներ I. Կազմակերպության հաշվապահական հաշվեկշիռը 200Xթ դեկտեմբերի 31-ի դրությամբ

Ակտիվ	Գումարը, հազ. դրամ	Պասիվ	Գումարը, հազ. դրամ
Հիմնական միջոցներ	35 000	Կանոնադրական կապիտալ	40 000
Նյութեր	10 000	Շահույթ	3 000
Արտադրանք	900	Կարճաժամկետ բանկային վարկեր	2 000
Դրամարկղ	100	Կրեդիտորական պարտք աշխատավարձի գծով	500
Հաշվարկային հաշիվ	4000	Կրեդիտորական պարտքեր գնումների գծով	4 500
Հաշվեկշիռ	50 000	Հաշվեկշիռ	50 000

II. Տնտեսական գործառնությունները I. եռամսյակում.

ՀՀ	Բովանդակությունը	Գումարը, հազ. դրամ
1	Դրամարկղից վճարվել է պահեստապետ Գ Հակոբյանին առհաշիվ գումար	100
2	Շահույթի հաշիվն ավելացել է կանոնադրական կապիտալը	1500
3	Սատակարարից ստացվել և մուտքագրվել են պահեստ նյութեր, որոնց դիմաց վճարումը դեռ չի կատարվել	15 000
4	Հաշվարկային հաշվից փոխանցվել և մարվել է բանկի կարճաժամկետ վարկի գումարը	1.000
	Ընդամենը *	17 600

Առաջադրանք 7

Պահանջվում է կազմակերպության տրված տվյալների հիման վրա.

- բացել հաշվապահական հաշիվներ, դրանցում գրանցել սկզբնական մնացորդները,
- արտացոլել հաշվապահական հաշիվներում եռամսյակի ընթացքում կատարված տնտեսական գործառնությունները կրկնակի գրանցման եղանակով,
- հաշվապահական հաշիվներում որոշել եռամսյակի շրջանառությունները և վերջնական մնացորդները,
- կազմել սինթետիկ հաշիվների շրջանառության տեղեկագիրը,
- հաշվապահական հաշիվների տվյալների հիման վրա կազմել կազմակերպության հաշվապահական հաշվեկշիռը հաշվետու տարվա մարտի 31-ի դրությամբ.

Տվյալներ I. Կազմակերպության հաշվապահական հաշվեկշիռը 200Xթ. մարտի 31-ի դրությամբ.

Ակտիվ	Գումարը, հազ. դրամ	Պասիվ	Գումարը, հազ. դրամ
Հիմնական միջոցներ	2 083 020	Կանոնադրական կա- պիտալ	5 797 570
Նյութեր	3 881 000	Էմիսիոն եկամուտ	501 600
Ապրանքներ	71 660	Բանկային կարճա- ժամկետ վարկեր	58 000
Ընթացիկ դեբիտորական պարտքեր առհաշիվ տրված գումարների գծով	2 630	Կրեդիտորական պարտք գնումների գծով	103 700
Դրամարկղ	1 020	Կրեդիտորական պարտքեր աշխատա- վարձի գծով	208 200
Հաշվարկային հաշիվ	629 740		
Հաշվեկշիռ	6 669 070	Հաշվեկշիռ	6 669 070

II. Տնտեսական գործառնությունները II եռամսյակում.

ՀՀ	Բովանդակությունը	Գումարը, հազ. դրամ
1	2	3
1	Հաշվարկային հաշվից ստացվել և մուտքագրվել է դրամարկղ կանխիկ դրամ	125 000
2	Տրվել է դրամարկղից առհաշիվ գումար գործուղման համար	15 000
3	Հաշվարկային հաշվից փոխանցվել է մատակարարի պարտքը	70 000
4	Դրամարկղից վճարվել է աշխատավարձ	80 000
5	Հաշվարկային հաշվում ստացվել է բանկային կարճաժամ- կետ վարկի գումարը	490 000
6	Դրամարկղ է մուտքագրվել առհաշիվ տրված գումարի	
1	2	3
	չօգտագործված մնացորդը	2 630
7	Բանկային կարճաժամկետ վարկի հաշվին մարվել է մատա- կարարի պարտքը	25 000
8	Մատակարարից ապառիկ ստացվել են նյութեր	140 000

Առաջադրանք 8

Բացել ժամանակագրական գրանցման մատյան, գրանցել և ձևակերպել ստորև
բերված գործառնությունները:

Տվյալներ Տնտեսական գործունեությունները.

Յ/Յ	Բովանդակությունը	Գումարը, դրամ
1	2	3
1	Հաշվարկային հաշվից ստացվել և մուտքագրվել է դրամարկը	8.000
2	Դրամարկից վճարվել է Ա Գրիգորյանին առհաշիվ գումար գույքի ձեռք բերման համար	42 000
3	Հաշվարկվել է աշխատավարձ հիմնական արտադրության բանվորներին	450 000
4	Բանկի կարժաժամկետ վարկի հաշվին վճարվել է մատակարարի պարտքը	60.000
5	Հաշվարկային հաշվից մարվել է բանկի կարժաժամկետ վարկը	70 000
6	Մատակարարից ձեռք են բերվել նյութեր, որոնց արժեքը չի վճարվել	35.000
7	Հաշվարկային հաշվից վճարվել է մատակարարի պարտքը	30 000
8	Հաշվետու անձը առհաշիվ տրված գումարների հաշվին ձեռք է բերել նյութեր	1 100
9	Շահույթից հատկացվել է պահուստային կապիտալին	80 000
10	Հիմնական արտադրությունից ստացվել և մուտքագրվել է պահեստ պատրաստի արտադրանք	61 000
11	Հաշվարկային հաշիվ է մուտքագրվել գնորդներից ապառիկ վաճառված արտադրանքի դիմաց	53.000

Առաջադրանք 9

Հաշվապահական հաշիվների թղթակցությունից ելնելով որոշել տնտեսական գործառնության բովանդակությունը.

N	Թղթակցվող հաշիվների անվանումը		Գումարը, դրամ
	դեբետ	կրեդիտ	
1	2	3	4
1	Ոչ նյութական ակտիվներ	Հաշվարկային հաշիվ	80.000
2	Վարչական ծախսեր	Կարճաժամկետ կրեդիտորական պարտք աշխատավարձի վճարման	
1	2	3	4
		գծով	350 000
3	Հաշվարկային հաշիվ	Դեբիտորական պարտք վաճառքի գծով	40 000
4	Կարճաժամկետ բանկային վարկ	Հաշվարկային հաշիվ	60 000

5	Կարճաժամկետ կրեդիտորական պարտք աշխատավարձի վճարման գծով	Կարճաժամկետ կրեդիտորական պարտք եկամտահարկի գծով	50 000
6	Հիմնական արտադրություն	Նյութեր	20 000

Ստուգողական հարցեր

1. Ի՞նչ է նշանակում «հաշվեկշիռ»:
2. Ի՞նչ է արտացոլվում հաշվապահական հաշվեկշռում
3. Ինչպիսի՞ն է հաշվապահական հաշվեկշռի կառուցվածքը:
4. Ի՞նչ են արտացոլում հաշվապահական հաշվեկշռի ակտիվ և պասիվ կողմերը
5. Ինչո՞վ է պայմանավորված հաշվեկշռի ակտիվ և պասիվ կողմերի հավասարակշռությունը:
- 6 Թվարկել տնտեսական գործառնությունների հետևանքով հաշվեկշռում տեղի ունեցող փոփոխությունների տեսակները:
- 7 Բերել հաշվապահական հաշվեկշռում փոփոխությունների օրինակներ և բացատրել, դրանցից յուրաքանչյուրի դեպքում, հաշվապահական հաշվեկշռում ինչպիսի փոփոխություն է տեղի ունենում:
8. Ինչի՞ համար է նախատեսված հաշվապահական հաշիվը:
9. Ինչպիսի՞ կառուցվածք ունի հաշվապահական հաշիվը
10. Ի՞նչ խմբերի են բաժանվում հաշվապահական հաշիվները՝ ըստ հաշվեկշռի ակտիվում կամ պասիվում գտնվելու հատկանիշի:
11. Բրո՞նք են կոչվում ակտիվային հաշիվներ. Բերել օրինակներ.
12. Որո՞նք են կոչվում պասիվային հաշիվներ. Բերել օրինակներ
13. Ի՞նչ է հաշվապահական հաշվի շրջանառությունը և ինչպես է այն որոշվում.
14. Ինչպե՞ս է որոշվում ակտիվային հաշիվների վերջնական մնացորդը:
15. Ինչպե՞ս է որոշվում պասիվային հաշիվների վերջնական մնացորդը
16. Ինչու՞մն է կայանում կրկնակի գրանցման եղանակի էությունը:
17. Ինչու՞մն է կայանում կրկնակի գրանցման եղանակի ճանաչողական նշանակությունը:
18. Ինչու՞մն է կայանում կրկնակի գրանցման եղանակի ստուգողական նշանակությունը:
19. Ի՞նչ է իրենից ներկայացնում հաշիվների թղթակցությունը
20. Ի՞նչ է հաշվապահական ձևակերպումը:
21. Ի՞նչ քայլեր է անհրաժեշտ կատարել հաշվապահական ձևակերպումներ կազմելու համար:
22. Ինչու՞ չի կարելի հաշվապահական հաշվառման մեջ օգտագործել ձևակերպումներ, որոնք ունեն մի քանի դեբետ և մի քանի կրեդիտ:
23. Ինչպիսի՞ տեղեկատվություն է տալիս սինթետիկ և անալիտիկ (վերլուծական) հաշվառումը:
24. Ինչպիսի՞ փոխադարձ կապ կա սինթետիկ և անալիտիկ հաշիվների միջև:
25. Ի՞նչ է ենթահաշիվը և ինչպիսի դեր ունի հաշվապահական հաշվառման մեջ:
26. Ի՞նչ կառուցվածք ունի սինթետիկ հաշիվների շրջանառության տեղեկագիրը:
27. Ինչի՞ համար է անալիտիկ հաշիվների շրջանառության տեղեկագիրը:

28. Ինչպիսի՞ կառուցվածք ունի անալիտիկ հաշիվների շրջանառության տեղեկագիրը
29. Սինթետիկ և անալիտիկ շրջանառության տեղեկագրի փոխադարձ ստուգումը ինչպե՞ս է կատարվում:
30. Ինչպիսի՞ն է ժամանակագրական և սինթետիկ գրանցումների կապը:

Տ ե ս տ ե ր

1. Ի՞նչ է արտացոլում հաշվապահական հաշվեկշիռը.

- ա) կազմակերպության տնտեսական միջոցները ըստ կազմի և տեղաբաշխման,
բ) կազմակերպության տնտեսական միջոցների գոյացման աղբյուրները և նպատակային նշանակությունը,
գ) կազմակերպության տնտեսական միջոցները ըստ կազմի, տեղաբաշխման և նրանց գոյացման աղբյուրները որոշակի ժամկետում դրամական արտահայտությամբ:

2. Ո՞ր բաժինը չեն ներառում հաշվեկշռի ակտիվ կողմում.

- ա) ոչ ընթացիկ ակտիվներ,
բ) ընթացիկ ակտիվներ,
գ) սեփական կապիտալ.

3. Ո՞ր բաժիններն են ներառվում հաշվեկշռի պասիվ կողմում.

- ա) սեփական կապիտալ,
բ) ոչ ընթացիկ պարտավորություն,
գ) ընթացիկ պարտավորություն,
դ) բոլոր վերը նշվածները:

4. Տնտեսական գործառնությունների հետևանքով հաշվեկշռում ի՞նչ կարգի փոփոխություններ են առաջանում.

- ա) ակտիվային,
բ) պասիվային,
գ) ակտիվապասիվային ավելացումով,
դ) ակտիվապասիվային նվազեցումով,
ե) բոլոր վերը նշվածները:

5. Նշված տնտեսական գործառնություններից ո՞րն է հաշվեկշռում առաջացնում ակտիվային փոփոխություն.

- ա) շահույթի հաշվին ավելացել է պահուստային կապիտալը,
բ) հաշվարկային հաշվից ստացվել և մուտքագրվել է դրամարկղ կանխիկ դրամ,
գ) դրամարկղից վճարվել է աշխատողներին աշխատավարձ,
դ) հաշվարկային հաշվում ստացվել է բանկային կարճաժամկետ վարկ:

6. Նշված տնտեսական գործառնություններից ո՞րն է հաշվեկշռում առաջացնում պասիվային փոփոխություն.

- ա) դրամարկղից վճարվել է առհաշիվ գումար,
բ) բանկային կարճաժամկետ վարկի հաշվին մարվել է մատակարարի պարտքը,
գ) մատակարարից կանխիկ գումարով ձեռք են բերվել նյութեր,
դ) հաշվարկվել է հիմնական արտադրության բանվորներին աշխատավարձ

7. Նշված տնտեսական գործառնություններից ո՞րն է հաշվեկշռում առաջացնում ակտիվապասիվային փոփոխություն՝ ավելացումով.

- ա) աշխատավարձից պահվել է եկամտահարկ,
բ) հաշվարկային հաշվում ստացվել է բանկի երկարաժամկետ վարկ,
գ) դրամարկղից վճարվել է մատակարարին պարտքի դիմաց,
դ) հիմնական արտադրության մեջ ծախսվել են նյութեր

8. Նշված տնտեսական գործառնություններից ո՞րն է հաշվեկշռում առաջացնում ակտիվապասիվային փոփոխություն նվազեցումով.

- ա) օժանդակ արտադրության մեջ ծախսվել են նյութեր,
- բ) կատարվել են հիմնադիրներից ներդրում կանոնադրական կապիտալում հիմնական միջոցների տեսքով,
- գ) հիմնական արտադրությունից ստացվել և մուտքագրվել է պահեստ պատրաստի արտադրանք,
- դ) հաշվարկային հաշվից փոխանցվել և մարվել է բյուջեի պարտքը:

9. Որո՞նք են կոչվում ակտիվային հաշիվներ.

- ա) որոնք գտնվում են հաշվեկշռի ակտիվ կողմում,
- բ) որոնք գտնվում են հաշվեկշռի պասիվ կողմում,
- գ) բոլոր վերը նշվածները:

10. Որո՞նք են կոչվում պասիվային հաշիվներ.

- ա) որոնք գտնվում են հաշվեկշռի ակտիվ կողմում,
- բ) որոնք գտնվում են հաշվեկշռի պասիվ կողմում,
- գ) բոլոր վերը նշվածները:

11. Ինչու՞մ է կայանում կրկնակի գրանցման էությունը.

- ա) երբ միևնույն գումարը գրանցվում է մի հաշվի դեբետում,
- բ) երբ միևնույն գումարը գրանցվում է մի հաշվի կրեդիտում,
- գ) երբ միևնույն գումարը գրանցվում է մի հաշվի դեբետում և մյուս հաշվի կրեդիտում:

12. Ինչպե՞ս է ձևակերպվում գործառնությունը. Հիմնական արտադրության կարիքների համար ծախսվել են նյութեր.

- ա) Դտ 821, Կտ 211
- բ) Դտ 811, Կտ 211
- գ) Դտ 713, Կտ 213
- դ) Դտ 211, Կտ 811

13. Ինչպե՞ս է ձևակերպվում գործառնությունը. Մատակարարից ստացվել և մուտքագրվել են պահեստ արագամաշ առարկաներ: Գումարը պետք է վճարվի 30 օրվա ընթացքում.

- ա) Դտ 213, Կտ 541
- բ) Դտ 211, Կտ 521
- գ) Դտ 213, Կտ 521
- դ) Դտ 521, Կտ 213

14. Ինչպե՞ս է ձևակերպվում գործառնությունը. Հաշվարկվել է շխատավարձ վարչական աշխատողներին.

- ա) Դտ 811, Կտ 5271
- բ) Դտ 713, Կտ 524
- գ) Դտ 5271, Կտ 713
- դ) Դտ 713, Կտ 5271

15. Ինչպե՞ս է ձևակերպվում գործառնությունը. Դրամարկղից վճարվել է վարչական աշխատողներին աշխատավարձ.

- ա) Դտ 251, Կտ 5271
- բ) Դտ 713, Կտ 251
- գ) Դտ 527, Կտ 251
- դ) Դտ 228, Կտ 251

16. Ինչպե՞ս է ձևակերպվում գործառնությունը. Հաշվարկային հաշվում ստացվել է բանկի կարճաժամկետ վարկի գումարը.

- ա) Դտ 511, Կտ 252

բ) Դտ 252, Կտ 411

գ) Դտ 252, Կտ 511

դ) Դտ 252, Կտ 512

17. Ինչպե՞ս է ձևակերպվում գործառնությունը. Հաշվարկային հաշվից փոխանցվել է գնումների գծով կրեդիտորական պարտքը.

ա) Դտ221, Կտ 252

բ) Դտ 521, Կտ 252

գ) Դտ 528, Կտ 251

դ) Դտ 521, Կտ 221

18. Ինչպե՞ս է ձևակերպվում գործառնությունը. Հիմնադիրներից որպես ներդրում կանոնադրական կապիտալում ստացվել են հիմնական միջոցներ.

ա) Դտ111, Կտ 351

բ) Դտ 312, Կտ 311

գ) Դտ 211, Կտ 312

դ) Դտ111, Կտ 311

19. Ինչպե՞ս է ձևակերպվում գործառնությունը. Բ անկի կարծաժամկետ վարկի հաշվին մարվել է մատակարարի պարտքը.

ա) Դտ211, Կտ 511

բ) Դտ 511, Կտ 521

գ) Դտ 521, Կտ 511

դ) Դտ 521, Կտ 512

20. Ինչպե՞ս է ձևակերպվում գործառնությունը. Դ ռամարկդից վճարվել է ապառիկ ձեռք բերված ապրանքների արժեքը.

ա) Դտ251, Կտ 252

բ) Դտ 521, Կտ 251

գ) Դտ 216, Կտ 251

դ) Դտ 251, Կտ 216

ԳԼՈՒԽ 3

ՓԱՍՏԱԹՂԹԱՎՈՐՈՒՄ ԵՎ ԳՈՒՅՔԱԳՐՈՒՄ

ԽՆԴԻՐ 3.1

Դասակարգել ըստ տարբեր հատկանիշների ստորև բերված փաստաթղթերը

- 1) Դրամարկդի մուտքի օրդեր,
- 2) Հրամաններ,
- 3) Ապրանքների ելքի բեռնագրեր,
- 4) Ամփոփագրեր.

ԽՆԴԻՐ 3.2

Բերված տվյալների հիման վրա լրացնել հետևյալ սկզբնական հաշվառման փաստաթղթերը՝

Տվյալներ

1) Դրամարկդի մուտքի օրդեր թիվ 440 200X թ. դեկտեմբերի 9-ին ընդունվել է աշխատակից Ա.Պետրոսյանից առհաշիվ տրված գումարի մնացորդը 8900 դրամ Գումարը ստացել է գանձապահ Ս.Գևորգյանը. Փաստաթուղթը հաստատվել է գլխավոր հաշվապահ Է.Գևորգյանի կողմից՝

2) Դրամարկային ելքի օրդեր թիվ 1208 200Xթ դեկտեմբերի 10-ին Ինժեներ Ա Սահակյանին տրվել է առհաշիվ գումար գործուղման համար՝ 160000 դրամ. Հիմքը. կազմակերպության տնօրեն Գ Սաֆարյանի 200X թ դեկտեմբերի 8-ին տրված հրամանը: Գումարը վճարել է գանձապահ Ս.Գևորգյանը Գումարի դուրս գրումը թույլատրվել է կազմակերպության տնօրեն Գ.Սաֆարյանի կողմից:

3) Կանխավճարային հաշվետվություն. Կազմակերպության ինժեներ Ա.Սահակյանը 200X թ. դեկտեմբերի 21-ին ներկայացրել է կանխավճարային հաշվետվություն, որի գումարը կազմել է 155000 դրամ: Կանխավճարային հաշվետվությունը ներկայացվել և հաստատվել է գլխավոր հաշվապահի կողմից: Չօգտագործված գումարը վերադարձվել է դրամարկը: Հաշիվների թղթակցությունը գրանցվել է գլխավոր հաշվապահի կողմից:

4) Գանձապահը 200X թ. դեկտեմբերի 10-ին ներկայացրել է հաշվետվություն դրամարկում դրամական միջոցների շարժի մասին

200X թ դեկտեմբերի 10-ի դրությամբ դրամարկի մնացորդը կազմել է 30 000 դրամ.

Մուտքագրվել է դրամարկ թիվ 2160 չեկով կանխիկ գումար.

ա) աշխատավարձ վճարելու նպատակով՝ 2 810 000 դրամ,

բ) տնտեսական ծախսերի համար՝ 50 000 դրամ,

գ) գործուղման ծախսերի համար՝ 160 000 դրամ:

Վճարվել է դրամարկից.

ա) թիվ 21 վճարային տեղեկագրով աշխատավարձ՝ 2 810 000 դրամ,

բ) թիվ 4120 դրամարկի ելքի օրդերով տնտեսական ծախսերի համար՝ 50 000 դրամ

գ) թիվ 4121 դրամարկի ելքի օրդերով գործուղման ծախսերի համար՝ 160 000 դրամ:

ԽՆԴԻՐ 3.3

Պահանջվում է ուսումնասիրել հաշվապահական հաշիվներում գրանցումների սխալների ուղղման մեթոդական միջև հաշվետվությունների կազմելը:

Տվյալներ.

N	Տնտեսական գործառնությունների բովանդակությունը	Գումարը, դրամ
1	Մատակարարից ստացվել են նյութեր: Վճարումը մատակարարին պետք է կատարվի 30 օրվա ընթացքում.	100 000
2	Արտադրանքի թողարկման համար պահեստից բաց են թողնվել հիմնական արտադրություն նյութեր	80 000
3	Պահեստից բաց են թողնվել հիմնական արտադրություն հումք	30 000
4.	Հաշվարկվել է աշխատավարձ օժանդակ արտադրության բանվորներին	120 000
5.	Հաշվետու տարվա շահույթի հաշվին ավելացել է կանոնադրական կապիտալը	300 000
6	Օժանդակ արտադրությունից մուտքագրվել է պահեստ պատրաստի արտադրանք	170 000
7.	Հիմնական արտադրությունից մուտքագրվել է պահեստ պատրաստի արտադրանք փաստացի ինքնարժեքով	250 000

8.	Պահեստից բաց են թողնվել շինարարական նյութեր կազմակերպության վարչական շենքի նորոգման համար	270 000
9.	Ստուգման ժամանակ պարզվել է, որ նյութերի փոխարեն մատակարարից ստացվել են ապրանքներ (գործ. 1)	?
10.	Ստուգման ժամանակ պարզվել է, որ հիմնական արտադրություն բաց թողնված նյութերի արժեքը կազմել է 8 000 դրամ (գործ. 2)	?
11.	Պարզվել է, որ հիմնական արտադրություն տրված հումքը կազմել է 130 000 դրամ (գործ. 3)	?
12.	Օժանդակ արտադրության աշխատողներին հաշվարկված աշխատավարձի գծով գրանցման ժամանակ կատարվել է սխալ: Հաշվարկված աշխատավարձի գումարը պետք է լինի 210 000 դրամ (գործ. 4)	?
13.	Պարզվել է, որ հաշվետու տարվա շահույթի հաշվին ավելացել է պահուստային կապիտալը (գործ. 5)	?
14.	Գույքագրման ժամանակ պարզվել է, որ պատրաստի արտադրանքը մուտքագրվել է հիմնական արտադրությունից (գործ. 6)	?
15.	Պարզվել է, որ տարվա վերջում ստացված արտադրանքի փաստացի ինքնարժեքը կազմել է 280 000 դրամ (գործ.7)	?
16.	Պարզվել է, որ շինարարական նյութերը դուրս են գրվել շենքի կառուցման համար (գործ.8):	?

ԽՆԴԻՐ 3.4

Պահանջվում է տրված տվյալների հիման վրա կատարել հայտնաբերված սխալի ուղղում լրացուցիչ ձևակերպումների մեթոդով.

Տվյալներ: Կատարվել է հետևյալ տնտեսական գործառնությունը.

Պահեստից բաց են թողնվել հիմնական արտադրություն նյութեր 186 340 դրամ գումարի: Հաշվապահական հաշիվներում հաշվապահը կատարել է հետևյալ գրանցումը.

Դո	Նյութեր	Կտ
<u>Սկ.մն. 18360</u>		
		1)168340

Դո	Հիմնական արտադրություն	Կտ
1)168340		

ԽՆԴԻՐ 3.5

Պահանջվում է տրված տվյալների հիման վրա կատարել հայտնաբերված սխալի ուղղում լրացուցիչ ձևակերպումների մեթոդով.

Տվյալներ. Կատարվել է հետևյալ տնտեսական գործառնությունը.

Կազմակերպություն է մուտքագրվել ապրանքներ 920 000 դրամի: Հաշվապահական հաշիվներում կատարվել է հետևյալ գրանցումները:

Դտ	Նյութեր	Կտ
1) 920 000		

Դտ	ԿՊ գնումների գծով	Կտ
		1) 920 000

ԽՆԴԻՐ 3.6

Պահանջվում է կազմել համեմատական տեղեկագիր և որոշել գույքագրման արդյունքները.

Տվյալներ. Ապրանքանյութական արժեքների թիվ 2 գույքագրման ցուցակներից քաղվածք

h/h	Ապրանքանյութական արժեքների անվանումը	Չափի միավորը	Գինը, դրամ	Փաստացի առկա	
				Քանակը	Գումարը, դրամ
1	Մեխ	կգ	250	18	4500
2.	Մուֆտա	հատ	850	25	21250
3.	Բոլո	հատ	170	150	25500
4.	Մեկուսիչ	հատ	540	130	70200
5	Ապահովիչ	հատ	108	42	4536
6.	Պղնձյա թիթեղ	կգ	2000	15	30000

Գույքագրման ամսաթվի դրությամբ ապրանքանյութական արժեքների առկայության մասին տեղեկանք.

h/h	Ապրանքանյութական արժեքների անվանումը	Չափի միավորը	Գինը, դրամ	Փաստացի առկա	
				քանակը	գումարը, դրամ
1.	Մեխ	կգ	250	16	4000
2.	Մուֆտա	հատ	850	26	22100
3	Բոլո	հատ	170	146	24820
4	Մեկուսիչ	հատ	540	132	71280
5.	Ապահովիչ	հատ	108	38	4104
6.	Պղնձյա թիթեղ	կգ	2000	15	30000

Ելնելով համեմատական տեղեկագրից ձևակերպել հայտնաբերված ավելցուկը և պակասորդը: Հայտնաբերված պակասորդը առաջացել է պահեստապետի անփութության պատճառով:

ԽՆԴԻՐ 3.7

Պահանջվում է ստորև բերված իրավիճակների դեպքում որոշել, գույքագրման ինչպիսի տեսակ է կիրառվում

Տվյալներ. Կազմակերպությունը կատարել է գույքագրում՝

1) Տարեկան հաշվետվությունների կազմման համար,

- 2) Պահեստապետ Ա Գրիգորյանի արձակուրդ գնալու կապակցությամբ,
- 3) Ջրհեղեղի հետևանքով թիվ 2 պահեստի մասնակի քանդման պատճառով,
- 4) Կառելիքի պահեստի պահեստապետի անբարեխիղճ աշխատանքի մասին ստացված ահազանգի դեպքում,
- 5) Դրամարկղի ամսեկան ստուգում,
- 6) Շինարարական նյութերի պահեստի եռամսյակային ստուգում,
- 7) Կազմակերպության վերակազմավորման դեպքում

ԽՆԴԻՐ 3.8

Պահանջվում է ստորև բերված տվյալների հիման վրա որոշել դրամարկղում կանխիկ դրամական միջոցների գույքագրման արդյունքները

Տվյալներ. Կազմակերպության դրամարկղում դրամական միջոցների գույքագրումը կատարվել է 200Xթ. մարտի 20-ին. Հանձնաժողովը ստեղծվել է 200Xթ մարտի 19-ի թիվ 5 հրամանի հիման վրա

Դրամարկղի փաստաթղթերի վերջին համարները

- մուտքի օրդեր – 20,
- ելքի օրդեր – 40:

Ըստ գանձապահի կողմից ներկայացված հաշվետվության օրվա սկզբին դրամական միջոցների մնացորդը կազմել է 30 000 դրամ: Մուտքագրվել է մուտքի օրդերի հիման վրա - 140 000 դրամ: Վճարվել է դրամարկղից ելքի օրդերով –

155 000 դրամ. Գույքագրման արդյունքում արձանագրվեց առկա դրամական միջոցներ 12 000 դրամ:

ԱՏՈՒԳՈՂԱԿԱՆ ՀԱՐՑԵՐ ԵՎ ՏԵՍՏԵՐ

Ստուգողական հարցեր

- 1 Ի՞նչ է իրենից ներկայացնում սկզբնական հաշվառումը:
- 2 Ի՞նչումն է կայանում փաստաթղթի էությունը և նշանակությունը:
- 3 Ի՞նչ է փաստաթուղթը:
- 4 Ի՞նչպիսի՞ վավերապայմաններ են նշվում փաստաթղթերում
- 5 Ի՞նչպիսի՞ գործառույթներ է կատարում հաշվապահական հաշվառման մեջ փաստաթղթավորումը:
- 6 Սկզբնական հաշվառման ո՞ր փաստաթղթերում սխալների ուղղում չի թույլատրվում:
- 7 Ըստ ի՞նչպիսի՞ հատկանիշների են դասակարգվում փաստաթղթերը.
- 8 Որո՞նք են համարվում ներքին փաստաթղթեր (բերել օրինակներ).
- 9 Որո՞նք են համարվում արտաքին փաստաթղթեր (բերել օրինակներ).
10. Որո՞նք են ըստ նշանակման դասակարգված փաստաթղթերը
- 11 Որո՞նք են համարվում կարգադրողական փաստաթղթերը (բերել օրինակներ):
- 12 Որո՞նք են համարվում կատարողական կամ արդարացուցիչ փաստաթղթերը (բերել օրինակներ).
13. Ի՞նչու՞ դրամարկղային և բանկային փաստաթղթերում սխալների ուղղում չի թույլատրվում.
14. Ի՞նչ է փաստաթղթաշրջանառությունը և ո՞րն է դրա նշանակությունը
15. Ի՞նչումն է կայանում գույքագրման նշանակությունը.
- 16 Ի՞նչ ենք հասկանում գույքագրում ասելով.
17. Ո՞րն է ըստ ստուգման ծավալի գույքագրումը:

18. Ո՞րն է ըստ նպատակի և հիմնավորման գույքագրումը
19 Ինչպե՞ս են արտացոլվում հաշվառման մեջ գույքագրման արդյունքները:

Տեստեր

1. Ե՞րբ պետք է կազմվի սկզբնական փաստաթուղթը.

- ա) գործառնության կատարման պահին,
բ) դրամական վճարումներ կատարելուց հետո,
գ) գործառնության կատարման պահին, իսկ եթե դա հնարավոր չէ, ապա գործառնության ավարտից անմիջապես հետո

2. Ի՞նչ են փաստաթղթերի վավերապայմանները.

- ա) փաստաթղթի կազմման հրահանգը,
բ) պահպանման կարգը,
գ) փաստաթղթի հիմնական ցուցանիշները:

3. Գույքագրման ժամանակ բացահայտված պակասորդը.

- ա) ճանաչվում է որպես եկամուտ,
բ) ճանաչվում է որպես ծախս,
գ) դուրս է գրվում չբաշխված շահույթի հաշվին.

4. Գույքագրման ժամանակ հայտնաբերված ավելցուկը.

- ա) ճանաչվում է որպես եկամուտ,
բ) ճանաչվում է որպես ծախս,
գ) դուրս է գրվում պահուստային կապիտալի հաշվին:

5. Նշվածներից ո՞ր դեպքում գույքագրումը պարտադիր է.

- ա) յուրաքանչյուր տարվա սկզբում,
բ) յուրաքանչյուր եռամսյակի սկզբում,
գ) յուրաքանչյուր տարվա վերջում՝ տարեկան հաշվետվություններ կազմելուց առաջ:

6. Նշվածներից ո՞ր դեպքում գույքագրումը պարտադիր չէ.

- ա) չօգտագործվող ակտիվները վաճառելու դեպքում,
բ) նյութական պատասխանատու անձի փոփոխման դեպքում,
գ) յուրաքանչյուր տարվա վերջում՝ տարեկան հաշվետվություններ կազմելուց առաջ:

ԳԼՈՒԽ 4

ՏՆՏԵՍԱԿԱՆ ԳՈՐԾԸՆԹԱՑՆԵՐԻ ՀԱՇՎԱՌՈՒՄԸ

ԽՆԴԻՐ 4.1

Պահանջվում է կազմակերպության հաշվապահական հաշվառման մեջ արտացոլել մատակարարման գործընթացը՝ Ստորև բերված տվյալների հիման վրա.

- կազմել ժամանակագրական գրանցման մատյան,
- բացել սինթետիկ հաշիվները և նրանցում արտացոլել տնտեսական գործառնությունները,
- որոշել հաշիվներում հաշվետու ամսվա շրջանառությունները և վերջնական մնացորդները,
- որոշել ձեռք բերված նյութական արժեքների փաստացի ինքնարժեքը.

Տվյալներ. Մատակարարման գործընթացի հաշվառման համար հաշվետու ամսվա սկզբին հաշիվների մնացորդները.

N	Հաշվի ծածկ ազիրը	Հաշիվների անվանումը	Գումարը դրամ
1.	111	Հիմնական միջոցներ	160 000
2.	211	Նյութեր	90 000
3	214	Անավարտ արտադրություն	40 000
4.	251	Դրամարկդ	3 000
5.	252	Հաշվարկային հաշիվ	150 000
6.	311	Կանոնադրական կապիտալ	243 000
7	521	Կրեդիտորական պարտքեր գնումների գծով	200 000

Հաշվետու ամսվա ընթացքում կատարված մատակարարման գործընթացի տնտեսական գործառնությունները.

N	Տնտեսական գործառնությունների բովանդակությունը	Գումարը, դրամ
1	2	3
1	Մատակարարից ապառիկ ստացվել են նյութեր՝ ձեռքբերման գներով ԱԱՀ	125 000 ?
2	Ստացվել է տրանսպորտային կազմակերպության հաշիվը նյութերի տեղափոխման համար՝ սակագներով ԱԱՀ	15 000 ?
3	Հաշվարկվել է աշխատավարձ նյութերը բեռնաթափող բանվորներին	30 000
4.	Կատարվել է պարտադիր սոցիալական ապահովագրության հատկացումներ բեռնաթափող բանվորների համար	8 000
5.	Հաշվարկային հաշվից մարվել են գնումների գծով	
1	2	3
	Կրեդիտորական պարտքերը	84 000
6	Հաշվարկային հաշվից փոխանցվել է տրանսպորտային կազմակերպության պարտքը նյութերի տեղափոխման համար	15 000

ԽՆԴԻՐ 4.2

Պահանջվում է. կազմակերպության հաշվապահական հաշվառման մեջ արտացոլել մատակարարման գործընթացը: Ստորև բերված տվյալների հիման վրա

- կազմել ժամանակագրական գրանցման մատյան,
- բացել սինթետիկ հաշիվները և նրանցում արտացոլել տնտեսական գործառնությունները,
- որոշել հաշիվներում հաշվետու ամսվա շրջանառությունները և վերջնական մնացորդները,
- որոշել ձեռք բերված նյութական արժեքների փաստացի ինքնարժեքը:

Տվյալներ. Մատակարարման գործընթացի հաշվառման համար հաշվետու ամսվա սկզբին հաշիվների մնացորդները.

N	Հաշվի ծածկ ազիրը	Հաշիվների անվանումը	Գումարը, դրամ
1	111	Հիմնական միջոցներ	150 000
2	211	Նյութեր, այդ թվում.	65 000
		Ա. նյութ	40 000
		Բ նյութ	25 000
3.	214	Անավարտ արտադրություն	5 000
4.	261	Ընթացիկ ակտիվներ հետաձգված հարկերի գծով	20 000
5.	252	Հաշվարկային հաշիվ	100 000
6.	311	Կանոնադրական կապիտալ	160 000
7.	521	Կրեդիտորական պարտք գնումների գծով	180 000

Հաշվետու ամսվա ընթացքում կատարված մատակարարման գործընթացի տնտեսական գործառնությունները.

N	Տնտեսական գործառնությունների բովանդակությունը	Գումարը, դրամ
1	2	3
1.	Մատակարարից ապառիկ ստացվել և մուտքագրվել են պահեստ նյութեր՝ ձեռքբերման գներով	
	Ա. նյութ	26 000
	Բ. նյութ	14 000
	Ընդամենը	40 000
	ԱԱՀ	?
	Ընդամենը վճարման ենթակա	?
2.	Ստացվել է տրանսպորտային կազմակերպության	
1	2	3
	հաշիվը նյութերը տեղափոխելու համար՝ սակագներով	5 000
	ԱԱՀ	?
	Ընդամենը վճարման ենթակա	6 000
3.	Հաշվարկային հաշվից վճարվել է պարտքը.	
	ա) մատակարարին	78 000
	բ) տրանսպորտային կազմակերպությանը	6 000
	Ընդամենը	84 000
4.	Հաշվամյան ենթակա է դարձել ԱԱՀ-ի գծով հետաձգված հարկը	?
5.	Մատակարարից ապառիկ ստացվել և մուտքագրվել են պահեստ նյութեր՝ ձեռքբերման գներով	
	Բ. նյութ	5 000
	Գ. նյութ	8 000
	Ընդամենը	13 000
	ԱԱՀ	?
	Ընդամենը վճարման ենթակա	?
6.	Հաշվարկվել է աշխատավարձ նյութերը բեռնաթափող բանվորներին	100 000

7	Այդ նույն բանվորների համար կատարվել է պարտադիր սոցիալական ապահովությանը հատկացումներ	19 000
---	--	--------

ԽՆԴԻՐ 4.3

Պահանջվում է կազմակերպության հաշվապահական հաշվառման մեջ արտացոլել արտադրական գործընթացը: Ստորև բերված տվյալների հիման վրա

- կազմել ժամանակագրական գրանցման մատյան,
- բացել սինթետիկ հաշիվները և նրանցում արտացոլել տնտեսական գործառնությունները,
- որոշել հաշիվներում հաշվետու ամսվա շրջանառությունները և վերջնական մնացորդները,
- որոշել ձեռք բերված նյութական արժեքների փաստացի ինքնարժեքը,
- որոշել պատրաստի արտադրանքի փաստացի ինքնարժեքը,
- կազմել կազմակերպության հաշվապահական հաշվեկշիռը 200X թ փետրվարի 1-ի դրությամբ:

Տվյալներ. Կազմակերպության հաշվապահական հաշվեկշիռը 200Xթ. դեկտեմբերի 31-ի դրությամբ.

ԱԿՏԻՎ	Գումարը,դր.
1	2
I. Ոչ ընթացիկ ակտիվներ	
Հիմնական միջոցներ	230 000
Ընդամենը ոչ ընթացիկ ակտիվներ	230 000
II. Ընթացիկ ակտիվներ	
Նյութեր	24 000
Անավարտ արտադրություն	6 000
Դրամական միջոցներ (այդ թվում՝ դրամարկղ-3 000 դրամ,	140 000
1	2
հաշվարկային հաշիվ-137 000 դրամ)	
Ընդամենը ընթացիկ ակտիվներ	170 000
Հ Ա Շ Վ Ե Կ Շ Ի Ռ	400 000
ՊԱՍԻՎ	Գումար,դր.
III. Սեփական կապիտալ	
Կանոնադրական կապիտալ	200 000
Կուտակված շահույթ	70 000
Ընդամենը սեփական կապիտալ	270 000
IV. Ոչ ընթացիկ պարտավորություններ	
Բանկի երկարաժամկետ վարկ	-
Ընդամենը ոչ ընթացիկ պարտավորություններ	-
V. Ընթացիկ պարտավորություններ	
Կրեդիտորական պարտք գնումների գծով	30 000
Կրեդիտորական պարտք աշխատավարձի վճարման գծով	100 000
Ընդամենը ընթացիկ պարտավորություններ	130 000
Հ Ա Շ Վ Ե Կ Շ Ի Ռ	400 000

Հունվար ամսվա ընթացքում կազմակերպությունում կատարված տնտեսական գործառնությունները.

N	Տնտեսական գործառնությունների բովանդակությունը	Գումարը, դր.
1	2	3
1	Անավարտ արտադրության սկզբնական մնացորդը տեղափոխվել է հիմնական արտադրության հաշվին	6 000
2.	Արտադրանքի թողարկման համար պահեստից բաց է թողնվել արտադրություն նյութեր	20 000
3.	Հաշվարկվել է աշխատավարձ. ա) հիմնական արտադրության բանվորներին բ) արտադրամասի կառավարման և սպասարկող անձնակազմին գ) վարչական անձնակազմին	300 000 120 000 160 000
	Ընդամենը	580 000
4	Կատարվել են հատկացումներ պարտադիր սոցիալական ապահովագրության համար՝ ա) հիմնական արտադրության բանվորներին բ) արտադրամասի կառավարման և սպասարկող անձնակազմին գ) վարչական անձնակազմին	65 000 18 000 32 000
	Ընդամենը	115 000
5	Հաշվարկվել է մաշվածություն ա) արտադրական նշանակություն ունեցող հիմնական միջոցների համար բ) վարչական նշանակություն ունեցող հիմնական միջոցների համար	3 000 4 000
	Ընդամենը	7 000
6.	Դուրս են գրվել անուղղակի արտադրական	
1	2	3
	ծախսումները	?
7.	Դուրս են գրվել վարչական ծախսերը ֆինասական արդյունք հաշվին	?
8.	Թողարկվել և պահեստ է մուտքագրվել պատրաստի արտադրանք փաստացի ինքնարժեքով (ամսվա վերջին անավարտ արտադրություն չկա)	?

ԽՆԴԻՐ 4.4

Պահանջվում է կազմակերպության հաշվապահական հաշվառման մեջ արտացոլել արտադրական գործընթացը: Ստորև բերված տվյալների հիման վրա

- կազմել ժամանակագրական գրանցման մատյան,
- բացել սինթետիկ հաշիվները և նրանցում արտացոլել տնտեսական գործառնությունները,
- որոշել հաշիվներում հաշվետու ամսվա շրջանառությունները և վերջնական մնացորդները,
- որոշել ձեռք բերված նյութական արժեքների փաստացի ինքնարժեքը,

- որոշել պատրաստի արտադրանքի փաստացի ինքնարժեքը,
- կազմել կազմակերպության հաշվապահական հաշվեկշիռը 200Xթ մարտի 1-ի դրությամբ:
-

Տվյալներ. Կազմակերպության հաշվապահական հաշվեկշիռը 200X թ փետրվարի 1-ի դրությամբ.

ԱԿՏԻՎ		Գումարը, դրամ
1		2
I. Ոչ ընթացիկ ակտիվներ		
Հիմնական միջոցներ		320 000
Ընդամենը ոչ ընթացիկ ակտիվներ		320 000
II. Ընթացիկ ակտիվներ		
Նյութեր		90 000
Անավարտ արտադրություն		6 000
Դրամական միջոցներ (այդ թվում՝ դրամարկղ-4 000 դրամ, հաշվարկային հաշիվ-180 000 դրամ)		184 000
Ընդամենը ընթացիկ ակտիվներ		280 000
Հ Ա Շ Վ Ե Կ Շ Ի Ռ		600 000
ՊԱՍԻՎ		Գումարը, դրամ
III. Սեփական կապիտալ		
Կանոնադրական կապիտալ		350 000
Կուտակված շահույթ		70 000
Ընդամենը սեփական կապիտալ		420 000
IV. Ոչ ընթացիկ պարտավորություններ		
Բանկի երկարաժամկետ վարկ		
Ընդամենը ոչ ընթացիկ պարտավորություններ		
V. Ընթացիկ պարտավորություններ		
1		2
Կրեդիտորական պարտք գնումների գծով		20 000
Կրեդիտորական պարտք աշխատավարձի վճարման գծով		160 000
Ընդամենը ընթացիկ պարտավորություններ		
Հ Ա Շ Վ Ե Կ Շ Ի Ռ		600 000

Կազմակերպության 200Xթ. փետրվար ամսում կատարված տնտեսական գործառնությունները.

N	Տնտեսական գործառնությունների բովանդակությունը	Գումարը, դրամ
1	2	3
1.	Հաշվարկվել է աշխատավարձ արտադրանքը թողարկող բանվորներին	260 000
2.	Կատարվել են սոցիալական ապահովագրության հատկացումներ արտադրանքը թողարկող բանվորների համար	58 000

3.	Արտադրանքի թողարկման համար ծախսվել են նյութեր	34 000
4.	Դրամարկղից տրվել է կազմակերպության աշխատակիցներին առհաշիվ գումար	3 000
5.	Դուրս են գրվել ընթացիկ ամսվա ծախսերին առհաշիվ տրված գումարները, որոնք ծախսվել են արտադրական կարիքների համար	2 700
6.	Արտացուլվել է կրեդիտորների պարտքը արտադրական բնույթի ծառայությունների ստացման դիմաց	6 000
7.	Հիմնական արտադրությունից հետ են վերադարձվել և մուտքագրվել պահեստ տնտեսված նյութերը	4 000
8.	Հիմնական արտադրությունից մուտքագրվել է պահեստ պատրաստի արտադրանք՝ փաստացի ինքնարժեքով (գումարը որոշել, անավարտ արտադրության մնացորդը ամսվա վերջին կազմել է 2 000 դրամ)	?

ԽՆԴԻՐ 4.5

Պահանջվում է կազմակերպության հաշվապահական հաշվառման մեջ արտացուլել իրացման գործընթացը. Ստորև բերված տվյալների հիման վրա.

- կազմել ժամանակագրական գրանցման մատյան,
- բացել սինթետիկ հաշիվները և նրանցում արտացուլել տնտեսական գործառնությունները,
- որոշել հաշիվներում հաշվետու ամսվա շրջանառությունները և վերջնական մնացորդները,
- որոշել և դուրս գրել արտադրանքի իրացումից ֆինանսական հետևանքները,
- կազմել կազմակերպության հաշվապահական հաշվեկշիռը 200X թ. մարտի 1-ի դրությամբ:

Տվյալներ. Կազմակերպության հաշվապահական հաշվեկշիռը 200X թ. փետրվարի 1-ի դրությամբ.

ԱԿՏԻՎ	Գումարը, դրամ
I. Ոչ ընթացիկ ակտիվներ	
Հիմնական միջոցներ	160 000
Ընդամենը ոչ ընթացիկ ակտիվներ	160 000
II. Ընթացիկ ակտիվներ	
Նյութեր	60 000
Անավարտ արտադրություն	140 000
Դրամական միջոցներ (այդ թվում՝ դրամարկղ-2 000 դրամ, հաշվարկային հաշիվ-138 000 դրամ)	140 000
Ընդամենը ընթացիկ ակտիվներ	340 000
Հ Ա Շ Կ Ե Կ Շ Ի Ռ	500 000
ՊԱՍԻՎ	Գումարը, դրամ
III. Սեփական կապիտալ	

Կանոնադրական կապիտալ	300 000
Կուտակված շահույթ	30 000
Ընդամենը սեփական կապիտալ	330 000
IV. Ոչ ընթացիկ պարտավորություններ	
Բանկի երկարաժամկետ վարկ	
Ընդամենը ոչ ընթացիկ պարտավորություններ	
V. Ընթացիկ պարտավորություններ	
Կրեդիտորական պարտք գնումների գծով	60 000
Կրեդիտորական պարտք աշխատավարձի վճարման գծով	110 000
Ընդամենը ընթացիկ պարտավորություններ	170 000
Յ Ա Շ Վ Ե Կ Շ Ի Ռ	500 000

200Xթ փետրվար ամսում կազմակերպության կատարված տնտեսական գործառնությունները

N	Տնտեսական գործառնությունների բովանդակությունը	Գումարը, դրամ
1	2	3
1	Հիմնական արտադրությունից թողարկվել և մուտքագրվել է պահեստ պատրաստի արտադրանք փաստացի ինքնարժեքով (50 հատ)	100 000
2	Իրացվող արտադրանքի փաթեթավորման համար պահեստից բաց են թողնվել նյութեր	2 000
3	Պահեստից առաքվել է պատրաստի արտադրանք փաստացի ինքնարժեքով (45 հատ). Գումարը որոշել ելնելով թիվ 1 գործառնությունից.	?
4.	Հաշվարկվել է աշխատավարձ իրացված արտադրանքը բեռնող բանվորների	14 000
5.	Այդ նույն աշխատողների համար կատարվել է հատկացումներ պարտադիր սոցիալական ապահովագրությանը	?
1	2	3
6	Հաշվարկային հաշիվ է մուտքագրվել գնորդներից, արտադրանքի իրացումից ստացված հասույթը	110 000
7.	Դուրս է գրվել վաճառված պատրաստի արտադրանքը փաստացի ինքնարժեքով (45 հատ)	?
8.	Դուրս են գրվել իրացման ծախսերը	?
9.	Որոշել և ձևակերպել փետրվար ամսվա իրացված արտադրանքի ֆինանսական հետևանքը	?

ԽՆԴԻՐ 4.6

Պահանջվում է կազմակերպության հաշվապահական հաշվառման մեջ արտացոլել իրացման գործընթացը. Ստորև բերված տվյալների հիման վրա.

- կազմել ժամանակագրական գրանցման մատյան,
- բացել սինթետիկ հաշիվները և նրանցում արտացոլել տնտեսական գործառնությունները,
- որոշել հաշիվներում հաշվետու ամսվա շրջանառությունները և վերջնական մնացորդները,

- որոշել և ձևակերպել արտադրանքի իրացումից ֆինանսական հետևանքները,
- կազմել կազմակերպության հաշվապահական հաշվեկշիռը 200X թ. ապրիլի 1-ի դրությամբ.

Տվյալներ. Կազմակերպության հաշվապահական հաշվեկշիռը 200X թ. մարտի 1-ի դրությամբ.

ԱԿՏԻՎ	Գումարը, դրամ
1	2
I. Ոչ ընթացիկ ակտիվներ	
Հիմնական միջոցներ	150 000
Ընդամենը ոչ ընթացիկ ակտիվներ	150 000
II. Ընթացիկ ակտիվներ	
Նյութեր	20 000
Անավարտ արտադրություն	65 000
Դրամական միջոցներ (այդ թվում՝ դրամարկդ-2 000 դրամ, հաշվարկային հաշիվ-93 000 դրամ)	95 000
Ընդամենը ընթացիկ ակտիվներ	180 000
Հ Ա Շ Վ Ե Կ Շ Ի Ռ	330 000
ՊԱՍԻՎ	Գումարը, դրամ
III. Սեփական կապիտալ	
Կանոնադրական կապիտալ	204 000
Կուտակված շահույթ	6 000
Ընդամենը սեփական կապիտալ	210 000
IV. Ոչ ընթացիկ պարտավորություններ	
Բանկի երկարաժամկետ վարկ	
Ընդամենը ոչ ընթացիկ պարտավորություններ	
1	2
V. Ընթացիկ պարտավորություններ	
Կրեդիտորական պարտք գնումների գծով	15 000
Կրեդիտորական պարտք աշխատավարձի վճարման գծով	105 000
Ընդամենը ընթացիկ պարտավորություններ	120 000
Հ Ա Շ Վ Ե Կ Շ Ի Ռ	330 000

200Xթ. մարտ ամսում կազմակերպության կատարված տնտեսական գործառնությունները.

N	Տնտեսական գործառնությունների բովանդակությունը	Գումարը, դրամ
1	2	3
1.	Հիմնական արտադրությունից թողարկվել և մուտքագրվել է պահեստ պատրաստի արտադրանք փաստացի ինքնարժեքով (8 հատ)	62 000
2	Իրացվող արտադրանքի փաթեթավորման համար պահեստ-	1 000

	տից բաց են թողնվել նյութեր	
3.	Պահեստից առաքվել է պատրաստի արտադրանք փաստացի ինքնարժեքով (6 հատ)։ Գումարը որոշել էլնելով թիվ 1 գործառնությունից։	?
4.	Դրամարկդից վճարվել է ապրանքագետ Ա.Գևորգյանին առհաշիվ գումար	6 000
5.	Ապրանքագետ Ա Գևորգյանը վճարել է իրացված արտադրանքի բեռնման դիմաց	5 000
6	Ստացվել է տրանսպորտային կազմակերպության հաշիվը վաճառված արտադրանքի տեղափոխման համար	2 900
7.	Արտադրանքի վաճառքից ստացված հասույթը մուտքագրվել է հաշվարկային հաշիվ	64 000
8.	Արտադրանքի վաճառքից հասույթը դուրս է գրվել ֆինանսական արդյունք հաշվին	?
9	Վաճառված արտադրանքի ինքնարժեքը դուրս է գրվել ֆինանսական արդյունք հաշվին	?
10	Իրացման ծախսերը դուրս են գրվել ֆինանսական արդյունք հաշվին	?
11.	Որոշել և ծեփակել մարտ ամսվա իրացված արտադրանքի ֆինանսական հետևանքը։	?

ԲԱԺԻՆ II. ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ՀԱՇՎԱՌՈՒՄ

ԳԼՈՒԽ 5

ՀԻՄՆԱԿԱՆ ՄԻՋՈՑՆԵՐԻ ՀԱՇՎԱՌՈՒՄ

ԽՆԴԻՐ 5.1

Ստորև բերված տվյալների հիման վրա կատարել հիմնական միջոցների խմբավորում ըստ դրանց տեսակների

Հ/հ	Հիմնական միջոցների անվանումը	Գումարը, դրամ
1	2	3
1.	Գրասենյակային պահարաններ	125 000
2.	Վարչական շենք	3 500 000
3.	Էներգետիկ սարքավորում	500 000
4.	Ջեռուցման կաթսա	680 000
5.	Ջրասարքավորումներ	820 000
6.	Ղազգահներ	160 000
7.	Հսկիչ սարքավորում	200 000
8.	Համակարգիչներ	440 000
9.	Էլեկտրահաղորդման գծեր	150 000
10.	Խառատային հաստոցներ	1 800 000
11.	Ավտոկառեր	825 000
12.	Ջրամատակարարման ցանց	550 000
13.	Մամլման հաստոցներ	1 200 000
14.	Նյութերի պահեստի շենք	2 000 000
15.	Ֆրեզերային հաստոցներ	1 500 000
16.	Բեռնատար ավտոմեքենաներ	1 200 000
17.	Հավաքման արտադրամասի շենք	3 200 000
18.	Մեխանիկական արտադրամասի շենք	3 600 000
19.	Մարդատար ավտոմեքենա	1 000 000
20.	Գրասեղաններ	50 000
21.	Գործիքներ	150 000
22.	Պարիսպ մետաղյա	1 000 000
23.	Սառնարաններ	450 000
24.	Տնտեսական գույք	300 000
25.	Էլեկտրական շաղափիչ	45 000
26.	Հեռուստացույց	180 000
27.	Բանվորական սեղաններ	150 000
28.	Գրադարանային ֆոնդ	280 000
29.	Գազերի խողովակաշար	850 000
	Ընդամենը	26 905 000

Հիմնական միջոցների խմբավորումը կատարել աղյուսակում ըստ ստորև բերված ձևի

Խմբի համարը	Հիմնական միջոցների խումբը	Հիմնական միջոցների անվանումը	Գումարը
-------------	---------------------------	------------------------------	---------

ԽՆԴԻՐ 5.2

Ստորև բերված տվյալների հիման վրա կազմել հիմնական միջոցների ընդունման, շահագործման հանձնման-ընդունման ակտեր և բացել գույքային քարտ:

Տվյալներ. «Հորիզոն» ԲԲԸ-ի ղեկավարի 200Xթ. հունվարի 10-ի թիվ 12 հրամանի հիման վրա ստեղծվել է հանձնաժողով հետևյալ կազմով՝ հավաքման արտադրամասի պետ Ա.Ստեփանյան, գլխավոր մեխանիկ Կ.Պետրոսյան, առաջատար ինժեներ Ս Ավագյան, տեխնոլոգ Ա Ավետիսյան, հաշվապահ Վ Կարապետյան 200Xթ. հունիսի 3-ին հանձնաժողովը «Երևան հաստոց» ԲԲԸ-ից ընդունել է կտրող ունիվերսալ հաստոց՝ նույն թվականի մայիսի 25-ին դուրսգրված թիվ 34 հաշիվ-ապրանքագրով: Հաստոցը մուտքագրվել է սարքավորումների պահեստ Սարքավորման թողարկման ամսաթիվը 18 մայիսի 200Xթ., տեխնիկական անձնագրի համարը՝ 426, գործարանային համարը 1261238, զանգվածը՝ 15,5 տոննա, ձեռք բերման արժեքը՝ 2 000 000 դրամ. Ձեռք բերման ժամանակ կատարվել են փոխադրման ծախսումներ ըստ թիվ 42 հաշիվ-ապրանքագրի՝ 50 000 դրամ գումարով. Հաստոցի ընդունման ժամանակ հանձնաժողովի կողմից կատարվել է զննում, որի արդյունքում թերություններ չեն հայտնաբերվել: Տեխնիկական անձնագիրը և հաշիվ-ապրանքագրերը կցվում են ակտին, որը համարակալված է 22 թվով. Նույն թվականի հուլիսի 15-ին հաստոցը շահագործման է հանձնվել նախապատրաստական արտադրամասում, որի վերաբերյալ կազմվել է թիվ 27 ակտը: Օբյեկտին տրվել է գույքային համար Ս 4112 Հանձնաժողովի կողմից սահմանվել է օգտակար ծառայության ժամկետը 7 տարի, մաշվածությունը հաշվարկվելու է գծային եղանակով Հաստոցի համար բացվել է թիվ 154 գույքային քարտը:

ԽՆԴԻՐ 5.3

Ստորև բերված տվյալների հիման վրա կազմել հիմնական միջոցների շահագործման հանձնման-ընդունման ակտը և բացել գույքային քարտը:

Տվյալներ. Կազմակերպությունը ձեռք է բերել մեխանիկական մամլիչ, որը շահագործման է հանձնվել մամլման արտադրամասում. Մամլիչի գործարանային համարը 601, տեխնիկական անձնագրի համարը 2164132, քաշը 30 տոննա: Ըստ թիվ 44 հաշիվ-ապրանքագրի, որը մատակարարի կողմից դուրս է գրվել 200Xթ սեպտեմբերի 4-ին, մամլիչի սկզբնական արժեքը 890 000 դրամ է: Սարքավորումը շահագործման է ընդունվել սեպտեմբերի 30-ին հանձնաժողովի կողմից (տես խնդիր 5.2), որը զննել է այն և թերություններ չի հայտնաբերել: Օգտակար ծառայությունը սահմանվել է 5 տարի, մաշվածությունը պետք է հաշվարկվի գծային եղանակով: Մամլիչին տրվել է գույքային համար Ս 4412 և բացվել է թիվ 155 գույքային քարտը:

ԽՆԴԻՐ 5.4

Ստորև բերված տվյալների հիման վրա կազմել հիմնական միջոցների դուրս գրման ակտ:

Տվյալներ. «Հորիզոն» ԲԲԸ-ի գլխավոր տնօրենի 200Xթ. մայիսի 20-ի թիվ 45 հրամանով ստեղծվել է լուծարային հանձնաժողով, որի կազմում ընդգրկվել են գլխավոր ինժեներ Պ.Ոսկանյանը, ինժեներ Դ Հարությունյանը, գլխավոր հաշվապահ Վ Կարապետյանը:

200Xթ. սեպտեմբերի 20-ին հանձնաժողովի կողմից կատարվել է պատրաստի արտադրանքի պահեստի շենքի լուծարում: Հանձնաժողովը գնել է շենքը և համարելով այն վթարային վիճակում, եզրակացրել է, որ շենքը անհրաժեշտ է լուծարել. Շենքը կառուցվել է 1955թ. սեպտեմբերին և շահագործման է հանձնվել 1956թ. հունվարի 3-ից: Շենքի գույքային համարը 1855 է, օգտակար ծառայությունը 40 տարի, վերագնահատված արժեքը 2 800 000 դրամ է: Դուրս գրման պահին շենքի արժեքը ամբողջությամբ ամորտիզացվել է:

Լուծարման ժամանակ կատարվել են հետևյալ ծախսերը

ա) աշխատավարձի բաշխման թիվ 121 տեղեկագրի համաձայն հաշվարկվել է աշխատավարձ լուծարող բանվորներին 50 000 դրամ,

բ) նույն տեղեկագրի համաձայն կատարվել են մասհանումներ սոցիալական ապահովագրության համար 10 000 դրամ:

ԽՆԴԻՐ 5.5

Պահանջվում է կազմել հիմնական միջոցների մուտքագրման ձևակերպումները և դրանք գրանցել սինթետիկ հաշիվներում.

Յ/հ	Գործառնությունների բովանդակությունը	Գումարը, դրամ
1	2	3
1	Հիմնական միջոցների շահագործման հանձնման-ընդունման թիվ 13 ակտի համաձայն կազմակերպության շինարարության բաժնից ընդունվել և շահագործման է հանձնվել ձևման արտադրամասի շենքը	35 000 000
2	Հիմնական միջոցների ընդունման թիվ 20 ակտի համաձայն անհատույց ստացվել են հղկող հաստոցներ, որոնք գնահատվել են փոխանցող կողմի փաստաթղթերի տվյալներով: Հաստոցները հանձնվել են պահեստ	1 600 000
3	Հիմնական միջոցների շահագործման հանձնման-ընդունման թիվ 28 ակտի համաձայն անհատույց ստացված հաստոցները պահեստից շահագործման են հանձնվել մեխանիկական արտադրամաս	1 600 000
4	Հաստոցաշինական գործարանից ըստ թիվ 40 հաշիվ-ապրանքագրի ձեռք են բերվել ունիվերսալ հաստոցներ, որոնք թիվ 29 ակտի համաձայն շահագործման են հանձնվել հավաքման արտադրամաս՝ ա) սարքավորման արժեքը բ) ԱԱՀ	820 000 164 000
	Տրանսպորտային կազմակերպության կողմից կատարվել են փոխադրման, բեռնման-բեռնաթափման աշխատանքներ, որոնց համար վճարվել է հաշվարկային հաշվից ընդամենը այդ թվում ԱԱՀ	44 000 4 000 ?

5.	Մեքենաշինական գործարանից թիվ 52 հաշիվ-	
1	2	3
	ապրանքագրով ստացվել և թիվ 21 ընդունման ակտով պահեստ են մուտքագրվել տեղակայում պահանջող սարքավորումներ ա) ձեռք բերման արժեքը	1 500 000
	բ) ԱԱՀ	300 000
6	Հիմնական միջոցների ընդունման թիվ 22 ակտի համաձայն հիմնադիրներից ստացվել են տեղակայում պահանջող սարքավորումներ որպես ներդրում կանոնադրական կապիտալում	850 000
7.	Հիմնական միջոցների շահագործման հանձնման-ընդունման թիվ 30 ակտի համաձայն հիմնադիրներից ստացվել և շահագործման են հանձնվել տեղակայում չպահանջող սարքավորումներ	350 000
8	Կազմակերպությունը ձեռք է բերել «ՎԱԶ» մակնիշի մարդատար ավտոմեքենա ծառայողական նպատակներով օգտագործելու համար, որը շահագործման է հանձնվել թիվ 31 ակտով: Ավտոմեքենայի արժեքը ըստ մատակարարի հաշվի	1 000 000
	ԱԱՀ	200 000
	Ընդամենը	1 200 000

ԽՆԴԻՐ 5.6

Որոշել շահագործման հանձնված սարքավորումների սկզբնական արժեքը և կազմել դրանց ձեռք բերման և շահագործման հանձման ձևակերպումները.

Տվյալներ. «Հորիզոն» ԲԲԸ-ն ձեռք է բերել տեղակայման ենթակա սարքավորումներ, մատակարարին վճարելով հաշվարկային հաշվից 360 000 դրամ, այդ թվում ԱԱՀ 60 000 դրամ. Տրանսպորտային կազմակերպության ծառայությունները սարքավորումների տեղափոխման գծով կազմել են 24 000 դրամ, ներառյալ ԱԱՀ 4 000 դրամ. Սարքավորման տեղակայման համար կատարվել են հետևյալ ծախսումները

ա) հաշվարկվել է աշխատավարձ տեղակայում իրականացնող բանվորներին 30 000 դրամ,

բ) կատարվել են մասհանումներ պարտադիր սոցիալական ապահովագրության համար 5 000 դրամ,

գ) կատարվել են ծառայություններ օժանդակ արտադրամասի կողմից 25 000 դրամ.

ԽՆԴԻՐ 5.7

Ստորև բերված տվյալների հիման վրա որոշել կառուցվող օբյեկտի սկզբնական արժեքը և կազմել կառուցման ծախսումների և կառուցված օբյեկտի շահագործման հանձման գործառնությունների ձևակերպումները.

Տվյալներ. «Շանթ» ՓԲԸ-ն իրականացնում է արտադրական մասնաշենքի շինարարություն, որի համար հաշվետու տարում կատարվել են հետևյալ ծախսումները

- ծախսվել են նյութեր 10 000 000 դրամ,
- հաշվարկվել է աշխատավարձ շինարարությամբ զբաղված բանվորներին

4 000 000 դրամ,

- կատարվել են մասհանումներ պարտադիր սոցիալական ապահովագրության համար 800 000 դրամ,
- կատարվել են ծառայություններ տրանսպորտային կազմակերպության կողմից 50 000 դրամ, ԱԱՀ 10 000 դրամ,
- կատարվել են ծառայություններ օժանդակ արտադրամասի կողմից 100 000 դրամ,
- հաշվարկվել է շինարարական մեքենաների, սարքավորումների և գործիքների մաշվածությունը 80 000 դրամ:

Շինարարական աշխատանքները ավարտվել են տարվա վերջում: Կառուցված շենքը շահագործման է հանձնվել սկզբնական արժեքով:

ԽՆԴԻՐ 5.8

Կազմել հիմնական միջոցների կառուցման և տեղակայման գործառնությունների ձևակերպումները և որոշել կառուցված և տեղակայված օբյեկտների սկզբնական արժեքը ստորև բերված տվյալների հիման վրա:

Տվյալներ. «Հորիզոն» ԲԲԸ-ն տնտեսվարական եղանակով իրականացնում է հավաքման արտադրամասի շենքի շինարարություն: Հաշվետու ժամանակաշրջանի սկզբի դրությամբ անավարտ շինարարության ծախսումները կազմել են 8 000 000 դրամ: Հաշվետու ժամանակաշրջանում կատարվել են հետևյալ գործառնությունները.

Չ/հ	Գործառնությունների բովանդակությունը	Գումարը, դրամ
1	2	3
1.	Պահեստից բաց են թողվել շինանյութեր շինարարական տեղամասին հավաքման արտադրամասի շենքի շինարարության համար	4 000 000
2.	Հաշվարկվել է աշխատավարձ շենքի շինարարությամբ զբաղված բանվորներին	2 000 000
3.	Կատարվել են սոցիալական ապահովագրության մասհանումներ շինարարական աշխատանքներում զբաղված բանվորների համար	250 000
4.	Հաշվարկվել է շինարարական մեքենաների և գործիքների մաշվածությունը	150 000
5.	Ձևակերպվել է օժանդակ արտադրամասերի ծառայությունների օգտագործումը շենքի շինարարության նպատակով	200 000
6.	Դուրս են գրվել ավարտված շինարարության ծախսումները (գումարը որոշել)	?
7.	Շահագործման է հանձնվել հավաքման արտադրամասի կառուցված շենքը՝ սկզբնական արժեքով (գումարը որոշել)	?
8.	Մատակարարից թիվ 42 հաշիվ-ապրանքագրով ստացվել և հիմնական միջոցների ընդունման թիվ 14 ակտով պահեստ են մուտքագրվել տեղակայում պահանջող սարքավորումներ՝ ձեռք բերման արժեքը ԱԱՀ	500 000 100 000

1	2	3
9.	Տրանսպորտային կազմակերպության կողմից իրականացվել են տեղակայում պահանջող սարքավորումների փոխադրման ծառայությունները	120 000
10.	Հաշվետու ամօի կողմից վճարվել է տեղակայում պահանջող սարքավորումները մինչև կազմակերպության պահեստ տեղափոխելու համար	40 000
11.	Սարքավորումների տեղակայման հանձնման- ընդունման թիվ 2 ակտով սարքավորումները հանձնվել են նորոգման-մեխանիկական արտադրամասին՝ տեղակայման աշխատանքները իրականացնելու համար՝ Արտադրամասի կողմից կատարվել են հետևյալ ծախսումները՝	
	ա) ծախսվել են նյութեր	10 000
	բ) հաշվարկվել է աշխատավարձ տեղակայմամբ զբաղված բանվորներին	20 000
	գ) կատարվել են սոցիալական ապահովագրության մասհանումներ տեղակայման աշխատանքներում զբաղված բանվորների համար	5 000
	դ) հաշվարկվել է հիմնական միջոցների մաշվածությունը	2 000
	Ընդամենը	37 000
12.	Տեղակայված սարքավորումները հանձնվել են շահագործման՝ հիմնական միջոցների շահագործման հանձնման-ընդունման թիվ 6 ակտով (սկզբնական արժեքը որոշել)	?

ԽՆԴԻՐ 5.9

Ստորև բերված տվյալների հիման վրա հաշվարկել հիմնական միջոցների մաշվածությունը նրեք եղանակով

- գծային,
- նվազող մնացորդի,
- տարիների ընդհանուր գումարի հաշվարկման:

Որոշել հիմնական միջոցների հաշվեկշռային արժեքը յուրաքանչյուր տարվա վերջում:

Տվյալներ. Կազմակերպությունը 200X թ. ապրիլի 1-ին ձեռք է բերել սարքավորումներ, որոնց արժեքը 3 600 000 դրամ է: Սարքավորումների օգտակար ծառայությունը սահմանվել է 5 տարի: Մնացորդային արժեքը հավասար է 0. Արագացման գործակիցը 2 է:

ԽՆԴԻՐ 5.10

Ստորև բերված տվյալների հիման վրա հաշվարկել հիմնական միջոցների մաշվածությունը հետևյալ եղանակներով

- գծային,
- նվազող մնացորդի,
- տարիների ընդհանուր գումարի հաշվարկման:

Որոշել հիմնական միջոցների հաշվեկշռային արժեքը յուրաքանչյուր տարվա վերջում:

Տվյալներ. Կազմակերպությունը ձեռք է բերել սարքեր 500 000 դրամ արժեքով՝ դրանց օգտակար ծառայությունը սահմանվել է 5 տարի, իսկ մնացորդային արժեքը գնահատվել է 20 000 դրամ. Արագացման գործակիցը 2 է:

ԽՆԴԻՐ 5.11

Ստորև բերված տվյալների հիման վրա հաշվարկել հիմնական միջոցների մաշվածությունը արտադրված արտադրանքի միավորների քանակի համամասնությամբ. Որոշել հիմնական միջոցների հաշվեկշռային արժեքը յուրաքանչյուր տարվա վերջում:

Տվյալներ. Կազմակերպությունը ձեռք է բերել հաստոց, որի սկզբնական արժեքը գնահատվել է 1 800 000 դրամ, մնացորդային արժեքը 150 000 դրամ Հաստոցի օգտագործումից սպասվող արտադրանքի ծավալը 165 000 միավոր է: Արտադրանքի փաստացի թողարկումը ըստ տարիների կազմել է. I տարի՝ 30 000 միավոր, II տարի՝ 35 000 միավոր, III տարի՝ 35 000 միավոր, IV տարի՝ 33 000 միավոր, V տարի՝ 32000 միավոր:

ԽՆԴԻՐ 5.12

Ստորև բերված տվյալների հիման վրա կատարել հիմնական միջոցների մաշվածության հաշվարկը հունվար ամսվա համար գծային եղանակով: Հաշվարկը կատարել հետևյալ ձևի աղյուսակում.

Հ/հ	Հիմնական միջոցների խմբերը և տեսակները	Սկզբնական արժեքը	Մաշվածության գումարը	Տարեկան մաշվածություն	Մաշվածության ամսական գումարը	Դեբետա գրվող հաշիվը

Տվյալներ. Հիմնական միջոցների առկայությունը ըստ ստորաբաժանումների և տեսակների հետևյալն է

Հ/հ	Օբյեկտի անվանումը	Սկզբնական արժեքը	Մնացորդային արժեքը	Օգտակար ծառայությունը
1	2	3	4	5
I. Հիմնական արտադրանքներ				
1.	Շենքեր քարե	10 000 000	-	20
2	Շենքեր երկաթբետոնյա հիմնակմախքով	8 000 000	-	20
3	Ավտոմատացված հոսքային գիծ	5 000 000	200 000	3
4	Խառատային հաստոցներ	2 000 000	100 000	5
5	Մետաղահատ հաստոցներ	1 500 000	80 000	5
6.	Մեխանիկական հաստոցներ	1 250 000	50 000	5
7.	Ինքնագնաց սայլակ	820 000	-	5
8.	Բեռնման մեքենաներ	1 000 000	50 000	5

9.	Գործիքներ	500 000	-	5
1	2	3	4	5
	Ընդամենը	30 070 000	X	X
II. Օժանդակ արտադրամասեր				
10.	Շենքեր քարե	4 000 000	-	20
11.	Արտադրական գույք	1 000 000	-	5
12.	Բեռնատար ավտոմեքենա	2 000 000	100 000	5
13.	Գործիքներ	300 000	-	5
	Ընդամենը	7 300 000	X	X
III. Վարչություն				
14.	Շենքեր	8 000 000	-	20
15.	Տնտեսական գույք	680 000	-	5
16.	Համակարգիչներ	850 000	-	1
17.	Սառնարաններ	900 000	-	5
18.	Պատճենահանման սարք	450 000	-	5
	Ընդամենը	10 880 000		
	Ընդամենը ըստ կազմակերպության	48 250 000	X	X

ԽՆԴԻՐ 5.13

Ստորև բերված հիմնական միջոցների մաշվածության հաշվառման գործառնությունները արտացոլել հաշիվներում.

Հ/հ	Գործառնությունների բովանդակությունը	Գումարը, դրամ
1	2	3
1.	Հաշվարկվել է հիմնական միջոցների մաշվածությունը. ա) հիմնական արտադրամասերի շենքերի, սարքավորումների և այլ հիմնական միջոցների բ) օժանդակ արտադրամասերի շենքերի, սարքավորումների և գույքի գ) վարչական նշանակության հիմնական միջոցների դ) նոր արտադրական մասնաշենքի շինարարության համար օգտագործվող շինարարական մեքենաների	150 000 60 000 80 000 50 000
	Ընդամենը	340 000
2.	Սարքավորումները ժամանակավորապես հանվել են շահագործումից վերակառուցման նպատակով ա) սկզբնական արժեքը բ) կուտակված մաշվածությունը	500 000 200 000
3.	Դուրս է գրվել լուծարված հիմնական միջոցների կուտակված մաշվածությունը	480 000
4.	Հաշվարկվել է իրացման գործընթացի կազմակերպման հետ կապված հիմնական միջոցների մաշվածությունը	30 000
5.	Հաշվարկվել է գործառնական վարձակալության տրված շենքի մաշվածությունը	10 000
6.	Ձևակերպվել է հիմնական միջոցների վերագնահատման	

1	2	3
	հետևանքով մաշվածության աճի վերագրումը	
	ա) սեփական կապիտալին	12 000
	բ) եկամուտներին	4 000
	Ընդամենը	16 000
7.	Ֆինանսական վարձակալությամբ ստացված հիմնական միջոցների մաշվածությունը միացվել է սեփական հիմնական միջոցների մաշվածությանը	200 000
8	Ժամանակավորապես շահագործումից հանված սարքավորումները կրկին շահագործման են հանձնվել: Ձևակերպվել է՝	
	ա) սկզբնական արժեքի տեղափոխումը	500 000
	բ) կուտակված մաշվածության տեղափոխումը	200 000

ԽՆԴԻՐ 5.14

Ստորև բերված տվյալների հիման վրա պահանջվում է

- բացել սինթետիկ հաշիվները, գրանցել սկզբնական մնացորդները,
- ձևակերպել հիմնական միջոցների նորոգման, վերակառուցման գործառնությունները և դրանց գումարները գրանցել հաշիվներում,
- կազմել հաշվապահական հաշվեկշիռը հաշվետու ժամանակաշրջանի վերջի դրությամբ:

Տվյալներ Սինթետիկ հաշիվների մնացորդները 200Xթ մարտի 31-ի դրությամբ կազմել են.

Հաշ. ծածկ.	Հաշիվների անվանումը	Գումարը, դրամ
1	2	3
111	Շահագործման մեջ գտնվող մաշվող հիմնական միջոցներ	2 500 000
112	Շահագործման մեջ գտնվող հիմնական միջոցների մաշվածություն	580 000
118	Անավարտ ոչ ընթացիկ նյութական ակտիվներ (1183 «Հետագա կապիտալացվող ծախսումներ»)	300 000
211	Նյութեր	520 000
251	Դրամարկդ	50 000
252	Հաշվարկային հաշիվ	850 000
311	Կանոնադրական (բաժնեհավաք) կապիտալ	2 600 000
521	Կրեդիտորական պարտքեր գնումների գծով	140 000
524	Կարճաժամկետ կրեդիտորական պարտքեր բյուջեին	100 000
525	Կարճաժամկետ կրեդիտորական պարտքեր պարտադիր սոցիալական ապահովագրության գծով	150 000
527	Կրեդիտորական պարտքեր աշխատավարձի և աշխատակիցների այլ կարճաժամկետ հատուցումների գծով	650 000

200Xթ II եռամսյակում կատարվել են հետևյալ տնտեսական գործառնությունները

Յ/հ	Գործառնությունների բովանդակությունը	Գումարը, դրամ
1	2	3
1	Պահեստից թիվ 10 պահանջագրով բաց են թողնվել նյութեր նորոգման արտադրամասին՝ վարչական շենքի նորոգման համար	120 000
2.	Աշխատավարձի բաշխման տեղեկագրի համաձայն հաշվարկվել է աշխատավարձ վարչական շենքի նորոգմամբ զբաղված բանվորներին	80 000
3.	Կատարվել են սոցիալական ապահովագրության հատկացումներ նորոգող բանվորների համար	16 000
4	Հաշվարկվել է վարչական շենքի նորոգման համար օգտագործված սարքավորումների և գործիքների մաշվածությունը	14 000
5	Ստացվել է կապալառու կազմակերպության թիվ 42 հաշիվապարանքագիրը հիմնական արտադրամասի սարքավորումների նորոգման վերաբերյալ	120 000
6.	Հաշվարկային հաշվից փոխանցվել է կապալառուին հիմնական արտադրամասի սարքավորումների նորոգման արժեքը	120 000
7	Վերանորոգված, վերակառուցված և արդիականացված հիմնական միջոցների ընդունման-հանձնման թիվ 25 ակտի համաձայն դուրս են գրվել վարչական շենքի ավարտված նորոգման ծախսերը (գումարը որոշել)	?
8	Հավաքման արտադրամասի սարքավորումների արդիականացման նպատակով ծախսվել են	
	ա) նյութեր	50 000
	բ) պահեստամասեր	150 000
	Ընդամենը	200 000
9.	Հաշվարկվել է աշխատավարձ սարքավորումների արդիականացման աշխատանքներով զբաղված բանվորներին	130 000
10.	Կատարվել են հատկացումներ արդիականացման աշխատանքներով զբաղված բանվորների սոցիալական ապահովագրության համար	25 500
11	Դուրս են գրվել սարքավորումների արդիականացման ավարտված աշխատանքներին վերաբերող ծախսումները (գումարը որոշել)	?
12	Կապիտալացվում են սարքավորումների արդիականացման ծախսումները	?
13	Վարչական ծախսերը դուրս են գրվել ֆինանսական արդյունքին	?
14.	Որոշել և ձևակերպել հաշվետու եռամսյակի շահույթը կամ վնասը	?
	Ընդամենը	?

ԽՆԴԻՐ 5.15

Ստորև բերված տվյալների հիման վրա կազմել հիմնական միջոցների անհատույց փոխանցման ձևակերպումները և որոշել դուրս գրման ֆինանսական արդյունքը.

Տվյալներ. «Անահիտ» ԲԲԸ-ն անհատույց տրամադրել է 2 տպագրիչ սարք «Գալիք» ՍՊԸ-ին: Տպագրիչ սարքերի սկզբնական արժեքը 300 000 դրամ է, կուտակված մաշվածությունը 225 000 դրամ: «Անահիտ» ԲԲԸ-ն ապատեղակայման համար կատարել է հետևյալ ծախսումները

ա) հաշվարկվել է աշխատավարձ ապատեղակայմամբ զբաղված բանվորներին 10 000 դրամ,

բ) կատարվել են հատկացումներ պարտադիր սոցիալական ապահովագրության համար 2 000 դրամ,

գ) ստացվել է տրանսպորտային կազմակերպության հաշիվը սարքերի տեղափոխման համար 10 000 դրամ, ԱԱՀ՝ 2 000 դրամ:

Ձևակերպվում է բյուջե վճարման ենթակա ԱԱՀ-ն անհատույց փոխանցված տպագրիչ սարքերի գծով

ԽՆԴԻՐ 5.16

Ստորև բերված տվյալների հիման վրա կազմել հիմնական միջոցների վաճառքի ձևակերպումները. Որոշել և ձևակերպել հիմնական միջոցների վաճառքից ստացված ֆինանսական արդյունքը:

Տվյալներ. «Արևիկ» կարի ֆաբրիկան ապատեղակայել է կարի մեքենաներ և վաճառել դրանք կարի արհեստանոցին. Վաճառքի պահի դրությամբ մեքենաների վերագնահատված արժեքը կազմել է 650 000 դրամ, կուտակված մաշվածությունը 320 000 դրամ: Մեքենաները վաճառվել են 540 000 դրամով, այդ թվում ԱԱՀ 90 000 դրամ. Մեքենաների ապատեղակայման և տեղափոխման համար կատարվել են հետևյալ ծախսումները

ա) հաշվարկվել է աշխատավարձ բանվորներին 30 000 դրամ,

բ) կատարվել են հատկացումներ սոցիալական ապահովագրության համար 6 500 դրամ,

գ) տրանսպորտային արտադրամասի կողմից կատարվել են կարի մեքենաների տեղափոխման ծառայությունները 20 000 դրամ:

Գնորդի կողմից վճարումը կատարվելու է 2 ամսվա ընթացքում:

ԽՆԴԻՐ 5.17

Ստորև բերված տվյալների հիման վրա կազմել հիմնական միջոցների լուծարման հետ կապված գործառնությունների ձևակերպումները և որոշել լուծարման ֆինանսական արդյունքը.

Տվյալներ. Լուծարող հանձնաժողովը կատարել է ֆրեզերային հաստոցի զննում և որոշում է կայացրել հաստոցի լուծարման վերաբերյալ, որը ձևակերպվել է հիմնական միջոցների դուրսգրման ակտով: Հաստոցի սկզբնական արժեքը 900 000 դրամ է, կուտակված մաշվածությունը 750 000 դրամ: Հաստոցի ապատեղակայման համար հաշվարկվել է աշխատավարձ բանվորներին 8 000 դրամ, կատարվել են հատկացումներ սոցիալական ապահովագրության համար 5 000 դրամ: Լուծարքից ստացվել են պահեստամասեր 10 000 դրամ արժեքով և սև մետաղի ջարդոն 4 000 դրամ արժեքով:

ԽՆԴԻՐ 5.18

Կազմել հիմնական միջոցների դուրսգրման գործառնությունների ձևակերպումները և կատարել գրանցումներ հաշիվներում

Հ/հ	Գործառնությունների բովանդակությունը	Գումարը, դրամ
1	2	3
1.	Հիմնական միջոցների դուրսգրման թիվ 24 ակտի համաձայն լուծարվել է հաստոց սկզբնական արժեքը կուտակված մաշվածությունը հաշվեկշռային արժեքը (որոշել)	750 000 720 000 ?
2.	Թիվ 128 վճարման հանձնարարագրի համաձայն հաշվարկային հաշվից վճարվել է կապալառուին լուծարվող հաստոցի ապատեղակայման համար ապատեղակայման ծառայության արժեքը ԱԱՀ	8 000 1 600
	Ընդամենը	9 600
3.	Թիվ 153 մուտքի օրդերի համաձայն պահեստ են մուտքագրվել հաստոցի լուծարքից ստացված նյութերը	10 000
4.	Հիմնական միջոցների դուրսգրման թիվ 25 ակտի և առք ու վաճառքի պայմանագրի համաձայն վաճառվել է հաստոց սկզբնական արժեքը կուտակված մաշվածությունը հաշվեկշռային արժեքը	- 360 000 120 000 ?
5.	Հաշվարկվել է աշխատավարձ բանվորներին վաճառված հաստոցի ապատեղակայման համար	28 000
6.	Կատարվել են հատկացումներ սոցիալական ապահովագրության համար ապատեղակայմանը զբաղված բանվորներին հաշվարկված աշխատավարձի նկատմամբ	6 200
7.	Հաշվարկային հաշվում ստացվել է՝ հաստոցի վաճառքից եկամուտը՝ բացթողման արժեքով ԱԱՀ	280 000 ?
	Ընդամենը վաճառքի արժեքը	?
8.	Փակել եկամուտները հաշվառող հաշիվները	?
9.	Փակել ծախսերը հաշվառող հաշիվները	?
10.	Որոշել և ձևակերպել հիմնական միջոցների վաճառքի և լուծարքի ֆինանսական արդյունքը	?

ԽՆԴԻՐ 5.19

Ստորև բերված տվյալների հիման վրա դասակարգել հիմնական միջոցների վարձակալությունը և ձևակերպել վարձակալության ընդունումը վարձակալի մոտ:

Տվյալներ. «Կաթի կոմբինատ» ՍՊԸ-ն վարձակալության է ընդունել խտացրած կաթի մշակման սարքավորում 5 տարի ժամկետով, պայմանով, որ վարձակալության վերջում ակտիվի սեփականության իրավունքը անցնելու է նրան: Սարքավորման իրա-

կան արժեքը վարձակալության սկզբի դրությամբ 4 000 000 դրամ է, օգտակար ծառայությունը 7 տարի: Վարձակալական վճարները պետք է կատարվեն հավասարաչափ՝ 5 տարվա ընթացքում, եռամսյակային կտրվածքով: Վարձակալությամբ ենթադրվող տոկոսադրույքը հավասար է 8-ի:

ԽՆԴԻՐ 5.20

Ստորև բերված տվյալների հիման վրա դասակարգել հողամասի և շենքի վարձակալությունը և կազմել համապատասխան ձևակերպումները:

Տվյալներ. Կազմակերպությունը 15 տարի ժամկետով վարձակալության է ընդունել հողամասը և դրա վրա գտնվող շինությունը: Հողամասի պայմանագրային արժեքը 25 000 000 դրամ է, իսկ շենքի իրական արժեքը գնահատվել է 20 000 000 դրամ: Վարձակալության վերջում և շենքը, և հողամասը պետք է վերադարձվեն սեփականատիրոջը: Հողամասի համար վարձավճարը սահմանվել է տարեկան 1 000 000 դրամ, իսկ շենքի համար տարեկան 1 500 000 դրամ: Շենքի գծով նվազագույն վարձավճարները վարձակալության ընթացքում պետք է կազմեն 15 000 000 դրամ:

ԽՆԴԻՐ 5.21

Ստորև բերված տվյալների հիման վրա ձևակերպել հիմնական միջոցների ֆինանսական վարձակալության ընդունման և հանձնման գործառնությունները վարձատուի և վարձակալի մոտ:

Տվյալներ. «Օմեգա» ՓԲԸ-ի և «Քվանտ» ՍՊԸ-ի միջև կնքվել է ֆինանսական վարձակալության պայմանագիր, որի համաձայն «Օմեգա» ՍՊԸ-ն ֆինանսական վարձակալություն է փոխանցել «Քվանտ» ՍՊԸ-ին բեռնատար ավտոմեքենա 5 տարի ժամկետով: Ավտոմեքենայի իրական արժեքը գնահատվել է 10 000 000 դրամ: Վարձատուի հաշվեկշռում մեքենան գնահատված է 12 000 000 դրամ սկզբնական արժեքով, իսկ կուտակված մաշվածությունը կազմել է 4 000 000 դրամ: Վարձակալության ժամկետում վարձակալից պահանջվում է 5 տարվա ընթացքում հավասարաչափ վճարել 15 000 000 դրամ:

ԽՆԴԻՐ 5.22

Ստորև բերված տվյալների հիման վրա կազմել հիմնական միջոցների ֆինանսական վարձակալության հետ կապված գործառնությունների ձևակերպումները: Կազմել պարտավորության մարման և տոկոսային ծախսի միջև վարձավճարների բաշխման ժամանակացույցը:

Տվյալներ. «Օմեգա» ՓԲԸ-ն «Ուրարտու» ՍՊԸ-ից վարձակալության է ընդունել շենք, որը նախատեսում է օգտագործել արտադրական կարիքների համար: Վարձակալված ակտիվը հաշվառման է ընդունվել իրական արժեքով

2 000 000 դրամ գումարով: Վարձակալության ձևակերպման համար դրամարկղից վճարվել են միջնորդավճարներ 30 000 դրամի չափով: Վարձակալության պայմանագիրը կնքվել է 8 տարի ժամկետով տարեկան 325 000 դրամ վարձավճարով:

ԽՆԴԻՐ 5.23

Ստորև բերված տվյալների հիման վրա ձևակերպել վարձակալի մոտ հիմնական միջոցների վարձակալության ընդունումը, մաշվածությունը և սեփականության իրավունքի փոխանցումը: Կազմել պարտավորությունների մարման և հաշվեգրվող տո-

կոսների միջև վարձավճարի բաշխման ժամանակացույցը և վարձակալված ակտիվի մաշվածության հաշվարկը.

Տվյալներ «Ուրարտու» ՓԲԸ-ն լիզինգային կազմակերպությունից վարձակալության է ընդունել սարքավորումներ 5 000 000 դրամ իրական արժեքով, 5 տարի ժամկետով, տարեկան 1 320 000 դրամ վարձավճարով: Վարձակալության ձևակերպման նպատակով հաշվետու անձի կողմից ծախսվել է 20 000 դրամ: Վարձակալված ակտիվի օգտակար ծառայությունը սահմանվել է 7 տարի: Մաշվածությունը հաշվարկվելու է գծային մեթոդով: Հինգերորդ տարվա վերջում վարձակալված սարքավորումների սեփականության իրավունքը փոխանցվել է վարձակալին:

↓ **ԽՆԴԻՐ 5.24**

Կազմել հիմնական միջոցների ֆինանսական վարձակալությանը վերաբերող տնտեսական գործառնությունների ձևակերպումները վարձատուի և վարձակալի մոտ. Խնդրի լուծման ժամանակ օգտագործել ստորև բերված լրացուցիչ տվյալները:

Տվյալներ.

I. «Ալֆա» ԲԲԸ-ն լիզինգային կազմակերպությունից ֆինանսական վարձակալությամբ ընդունել է սարքավորումներ 6 000 000 դրամ իրական արժեքով, 5 տարի ժամկետով: Պայմանագրով նախատեսված է վարձավճարի հավասարաչափ վճարում տարեկան 1 500 000 դրամ:

II Հաշվետու ժամանակաշրջանում տեղի ունեցած տնտեսական գործառնությունները.

Հ/հ	Գործառնությունների բովանդակությունը	Գումարը, դրամ
1	2	3
	Վարձատուի մոտ	
1.	Վարձակալության պայմանագրի հիման վրա լիզինգային կազմակերպությունը ֆինանսական վարձակալության է հանձնել սարքավորումներ իրական արժեքով	6 000 000
	Վարձակալության հանձնված սարքավորման սկզբնական արժեքը	8 000 000
	Կուտակված մաշվածությունը	3 000 000
	Հաշվեկշռային արժեքը	?
	Վարձակալությունում զուտ ներդրումների գերազանցումը ակտիվի հաշվեկշռային արժեքից (որոշել)	?
2.	Ձևակերպվել է վարձակալությունից ստացման ենթակա չվաստակած ֆինանսական եկամուտը (գումարը որոշել)	?
3	Տեղափոխվել է վարձակալության գծով համախառն մուտքերի հաշվետու տարվան վերաբերող մասը	?
4	Հաշվարկային հաշվում ստացվել են «Ալֆա» ԲԲԸ-ից ընթացիկ տարվա վարձավճարները	?
5.	Հաշվետու տարվան վերաբերող չվաստակած ֆինանսական եկամտի բաժինը հաշվեգրվել է ընթացիկ եկամուտներին (գումարը որոշելու համար կազմել վարձակալությունում զուտ ներդրումների և չվաստակած ֆինանսական եկամտի	?

	միջև վարձավճարների բաշխման ժամանակացույցը)	
	Վարձակալի մոտ	
6.	Լիզինգային կազմակերպությունից ֆինանսական վարձակալությամբ ստացվել են սարքավորումներ իրական	?
1	2	3
	արժեքով	
7.	Ձևակերպվել են ֆինանսական վարձակալությամբ ստացված սարքավորումների գծով չկրած տոկոսային ծախսերը	?
8	Հաշվարկային հաշվից վճարվել է միջնորդավճար ֆինանսական վարձակալության պայմանագրի կնքման համար	50 000
9.	Հաշվարկվել է վարձակալված սարքավորումների մաշվածությունը հաշվետու տարվա համար (մաշվածությունը հաշվարկվում է վարձակալության ժամկետում գծային եղանակով)	?
10	Ձևակերպվել է ֆինանսական վարձակալության գծով վճարվելիք համախառն գումարի կարճաժամկետ մասի տեղափոխումը	?
11.	Հաշվարկային հաշվից փոխանցվել է վարձատուին հաշվետու տարվա վարձավճարը	?
12	Հաշվետու տարվա ծախսերին է հաշվեգրվել չկրած տոկոսային ծախսերի բաժինը (գումարը որոշել ըստ ժամանակացույցի)	?

ԽՆԴԻՐ 5.25

Կազմել հիմնական միջոցների գործառնական վարձակալության ընդունման և հանձնան գործառնությունների ձևակերպումները, օգտագործելով ստորև բերված տվյալները

Տվյալներ. «Հորիզոն» ԲԲԸ-ն պահածոների գործարանին 200Xթ. մարտի 1-ից վարձակալության է հանձնել բեռնատար ավտոմեքենա 1 տարի ժամկետով, որը օգտագործվելու է արտադրանքի առաքման համար: Տարեկան վարձավճարը ըստ պայմանագրի կազմել է 800 000 դրամ, առանց ԱԱՀ: Մեքենայի սկզբնական արժեքը 2 500 000 դրամ է, կուտակված մաշվածությունը՝ 1 000 000 դրամ, օգտակար ծառայությունը՝ 5 տարի. Մաշվածությունը պետք է հաշվարկվի գծային մեթոդով ըստ պայմանագրի նորոգման ծախսերը կատարվելու են վարձակալի հաշվին. Մեքենան շահագործվելու է վարձակալի տրանսպորտային տնտեսությունում: Հաշվետու տարում տեղի են ունեցել հետևյալ տնտեսական գործառնությունները.

Հ/հ	Գործառնությունների բովանդակությունը	Գումարը, դրամ
1	2	3
	Վարձատուի մոտ	
1.	Պահածոների գործարանին գործառնական վարձակալության է հանձնվել բեռնատար մեքենա՝ ա) սկզբնական արժեքը	2 500 000

	բ) կուտակված մաշվածությունը	1 000 000
2.	Հաշվարկվել է վարձակալման հանձնված ավտոմեքենայի մաշվածությունը հաշվետու տարվա համար (գումարը որոշել)	?
3	Ձևակերպվել է հաշվետու տարվա վարձավճարը	?
1	2	3
	ԱԱՀ	?
	Ընդամենը	?
4.	Վարձակալից ստացված վարձավճարը մուտքագրվել է հաշվարկային հաշվում (տես՝ գործառնություն 3)	?
5	Վարձակալից հետ է ստացվել գործառնական վարձակալության հանձնված բեռնատար ավտոմեքենան ա) սկզբնական արժեքը բ) կուտակված մաշվածությունը	? ?
	Վարձակալի մոտ	
6.	Գործառնական վարձակալության պայմանագրով «Հորիզոն» ԲԲԸ-ից վարձակալությամբ ստացվել է բեռնատար ավտոմեքենա սկզբնական արժեքով	?
7	Հաշվեգրվել է հաշվետու տարվա վճարման ենթակա վարձավճարը ԱԱՀ Ընդամենը	? ?
8.	Հաշվարկային հաշվից փոխանցվել է վարձատուին հաշվետու տարվա վարձավճարը բեռնատար ավտոմեքենայի համար	?
9	Դուրս է գրվել հաշվանցման ենթակա ԱԱՀ	?
10	Ստացվել է նորոգման արհեստանոցի հաշիվը բեռնատար մեքենայի նորոգման համար	120 000
11	Հաշվարկային հաշվից փոխանցվել է նորոգման արհեստանոցին	120 000
12.	Վարձակալված բեռնատար մեքենան վերադարձվել է վարձատուին սկզբնական արժեքով	?

ԽՆԴԻՐ 5.26

Ստորև բերված տվյալների հիման վրա հիմնական միջոցների գույքագրման արդյունքները արտացոլել հաշվապահական հաշվառման մեջ.

Տվյալներ. Հիմնական միջոցների գույքագրման ժամանակ հայտնաբերվել է մեկ համակարգչի և մեկ սառնարանի պակասորդ: Համակարգչի կորստի համար մեղավոր է ճանաչվել ինժեներ Կ. Սիմոնյանը: Դատարանի որոշմամբ նրանից գանձվում է պակասորդի շուկայական արժեքը: Սառնարանի պակասորդի համար մեղավորը հայտնաբերված չէ: Հանձնաժողովի որոշմամբ սառնարանի պակասորդը դուրս է գրվում կազմակերպության հաշվին.

Համակարգչի սկզբնական արժեքը 560 000 դրամ է, կուտակված մաշվածությունը 280 000 դրամ, շուկայական արժեքը 350 000 դրամ. Մեղավոր անձի կողմից կանխիկ վճարվել է 300 000 դրամ, մնացած գումարը պահվել է նրա աշխատավարձից.

Սառնարանի սկզբնական արժեքը 220 000 դրամ է, կուտակված մաշվածությունը 180 000 դրամ:

ԽՆԴԻՐ 5.27

Ստորև բերված տվյալների հիման վրա որոշել հիմնական միջոցների գույքագրման արդյունքները արտացոլել հաշվապահական հաշվառման մեջ:

Տվյալներ. Հիմնական միջոցների գույքագրման ժամանակ հայտնաբերվել են հետևյալ տարբերությունները.

ա) չհաշվառված գործիքներ՝ 150 000 դրամ արժեքով,

բ) գրասեղանի կորուստ, որի սկզբնական արժեքը 95 000 դրամ է, կուտակված մաշվածությունը գույքագրման պահի դրությամբ 76 000 դրամ: Պակասորդի համար մեղավոր անձը հայտնաբերված չէ,

գ) չմուտքագրված համակարգիչ՝ 420 000 դրամ արժեքով:

ԽՆԴԻՐ 5.28

Պահանջվում է ստորև բերված տվյալների հիման վրա որոշել ձեռք բերված սարքավորումների սկզբնական արժեքը և մաշվածությունը: Արտացոլել սինթետիկ հաշիվներում վերագնահատումների հետևանքով առաջացած սկզբնական արժեքի և մաշվածության փոփոխությունները:

Տվյալներ. Կազմակերպությունը 2004թ հունվարի 10-ին գնել է արտադրական սարքավորումներ, հաշվարկային հաշվից վճարելով 350 000 դրամ. Սարքավորման տեղափոխման համար ծախսվել է 40 000 դրամ, տեղակայման համար՝ 60 000 դրամ, գործարկման համար 20 000 դրամ. Սարքավորումների օգտակար ծառայությունը սահմանվել է 5 տարի, մնացորդային արժեքը գնահատվել է 20 000 դրամ. Սարքավորումները շահագործման են հանձնվել 2004թ. մայիսի 3-ին: Մաշվածությունը հաշվարկվում է գծային եղանակով:

Կազմակերպությունը ընտրել է հիմնական միջոցների հաշվառման այլընտրանքային մոտեցումը և 2 տարին մեկ կատարում է սարքավորումների վերագնահատում վերագնահատման պահի դրությամբ կուտակված մաշվածությունը վերածնակերպվում է վերականգնման արժեքի գործակցով:

I վերագնահատումը կատարվել է 2006թ. նոյեմբերի 1-ի դրությամբ: Փորձագետների կողմից սարքավորման շուկայական արժեքը գնահատվել է

294 000 դրամ:

II վերագնահատումը կատարվել է 2008թ. դեկտեմբերի 1-ի դրությամբ: Փորձագետների կողմից սարքավորման շուկայական արժեքը գնահատվել է 53 800 դրամ:

ԽՆԴԻՐ 5.29

Ստորև բերված տվյալների հիման վրա որոշել և ձևակերպել վերագնահատումների հետևանքով հիմնական միջոցների արժեքի և մաշվածության փոփոխությունները. Ձևակերպել վերագնահատումից արժեքի աճի վերագրումը չբաշխված շահույթին ըստ տարիների մաշվածությանը զուգընթաց:

Տվյալներ. Կազմակերպությունը 1999թ. դեկտեմբերի 25-ին ձեռք է բերել և շահագործման հանձնել 600 000 դրամ արժեք ունեցող սարքավորում, որի մնացորդային արժեքը գնահատվել է 40 000 դրամ, իսկ օգտակար ծառայությունը 10 տարի: Կազմակերպության հաշվապահական հաշվառման քաղաքականությամբ սարքավորումների վերագնահատումը պետք է իրականացվի 3 տարի պարբերականությամբ: Վերա-

գնահատման պահի դրությամբ կուտակված մաշվածությունը վերաձևակերպվում է վերականգնման արժեքի գործակցով Մաշվածությունը հաշվարկվում է նվազող մնացորդի մեթոդով, արագացման գործակիցը հավասար է 2-ի.

I վերագնահատումը կատարվել է 2002թ. նոյեմբերին. Փորձագետների կողմից սարքավորման շուկայական արժեքը գնահատվել է 352 000 դրամ:

II վերագնահատումը կատարվել է 2005թ. դեկտեմբերին: Սարքավորման շուկայական արժեքը գնահատվել է 140 000 դրամ

III վերագնահատումը կատարվել է 2008թ. հոկտեմբերի 1-ի դրությամբ Սարքավորման շուկայական արժեքը գնահատվել է 90 000 դրամ:

ԽՆԴԻՐ 5.30

Ստորև բերված տվյալների հիման վրա որոշել և ձևակերպել հիմնական միջոցների վերագնահատումից առաջացած փոփոխությունները

Տվյալներ. Կազմակերպությունը կառուցել է արտադրական շենք, որը շահագործման է հանձնվել 1999թ. դեկտեմբերի 20-ին: Շենքի սկզբնական արժեքը 20 000 000 դրամ է, օգտակար ծառայությունը գնահատվել է 20 տարի, մնացորդային արժեքը 500 000 դրամ, մաշվածության հաշվարկման եղանակը գծային, վերագնահատման պարբերականությունը 5 տարի: Վերագնահատման ժամանակ կուտակված մաշվածությունը հանվում է ակտիվի համախառն հաշվեկշռային արժեքից և զուտ գումարը վերաձևակերպվում է վերագնահատված գումարի հիման վրա:

I վերագնահատումը կատարվել է 2005թ. հոկտեմբերին. Շենքի իրական արժեքը գնահատվել է 16 500 000 դրամ

II վերագնահատումը կատարվել է 2010թ. դեկտեմբերի սկզբին. Շենքի իրական արժեքը գնահատվել է 9 000 000 դրամ:

III վերագնահատումը կատարվել է 2015թ. դեկտեմբերի վերջին: Շենքի իրական արժեքը գնահատվել է 6 000 000 դրամ:

ԽՆԴԻՐ 5.31

Պահանջվում է որոշել հիմնական միջոցների հաշվեկշռային արժեքը և փոխհատուցվող գումարը և արժեզրկումից կորուստը

Տվյալներ. «Հորիզոն» ԲԲԸ-ն 2007թ. հունվարին գնել է խառատային հաստոց 420 000 դրամով, որի տեղափոխման համար ծախսվել է 35 000 դրամ, իսկ տեղակայման համար 25 000 դրամ: Հաստոցի տեղակայումը ավարտվել է 2007թ. մայիսին: Այդ ընթացքում աշխատանքային վիճակի բերելու հետ կապված ծախսվել է ևս 14 000 դրամ 2007թ. վերջում շուկայական պայմանների նշանակալի փոփոխությունների հետևանքով կազմակերպությունը որոշում է հաստոցների փոխհատուցվող գումարը Փորձագետների գնահատմամբ հաստոցի վաճառքի գինը կազմել է 415 000 դրամ: Վաճառքն իրականացնելու համար կպահանջվի

15 000 դրամի ծախս: Ակտիվի օգտագործման արժեքը գնահատվել է 380 000 դրամ:

Կազմակերպությունը մտադիր է օգտագործել հաստոցը 5 տարի, այնուհետև այն վաճառել 14 000 դրամով: Մաշվածությունը հաշվարկվում է գծային մեթոդով:

ԽՆԴԻՐ 5.32

Պահանջվում է որոշել ակտիվի փոխհատուցվող գումարը և արժեզրկումից կորուստը հետևյալ տվյալների հիման վրա:

Տվյալներ. Կազմակերպությունը 2007թ. հունվարին ձեռք է բերել և շահագործման հանձնել մետաղահատ հաստոց, որի սկզբնական արժեքը կազմել է 2 550 000 դրամ: Հաստոցի օգտակար ծառայությունը սահմանվել է 5 տարի, մնացորդային արժեքը 50 000 դրամ: Մաշվածությունը հաշվարկվում է գծային մեթոդով:

2007թ վերջում շուկայական իրավիճակի փոփոխությունը վկայում է այն մասին, որ ակտիվը կարող է արժեզրկված լինել: Ըստ մասնագետների հաշվարկների հաստոցի վաճառքի գուտ գինը գնահատվել է 1 890 000 դրամ, իսկ շարունակական օգտագործումից դրամական միջոցների ներհոսքերը և արտահոսքերը հետևյալն են.

Տարիներ	Ներհոսքեր	Արտահոսքեր
2008	1 760 000	980 000
2009	1 350 000	730 000
2010	1 050 000	620 000
2011	820 000	510 000
Ընդամենը	4 980 000	2 840 000

Ձեռչման դրույքը որոշվել է 5%:

Ակտիվի օգտագործման արժեքը որոշել ստորև բերված աղյուսակում

	Տարիներ	Զուտ ներհոսքեր	Ներկա արժեքի գործակիցը	Ներկա արժեքը
1.	2008			
2.	2009			
3.	2010			
4.	2011			
	Ընդամենը	X	X	

ԽՆԴԻՐ 5.33

Տնտեսական գործառնությունների գրանցման օրագրում գրանցել հաշվետու տարում տեղի ունեցած հիմնական միջոցների շարժի գործառնությունները և կազմել դրանց ձևակերպումները:

Գ/հ	Տնտեսական գործառնությունների բովանդակությունը	Գումարը, դրամ
1	2	3
1.	Մատակարարից ստացվել և պահեստ են հանձնվել տեղակայում չպահանջող սարքավորումներ, որոնց համար մատակարարին դեռևս վճարում չի իրականացվել ա) ձեռք բերման արժեքը բ) ԱԱՀ	250 000 50 000
	Ընդամենը	300 000
2.	Հաշվարկային հաշվից վճարվել են ձեռք բերված սարքավորումների տեղափոխման ծախսումները	20 000
3.	Հաշվարկային հաշվից փոխանցվել է կապալառուին կանխավճար շենքի շինարարության համար	200 000
4.	Ստացվել է կապալառուի հաշիվը կառուցված շենքի համար ա) կառուցման արժեքը բ) ԱԱՀ	1 200 000 240 000

	Ընդամենը	1 440 000
5.	Չափանցվել է շենքի շինարարության համար կապալառուին վճարված կանխավճարը	?
6.	Չափարկային հաշվից փոխանցվել է կապալառուին շենքի շինարարության համար (գումարը որոշել)	?
1	2	3
7.	Չափետու անձի կողմից ձեռք են բերվել գործիքներ, որոնք շահագործման են հանձնվել հիմնական արտադրամասում ա) ձեռք բերման արժեքը բ) ԱԱՀ	50 000 10 000
	Ընդամենը	60 000
8.	Մատակարարից ստացվել են սարքավորումներ, որոնք շահագործման են հանձնվել հիմնական արտադրամասում ա) ձեռք բերման արժեքը բ) ԱԱՀ	300 000 60 000
	Ընդամենը	360 000
9.	Մատակարարից ստացվել են տեղակայում պահանջող սարքավորումները՝ ա) ձեռք բերման արժեքը բ) ԱԱՀ	450 000 90 000
	Ընդամենը	540 000
10.	Սարքավորման տեղակայման համար կատարվել են հետևյալ ծախսումները ա) ծախսվել են նյութեր բ) բանվորներին հաշվարկվել է աշխատավարձ գ) կատարվել են հատկացումներ սոցիալական ապահովագրության համար	20 000 30 000 8 000
	Ընդամենը	58 000
11.	Սարքավորումների տեղակայման աշխատանքները ավարտելուց հետո տեղակայման ծախսումները տեղափոխվել են հաշվեկշռային հաշիվ	?
12.	Տեղակայված սարքավորումները հանձնվել են շահագործման սկզբնական արժեքով	?
13.	Տնտեսարարական եղանակով իրականացվել է շենքի շինարարությունը: Շենքի կառուցման համար կատարվել են հետևյալ ծախսումները՝ ա) ծախսվել են նյութեր բ) օգտագործվել են արագամաշ գործիքներ գ) հաշվարկվել է աշխատավարձ շինարարության բանվորներին դ) կատարվել են հատկացումներ նրանց սոցիալական ապահովագրության համար ե) ծախսվել է էլեկտրաէներգիա (գնովի) զ) հաշվարկվել է շինարարական մեքենաների մաշվածությունը է) օժանդակ արտադրամասերի ծառայությունները	600 000 200 000 500 000 140 000 400 000 300 000 200 000

	Ընդամենը	2 340 000
14.	Կառուցված շենքը շահագործման է հանձնվել սկզբնական արժեքով	?
15.	Հաշվարկվել է շահագործման մեջ գտնվող հիմնական միջոցների մաշվածությունը ա) հիմնական արտադրամասերի	12 000
1	2	3
	բ) օժանդակ արտադրամասերի	10 000
	գ) վարչական նշանակության	8 000
	դ) գործառնական վարձակալության տրված	4 000
	Ընդամենը	34 000
16.	Վարչական շենքի նորոգման համար կատարվել են հետևյալ ծախսումները ա) ծախսվել են նյութեր	30 000
	բ) հաշվարկվել է աշխատավարձ նորոգող բանվորներին	20 000
	գ) կատարվել են հատկացումներ սոցիալական ապահովագրության համար	5 600
	Ընդամենը	55 600
17.	Հիմնական արտադրամասի հոսքային գծի վերակառուցման և արդիականացման համար կատարվել են հետևյալ ծախսումները ա) ծախսվել են նյութեր	20 000
	բ) հաշվարկվել է աշխատավարձ բանվորներին	20 000
	գ) կատարվել են հատկացումներ սոցիալական ապահովագրության համար	5 000
	դ) կատարվել են կանխիկ ծախսումներ դրամարկղից	5 000
	ե) ձևակերպվել են կապալառուի ծառայությունները	10 000
	Ընդամենը	60 000
18.	Կապիտալացվել են հոսքային գծի վերակառուցման ծախսումները	?
19.	Չօգտագործվող սարքավորումը դուրս է գրվել շահագործումից և պահվել իրացման նպատակով ա) հաշվեկշռային արժեքը	?
	բ) կուտակված մաշվածությունը	60 000
	Ընդամենը սկզբնական արժեքը	160 000
20.	Իրացվել է շահագործումից հանված սարքավորումը ա) հաշվեկշռային արժեքը	?
	բ) արժեզրկումից կորուստները	10 000
	Ընդամենը	?
21.	Հաշվարկային հաշվից վճարվել են իրացվող սարքավորման տեղափոխման ծախսումները	4 000
22.	Հաշվարկային հաշվում ստացվել է եկամուտը սարքավորման իրացումից	100 000
23.	Լուծարվել է մաշված հաստոցը ա) հաշվեկշռային արժեքը	?
	բ) մաշվածությունը	220 000

	գ) արժեզրկումից կորուստները	10 000
	Ընդամենը սկզբնական արժեքը	380 000
24.	Հաստոցի լուծարքի համար կատարվել են հետևյալ ծախսումները ա) հաշվարկվել է աշխատավարձ բանվորներին բ) կատարվել են հատկացումներ սոցիալական ապահովագրության համար	10 000 2 800
1	2	3
	Ընդամենը	12 800
25.	Հաստոցի լուծարքից ստացվել են նյութեր, որոնք հանձնվել են պահեստ	4 000
26.	Ֆինանսական վարձակալությամբ ընդունվել է շենք որպես արտադրանքի պահեստ օգտագործելու նպատակով, իրական արժեքով. վարձակալման պայմանագիրը կնքվել է 3 տարի ժամկետով, վարձակալությամբ ենթադրվող տոկոսադրույքը՝ 6%	500 000
27.	Հաշվարկվել և ձևակերպվել է շենքի ֆինանսական վարձակալության գծով վճարվելիք ֆինանսական վճարը (գումարը որոշել նախորդ գործառնությունում բերված տվյալների հիման վրա)	?
28	Շենքի ֆինանսական վարձակալության գծով հաշվետու տարվա վարձավճարը տեղափոխվել է ընթացիկ պարտավորությունների կազմ	?
29	Հաշվարկային հաշվից փոխանցվել է վարձատուին հաշվետու տարվա վարձավճարը շենքի ֆինանսական վարձակալության գծով	?
30	Շենքի ֆինանսական վարձակալության գծով հաշվետու տարվա ֆինանսական վճարը վերագրվել է ծախսերին (գումարը որոշել)	?
31	Հաշվարկվել է ֆինանսական վարձակալությամբ ստացված շենքի մաշվածությունը հաշվետու տարվա համար (գծային եղանակով)	?
32.	Հաշվարկվել է ֆինանսական վարձակալությամբ ստացված այլ հիմնական միջոցների մաշվածությունը ա) վարչական նշանակության օբյեկտների բ) հիմնական արտադրամասի օբյեկտների	40 000 20 000
	Ընդամենը	60 000
33	Ֆինանսական վարձակալությամբ ստացված բեռնատար ավտոմեքենան միացվել է սեփական հիմնական միջոցներին ա) սկզբնական արժեքը բ) կուտակված մաշվածությունը	250 000 200 000
	34.	Գործառնական վարձակալությամբ ընդունվել է միկրո-ավտոբուս
35.	Արտացույցվել է վարձավճարը գործառնական վարձակալությամբ ընդունված միկրոավտոբուսի համար, որը օգտագործվում է վարչական նպատակներով	120 000
36.	Դրամարկղից վճարվել է վարձավճարը գործառնական վար-	120 000

	ծակալությամբ ընդունված միկրոավտոբուսի համար	
37	Ֆինանսական վարձակալության է հանձնվել սառնարանային սարքավորումը	
	ա) հաշվեկշռային արժեքը (զուտ ներդրումները)	400 000
	բ) հաշվեկշռային արժեքը գերազանցող մասը	100 000
	Ընդամենը	500 000
38.	Դուրս է գրվել ֆինանսական վարձակալության հանձնված	
1	2	3
	սարքավորման կուտակված մաշվածությունը	200 000
39.	Ձևակերպվել է չվաստակած ֆինանսական եկամուտը սարքավորման ֆինանսական վարձակալության գծով:	
	Սառնարանային սարքավորումը վարձակալության է հանձնվել 5 տարով: Վարձակալությամբ ենթադրվող տոկոսադրույքը 8%	?
40.	Ֆինանսական վարձակալության գծով հաշվետու տարվա ստացման ենթակա վարձավճարը տեղափոխվել է ընթացիկ ակտիվների կազմ	?
41	Հաշվարկային հաշվում ստացվել է վարձակալից հաշվետու տարվա վարձավճարը սառնարանային սարքավորման ֆինանսական վարձակալության գծով	?
42	Ձևակերպվել է հաշվետու տարվա եկամուտը սառնարանային սարքավորման ֆինանսական վարձակալության գծով	?
43	Գործառնական վարձակալության է հանձնվել հանրակացարանի շենքը	8 500 000
44.	Ձևակերպվել է շենքի գործառնական վարձակալությունից ստացման ենթակա վարձավճարը	100 000
45.	Դրամարկում ստացվել է վարձավճարը շենքի գործառնական վարձակալության գծով	?
46	Հիմնական միջոցների գույքագրման ժամանակ հայտնաբերվել են չհաշվառված գործիքներ, որոնք մուտքագրվել են իրական արժեքով	150 000
47	Հիմնական միջոցների գույքագրման ժամանակ հայտնաբերվել է հեռուստացույցի կորուստ	?
	ա) հաշվեկշռային արժեքը	220 000
	բ) մաշվածությունը	400 000
48	Հայտնաբերված պակասորդը ենթակա է գանձման նյութական պատասխանատու անձից շուկայական արժեքով	220 000
49	Մեղավոր անձի աշխատավարձից պահվել է պակասորդի դիմաց գանձվող գումարի 10%-ը	?
	Պակասորդի մնացած գումարը մուծվել է դրամարկը	?
	Ընդամենը մարվել է	?
50	Հիմնական միջոցների վերագնահատման հետևանքով տեղի է ունեցել հիմնական միջոցների արժեքի աճ, որը վերագրվել է	
	ա) եկամուտներին բ) սեփական կապիտալին	20 000 130 000

	Ընդամենը աճը	150 000
51	Փակել եկամուտները հաշվառող հաշիվները	?
52	Փակել ծախսերը հաշվառող հաշիվները	?
53	Որոշել և ձևակերպել կազմակերպության գործունեության ֆինանսական արդյունքը	?

ԽՆԴԻՐ 5.34

Պահանջվում է

ա) բացել սինթետիկ հաշիվները, դրանցում գրանցել ստորև բերված սկզբնական մնացորդները,

բ) գործառնությունների գրանցման օրագրում գրանցել հաշվետու ժամանակաշրջանում կատարված տնտեսական գործառնությունները հիմնական միջոցների շարժի վերաբերյալ և կազմել դրանց ձևակերպումները,

գ) հաշիվներում գրանցել գործառնությունների գումարները, որոշել շրջանառությունները և վերջնական մնացորդները,

դ) կազմել սինթետիկ հաշիվների շրջանառության տեղեկագիրը,

ե) կազմել հաշվապահական հաշվեկշիռը հաշվետու ժամանակաշրջանի վերջի դրությամբ.

Տվյալներ. I. Սինթետիկ հաշիվների մնացորդները 200X մարտի 31-ի դրությամբ կազմել են

Հաշ. ծածկ.	Հաշիվների անվանումը	Գումարը, դրամ
1	2	3
111	Շահագործման մեջ գտնվող մաշվող հիմնական միջոցներ	2 056 200
112	Շահագործման մեջ գտնվող հիմնական միջոցների մաշվածություն	530 556
118	Անավարտ ոչ ընթացիկ նյութական ակտիվներ	1 296 900
211	Նյութեր	112 680
252	Հաշվարկային հաշիվ	496 500
261	Ընթացիկ ակտիվներ հետաձգված հարկերի գծով	34 536
311	Կանոնադրական (բաժնեհավաք) կապիտալ	2 520 000
312	Զվճարված կապիտալ	492 000
321	Ոչ ընթացիկ նյութական ակտիվների և ոչ նյութական ակտիվների վերագնահատումից արժեքի աճ	660 000
342	Նախորդ տարիների չբաշխված շահույթ (չծածկված վնաս)	300 000
521	Կրեդիտորական պարտքեր գնումների գծով	478 260

II. 200X թ. II եռամսյակում կատարված տնտեսական գործառնությունները

Հ/հ	Գործառնությունների բովանդակությունը	Գումարը, դրամ
1	2	3
1.	Հիմնական միջոցների ընդունման թիվ 18 ակտի համաձայն	

	կազմակերպության բաժնետերերից ստացվել են հիմնական միջոցներ տեղաբաշխված բաժնետոմսերի դիմաց	420 000
2	Կապալառուից ընդունվել է մեխանիկական արտադրամասի կառուցված շենքը ա) շենքի արժեքը ըստ կապալառուի հաշվի բ) ԱԱՀ	320 000 ?
	Ընդամենը ենթակա է վճարման	?
1	2	3
3.	Հաշվարկային հաշվից փոխանցվել է կապալառուին ա) կառուցված շենքի արժեքը բ) ԱԱՀ գումարը	320 000 ?
	Ընդամենը փոխանցվել է	?
4.	Հաշվարկվել է հիմնական միջոցների մաշվածությունը ա) հիմնական արտադրության բ) օժանդակ արտադրության գ) վարչության	45 000 16 500 25 200
	Ընդամենը	86 700
5.	Պահեստից բաց են թողնվել պահեստամասեր նորոգման արտադրամասին՝ հիմնական արտադրամասի սարքավորումների նորոգման համար	52 600
6	Հաշվարկվել է աշխատավարձ նորոգման արտադրամասի բանվորներին	150 900
7.	Կատարվել են սոցիալական ապահովագրության մասհանումներ նորոգման արտադրամասի բանվորների աշխատավարձի նկատմամբ	34 500
8.	Դուրս են գրվել նորոգման արտադրամասի ծախսումները՝ հիմնական արտադրամասի սարքավորումների ավարտված նորոգման գծով	?
9	Հիմնական միջոցների շահագործման ընդունման-հանձնման ակտի համաձայն շահագործման է հանձնվել կազմակերպության կողմից կառուցված նյութերի պահեստի շենքը	?
10.	Հիմնական միջոցների դուրսգրման ակտի համաձայն լուծարվել է պատրաստի արտադրանքի պահեստի շենքը ա) սկզբնական արժեքը բ) կուտակված մաշվածությունը	172 200 150 000
11.	Ստացվել է կապալառուի հաշիվը պատրաստի արտադրանքի պահեստի շենքի լուծարքի համար ա) աշխատանքների արժեքը բ) ԱԱՀ	46 800 ?
12	Նյութերի պահեստ են մուտքագրվել արտադրանքի պահեստի շենքի լուծարքից ստացված նյութերը	56 400
13.	Հաշվարկային հաշվից փոխանցվել է կապալառուին պահեստի շենքի լուծարքի համար	?
14.	Դպրոցին անհատույց փոխանցվել է համակարգիչ ա) սկզբնական արժեքը բ) կուտակված մաշվածությունը	80 000 50 000
15	Անհատույց ստացվել է կտրող հաստոց, որը մուտքագրվել է	72 000

շուկայական արժեքով		
1	2	3
16.	Մատակարարից ստացվել է տեղակայման ենթակա հոսքային գիծ ա) արժեքը ըստ մատակարարի հաշվի բ) ԱԱՀ Ընդամենը	120 000 ? ?
17.	Իրացվել է ֆրեզերային հաստոց՝ ա) սկզբնական արժեքը բ) կուտակված մաշվածությունը	650 000 120 000
18	Հաշվարկային հաշվում ստացվել է հաստոցի վաճառքից՝ ա) եկամուտը վաճառքի գնով բ) ԱԱՀ	620 000 ?
19	Ձևակերպվել է մատակարարների վճարված հաշիվներին վերաբերող ԱԱՀ	?
20	Հաշվանցվել է ձեռքբերված ակտիվների և ծառայությունների արժեքում ներառված ԱԱՀ-ի գումարը	?
21	Անավարտ արտադրության մնացորդը տեղափոխվել է հաշվեկշռային հաշիվ	?
22	Փակել ծախսերի հաշվառման հաշիվները և ծախսերի գումարները դուրս գրել «Ֆինանսական արդյունք» հաշվին	?
23.	Փակել եկամուտների հաշվառման հաշիվները և եկամուտների գումարները դուրս գրել «Ֆինանսական արդյունք» հաշվին	?
24.	Որոշել և ձևակերպել հաշվետու ժամանակաշրջանի շահույթը կամ վնասը Ընդամենը հաշվետու ժամանակաշրջանում	? ?

ՆՏՈՒԳՈՂԱԿԱՆ ԱՈՒՋԱԴՐԱՆՔՆԵՐ, ՀԱՐՑԵՐ ԵՎ ՏԵՍՏԵՐ

Ստուգողական առաջադրանքներ

Առաջադրանք 1

Կազմակերպությունը ձեռք է բերել սարքավորում, որի դիմաց վճարել է հաշվարկային հաշվից 489 600 դրամ, ներառյալ ԱԱՀ: Սարքավորումը տեղափոխվել է տրանսպորտային կազմակերպության կողմից: Տեղափոխման արժեքը կազմել է 44 000 դրամ, ներառյալ ԱԱՀ: Տեղափոխման համար վճարումը իրականացվել է դրամարկղից: Սարքավորման տեղակայման համար օգտագործվել են նյութեր 12 500 դրամի, բանվորներին հաշվարկվել է աշխատավարձ 50 000 դրամի և կատարվել են հատկացումներ սոցիալական ապահովագրության համար 8 000 դրամի չափով:

Պահանջվում է որոշել ձեռք բերված սարքավորման սկզբնական արժեքը և կազմել ձեռք բերման ձևակերպումները:

Առաջադրանք 2

Սարքավորման սկզբնական արժեքը 800 000 դրամ է, օգտակար ծառայությունը՝ 5 տարի, արագացման գործակիցը՝ 2: Հաշվարկել ըստ տարիների հիմնական միջոցի մաշվածությունը նվազող մնացորդի մեթոդով և որոշել հաշվեկշռային արժեքը յուրաքանչյուր տարվա վերջի դրությամբ:

Առաջադրանք 3

Սարքավորման սկզբնական արժեքը 600 000 դրամ է, օգտակար ծառայությունը 5 տարի, մնացորդային արժեքը՝ 50 000 դրամ: Հաշվարկել ըստ տարիների և ձևակերպել այդ սարքավորման մաշվածությունը՝ տարիների ընդհանուր գումարի հաշվարկման մեթոդով և որոշել հաշվեկշռային արժեքը յուրաքանչյուր տարվա վերջի դրությամբ:

Առաջադրանք 4

Բեռնատար ավտոմեքենայի սկզբնական արժեքը 1 800 000 դրամ է, մնացորդային արժեքը գնահատվել է 120 000 դրամ, կազմակերպության կողմից գնատրամված վազքը՝ 500 հազ. կմ: Փաստացի վազքը ըստ տարիների եղել է 1-ին տարում՝ 100 հազ., 2-րդ տարում՝ 90 հազ., 3-րդ տարում՝ 85 հազ., 4-րդ տարում՝ 82 հազ., 5-րդ տարում՝ 80 հազ., 6-րդ տարում՝ 63 հազ. կմ:

Հաշվարկել և ձևակերպել բեռնատար ավտոմեքենայի մաշվածությունը ըստ տարիների՝ արդյունքի միավորների մեթոդով և որոշել հաշվեկշռային արժեքը յուրաքանչյուր տարվա վերջի դրությամբ:

Առաջադրանք 5

Կազմակերպությունը 200X թ. մայիսի սկզբին ձեռք է բերել տեղակայում պահանջող սարքավորում, վճարելով հաշվարկային հաշվից 960 000 դրամ: Տրանսպորտային կազմակերպության կողմից կատարվել է այդ սարքավորման տեղափոխման աշխատանքը, որի համար կազմակերպությունը պարտավորվել է վճարել 40 000 դրամ Սարքավորման տեղակայումը կատարվել է տնտեսվարական եղանակով և տևել է 1 ամիս: Տեղակայման համար ծախսվել են նյութեր՝ 50 000 դրամի, հաշվարկվել է աշխատավարձ՝ 100 000 դրամի, կատարվել են հատկացումներ սոցապի համար՝ 19 000 դրամի չափով:

Ձևակերպել սարքավորման ձեռքբերման, տեղակայման և շահագործման հանձնման գործառնությունները, հաշվարկել դրա մաշվածության գումարը շահագործման առաջին տարվա համար՝ գծային եղանակով, և որոշել հաշվեկշռային արժեքը այդ տարվա վերջի դրությամբ: Սարքավորման օգտակար ծառայությունը սահմանվել է 5 տարի, իսկ մնացորդային արժեքը՝ 60 000 դրամ:

Առաջադրանք 6

Կազմակերպությունը վաճառել է սարքավորումներ: Գնորդի հետ կնքված պայմանագրի համաձայն վաճառքի գինը 816 000 դրամ է, ներառյալ ԱԱՀ: Սարքավորման վերագնահատված արժեքը 950 000 դրամ է, կուտակված մաշվածությունը 570 000 դրամ: Կազմակերպությունը իր վրա է վերցրել մինչև գնորդի գտնվելու վայր սարքավորման տեղափոխման ծախսումները: Տեղափոխումը կատարվել է տրանսպորտային կազմակերպության կողմից, որին հաշվարկային հաշվից վճարվել է 24 000 դրամ, ներառյալ ԱԱՀ:

Սարքավորման օգտագործման ժամանակաշրջանում վերագնահատումից արժեքի աճը վերագրվել է սեփական կապիտալին 92 000 դրամ գումարով:

Պահանջվում է որոշել սարքավորման վաճառքի ֆինանսական արդյունքը և կազմել վաճառքի հետ կապված ձևակերպումները:

Առաջադրանք 7

Լուծարվել է պահեստի շենքը, որի սկզբնական արժեքը 2 500 000 դրամ է, իսկ կուտակված մաշվածությունը՝ 2 200 000 դրամ: Շենքը քանդելու համար հաշվարկվել է աշխատավարձ բանվորներին՝ 150 000 դրամ, կատարվել են սոցապ հատկացումներ՝ 30 000 դրամ, օգտագործվել են արագամաշ գործիքներ՝ 40 000 դրամ: Շենքի լուծարքից ստացվել և պահեստ են հանձնվել շինանյութեր 100 000 դրամ արժեքով:

Ձևակերպել շենքի լուծարքի հետ կապված գործառնությունները և որոշել լուծարքի ֆինանսական հետևանքը:

Առաջադրանք 8

«Ա» կազմակերպությունը «Բ» կազմակերպությանը կարճաժամկետ վարձակալության է հանձնել հաստոց, որի սկզբնական արժեքը 1 000 000 դրամ է, կուտակված մաշվածությունը 600 000 դրամ Ամենամսյա վարձակալական վճարը ըստ պայմանագրի 44 000 դրամ է, ներառյալ ԱԱՀ: Պայմանագրային ժամկետի ավարտին հաստոցը վերադարձվել է վարձատուին:

Պահանջվում է ձևակերպել վարձակալի և վարձատուի մոտ հաստոցի վարձակալության հանձնման, վերադարձման, մաշվածության, վարձավճարի հաշվեգրման ու վճարման գործառնությունները:

Ստուգողական հարցեր

- 1 Ինչպե՞ս է որոշվում ձեռք բերված հիմնական միջոցների սկզբնական արժեքը:
- 2 Ինչպե՞ս է որոշվում սեփական ուժերով կառուցված հիմնական միջոցների սկզբնական արժեքը:
- 3 Ինչպե՞ս է որոշվում այլ ակտիվների հետ փոխանակմամբ ձեռք բերված հիմնական միջոցների սկզբնական արժեքը:
- 4 Ո՞րն է հիմնական միջոցների իրական արժեքը
- 5 Ո՞րն է հիմնական միջոցների մնացորդային արժեքը
- 6 Ինչպե՞ս է որոշվում հիմնական միջոցների հաշվեկշռային արժեքը.
- 7 Որո՞նք են հիմնական միջոցների ճանաչման չափանիշները
- 8 Հիմնական միջոցների սկզբնական ճանաչումից հետո ի՞նչ մոտեցումներով է կատարվում դրանց հետագա չափումը
9. Բացատրել հիմնական միջոցների հետագա չափման հիմնական մոտեցումը.
10. Բացատրել հիմնական միջոցների հետագա չափման այլընտրանքային մոտեցումը
11. Ինչպե՞ս են հաշվառվում հիմնական միջոցների վրա կատարված հետագա ծախսումները:
12. Ի՞նչ փաստաթղթերով են ձևակերպվում հիմնական միջոցների շարժի գործառնությունները:
- 13 Ինչպե՞ս է իրականացվում հիմնական միջոցների կառուցման (ստեղծման) հաշվառումը:
14. Ինչպե՞ս է իրականացվում տեղակայման ենթակա սարքավորումների և դրանց տեղակայման հաշվառումը:
- 15 Ո՞ր դեպքում են կապիտալացվում հիմնական միջոցների վրա կատարվող հետագա ծախսումները:
16. Ինչպե՞ս են հաշվառվում հիմնական միջոցների նորոգման ծախսումները:
17. Ի՞նչ գործոններից է կախված հիմնական միջոցների օգտակար ծառայությունը
18. Ի՞նչ է հիմնական միջոցների օգտակար ծառայությունը և ինչո՞վ է այն տարբերվում տնտեսական ծառայությունից:
19. Սահմանել հիմնական միջոցների մաշվածությունը և մաշվածության գումարը:
20. Ի՞նչ մեթոդներով է հաշվարկվում հիմնական միջոցների մաշվածությունը:
21. Բացատրել մաշվածության հաշվարկման գծային մեթոդի բովանդակությունը:
22. Բացատրել մաշվածության հաշվարկման նվազող մնացորդի մեթոդի բովանդակությունը:

- 23 Բացատրել մաշվածության հաշվարկը տարիների գումարի հաշվարկման մեթոդով:
24. Հարկային օրենսդրությամբ մաշվածության հաշվարկման ո՞ր մեթոդն է ընդունված, և ինչպիսի՞ նվազագույն ամորտիզացիոն ժամկետներ են սահմանված:
25. Ինչպե՞ս է կատարվում մաշվածության հաշվառումը:
26. Ո՞ր դեպքերում և ի՞նչ ժամկետներում է կատարվում հիմնական միջոցների գույքագրումը:
27. Ինչպիսի՞ն է հիմնական միջոցների գույքագրման անցկացման կարգը:
- 28 Ինչպե՞ս են ձևակերպվում հիմնական միջոցների գույքագրման արդյունքները.
29. Ի՞նչ պարբերականությամբ է կատարվում հիմնական միջոցների վերագնահատումը:
30. Ինչպե՞ս է վերանայվում հիմնական միջոցների կուտակված մաշվածությունը վերագնահատման ժամանակ:
31. Ինչպե՞ս է ձևակերպվում հիմնական միջոցների վերագնահատումից արժեքի աճը:
- 32 Ինչպե՞ս է ձևակերպվում հիմնական միջոցների վերագնահատումից արժեքի նվազումը:
33. Ինչպե՞ս են դուրս գրում սեփական կապիտալին վերագրված հիմնական միջոցների վերագնահատումից արժեքի աճը.
34. Ինչպե՞ս են որոշում հիմնական միջոցների փոխհատուցվող գումարը
- 35 Ինչպիսի՞ հայտանիշներով է բնութագրվում հիմնական միջոցների արժեզրկումը.
36. Ինչպե՞ս է որոշվում արժեզրկումից կորուստը և ինչպե՞ս է այն ձևակերպվում:
37. Ո՞ր դեպքում է հակադարձվում արժեզրկումից կորուստը և ինչպես է ձևակերպվում հակադարձումը:
38. Ինչպե՞ս է որոշվում հիմնական միջոցների վաճառքի ֆինանսական արդյունքը.
39. Ինչպե՞ս է ձևակերպվում հիմնական միջոցների լուծարքը:
40. Ինչո՞վ է տարբերվում հիմնական միջոցների ֆինանսական վարձակալությունը գործառնականից:
41. Ո՞ր իրավիճակներում և դեպքերում է հիմնական միջոցների վարձակալությունը դասակարգվում որպես ֆինանսական:
42. Ինչպե՞ս են հաշվառվում վարձակալական վճարները վարձատուի կողմից ֆինանսական և գործառնական վարձակալությունների դեպքում:
43. Ինչպե՞ս են հաշվառվում վարձակալական վճարները վարձակալի կողմից ֆինանսական և գործառնական վարձակալությունների դեպքում:

Տ ե ս տ ե ր

Ստորև բերված տնտեսական գործառնությունների ձևակերպումների տարբերակներից ընտրել ճիշտ պատասխանը.

Հ/հ	Գործառնությունների բովանդակությունը	Պատասխան		
		Տարբերակ	Դտ	Կտ
1	2	3	4	5
1.	Մատակարարից ձեռք են բերվել և շահագործման հանձնվել տեղակայում չպահանջող սարքավորումներ	Ա	113	521
		Բ	111	521
		Գ	111	821
2.	Հաշվարկային հաշվից վճարվել է տեղակայում	Ա	252	521

	չպահանջող սարքավորման տեղափոխման համար	Բ Գ	521 111	252 252
3	Շահագործման է հանձնվել սեփական ուժերով կառուցված շենքը	Ա Բ Գ	111 113 113	821 821 521
1	2	3	4	5
		Գ	111	521
4	Անհատույց ստացվել են հիմնական միջոցներ, որոնք մուտքագրվել են գործիքային պահեստ	Ա Բ Գ	111 113 113	421 421 521
5.	Ձևակերպվում է ձեռք բերված սարքավորումների արժեքում ներառված ԱԱԳ՝ Սարքավորման արժեքը վճարված է հաշվարկային հաշվից	Ա Բ Գ	261 151 226	252 252 252
6	Մատակարարից ապառիկ ձեռք են բերվել տեղակայում պահանջող սարքավորումներ	Ա Բ Գ	118 113 111	521 252 521
7.	Հաշվարկվել է գործառնական վարձակալության հանձնված հիմնական միջոցների մաշվածությունը	Ա Բ Գ	731 714 714	112 112 114
8	Ակտով ընդունվել են կապալառուի կողմից կատարված հիմնական արտադրամասի սարքավորումների նորոգման աշխատանքները	Ա Բ Գ	811 811 813	521 252 521
9.	Գույքագրման ժամանակ հայտնաբերվել է չհաշվառված պահարան	Ա Բ Գ	111 714 813	614 111 113
10	Գույքագրման ժամանակ հայտնաբերվել է գործիքների պակասորդ հաշվեկշռային արժեքով	Ա Բ Գ	111 714 112	614 111 111
11.	Շահագործման են հանձնվել պահեստում գտնվող սարքավորումները	Ա Բ Գ	113 111 111	111 521 113
12.	Ակտով ընդունվել և շահագործման է հանձնվել կապալառուի կողմից կառուցված արտադրական շենքը	Ա Բ Գ	111 113 521	521 521 252
13.	Վարձատուի կողմից ձևակերպվել է հաշվետու ժամանակաշրջանում ստացման ենթակա վարձավճարը գործառնական վարձակալության գծով	Ա Բ Գ	221 252 222	614 614 614
14.	Վարձակալի կողմից ձևակերպվել է հաշվետու ժամանակաշրջանում վճարման ենթակա վարձավճարը արտադրական շենքի գործառնական վարձակալության գծով	Ա Բ Գ	811 813 811	252 531 531
15.	Հաշվարկվել է աշխատավարձ բանվորներին հաստոցների լուծարքի համար	Ա Բ Գ	714 527 721	527 721 527
16.	Դրամարկղից վճարվել է վաճառված հիմնական միջոցների տեղափոխման համար	Ա Բ Գ	714 721 721	251 251 252

17.	Հաշվեգրվել է հաստոցի վաճառքից ստացվող եկամուտը	Ա Բ Գ	251 221 221	621 614 621
18.	Բաժնետերերից ստացվել և շահագործման են	Ա	113	312
1	2	3	4	5
	հանձնվել է հիմնական միջոցներ՝ նախապես տեղաբաշխված բաժնետոմսերի դիմաց	Բ Գ	111 111	312 311
19	Ձևակերպվել է ծառայողական նպատակով ձեռք բերված և վճարված մարդատար ավտոմեքենային վերաբերող ԱԱՀ: Մեքենայի արժեքը վճարվել է հաշվարկային հաշվից	Ա Բ Գ	111 226 261	252 251 252
20.	Տեղակայված սարքավորումները շահագործման են հանձնվել	Ա Բ Գ	118 118 111	821 822 118
21.	Հաշվարկվել է աշխատավարձ բանվորներին սարքավորումների տեղակայման համար	Ա Բ Գ	812 821 822	527 527 527
22	Հաշվարկային հաշվից վճարվել են միջնորդավրճարներ տեղակայման ենթակա սարքավորումների ձեռք բերման համար	Ա Բ Գ	113 118 822	252 252 251
23	Հաշվարկվել է վարչական նշանակության հիմնական միջոցների մաշվածությունը	Ա Բ Գ	713 712 713	114 112 112
24.	Տեղափոխվել է ժամանակավորապես շահագործումից հանված հիմնական միջոցների մաշվածությունը	Ա Բ Գ	114 112 112	112 114 111
25	Հաշվարկվել է հիմնական արտադրամասերի շենքերի մաշվածությունը	Ա Բ Գ	813 111 811	112 112 112
26.	Հաշվարկվել է ֆինանսական վարձակալությամբ ստացված վարչական շենքի մաշվածությունը	Ա Բ Գ	112 713 713	114 121 112
27	Վարձակալի մոտ ձևակերպվել են չկրած տոկոսային ծախսերը ֆինանսական վարձակալության գծով	Ա Բ Գ	414 413 119	413 414 414
28	Վարձատուի մոտ ձևակերպվել է չվաստակած ֆինանսական եկամտի հաշվեգրումը հաշվետու ժամանակաշրջանի եկամուտներին	Ա Բ Գ	146 146 147	657 147 627
29	Հիմնական միջոցների լուծարքից ստացվել են նյութեր	Ա Բ Գ	213 211 714	714 614 211
30.	Վարձատուի մոտ դուրս է գրվել վարձակալության հանձնված հիմնական միջոցների հաշվեկշռային արժեքը	Ա Բ Գ	146 147 146	147 111 111
31.	Ձևակերպվել է ֆինանսական վարձակալության գծով ստացման ենթակա չվաստակած ֆինանսական եկամուտը	Ա Բ Գ	147 146 147	146 147 252

32.	Դուրս է գրվել վաճառված հիմնական միջոցների կուտակված մաշվածությունը	Ա	112	111
		Բ	111	112
		Գ	112	714
33.	Դուրս են գրվել վաճառված հիմնական միջոցների արժեզրկումից կուտակված	Ա	721	124
		Բ	124	111
		Գ		
1	2	3	4	5
	կորուստները	Գ	112	124
34	Հիմնական միջոցների վերագնահատումից արժեքի աճը վերագրվել է սեփական կապիտալին	Ա	111	321
		Բ	321	111
		Գ	321	112
35	Հիմնական միջոցների վերագնահատումից արժեքի աճը վերագրվել է ժամանակաշրջանի եկամուտներին	Ա	624	111
		Բ	111	624
		Գ	724	111
36.	Հիմնական միջոցների վերագնահատումից արժեքի նվազումը վերագրվել է հաշվետու ժամանակաշրջանի ծախսերին	Ա	724	111
		Բ	111	721
		Գ	621	111
37	Ձևակերպվել է հիմնական միջոցների արժեզրկումից կորուստը	Ա	124	724
		Բ	124	111
		Գ	724	124

ԳԼՈՒԽ 6

ՈՉ ՆՅՈՒԹԱԿԱՆ ԱԿՏԻՎՆԵՐԻ ՀԱՇՎԱՌՈՒՄ

ԽՆԴԻՐ 6.1

Որոշել այլ կազմակերպությունից ձեռք բերված ոչ նյութական ակտիվի սկզբնական արժեքը

Տվյալներ. «Իմպուլս» ՓԲԸ-ն ձեռք է բերել ծրագրավորող կազմակերպությունից համակարգչային հաշվապահական ծրագիր. Ծրագրի ձեռք բերման համար հաշվարկային հաշվից վճարվել է 2 250 000 դրամ, ներառյալ ԱԱՀ: Բանկային ծառայության համար վճարվել է 52 000 դրամ: Առք ու վաճառքի պայմանագրի վավերացման համար հաշվետու ամսի կողմից վճարվել է 15 000 դրամ

ԽՆԴԻՐ 6.2

Որոշել կազմակերպությունում ներստեղծված ոչ նյութական ակտիվների սկզբնական արժեքը.

Տվյալներ. «Իմպուլս» ԲԲԸ-ում կատարվել են նոր սարքի փորձնական նմուշի ստեղծման և փորձարկման աշխատանքներ 200Xթ ընթացքում այդ նպատակով կատարվել են հետևյալ ծախսումները

- ծախսվել են նյութեր 220 000 դրամ,
- հաշվարկվել է աշխատավարձ 250 000 դրամ,
- կատարվել են հատկացումներ սոցիալական ապահովագրության համար 32 000 դրամ,
- սպառվել է էլեկտրաէներգիա 20 000 դրամ:

Հաշվետու տարվան նախորդող տարում կազմակերպությունը այդ սարքի փորձնական նմուշի պատրաստման համար ծախսել է 140 000 դրամ:

ԽՆԴԻՐ 6.3

Ստորև բերված տվյալների հիման վրա ձևակերպել ոչ նյութական ակտիվների շահագործման հանձնումը, դուրսգրումը և հաշվարկել ամորտիզացիան շահագործման ամբողջ ժամանակաշրջանի համար:

Տվյալներ «Իմպուլս» ՓԲԸ սարքաշինական գործարանը 200Xթ. դեկտեմբերի 25-ին առք ու վաճառքի պայմանագրով ձեռք է բերել թանկարժեք մետաղների հալման տեխնոլոգիա, հաշվարկային հաշվից վճարելով 1 440 000 դրամ, ներառյալ ԱԱՀ Օգտակար ծառայությունը սահմանվել է 10 տարի: Ամորտիզացիան հաշվարկվում է գծային եղանակով: 4 տարի անց անվտանգության տեխնիկայի նկատմամբ պահանջների փոփոխության պատճառով կայացվել է որոշում տեխնոլոգիայի դուրս գրման վերաբերյալ:

ԽՆԴԻՐ 6.4

Ստորև բերված տվյալների հիման վրա ձևակերպել հողի օգտագործման իրավունքի ձեռք բերումը և որոշել ու ձևակերպել հաշվետու տարվա ամորտիզացիան:

Տվյալներ «Իմպուլս» ՓԲԸ-ի հիմնադիր փաստաթղթերի համաձայն բաժնետերերի փոխադարձ համաձայնությամբ բաժնետերերից մեկը կանոնադրական կապիտալում իր բաժնեմասի դիմաց տրամադրել է իրեն սեփականությունը հանդիսացող հողամասի օգտագործման իրավունքը: Կազմակերպությունը մտադիր է օգտագործել հողամասը ջերմոցային տնտեսություն կազմակերպելու համար: Հողամասի օգտագործման իրավունքը գնահատվել է բաժնետերերի կողմից համաձայնեցված արժեքով 1 200 000 դրամ: Հողամասի օգտագործման իրավունքը ուժի մեջ է մտել 200Xթ մայիսի 30-ից: Ակտիվի օգտակար ծառայությունը սահմանվել է 20 տարի: Ամորտիզացիան հաշվարկվում է գծային եղանակով:

ԽՆԴԻՐ 6.5

Ստորև բերված տվյալների հիման վրա որոշել ձեռք բերված ոչ նյութական ակտիվի սկզբնական արժեքը և հաշվարկել դրա ամորտիզացիան ըստ տարիների:

Տվյալներ Կազմակերպությունը ձեռք է բերել գյուտի օգտագործման իրավունքը, որի համար հաշվարկային հաշվից վճարել է 1 500 000 դրամ: Բացի այդ, գյուտի օգտագործման իրավունքի ձևակերպման համար հաշվետու անձի կողմից վճարվել է 12 000 դրամ: Բանկային ծառայությունների համար փոխանցվել է

30 000 դրամ:

Ակտիվի ամորտիզացիան հաշվարկել հետևյալ եղանակներով

- գծային,
- նվազող մնացորդի,
- տարիների գումարի հաշվարկման:

Ակտիվի օգտակար ծառայությունը սահմանվել է 10 տարի, արագացման գործակիցը՝ 2:

ԽՆԴԻՐ 6.6

Ոչ նյութական ակտիվների շարժի և ամորտիզացիայի հաշվառման գործառնությունները գրանցել գրանցամատյանում, կազմել ձևակերպումները և դրանց գումարները արտացոլել հաշիվներում

200Xթ. ընթացքում կատարվել են հետևյալ տնտեսական գործառնությունները

Յ/հ	Գործառնությունների բովանդակությունը	Գումարը, դրամ
1	2	3
1	Ձևակերպվել է արտադրանքի պատրաստման բաղադրատոմսի օգտագործման իրավունքը, որը ստացվել է կազմակերպության մասնակցից որպես ներդրում կանոնադրական կապիտալում	650 000
2.	Հաշվարկային հաշվից վճարվել է լիցենզիայի ձեռք բերման համար	240 000
3.	Ծրագրավորող կազմակերպությունից ձեռք են բերվել համակարգչային ծրագրեր	1 000 000
	ա) արժեքը բ) ԱԱՀ	?
	Ընդամենը	?
4.	Հաշվարկային հաշվից վճարվել է ծրագրավորող կազմակերպությանը՝ ձեռք բերված ծրագրերի արժեքը	?
5.	Այլ կազմակերպությունից անհատույց ստացվել է արդյունաբերական նմուշի իրավունքը	120 000
6.	Մուտքագրվել են պետությունից որպես շնորհ ստացված ոչ նյութական ակտիվները	400 000
7.	Դուրսգրված տեխնոլոգիան անհատույց տրամադրվել է այլ կազմակերպությանը	
1	2	3
	ա) սկզբնական արժեքը	185 000
	բ) կուտակված ամորտիզացիան	111 000
	գ) հաշվեկշռային արժեքը	?
8	Արտադրանքի պատրաստման տեխնոլոգիան վաճառվել է այլ կազմակերպությանը	
	ա) սկզբնական արժեքը	250 000
	բ) կուտակված ամորտիզացիան	100 000
	գ) հաշվեկշռային արժեքը	?
9.	ճանաչվել է եկամուտը տեխնոլոգիայի վաճառքից	
	ա) բացթողման գներով բ) ԱԱՀ	200 000
	Ընդամենը վաճառքի գներով	?
10	Ոչ նյութական ակտիվները փոխանցվել են այլ կազմակերպությանը որպես ներդրում կանոնադրական կապիտալում համաձայնեցված արժեքով	800 000
11.	Դուրս են գրվել հաշվեկշռից այլ կազմակերպությանը որպես ներդրում կանոնադրական կապիտալում տրամադրված ոչ նյութական ակտիվները	
	ա) սկզբնական արժեքը	1 000 000

	բ) կուտակված ամորտիզացիան գ) հաշվեկշռային արժեքը	400 000 ?
12	Կազմակերպությունը ձեռք է բերել համակարգչային ծրագիր սեփական արտադրանքով փոխանակելու միջոցով ա) արժեքը բ) ԱԱՀ Ընդամենը	500 000 ? ?
13.	Կազմակերպությունը ձեռք է բերել արագամաշ գործիքներ, որոնց դիմաց տրամադրել է արտադրանքի պատրաստման բանաձևի իրավունքը ա) համաձայնեցված արժեքը առանց ԱԱՀ-ի բ) ԱԱՀ Ընդամենը վաճառքի արժեքը	90 000 ? ?
14.	Դուրս է գրվել փոխանակման կարգով տրամադրված արտադրանքի պատրաստման բանաձևի իրավունքը ա) սկզբնական արժեքը բ) կուտակված ամորտիզացիան գ) հաշվեկշռային արժեքը	150 000 90 000 ?
15	Հաշվարկվել է ոչ նյութական ակտիվների ամորտիզացիան, որոնք օգտագործվում են՝ ա) արտադրական նպատակներով բ) վարչական նպատակներով Ընդամենը	15 000 12 000 27 000
16.	Վաճառվել է արտոնագիր՝ ա) սկզբնական արժեքը բ) կուտակված ամորտիզացիան գ) վաճառքի գինը	900 000 100 000 850 000
1	2	3
	դ) վաճառքի գնի մեջ ներառված ԱԱՀ	?
17	Հաշվանցվել է ձեռք բերված ակտիվների արժեքում ներառված ԱԱՀ	?
18.	Փակել ծախսերի հաշվառման հաշիվները և դրանց շրջանառությունները դուրս գրել «ֆինանսական արդյունք» հաշվին	?
19.	Փակել եկամուտների հաշվառման հաշիվները և դրանց շրջանառությունները փոխանցել «ֆինանսական արդյունք» հաշվին	?
20.	Որոշել և ձևակերպել հաշվետու ժամանակաշրջանի շահույթը կամ վնասը	?

ԽՆԴԻՐ 6.7

Կազմել ոչ նյութական ակտիվների ներստեղծման ստորև բերված գործառնությունների ձևակերպումները և կատարել գրանցումներ հաշիվներում

Յ/հ	Գործառնությունների բովանդակությունը	Գումարը, դրամ
1	2	3

1	Նոր արտադրատեսակի մշակման ակնկալիքով կատարվել են հետազոտական աշխատանքներ, որոնց համար հունվար-մարտ ամիսներին իրականացվել են հետևյալ ծախսումները	
	ա) ծախսվել են նյութեր	145 500
	բ) օգտագործվել են արագամաշ գործիքներ	25 200
	գ) հաշվարկվել է աշխատավարձ լաբորատորիայի անձնակազմին	260 000
	դ) կատարվել են հատկացումներ սոցիալական ապահովագրության գծով	40 000
	ե) կատարվել են դրամական ծախսումներ (անկանխիկ)	60 000
զ) ստացվել է խորհրդատվություն գիտահետազոտական ինստիտուտի մասնագետներից	50 000	
2	Կազմակերպությունը նախագծված մի քանի արտադրատեսակներից ընտրել է մեկը, որի թողարկումը մտադիր է իրագործել. Այդ արտադրատեսակի փորձնական նմուշի պատրաստման և փորձարկման համար ապրիլ- հունիս ամիսներին կատարվել են հետևյալ ծախսումները	
ա) ծախսվել են նյութեր	100 000	
բ) օգտագործվել են արագամաշ գործիքներ	25 000	
գ) հաշվարկվել է լաբորատորիայում օգտագործվող հիմնական միջոցների մաշվածությունը	12 000	
դ) հաշվարկվել է աշխատավարձ լաբորատորիայի աշխատողներին	320 000	
ե) կատարվել են հատկացումներ սոցիալական ապահովագրության գծով	48 000	
1	2	
	զ) կատարվել են գործուղման ծախսումներ արտադրանքի փորձնական ներկայացման նպատակով	55 000
	է) կատարվել են կանխիկ դրամական ծախսումներ	16 500
	ը) սպառվել է էլեկտրաէներգիա	22 500
3	Դուրս են գրվել հետազոտության ծախսումները	
4	Նոր արտադրատեսակի մշակման ծախսումները ճանաչվել են որպես ոչ նյութական ակտիվ	
5	Հաշվարկվել է նոր արտադրատեսակի մշակման ծախսումների ամորտիզացիան շահագործման հանձնման ամսից մինչև հաշվետու տարվա վերջը: Ամորտիզացիան հաշվարկվում է գծային եղանակով: Ակտիվի օգտակար ծառայությունը սահմանվել է 5 տարի	

ԽՆԴԻՐ 6.8

Ստորև բերված տվյալների հիման վրա ձևակերպել ձեռնարկատիրական միավորի ձեռք բերման գործառնությունները, որոշել ձեռնարկատիրական միավորի ձեռք բերումից առաջացած գուղվիլը և հաշվարկել դրա ամորտիզացիան:

Տվյալները «Իմպուլս» ՓԲԸ-ն 200Xթ սեպտեմբեր ամսվա սկզբում աճուրդում ձեռք է բերել սնանկացած «Կայծ» ԲԲԸ-ն, պարտավորվելով վճարել 4 000 000 դրամ: Վերջինիս պարզեցված հաշվեկշիռը ունի հետևյալ տեսքը

Ակտիվ	Գումարը, դրամ
Հիմնական միջոցներ	3 500 000
Նյութեր	220 000
Ղեբիտորական պարտքեր վաճառքների գծով	160 000
Դրամական միջոցներ (այդ թվում դրամարկղում՝ 20 000 դրամ, հաշվարկային հաշվում՝ 260 000 դրամ)	280 000
Հաշվեկշիռ	4 160 000

Պասիվ	Գումարը, դրամ
Կանոնադրական կապիտալ	2 500 000
Երկարաժամկետ բանկային վարկեր	1 000 000
Կրեդիտորական պարտքեր գնումների գծով	660 000
Հաշվեկշիռ	4 160 000

«Կայծ» ԲԲԸ-ի ձեռք բերման ընթացքում կատարվել են հետևյալ գործառնությունները

Հ/հ	Գործառնությունների բովանդակությունը	Գումարը, դրամ
1	2	3
1.	Կազմակերպությունը «Կայծ» ԲԲԸ-ի ձեռք բերման համար պարտավորվել է վճարել աճուրդով որոշված արժեքը	4 000 000
2.	Հաշվառման են ընդունվել ձեռք բերված ֆիրմայի ակտիվները	?
1	2	3
	բ) նյութերը	?
	գ) ղեբիտորական պարտքերը վաճառքների գծով	?
	դ) կանխիկ դրամը դրամարկղում	?
	ե) դրամական միջոցները հաշվարկային հաշվում	?
	Ընդամենը	?
3	Հաշվառման են ընդունվել ձեռք բերված ֆիրմայի պարտավորությունները	?
	ա) երկարաժամկետ բանկային վարկերը	?
	բ) կրեդիտորական պարտքերը գնումների գծով	?
	Ընդամենը	?
4.	Ձևակերպվել է «Կայծ» ԲԲԸ-ի ձեռքբերումից առաջացած գուղվիլը	?
5.	Հաշվարկվել է գուղվիլի ամորտիզացիան սեպտեմբեր-դեկտեմբեր ամիսների համար, հաշվի առնելով, որ գուղվիլի օգտակար ծառայությունը սահմանվել է 20 տարի	?
6.	Հաշվարկային հաշվից վճարվել է ֆիրմայի ձեռք բերման արժեքը	?

ԽՆԴԻՐ 6.9

Ստորև բերված տվյալների հիման վրա պահանջվում է

- բացել սինթետիկ հաշիվները, դրանցում գրանցել սկզբնական մնացորդները,
- հաշվետու եռամսյակում կատարված գործառնությունները գրանցել գրանցամատյանում, կազմել հաշվապահական ձևակերպումները, անհրաժեշտության դեպքում որոշել գործառնությունների գումարները և գրանցել հաշիվներում,
- սինթետիկ հաշիվներում որոշել շրջանառությունները և վերջնական մնացորդները,
- կազմել սինթետիկ հաշիվների շրջանառության տեղեկագիրը,
- կազմել հաշվապահական հաշվեկշիռը հաշվետու եռամսյակի վերջի դրությամբ՝

Տվյալներ. I. Սինթետիկ հաշիվների մնացորդները առ 31 մարտի 200Xթ.

Հաշվ. ծածկ.	Սինթետիկ հաշիվների անվանումը	Գումարը, դրամ
1	2	3
111	«Շահագործման մեջ գտնվող մաշվող հիմնական միջոցներ»	2 200 000
112	«Շահագործման մեջ գտնվող հիմնական միջոցների մաշվածությունը»	600 000
131	«Ոչ նյութական ակտիվներ»	500 000
132	«Ոչ նյութական ակտիվների ամորտիզացիա»	130 000
211	«Նյութեր»	800 000
214	«Անավարտ արտադրություն»	90 000
215	«Արտադրանք»	200 000
228	«Ընթացիկ դեբիտորական պարտքեր առհաշիվ տրված գումարների գծով»	100 000
251	«Դրամարկղ»	140 000
252	«Հաշվարկային հաշիվ»	1 500 000
1	2	3
311	«Կանոնադրական (բաժնեհավաք) կապիտալ»	3 000 000
342	«Նախորդ տարիների չբաշխված շահույթ (չծածկված վնաս)»	900 000
521	«Կրեդիտորական պարտքեր գնումների գծով»	240 000
524	«Կարճաժամկետ կրեդիտորական պարտքեր բյուջեին»	160 000
525	«Կարճաժամկետ կրեդիտորական պարտքեր պարտադիր սոցիալական ապահովագրության գծով»	120 000
527	«Կրեդիտորական պարտքեր աշխատավարձի և աշխատակիցների այլ կարճաժամկետ հատուցումների գծով»	380 000

II. Տնտեսական գործառնությունները II եռամսյակում

Հ/հ	Գործառնությունների բովանդակությունը	Գումարը, դրամ
1	2	3
1.	Անավարտ արտադրության մնացորդը տեղափոխվում է հիմնական արտադրության հաշվին	90 000
2.	Հաշվարկային հաշվից վճարվել է լիցենզիայի ձեռք բերման	100 000

	համար	
3.	Դրամարկղից վճարվել է համակարգչային ծրագրերի ձեռք բերման համար	50 000
4.	Կազմակերպությունը ձեռք է բերել մեկ այլ կազմակերպություն, որի ակտիվները մուտքագրվել են իրական արժեքով	
	ա) հիմնական միջոցները	400 000
	բ) նյութերը	100 000
	գ) արտադրանքը	50 000
	Ընդամենը	550 000
5.	Հաշվառման են ընդունվել ձեռք բերված կազմակերպության պարտավորությունները	
	ա) կրեդիտորական պարտքերը գնումների գծով	80 000
	բ) կրեդիտորական պարտքերը բյուջեին	20 000
	Ընդամենը	100 000
6.	Արտացուլվում է այլ կազմակերպության ձեռք բերման դիմաց վճարվելիք գումարը	500 000
7.	Հաշվարկային հաշվից վճարվել է ձեռնարկատիրական գործունեության ձեռք բերման դիմաց	500 000
8.	Որոշվել և ձևակերպվել է ձեռք բերումից առաջացած գուղվիլը	?
9.	Հաշվարկվել է գուղվիլի ամորտիզացիան հաշվետու եռամսյակի համար (օգտակար ծառայությունը 20 տարի է)	?
10.	Հիմնադիրը տրամադրել է կազմակերպությանը իր հողամասի օգտագործման իրավունքը որպես ներդրում կանոնադրական կապիտալում	250 000
11.	Առհաշիվ անձի կողմից վճարվել է ձեռքբերված արտոնագրի արժեքը	50 000
1	2	3
12.	Հաշվարկային հաշվից ստացվել է դրամարկղում	380 000
13.	Դրամարկղից վճարվել է աշխատավարձ անձնակազմին	380 000
14.	Հաշվարկվել է ոչ նյութական ակտիվների ամորտիզացիան	
	ա) արտադրամասում օգտագործվող	20 000
	բ) վարչական նշանակության	10 000
	Ընդամենը	30 000
15.	Հիմնական արտադրամասում կատարվել են հետևյալ ծախսումները	
	ա) ծախսվել են նյութեր	500 000
	բ) հաշվարկվել է աշխատավարձ	420 000
	գ) կատարվել են սոցապ հատկացումներ	120 000
	Ընդամենը	1 040 000
16.	Վաճառվել է ոչ նյութական ակտիվը	
	ա) հաշվեկշռային արժեքը	150 000
	բ) կուտակված ամորտիզացիան	50 000
	Ընդամենը արժեքը	200 000
17.	Դրամարկղում ստացվել է եկամուտը ոչ նյութական ակտիվի իրացումից	

	ա) արժեքը բացթողման գներով բ) ԱԱՀ	250 000 50 000
	Ընդամենը	300 000
18.	Ոչ նյութական ակտիվների վերագնահատման հետևանքով տեղի է ունեցել արժեքի աճ, որը վերագրվել է ա) սեփական կապիտալին բ) եկամտին	10 000 2 000
	Ընդամենը	12 000
19	Ձևակերպվել է վերագնահատման հետևանքով ոչ նյութական ակտիվների կուտակված ամորտիզացիայի աճը, որը վերագրվել է ա) սեփական կապիտալին բ) եկամտին	2 500 500
	Ընդամենը	3 000
20.	Ոչ նյութական ակտիվների վերագնահատումից առաջացած արժեքի աճի գումարը վերագրվել է չբաշխված շահույթին	1 000
21	Նոր տեխնոլոգիայի մշակման համար կատարվել են ծախսումներ ա) ծախսվել են նյութեր	140 000
	բ) հաշվարկվել է աշխատավարձ	120 000
	գ) կատարվել են սոցալ հատկացումներ	30 000
	դ) կատարվել են դրամական ծախսումներ կանխիկ դրամով	65 000
	ե) ծախսվել է էլեկտրաէներգիա (գնովի)	60 000
	Ընդամենը	415 000
22	Մշակման ծախսումները ծանաչվել են որպես ակտիվ	400 000
23	Մշակման չկապիտալացվող ծախսումները դուրս են գրվել որպես ծախս	?
24	Փակել անուղղակի արտադրական ծախսումների	
1	2	3
	հաշվառման հաշիվը	?
25	Պահեստ է մուտքագրվել հիմնական արտադրությունից ստացված պատրաստի արտադրանքը (ինքնարժեքը որոշել)	?
26.	Անավարտ արտադրության մնացորդը հիմնական արտադրության հաշվից տեղափոխվել է հաշվեկշռային հաշիվ	100 000
27	Փակել ծախսերի հաշվառման հաշիվները և դրանց շրջանառությունները դուրս գրել «ֆինանսական արդյունք» հաշվին	?
28	Փակել եկամուտների հաշվառման հաշիվները և դրանց շրջանառությունները դուրս գրել «ֆինանսական արդյունք» հաշվին	?
29	Որոշել և ձևակերպել հաշվետու եռամսյակի ֆինանսական արդյունքը (շահույթը կամ վնասը)	?
	Ընդամենը շրջանառությունը	?

ՄՏՈՒԳՈՂԱԿԱՆ ԱՌԱՋԱԴՐԱՆՔՆԵՐ, ՀԱՐՑԵՐ ԵՎ ՏԵՍՏԵՐ

Ստուգողական առաջադրանքներ

Առաջադրանք 1

«Հորիզոն» ՍՊԸ-ն ձեռք է բերել արտոնագիր, որի արժեքը կազմել է 760 000 դրամ, ներառյալ ԱԱՀ: Նշված գումարը վճարվել է հաշվարկային հաշվից ձեռք բերումից 10 օր անց: Գյուտը, որի համար ձեռք է բերվել արտոնագիրը, օգտագործվելու է հիմնական արտադրությունում: Արտոնագրի օգտակար ծառայությունը սահմանվել է 10 տարի Ամորտիզացիան հաշվարկվում է գծային եղանակով: Օգտակար ծառայության ժամկետի ավարտին արտոնագիրը դուրս է գրվել կազմակերպության հաշվեկշիռից

Պահանջվում է հաշվարկել ոչ նյութական ակտիվի ամորտիզացիայի ամսական գումարը, կազմել ակտիվի մուտքագրման, ամորտիզացիայի հաշվարկման և ակտիվի դուրսգրման գործառնությունների ձևակերպումները:

Առաջադրանք 2

Կազմակերպությունը 2006թ. ընթացքում կատարել է հետազոտական աշխատանքներ, որի համար կատարված ծախսումները կազմել են 1 200 000 դրամ 2007թ հետազոտական աշխատանքները շարունակվել են: Բացի այդ, տարվա վերջին եռամսյակում սկսվել են նոր արտադրատեսակի արտադրության նախապատրաստման աշխատանքները: 2007թ ընդամենը ծախսվել է 1 400 000 դրամ, որից 20%-ը՝ նոր արտադրատեսակի արտադրության նախապատրաստման աշխատանքների կատարման համար 2008թ. նոր արտադրատեսակի փորձնական նմուշի պատրաստման, ճշգրտման, փորձնական ցուցադրման համար ընդամենը ծախսվել է 1 250 000 դրամ: Կատարված ծախսումները ըստ տարիների հետևյալն են եղել (դրամով).

Ծախսումների հոդվածներ	2006թ.	2007թ.	2008թ.
1	2	3	4
1. Նյութեր	450 000	515 000	575 000
1	2	3	4
2. Աշխատավարձ	600 000	700 000	500 000
3. Սոցիալական պահովագրության հատկացումներ	100 000	110 000	75 000
4 Կանխիկ դրամական ծախսումներ	50 000	75 000	100 000
Ընդամենը	1 200 000	1 400 000	1 250 000

2008թ. հուլիսի 1-ին աշխատանքները ավարտվել են և նոր արտադրատեսակի փորձնական նմուշի պատրաստման ծախսումները ճանաչվել են որպես ոչ նյութական ակտիվ:

Պահանջվում է որոշել ներստեղծված ոչ նյութական ակտիվի սկզբնական արժեքը, կազմել ակտիվի ստեղծման և մուտքագրման, չկապիտալացվող ծախսումների դուրսգրման ձևակերպումները, կատարել ամորտիզացիայի հաշվարկը տարբեր մեթոդներով: Ակտիվի օգտակար ծառայությունը սահմանվել է 10 տարի: Ամորտիզացիան հաշվարկել օգտակար ծառայության բոլոր տարիների համար հետևյալ եղանակներով

- գծային,
- նվազող մնացորդի (արագացման գործակիցը՝ 2),
- տարիների գումարի հաշվարկման:

Ստուգողական հարցեր

1. Ո՞ր ակտիվներն են համարվում ոչ նյութական:
2. Ի՞նչ է նշանակում ոչ նյութական ակտիվների որոշելի լինելը:
3. Որո՞նք են ոչ նյութական ակտիվների դասակարգային դասերը
4. Ո՞ր չափանիշների առկայության դեպքում են ճանաչվում ոչ նյութական ակտիվները:
5. Ինչպե՞ս է որոշվում գնված ոչ նյութական ակտիվների սկզբնական արժեքը.
6. Ինչպե՞ս է որոշվում ներստեղծված ոչ նյութական ակտիվների սկզբնական արժեքը
7. Ո՞ր փուլերից է բաղկացած ոչ նյութական ակտիվների ներստեղծման գործընթացը: Սահմանել այդ փուլերը:
8. Ինչպե՞ս են դուրս գրվում հետազոտության փուլի ծախսումները:
9. Ինչպե՞ս են դուրս գրվում մշակման փուլի ծախսումները:
10. Մշակման փուլի ծախսումները ո՞ր իրավիճակներում են ճանաչվում որպես ակտիվ.
11. Տալ ոչ նյութական ակտիվների ամորտիզացիոն գումարի և ամորտիզացիայի սահմանումը:
12. Ի՞նչ է ոչ նյութական ակտիվի օգտակար ծառայությունը և ո՞ր գործոններից է այն կախված:
13. Ի՞նչ մեթոդներով է հաշվարկվում ոչ նյութական ակտիվների ամորտիզացիան:
14. Ներկայացնել ամորտիզացիայի հաշվարկը գծային մեթոդով:
15. Ներկայացնել ամորտիզացիայի հաշվարկը նվազող մնացորդի մեթոդով.
16. Ներկայացնել ամորտիզացիայի հաշվարկը տարիների գումարի հաշվարկման մեթոդով:
17. Ինչպե՞ս է որոշվում ոչ նյութական ակտիվի հաշվեկշռային արժեքը:
18. Ինչպե՞ս է որոշվում ոչ նյութական ակտիվի փոխհատուցվող գումարը:
19. Ինչպե՞ս են ձևակերպվում ոչ նյութական ակտիվի արժեզրկումից կորուստները և դրանց հաճադարձումը:
20. Ինչպե՞ս է ձևակերպվում ոչ նյութական ակտիվների վերագնահատումից արժեքի աճը:
21. Ինչպե՞ս է ձևակերպվում ոչ նյութական ակտիվների վերագնահատումից արժեքի նվազումը:
22. Ինչպե՞ս է որոշվում ոչ նյութական ակտիվների վաճառքի ֆինանսական արդյունքը
23. Ի՞նչ է գուղվիլը և ինչպե՞ս է այն որոշվում:
24. Ինչպե՞ս է հաշվարկվում և ձևակերպվում գուղվիլի ամորտիզացիան:

Տ ե ս տ ե ր

Ստորև բերված տնտեսական գործառնությունների ձևակերպումների տարբերակներից ընտրել ճիշտ պատասխանը.

Ձ/հ	Գործառնությունների բովանդակությունը	Պատասխան		
		Տարբերակ	Դտ	Կտ
1	2	3	4	5
1	Մատակարարից ապառիկ ձեռք են բերվել ոչ նյութական ակտիվներ	Ա Բ	521 131	251 521

		Գ	131	252
2	Ոչ նյութական ակտիվների վերագնահատումից արժեքի աճը վերագրվել է սեփական կապիտալին	Ա Բ Գ	131 321 131	321 131 132
3.	Անհատույց ստացվել են ոչ նյութական ակտիվներ	Ա Բ Գ	421 131 131	131 614 421
4.	Մուտքագրվել է կազմակերպությունում ներստեղծված ոչ նյութական ակտիվը	Ա Բ Գ	131 131 824	824 252 131
5.	Հաշվարկային հաշվից վճարվել է լիցենզիայի ձեռք բերման համար	Ա Բ Գ	133 131 131	251 252 251
6.	Կազմակերպության մասնակցից ստացվել է ոչ նյութական ակտիվ որպես ներդրում կանոնադրական կապիտալում	Ա Բ Գ	131 311 131	311 131 421
7.	Կապիտալացվել են ոչ նյութական ակտիվների վրա կատարված հետագա ծախսումները	Ա Բ Գ	131 131 131	824 825 133
8	Նոր տեխնոլոգիայի մշակման համար ծախսվել են նյութեր	Ա Բ Գ	824 825 131	211 211 211
9.	Նոր տեխնոլոգիայի մշակման համար հաշվարկվել է աշխատավարձ լաբորատորիայի աշխատողներին	Ա Բ Գ	812 824 527	527 527 825
1	2	3	4	5
10.	Դուրս ելք գրվել հաշվետու ժամանակաշրջանում կատարված հետազոտության ծախսումները	Ա Բ Գ	721 714 813	825 824 824
11.	Անավարտ ոչ նյութական ակտիվների մշակման ծախսումները տեղափոխվել են հաշվեկշռային հաշիվ	Ա Բ Գ	131 131 133	133 824 824
12.	Ոչ նյութական ակտիվների վերագնահատումից արժեքի աճը վերագրվել է եկամտին	Ա Բ Գ	131 131 624	321 624 131
13.	Ոչ նյութական ակտիվների վերագնահատման հետևանքով կուտակված ամորտիզացիայի աճը վերագրվել է սեփական կապիտալին	Ա Բ Գ	321 132 131	132 321 132
14.	Ոչ նյութական ակտիվների վերագնահատման հետևանքով կուտակված ամորտիզացիայի աճը վերագրվել է եկամտին	Ա Բ Գ	132 132 624	624 614 132
15.	Ոչ նյութական ակտիվների վերագնահատումից արժեքի նվազումը վերագրվել է ծախսերին	Ա Բ Գ	721 724 131	131 131 714
16.	Ոչ նյութական ակտիվների վերագնահատումից արժեքի նվազումը վերագրվել է սեփական կապիտալին	Ա Բ Գ	321 131 724	131 321 131
17	Ոչ նյութական ակտիվների վերագնահատման հե-	Ա	132	724

	տևանքով ամորտիզացիայի նվազումը վերագրվել է ծախսերին	Բ Գ	724 132	132 714
18.	Արտացոլվել է եկամուտը ոչ նյութական ակտիվի վաճառքից	Ա Բ Գ	252 221 251	614 621 624
19.	Դուրս է գրվել վաճառված ոչ նյութական ակտիվի հաշվեկշռային արժեքը	Ա Բ Գ	721 714 711	131 131 131
20.	Դուրս է գրվել վաճառված ոչ նյութական ակտիվների կուտակված ամորտիզացիան	Ա Բ Գ	131 132 721	132 131 132
21.	Դուրս է գրվել վաճառված ոչ նյութական ակտիվների կուտակված արժեզրկումը	Ա Բ Գ	136 131 136	131 136 624
22.	Ձևակերպվել են ոչ նյութական ակտիվների արժեզրկումից առաջացած կորուստները	Ա Բ Գ	724 136 714	136 724 136
23.	Ձևակերպվել է ոչ նյութական ակտիվների արժեզրկման հակադարձումը	Ա Բ Գ	136 136 624	724 624 136
24.	Կազմակերպության ակտիվներին են միացվել ձեռք բերված ձեռնարկատիրական միավորի հիմնական միջոցները	Ա Բ Գ	156 111 111	111 156 111
25.	Կազմակերպության պարտավորություններին են միացվել ձեռք բերված ձեռնարկատիրական	Ա Բ	156 156	411 521
1	2	3	4	5
	միավորի առևտրական կրեդիտորական պարտքերը	Գ	524	156
26.	Արտացոլվել է այլ ֆիրմայի ձեռք բերման դիմաց վճարվելիք գումարը	Ա Բ Գ	531 531 156	252 156 531
27.	Ձևակերպվել է ձեռնարկատիրական գործունեության ձեռքբերումից առաջացած գուղվիլը	Ա Բ Գ	134 156 134	156 134 252
28.	Հաշվարկվել է գուղվիլի ամորտիզացիան	Ա Բ Գ	713 714 713	135 135 134

ՆԵՐՂՐՈՒՄԱՅԻՆ ԳՈՒՅՔԻ ՀԱՇՎԱՌՈՒՄ

ԽՆԴԻՐ 7.1

Ստորև բերված տվյալների հիման վրա կազմել ներդրումային գույքի կառուցման և շահագործման հանձնման ձևակերպումները, որոշել գույքի սկզբնական արժեքը:

Տվյալներ. Կազմակերպությունը 200Xթ. հունիսից սկսել է հանրակացարանի շենքի շինարարության աշխատանքները: Այդ տարում կառուցման համար կատարվել են հետևյալ ծախսումները.

- ա) նյութեր 1 560 000 դրամ,
- բ) աշխատավարձ 1 920 000 դրամ,
- գ) մասհանումներ պարտադիր սոցիալական ապահովագրության համար 180 000 դրամ,
- դ) շինարարական սարքավորումների մաշվածություն 250 000 դրամ:

Հաջորդ տարի աշխատանքները շարունակվել են, որի համար կատարվել են հետևյալ ծախսումները.

- ա) նյութեր 840 000 դրամ,
- բ) արագամաշ գործիքներ 160 000 դրամ,
- գ) աշխատավարձ 1 400 000 դրամ,
- դ) մասհանումներ պարտադիր սոցիալական ապահովագրության համար 200 000 դրամ,
- ե) էլեկտրացանցից ստացված էլեկտրաէներգիայի ծախսումներ 150 000 դրամ,
- զ) շինարարական սարքավորումների մաշվածություն 120 000 դրամ:

Աշխատանքները ավարտվել են օգոստոս ամսվա վերջում և սեպտեմբերի 1-ի դրությամբ շենքը հանձնվել է շահագործման: Տնօրենների խորհրդի որոշմամբ շենքը պահվելու է գործառնական վարձակալության տալու նպատակով և պետք է հաշվառվի սկզբնական արժեքի մոդելով:

ԽՆԴԻՐ 7.2

Ստորև բերված տվյալների հիման վրա ձևակերպել հիմնական միջոցների վերադասակարգումը ներդրումային գույքի և վերջինիս իրական արժեքի փոփոխությունները:

Տվյալներ. Կազմակերպությունը իր հիմնական միջոցների կազմում հաշվառվող շենքը որոշել է պահել գործառնական վարձակալության տալու նպատակով. Շենքի վերագնահատված արժեքը 200Xթ. սկզբի դրությամբ կազմել է 2 450 000 դրամ, իսկ կուտակված մաշվածությունը՝ 1 200 000 դրամ: Վերջին վերագնահատումից արժեքի նվազումը՝ 49 500 դրամ գումարով, վերագրվել է ծախսերին. Շենքը որպես ներդրումային գույք վերադասակարգելու նպատակով կատարվել է վերագնահատում, քանի որ ըստ ընտրված հաշվային քաղաքականության այն պետք է հաշվառվի իրական արժեքի մոդելով: Վերագնահատման պահի դրությամբ շենքի իրական արժեքը մասնագետների կողմից գնահատվել է 1 850 000 դրամ. Երկրորդ տարվա սկզբին որպես ներդրումային գույք դասակարգված շենքի իրական արժեքը կազմել է 1 960 000 դրամ: Երրորդ տարվա սկզբին որպես ներդրումային գույք դասակարգված շենքի իրական արժեքը գնահատվել է 1 920 000 դրամ:

ԽՆԴԻՐ 7.3

Ստորև բերված տվյալների հիման վրա ձևակերպել հիմնական միջոցների վերադասակարգումը ներդրումային գույքի և հետագա ծախսումների կապիտալացումը՝ Հաշվարկել գործառնական վարձակալության հանձնման տարվա մաշվածությունը և ձևակերպել վարձավճարի ստացումը:

Տվյալներ. Կազմակերպությունը որոշել է հիմնական միջոցների կազմում հաշվառված հանգստյան տան շենքը վերադասակարգել որպես ներդրումային գույք և վերակառուցելուց հետո օգտագործել որպես հյուրանոց գործառնական վարձակալության հանձնելու նպատակով: Շենքի սկզբնական արժեքը 200Xթ. սկզբի դրությամբ կազմել է 14 500 000 դրամ, վերադասակարգման պահի դրությամբ կուտակված մաշվածությունը կազմել է 7 250 000 դրամ: Վերադասակարգումից հետո 200Xթ. մարտից մինչև օգոստոս ամիսներն ընկած ժամանակաշրջանում կատարվել են վերակառուցման աշխատանքներ, որի համար իրականացվել են հետևյալ ծախսումները

- ա) ծախսվել են նյութեր 1 200 000 դրամ,
- բ) օգտագործվել են արագամաշ գործիքներ 400 000 դրամ,
- գ) հաշվարկվել է աշխատավարձ բանվորներին 1 500 000 դրամ,
- դ) կատարվել են մասհանումներ սոցիալական ապահովագրության համար 180 000 դրամ.

Վերակառուցված շենքը շահագործման է հանձնվել 200Xթ. օգոստոսի վերջին և պետք է հաշվառվի սկզբնական արժեքի մոդելով Սեպտեմբերի մեկից շենքը գործառնական վարձակալության է հանձնվել ամսական 200 000 դրամ վարձավճարով՝ Շենքի մաշվածությունը հաշվարկվել է գծային եղանակով. Օգտակար ծառայությունը սահմանվել է 10 տարի:

ԽՆԴԻՐ 7.4

Պահանջվում է որոշել ձեռք բերված ներդրումային գույքի սկզբնական արժեքը, կատարել մաշվածության հաշվարկը ըստ տարիների՝ տարբեր եղանակներով, կազմել գույքի ձեռքբերման և մաշվածության հաշվարկման գործառնությունների ձևակերպումները:

Տվյալներ. 200Xթ. հունիսին կազմակերպությունը կապալառուից ակտով ընդունել է կառուցված շենքը, որը մտադիր է հանձնել գործառնական վարձակալության: Ըստ կապալառուի հաշվի կազմակերպությունը պետք է վճարի 24 000 000 դրամ, որից 4 000 000 դրամը ԱԱՀ է. Շենքի նախագծման համար կազմակերպությունը նախագծողին վճարել է 1 000 000 դրամ: Շենքի շահագործման նախապատրաստական աշխատանքների համար հաշվետու անձի կողմից ծախսվել է 100 000 դրամ. Շենքի օգտակար ծառայությունը սահմանվել է 10 տարի. Մաշվածությունը հաշվարկել հետևյալ եղանակներով

- գծային,
- նվազող մնացորդի (արագացման գործակիցը՝ 2),
- տարիների գումարի հաշվարկման

ԽՆԴԻՐ 7.5

Ստորև բերված տվյալների հիման վրա որոշել ներդրումային գույքի կուտակված մաշվածությունը վաճառքի պահի դրությամբ և ձևակերպել վաճառքի հետ կապված գործառնությունները

Տվյալներ. Կազմակերպությունը գործառնական վարձակալության տալու նպատակով 200Xթ. հունվարին ձեռք է բերել բազմահարկ շենք, որի համար հաշվարկային հաշվից վճարել է 112 000 000 դրամ, ներառյալ ԱԱՀ: Շենքի հետագա չափումը իրականացվում է սկզբնական արժեքի մոդելով: Օգտակար ծառայությունը սահմանվել է 10 տարի: Մաշվածությունը հաշվարկվել է գծային մեթոդով: 2 տարի անց կազմակերպությունը վաճառել է շենքը 120 000 000 դրամով, ներառյալ ԱԱՀ: Շենքի վաճառքի համար դրամարկղից վճարվել են միջնորդավճարներ 55 000 դրամ:

ԽՆԴԻՐ 7.6

Կազմել ներդրումային գույքի շարժի գործառնությունների ձևակերպումները և կատարել գրանցումներ հաշիվներում:

Հ/հ	Գործառնությունների բովանդակությունը	Գումարը, դրամ
1	2	3
1.	Կազմակերպությունը ձեռք է բերել հողամաս, որը մտադիր է պահել արժեքի աճի նպատակով	14 000 000
2.	Հաշվարկային հաշվից վճարվել է մատակարարից ձեռք բերված հողամասի արժեքը	?
3	Հաշվարկային հաշվից վճարվել է շենքի արժեքը, որը ձեռք է բերվել գործառնական վարձակալության տալու նպատակով	22 000 000
4	Հիմնադիրներից ստացվել է հողակտոր՝ որպես ներդրում կանոնադրական կապիտալում, որի օգտագործման նպատակը դեռևս որոշված չէ	10 000 000
5.	Հիմնական միջոցների կազմում հաշվառվող շենքը վերադասակարգվել է որպես ներդրումային գույք ա) սկզբնական արժեքը բ) կուտակված մաշվածությունը գ) հաշվեկշռային արժեքը Որպես ներդրումային գույք վերադասակարգված շենքը վերագնահատվել է իրական արժեքով: Վերագնահատումից արժեքի աճը կազմել է (Արժեքի աճը ձևակերպելիս հաշվի առնել, որ նախորդ վերագնահատումից արժեքի նվազումը ճանաչվել է որպես ծախս 120 000 դրամ գումարով)	12 500 000 3 125 000 ? 1 125 000
6.	Ձևակերպվել է որպես ներդրումային գույք վերադասակարգված շենքի իրական արժեքով վերաչափումից արժեքի նվազումը	25 000
7.	Ձևակերպվել է որպես ներդրումային գույք հաշվառվող հողամասի իրական արժեքով վերաչափումից արժեքի աճը	1 200 000
8.	Որպես ներդրումային գույք հաշվառված շենքի վերակառուցման նպատակով կատարվել են հետևյալ ծախսումները ա) ծախսվել են նյութեր բ) հաշվարկվել է աշխատավարձ գ) կատարվել են հատկացումներ սոցիալական ապահովագրության համար	160 000 240 000 40 000

	դ) հաշվարկային հաշվից վճարվել են կողմնակի կազմակերպությունների ծառայությունները	60 000
	Ընդամենը	500 000
1	2	3
9.	Ձևակերպվել է ներդրումային գույքի վրա կատարված վերակառուցման ծախսումների կապիտալացումը	?
10.	Վաճառվել է ներդրումային գույքի կազմում հաշվառված հողամասը հաշվեկշռային արժեքով	14 500 000
11	Ձևակերպվել է հողամասի վաճառքի համար բրոքերին վճարման ենթակա միջնորդավճարը	1 000 000
12.	Ձևակերպվել է հողամասի վաճառքից ստացվող ա) եկամուտը՝ բացթողման գներով բ) ԱԱՀ	18 000 000 ?
	Ընդամենը	?
13	Փակել եկամուտների հաշվառման հաշիվները	?
14	Փակել ծախսերի հաշվառման հաշիվները	?
15.	Որոշել և ձևակերպել հաշվետու ժամանակաշրջանի ֆինանսական արդյունքը	?

ԽՆԴԻՐ 7.7

Ստորև բերված տվյալների հիման վրա

- բացել հաշիվները, գրանցել սկզբնական մնացորդները,
- կազմել տնտեսական գործառնությունների ձևակերպումները և դրանց գումարները գրանցել հաշիվներում,
- հաշիվներում որոշել շրջանառությունները և վերջնական մնացորդները,
- կազմել սինթետիկ հաշիվների շրջանառության տեղեկագիրը,
- կազմել խաշվապահական հաշվեկշիռը հաշվետու ժամանակաշրջանի վերջի դրությամբ:

Տվյալներ. I. Սինթետիկ հաշիվների մնացորդը 200Xթ մարտի 31-ի դրությամբ կազմել են

Հաշվ. ծածկ.	Սինթետիկ հաշիվների անվանումը	Գումարը, դրամ
1	2	3
111	Շահագործման մեջ գտնվող մաշվող հիմնական միջոցներ	12 068 000
112	Շահագործման մեջ գտնվող հիմնական միջոցների մաշվածություն	1 840 000
122	Ներդրումային գույք	6 550 000
123	Սկզբնական արժեքով հաշվառվող ներդրումային գույքի մաշվածություն	1 520 000
211	Նյութեր	480 000
251	Դրամարկդ	150 000
252	Հաշվարկային հաշիվ	2 820 000
311	Կանոնադրական (բաժնետիրական) կապիտալ	13 500 000
343	Հաշվետու տարվա զուտ շահույթ (վնաս)	1 200 000

521	Կրեդիտորական պարտքեր գնումների գծով	1 420 000
524	Կարճաժամկետ կրեդիտորական պարտքեր բյուջեին	850 000
525	Կարճաժամկետ կրեդիտորական պարտքեր պարտադիր սոցիալական ապահովագրության գծով	520 000
527	Կրեդիտորական պարտքեր աշխատավարձի գծով	1 218 000

II. 200Xթ. II եռամսյակում տեղի ունեցած տնտեսական գործառնությունները.

Յ/հ	Գործառնությունների բովանդակությունը	Գումարը, դրամ
1	2	3
1.	Կազմակերպությունը ձեռք է բերել շինություն, որը մտադիր է պահել գործառնական վարձակալության տալու նպատակով	2 000 000
2.	Հաշվարկային հաշվից վճարվել է ձեռք բերված շենքի արժեքը	2 000 000
3.	Վերակառուցվել է որպես հյուրանոց օգտագործելու նպատակով ձեռք բերված շենքը, որի համար կատարվել են հետևյալ ծախսումները	
	ա) ծախսվել են նյութեր	260 000
	բ) հաշվարկվել է աշխատավարձ	620 000
	գ) կատարվել են հատկացումներ սոցիալական ապահովագրության համար	80 000
	դ) հաշվարկվել է շինարարական մեքենաների և գործիքների մաշվածությունը	45 000
	ե) ծախսվել է էլեկտրատեղեղի (գնովի)	38 000
	Ընդամենը	1 043 000
4.	Կապիտալացվել են շենքի վերակառուցման ծախսումները	?
5.	Հաշվարկվել է ներդրումային գույքի մաշվածությունը՝	
	ա) գործառնական վարձակալության տալու նպատակով պահվող	350 000
	բ) արժեքի աճի նպատակով պահվող	200 000
	Ընդամենը	550 000
6.	Կազմակերպությունը ձեռք է բերել հողամաս, որը պահելու է արժեքի աճի նպատակով	3 500 000
7.	Վաճառվել է կազմակերպությանը պատկանող շենքը, որը հաշվառված է ներդրումային գույքի կազմում	
	սկզբնական արժեքը	2 800 000
	կուտակված մաշվածությունը	920 000
	հաշվեկշռային արժեքը	?
8.	Ձևակերպվել է որպես ներդրումային գույք հաշվառված շենքի վաճառքից	
	եկամուտը բացթողման արժեքով ԱԱՀ	2 500 000
	Ընդամենը վաճառքի արժեքը	?
9.	Հաշվարկային հաշվում ստացվել է գնորդից՝ վաճառված շենքի արժեքը	?
10.	Փակել եկամուտների հաշվառման հաշիվները և դրանց	

	շրջանառությունները տեղափոխել «ֆինանսական արդյունք» հաշվին	?
11	Փակել ծախսերի հաշվառման հաշիվները և դրանց շրջանառությունները տեղափոխել «ֆինանսական արդյունք» հաշվին	?
1	2	3
12	Որոշել և ձևակերպել կազմակերպության գործունեության ֆինանսական հետևանքը	?
	Ընդամենը	?

ՍՏՈՒԳՈՂԱԿԱՆ ԱՌԱՋԱՂՈՒՄՆԵՐ, ՀԱՐՑԵՐ ԵՎ ՏԵՍՏԵՐ

Ստուգողական առաջադրանքներ

Առաջադրանք 1

Կազմակերպությունը 200Xթ սեպտեմբերի սկզբին ձեռք է բերել շենք, որը մտադիր է պահել գործառնական վարձակալության տալու նպատակով: Շենքը ձեռք բերելու համար հաշվարկային հաշվից վճարվել է 12 000 000 դրամ, ներառյալ ԱԱՀ Հաշվետու անձի կողմից վճարվել են միջնորդավճարներ 100 000 դրամ Հաշվարկային հաշվից փոխանցվել է իրավաբանական կազմակերպությանը

500 000 դրամ խորհրդատվության և փաստաթղթերի նախապատրաստման համար:

Շենքի օգտակար ծառայությունը սահմանվել է 10 տարի, մնացորդային արժեքը 600 000 դրամ:

Պահանջվում է որոշել ձեռք բերված ներդրումային գույքի սկզբնական արժեքը և հաշվարկել դրա մաշվածությունը ըստ տարիների գծային և տարիների գումարի հաշվարկման մեթոդներով, որոշել գույքի հաշվեկշռային արժեքը յուրաքանչյուր տարվա վերջում: Կազմել գույքի ձեռք բերման և մաշվածության հաշվարկման գործառնությունների ձևակերպումները:

Առաջադրանք 2

Կազմակերպությունը իր ներդրումային գույքի կազմում հաշվառում է շինություն, որի սկզբնական արժեքը 6 000 000 դրամ է, մնացորդային արժեքը՝

500 000 դրամ, իսկ օգտակար ծառայությունը 10 տարի: Կազմակերպությունը 4 տարի անց վաճառել է շենքը 6 000 000 դրամով, ներառյալ ԱԱՀ: Հաշվարկային հաշվից փոխանցվել են միջնորդավճարները շենքի վաճառքի համար 200 000 դրամ Գնորդից վճարը ստացվել է հաշվարկային հաշվում:

Որոշել ներդրումային գույքի կուտակված մաշվածությունը վաճառքի պահի դրությամբ և ձևակերպել վաճառքի գործառնությունները Որոշել և ձևակերպել վաճառքի ֆինանսական հետևանքը:

Առաջադրանք 3

Հիմնական միջոցների կազմում հաշվառված շենքը վերադասակարգվել է որպես ներդրումային գույք, որը պետք է հաշվառվի իրական արժեքի մոդելով: Վերադասակարգման պահի դրությամբ շենքի սկզբնական արժեքը 2 500 000 դրամ է, կուտակված մաշվածությունը՝ 700 000 դրամ, վերջին վերագնահատումից արժեքի աճը վերագրվել է սեփական կապիտալին՝ 150 000 դրամ: Վերադասակարգման պահին շենքի իրական արժեքը գնահատվել է 1 850 000 դրամ: Ձևակերպել շենքի վերագնահատման և վերադասակարգման գործառնությունները

Առաջադրանք 4

Կազմակերպությունում կիրառվում է ներդրումային գույքի հետագա չափման իրական արժեքի մոդելը 2007թ դեկտեմբերի վերջի դրությամբ ներդրումային գույքի հաշվեկշռային արժեքը 20 000 000 դրամ է, իսկ շուկայական գինը՝

22 500 000 դրամ: 2008թ. սկզբում գույքը վաճառվել է 25 000 000 դրամով: Վաճառքից գումարը ստացվելու է 30 օրվա ընթացքում: Ձևակերպել ներդրումային գույքի իրական արժեքով վերաչափման և վաճառքի հետ կապված գործառնությունները Որոշել և ձևակերպել վաճառքի ֆինանսական հետևանքը:

Առաջադրանք 5

Ներդրումային գույքի կազմում հաշվառված շենքի սկզբնական արժեքը 2 000 000 դրամ է, մնացորդային արժեքը՝ 200 000 դրամ, օգտակար ծառայությունը՝ 20 տարի: Մաշվածությունը հաշվարկվում է նվազող մնացորդի մեթոդով, արագացման գործակիցը 2 է: 3-րդ տարվա վերջում շենքը վերադասակարգվել է որպես հիմնական միջոց: Ձևակերպել վերադասակարգման գործառնությունները և որոշել վերադասակարգված շենքի հաշվեկշռային արժեքը

Ստուգողական հարցեր

1. Ո՞ր գույքն է համարվում ներդրումային:
2. Ո՞ր ակտիվների կազմում է հաշվառվելու կազմակերպության կողմից ձեռք բերված հողը, որի հետագա օգտագործման նպատակը դեռևս որոշված չէ:
3. Ո՞ր ակտիվների կազմում է հաշվառվելու վերակառուցման կարիք ունեցող շինությունը, որը վերակառուցումից հետո պետք է օգտագործվի վարձակալական եկամուտ վաստակելու նպատակով:
4. Որո՞նք են ներդրումային գույքի ճանաչման չափանիշները:
5. Ինչպե՞ս է որոշվում ներդրումային գույքի սկզբնական արժեքը:
6. Ինչպե՞ս են հաշվառվում արդեն ճանաչված ներդրումային գույքին վերաբերող հետագա ծախսումները:
7. Որո՞նք են ներդրումային գույքի հետագա չափման մոդելները:
8. Որո՞նք են ներդրումային գույքի իրական արժեքի մոդելով չափման սկզբունքները:
9. Ինչպե՞ս է հաշվառվում ներդրումային գույքը հետագա չափման սկզբնական արժեքի մոդելի դեպքում:
10. Ինչպե՞ս է ձևակերպվում հիմնական միջոցների որպես ներդրումային գույք վերադասակարգումը:
11. Ինչպե՞ս է ձևակերպվում ներդրումային գույքի վերադասակարգումը որպես հիմնական միջոցներ:
12. Ինչպե՞ս է ձևակերպվում ներդրումային գույքի օտարումը:
13. Ինչպե՞ս է հաշվարկվում և ձևակերպվում ներդրումային գույքի մաշվածությունը:

Տ Ե Ս Տ Ե Ր

Ընտրել ստորև ներկայացված գործառնությունների պատասխանների ճիշտ տարբերակները.

Հ/հ	Գործառնությունների բովանդակությունը	Պատասխան		
		Տարբերակ	Դտ	Կտ

1	2	3	4	5
1	Մասնակիցներից ստացվել է ներդրումային գույք որպես ներդրում կանոնադրական կապիտալում	Ա Բ Գ	122 111 122	311 311 111
2.	Կազմակերպությունը մատակարարից ձեռք է	Ա	111	521
1	2	3	4	5
	բերել շինություն, որը մտադիր է պահել արժեքի աճից եկամուտ ստանալու նպատակով	Բ Գ	122 521	521 122
3	Մուտքագրվել է կազմակերպության կողմից կառուցված շենքը, որը նախատեսվել է պահել վարձակալական եկամուտ ստանալու նպատակով	Ա Բ Գ	122 111 113	821 821 821
4	Շահագործման մեջ գտնվող հիմնական միջոցների կազմում հաշվառվող շինությունը վերադասակարգվել է որպես ներդրումային գույք	Ա Բ Գ	111 122 122	122 113 111
5	Շահագործման մեջ չգտնվող հիմնական միջոցների կազմում հաշվառվող շինությունը վերադասակարգվել է որպես ներդրումային գույք	Ա Բ Գ	122 122 113	113 111 122
6	Ներդրումային գույքը վերադասակարգվել է որպես շահագործման մեջ գտնվող հիմնական միջոց	Ա Բ Գ	122 111 113	111 122 122
7.	Ձևակերպվել է ներդրումային գույքի կազմում հաշվառված հողամասի վերադասակարգումը, որը կազմակերպությունը որոշել է օգտագործել սովորական գործունեության նպատակով	Ա Բ Գ	111 122 115	115 115 122
8.	Ձևակերպվել է ներդրումային գույքի իրական արժեքով վերաչափումից արժեքի աճը	Ա Բ Գ	624 122 724	122 624 122
9.	Ձևակերպվել է ներդրումային գույքի իրական արժեքով վերաչափումից արժեքի նվազումը	Ա Բ Գ	724 122 122	122 624 724
10	Հաշվարկվել է գործառնական վարձակալության հանձնված ներդրումային գույքի մաշվածությունը	Ա Բ Գ	721 724 714	123 123 123
11	Հաշվարկվել է արժեքի աճից եկամուտ ստանալու նպատակով պահվող ներդրումային գույքի մաշվածությունը	Ա Բ Գ	729 123 714	123 714 123
12.	Ձևակերպվել է ներդրումային գույքի արժեզրկումը	Ա Բ Գ	724 714 124	124 124 724
13	Ձևակերպվել է ներդրումային գույքի արժեզրկման հակադարձումը	Ա Բ Գ	624 124 724	124 624 124
14.	Դուրս է գրվել վաճառված ներդրումային գույքի հաշվեկշռային արժեքը	Ա Բ Գ	714 122 721	122 621 122
15	Դուրս է գրվել վաճառված ներդրումային գույքի կուտակված մաշվածությունը	Ա Բ	123 122	122 123

		Գ	122	112
16.	Դուրս են գրվել վաճառված ներդրումային գույքի արժեզրկումից կուտակված կորուստները	Ա	123	124
		Բ	124	122
		Գ	724	124
17.	Հաշվարկային հաշվում ստացվել է եկամուտը ներդրումային գույքի վաճառքից	Ա	621	252
		Բ	721	252
1	2	3	4	5
		Գ	252	621
18.	Ճանաչվել է ներդրումային գույքի վաճառքից եկամուտը	Ա	252	621
		Բ	221	621
		Գ	621	252

ԳԼՈՒԽ 8

ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ԱԿՏԻՎՆԵՐԻ ՀԱՇՎԱՌՈՒՄ

ԽՆԴԻՐ 8.1

Ստորև բերված տվյալների հիման վրա ձևակերպել կարճաժամկետ փոխառության տրամադրումը և մարումը.

Տվյալներ. Պայմանագրի համաձայն «Հորիզոն» ԲԲԸ-ն իր ժամանակավորապես ազատ դրամական միջոցները տրամադրել է «Քվանտ» ՍՊԸ-ին որպես փոխառություն՝ 1 000 000 դրամ գումարով: Փոխառությունը տրամադրվել է 200Xթ. փետրվարի 1-ից՝ 10 ամիս ժամկետով, տարեկան 24% տոկոսադրույքով: Փոխառության հիմնական գումարի և տոկոսների մարումը կատարվել է միանվագ վճարման կարգով, փոխառության ժամկետի վերջում: Վճարված գումարները մուտքագրվել են «Հորիզոն» ԲԲԸ-ի հաշվարկային հաշվում:

ԽՆԴԻՐ 8.2

Ստորև բերված տվյալների հիման վրա ձևակերպել արժեթղթերի ձեռք բերման, իրացման, եկամուտների հաշվեգրման գործառնությունները:

Տվյալներ. 200Xթ. հունվարին «Հորիզոն» ԲԲԸ-ն ֆոնդային բորսայում ձեռք է բերել «Շանթ» ԲԲԸ-ի 2 000 հատ բաժնետոմս, յուրաքանչյուր բաժնետոմսի համար վճարելով 1 200 դրամ: Յուրաքանչյուր բաժնետոմսի անվանական արժեքը 1 000 դրամ է: Ձեռք բերված բաժնետոմսերի համար հաշվետու անձը վճարել է 100 000 դրամ, մնացած գումարը փոխանցվել է հաշվարկային հաշվից: Բաժնետոմսերը ձեռք են բերվել մոտ ապագայում վաճառելու նպատակով: Հաշվետու անձի կողմից վճարվել է կոմիսիոն վարձատրությունը բրոքերին 20 000 դրամ: Հաջորդ տարվա մարտին հայտարարվել և ստացվել են 200Xթ. շահաբաժինները 100 000 դրամ Ապրիլ ամսվա վերջում բաժնետոմսերը վաճառվել են յուրաքանչյուրը 1 250 դրամով: Վաճառքից հասույթը մուտքագրվել է հաշվարկային հաշվում:

ԽՆԴԻՐ 8.3

Պահանջվում է ձևակերպել ներդրումների ձեռք բերումը, շահույթի բաժնեմասի արտացոլումը, շահաբաժնի հայտարարումը և ստացումը բաժնեմասնակցության մեթոդով ներդրումների հաշվառման դեպքում.

Տվյալներ. «Ա» կազմակերպությունը ձեռք է բերել «Բ» կազմակերպության բաժնետոմսերի 55%-ը, վճարելով հաշվարկային հաշվից 6 000 000 դրամ: «Բ» կազմակերպությունը հաշվետու տարում ստացել է 800 000 դրամ շահույթ, որից հայտարարել է շահաբաժիններ 15%-ի չափով: «Ա» կազմակերպության շահաբաժինը մուտքագրվել է հաշվարկային հաշվում:

ԽՆԴԻՐ 8.4

Պահանջվում է ձևակերպել բաժնեմասնակցության մեթոդով հաշվառվող ներդրումների ձեռք բերման, շահաբաժինների հաշվեգրման, ներդրումների իրացման և վերադասակարգման գործառնությունները:

Տվյալներ. «Քվանտ» ԲԲԸ-ն 200Xթ. հունվարին ձեռք է բերել «Օմեգա» ԲԲԸ-ի բաժնետոմսերի 50%-ը, վճարելով հաշվարկային հաշվից 4 000 000 դրամ: Ներդրման օբյեկտը հաշվետու տարում ստացել է շահույթ 1 000 000 դրամի չափով, որի 15%-ը ուղղվել է շահաբաժինների վճարմանը: Շահաբաժինները մուտքագրվել են «Քվանտ» ԲԲԸ-ի հաշվարկային հաշվում: Ընթացիկ տարվա վերջում «Օմեգա» ԲԲԸ-ի բաժնետոմսերի կեսը վաճառվել է մեկ այլ կազմակերպությանը, որի դիմաց գնորդից պահանջվել է 2 500 000 դրամ: Հաշվարկային հաշվից վճարվել են միջնորդավճարներ բաժնետոմսերի վաճառքի համար 57 500 դրամ:

«Քվանտ» ԲԲԸ-ն որոշել է մոտ ապագայում վաճառել «Օմեգա» ԲԲԸ-ի մնացած բաժնետոմսերը և դրա հետ կապված կատարվել է ներդրումների վերադասակարգում:

ԽՆԴԻՐ 8.5

Ստորև բերված տվյալների հիման վրա պահանջվում է ձևակերպել իրական արժեքով չափվող ֆինանսական ակտիվների իրացման գործառնությունները և չիրացված շահույթի վերագրումը հաշվետու ժամանակաշրջանի եկամուտներին:

Տվյալներ. Կազմակերպությունը իրացրել է վաճառքի համար մատչելի երկարաժամկետ ֆինանսական ակտիվները, որոնց իրական արժեքը վաճառքի պահին 120 000 դրամ է, արժեզրկումից կուտակված կորուստները՝ 10 000 դրամ: Հաշվարկային հաշվից վճարվել է միջնորդավճար ակտիվների վաճառքի համար՝

5 000 դրամ: Վաճառքից եկամուտը կազմել է 130 000 դրամ: Իրական արժեքով վերաչափումից սեփական կապիտալում հաշվառված աճը կազմել է 20 000 դրամ:

ԽՆԴԻՐ 8.6

Ստորև բերված տվյալների հիման վրա կազմել ներդրումների մարման և ֆինանսական եկամտի հաշվեգրման ժամանակացույցը անուիտետի և միանվագ մարման դեպքերում: Կազմել ներդրումների ձեռք բերման, եկամուտների հաշվեգրման, ներդրումների և տոկոսների մարման ձևակերպումները:

Տվյալներ. «Հորիզոն» ԲԲԸ-ն ձեռք է բերել «Շանթ» ԲԲԸ-ի պարտատոմսերը 800 000 դրամ արժեքով, 5 տարի մարման ժամկետով, տարեկան 10% տոկոսադրույքով: Ներդրողը մտադիր է պահել ներդրումները մինչև մարման ժամկետի վերջը:

ԽՆԴԻՐ 8.7

Ստորև բերված տվյալների հիման վրա կազմել ներդրումների մարման և ֆինանսական եկամտի հաշվեգրման ժամանակացույցը անուիտետով և միանվագ կարգով:

մարումը իրականացնելու պայմանով: Կազմել ներդրումների ձեռք բերման, եկամուտների հաշվեգրման, ներդրումների և տոկոսների մարման ձևակերպումները:

Տվյալներ. «Ալֆա» կազմակերպությունը 200Xթ. հունվարին տրամադրել է «Լույս» ՍՊԸ-ին 500 000 դրամ երկարաժամկետ փոխառություն 5 տարի ժամկետով, տարեկան 8% տոկոսադրույքով: Ներդրումների մարումը կատարվել է պայմանագրով սահմանված ժամկետներում (անուիտետի դեպքում յուրաքանչյուր տարվա վերջում, իսկ միանվագ վճարման դեպքում 5-րդ տարվա վերջում):

ԽՆԴԻՐ 8.8

Ստորև բերված տվյալների հիման վրա կազմել ֆինանսական ակտիվների շարժի գործառնությունների ձևակերպումները և կատարել դրանց գումարների հաշվարկները:

Հ/հ	Տնտեսական գործառնությունների բովանդակությունը	Գումարը, դր.
1	2	3
1.	Ձեռք են բերվել այլ կազմակերպության բաժնետոմսերը,	
1	2	3
	որոնք կազմում են վերջինիս կանոնադրական կապիտալի 40%-ը: Բաժնետոմսերը ձեռք են բերվել պահելու մտադրությամբ	4 000 000
2.	Ձևակերպվել է կազմակերպության շահույթի բաժինը ներդրման օբյեկտի հաշվետու տարվա զուտ շահույթում (վերջինիս զուտ շահույթը կազմել է 1 500 000 դրամ)	?
3.	Հաշվեգրվել են հաշվետու տարվա շահաբաժինները բաժնեմասնակցության մեթոդով հաշվառվող բաժնետոմսերի գծով (շահաբաժինների վճարմանն ուղղվել է շահույթի 15%-ը)	?
4.	Հաշվարկային հաշվում ստացվել են շահաբաժինները ներդրման օբյեկտից	?
5.	Ձեռք են բերվել պարտատոմսեր 3 տարի մարման ժամկետով, տարեկան 10% տոկոսադրույքով <ul style="list-style-type: none"> • անվանական արժեքը • ձեռք բերման արժեքը 	1 000 000 950 000
6.	Հաշվարկային հաշվից վճարվել են միջնորդավճարներ պարտատոմսեր ձեռք բերելու համար	100 000
7.	Ձևակերպվել է ձեռք բերված պարտատոմսերին վերաբերող չվաստակած ֆինանսական եկամուտը (անուիտետով վճարումների պայմանով)	?
8	Ձևակերպվել է հաշվետու տարվա վճարումների տեղափոխումը ընթացիկ ակտիվների կազմ	?
9	Հաշվարկային հաշվում ստացվել է պարտատոմսերի մարման տարեկան գումարը	?
10.	Ձևակերպվում է երկարաժամկետ պարտատոմսերի գծով չվաստակած ֆինանսական եկամտի հաշվեգրումը հաշվետու տարվա եկամուտներին	?

ԽՆԴԻՐ 8.9

Ստորև բերված տվյալների հիման վրա

- կազմել ֆինանսական ակտիվների շարժի գործառնությունների ձևակերպումները,
- բացել սինթետիկ հաշիվները, դրանցում գրանցել սկզբնական մնացորդները, գործառնությունների գումարները,
- սինթետիկ հաշիվներում որոշել շրջանառությունները և վերջնական մնացորդները,
- լրացնել ֆինանսական ներդրումների անալիտիկ հաշվառման հաշիվները,
- կազմել սինթետիկ և անալիտիկ հաշիվների շրջանառության տեղեկագրերը,
- կազմել հաշվապահական հաշվեկշիռը հաշվետու ժամանակաշրջանի վերջի դրությամբ

Տվյալներ. 1. «Գամմա» ԲԲԸ-ի սինթետիկ հաշիվների մնացորդները 2007թ դեկտեմբերի 31-ի դրությամբ.

Հաշվ. ծածկ.	Հաշիվների անվանումը	Գումարը, դրամ
1	2	3
111	Շահագործման մեջ գտնվող մաշվող հիմնական միջոցներ	3 980 000
112	Շահագործման մեջ գտնվող հիմնական միջոցների մաշվածություն	720 000
131	Ոչ նյութական ակտիվներ	340 000
132	Ոչ նյութական ակտիվների ամորտիզացիա	68 000
142	Սկզբնական արժեքով հաշվառվող ոչ ընթացիկ ներդրումներ կապակցված կազմակերպությունների կանոնադրական կապիտալում	494 000
144	Մինչև մարման ժամկետը պահվող երկարաժամկետ ներդրումների գծով ստացվելիք համախառն մուտքեր	391 846
147	Չվաստակած ֆինանսական եկամուտ ամորտիզացված արժեքով հաշվառվող երկարաժամկետ ֆինանսական ակտիվների գծով	139 346
235	Տրամադրված կարճաժամկետ փոխառությունների գծով ստացվելիք համախառն մուտքեր	207 075
238	Չվաստակած ֆինանսական եկամուտ ամորտիզացված արժեքով հաշվառվող կարճաժամկետ ֆինանսական ակտիվների գծով	7 075
251	Դրամարկղ	500 000
252	Հաշվարկային հաշիվ	2 800 000
311	Կանոնադրական (բաժնեհավաք) կապիտալ	5 000 000
342	Նախորդ տարիների չբաշխված շահույթը (չծածկված վնաս)	1 000 000
343	Հաշվետու տարվա զուտ շահույթ (վնաս)	350 000
511	Կարճաժամկետ բանկային վարկերի գծով վճարվելիք համախառն գումարներ	200 000
524	Կարճաժամկետ կրեդիտորական պարտքեր բյուջեին	120 000

525	Կարճաժամկետ կրեդիտորական պարտքեր պարտադիր սոցիալական ապահովագրության գծով	150 000
527	Կրեդիտորական պարտքեր աշխատավարձի և աշխատակիցների այլ կարճաժամկետ հատուցումների գծով	958 500

II. Անալիտիկ հաշիվների մնացորդները 2007թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ (դրամ).

1) 142 «Սկզբնական արժեքով հաշվառվող ոչ ընթացիկ ներդրումներ կապակցված կազմակերպությունների կանոնադրական կապիտալում» հաշվի գծով

ա) «Չորիզոն» ԲԲԸ բաժնետոմսեր 100 հատ, յուրաքանչյուրի անվանական արժեքը՝ 2 500 դրամ, ձեռք բերման արժեքը 2 300 դրամ. Ընդամենը ձեռք բերման արժեքը՝ 230 000 դրամ,

բ) «Կայծ» ԲԲԸ բաժնետոմսեր 120 հատ, յուրաքանչյուրի անվանական արժեքը՝ 2 000 դրամ, ձեռք բերման արժեքը 2 200 դրամ. Ընդամենը ձեռք բերման արժեքը՝ 264 000 դրամ:

2) 144 «Մինչև մարման ժամկետը պահվող երկարաժամկետ ներդրումների գծով ստացվելիք համախառն մուտքեր» հաշվի գծով

ա) «Լույս» ԲԲԸ պարտատոմսեր 50 հատ, յուրաքանչյուրի անվանական արժեքը՝ 1 000 դրամ, ձեռք բերման արժեքը 1 050 դրամ: Ձեռք բերման ընդհանուր արժեքը՝ 52 500 դրամ, մարման ժամկետը՝ 2 տարի, վճարումները պետք է կատարվեն 2-րդ տարվա վերջում, տարեկան 20% եկամտի հաշվարկով Պարտատոմսերը ձեռք են բերվել 2007թ. դեկտեմբերին: Չվաստակած ֆինանսական եկամուտը 22 046 դրամ է,

բ) պետական պարտատոմսեր 100 հատ, յուրաքանչյուրի անվանական արժեքը՝ 2 000 դրամ. Պարտատոմսերը ձեռք են բերվել անվանական արժեքով: Ընդհանուր արժեքը 200 000 դրամ է: Պարտատոմսերի մարման ժամկետը 5 տարի է, մարումը կատարվում է անուիտետով, տարեկան 18% եկամտի հաշվարկով: Պարտատոմսերը ձեռք են բերվել 2007թ. դեկտեմբերին: Չվաստակած ֆինանսական եկամուտը 119 800 դրամ է.

3) 235 «Տրամադրված կարճաժամկետ փոխառությունների գծով ստացվելիք համախառն մուտքեր» հաշվի գծով

ա) 2007թ. դեկտեմբերի 25-ին «Օրիոն» ԲԲԸ-ին տրամադրվել է կարճաժամկետ փոխառություն 6 ամիս ժամկետով, 200 000 դրամ գումարով, տարեկան 12% եկամտի հաշվարկով: Մարումը կատարվում է անուիտետով: Չվաստակած ֆինանսական եկամուտը 7 075 դրամ է,

4) 147 «Չվաստակած ֆինանսական եկամուտ ամորտիզացված արժեքով հաշվառվող երկարաժամկետ ֆինանսական ակտիվների գծով» հաշվի գծով

ա) «Լույս» ԲԲԸ պարտատոմսերի գծով չվաստակած ֆինանսական եկամտի մնացորդը 19 546 դրամ է, այդ թվում

- տոկոսային եկամուտը՝ 22 046 դրամ,

- անվանական արժեքի և ձեռք բերման արժեքի բացասական տարբերությունը՝ 2 500 դրամ,

բ) պետական պարտատոմսերի գծով չվաստակած ֆինանսական եկամտի մնացորդը՝ 119 800 դրամ:

III. Տնտեսական գործառնությունները 2008թ I եռամսյակում

Չ/հ	Գործառնությունների բովանդակությունը	Գումարը, դրամ
1	2	3
1.	Տեղափոխվել է նախորդ տարվա զուտ շահույթը	?
2	Հաշվարկային հաշվից փոխանցվել է գումար ինվեստիցիոն ընկերությանը «Սպորտ» ԲԲԸ-ի բաժնետոմսերի 50% ձեռք բերելու համար	1 000 000
3	Ինվեստիցիոն ընկերության միջնորդությամբ ձեռք են բերվել «Սպորտ» ԲԲԸ-ի 500 բաժնետոմսեր, յուրաքանչյուրը 3000 դրամ անվանական արժեքով	
	ա) հաշվանցվել է նախապես վճարված կանխավճարը	?
	բ) փոխանցվել է հաշվարկային հաշվից	?
	Ընդամենը	?
4.	Հաշվարկային հաշվից փոխանցվել է կոմիսիոն վարձատրություն «Սպորտ» ԲԲԸ-ի բաժնետոմսերը ձեռք բերելու համար, գործարքի գումարի 1% -ի չափով	?
1	2	3
5.	Հաշվեգրվել է հաշվետու եռամսյակի տոկոսային եկամուտը «Օրիոն» ԲԲԸ-ին տրամադրված կարճաժամկետ փոխառության համար	?
6.	Հաշվարկային հաշվում ստացվել են «Օրիոն» ԲԲԸ-ից տրամադրված կարճաժամկետ փոխառության դիմաց հաշվետու եռամսյակի մարման գումարները	?
7	«Լույս» ԲԲԸ-ի պարտատոմսերի գծով հաշվետու եռամսյակին վերաբերող չվաստակած ֆինանսական եկամուտը վերագրվել է ժամանակաշրջանի եկամուտներին (գումարը որոշելու համար կազմել ներդրումների և տոկոսային եկամուտների միջև վճարումների բաշխման ժամանակացույցը)	?
8.	Պետական պարտատոմսերի գծով հաշվետու տարվա վճարումները տեղափոխվել են ընթացիկ ակտիվների կազմ	?
9.	Պետական պարտատոմսերի գծով հաշվետու եռամսյակին վերաբերող ֆինանսական եկամուտը վերագրվել է ժամանակաշրջանի եկամուտներին	?
10.	Հայտարարվել են կապակցված կազմակերպությունների բաժնետոմսերի գծով ստացման ենթակա շահաբաժինները՝	
	ա) «Հորիզոն» ԲԲԸ-ից	30 000
	բ) «Կայծ» ԲԲԸ-ից	55 000
	Ընդամենը	85 000
11	Հաշվարկային հաշվում ստացվել են շահաբաժիններ կապակցված կազմակերպություններից	85 000
12	Վաճառվել է «Հորիզոն» ԲԲԸ-ի 30 հատ բաժնետոմս սկզբնական արժեքով	?
13.	Հաշվեգրվել է եկամուտը բաժնետոմսերի վաճառքից (գործ. 12)	75 000
14	Հաշվարկային հաշվում ստացվել է բաժնետոմսերի վաճառ-	75 000

	քից	
15	Հաշվետու ժամանակաշրջանի ծախսերը տեղափոխվել են «Ֆինանսական արդյունք» հաշվին	?
16	Հաշվետու ժամանակաշրջանի եկամուտները տեղափոխվել են «Ֆինանսական արդյունք» հաշվին	?
17	Որոշել և ձևակերպել հաշվետու եռամսյակի շահույթը կամ վնասը	?
	Ընդամենը հաշվետու եռամսյակում	?

ԽՆԴԻՐ 8.10

Կազմել ֆինանսական ակտիվների շարժի գործառնությունների ձևակերպումները.

Յ/հ	Գործառնությունների բովանդակությունը	Գումարը, դրամ
1	2	3
1.	Կազմակերպությունը ձեռք է բերել կապակցված կողմի բաժնետոմսեր, որոնց դիմաց վճարումները կատարվել են	
1	2	3
	հաշվարկային հաշվից՝ Ներդրումները պետք է հաշվառվեն բաժնեմասնակցության մեթոդով	1 000 000
2.	Դրամարկդից վճարվել է միջնորդավճարը այդ բաժնետոմսերի ձեռք բերման համար	12 000
3	Ձեռք են բերվել կապակցված կողմի բաժնետոմսեր, որոնց դիմաց վճարումը կատարվել է կազմակերպության արտադրանքով՝ Ներդրումները պետք է հաշվառվեն բաժնեմասնակցության մեթոդով	600 000
4.	Հաշվարկային հաշվից փոխանցվել է կանխավճար կապակցված կազմակերպության բաժնետոմսեր ձեռք բերելու համար	800 000
5.	Փոխանցված կանխավճարի դիմաց ձեռք են բերվել կապակցված կողմի բաժնետոմսեր, որոնք պետք է հաշվառվեն սկզբնական արժեքով` ա) հաշվանցվել է կանխավճարը բ) վճարվել է դրամարկդից Ընդամենը սկզբնական արժեքով	? ? 1 000 000
6.	Հիմնադիրների կողմից կատարվել են ներդրումներ կանոնադրական կապիտալում՝ կապակցված կազմակերպության բաժնետոմսերով, որոնք պետք է հաշվառվեն բաժնեմասնակցության մեթոդով	800 000
7.	Արտարժույթային հաշվից վճարվել է կապակցված կազմակերպության բաժնետոմսերի դիմաց, որոնք կազմակերպությունը մտադիր է վաճառել մոտ ապագայում	500 000
8.	Արտացույցվել է կապակցված կողմերի շահույթի բաժնեմասը բաժնեմասնակցության մեթոդով հաշվառվող ներդրումների գծով	500 000
9	Հայտարարվել են շահաբաժինները բաժնեմասնակցության մեթոդով հաշվառվող ներդրումների գծով	200 000

10.	Հաշվարկային հաշվում ստացվել են բաժնեմասնակցության մեթոդով հաշվառվող ներդրումների գծով հայտարարված շահաբաժինները	?
11	Հայտարարվել են շահաբաժիններ սկզբնական արժեքով հաշվառվող ներդրումների գծով	100 000
12.	Հաշվարկային հաշվում ստացվել են շահաբաժիններ սկզբնական արժեքով հաշվառվող ներդրումների գծով	?
13.	Դրամարկղից այլ կազմակերպությանը տրամադրվել է փոխառություն 3 ամիս ժամկետով	500 000
14	Արտացույցվել է չվաստակած ֆինանսական եկամուտը տրամադրված կարճաժամկետ փոխառության գծով	62 000
15	Ստացվել է դրամարկղում կարճաժամկետ փոխառության մարման դիմաց	170 000
16.	Հաշվեգրվել է տրամադրված կարճաժամկետ փոխառության գծով հաշվետու ժամանակաշրջանին վերաբերող ֆինանսական եկամուտը	20 000
17.	Հաշվարկային հաշվից վճարվել է կարճաժամկետ արժեթղթերի ձեռք բերման համար, որոնք	
1	2	3
	կազմակերպությունը մտադիր է պահել մինչև մարման ժամկետի լրանալը	300 000
18	Արտացույցվում է չվաստակած ֆինանսական եկամուտը մինչև մարման ժամկետը պահվող ներդրումների գծով	80 000
19	Հաշվարկային հաշվից տրամադրվել է երկարաժամկետ փոխառություն այլ կազմակերպությանը	500 000
20	Արտացույցվում է չվաստակած ֆինանսական եկամուտը երկարաժամկետ փոխառության գծով	100 000
21.	Երկարաժամկետ փոխառության կարճաժամկետ մասը տեղափոխվել է ընթացիկ ակտիվների կազմ	120 000
22	Հաշվարկային հաշվում ստացվել է երկարաժամկետ փոխառության մարման դիմաց	120 000
23.	Երկարաժամկետ փոխառություններին վերաբերող չվաստակած ֆինանսական եկամուտը հաշվեգրվել է ընթացիկ ժամանակաշրջանի եկամուտներին	20 000
24	Ձեռք են բերվել վաճառքի համար մատչելի ոչ ընթացիկ ֆինանսական ակտիվներ, որոնց արժեքը դեռ չի վճարվել	400 000
25.	Հաշվեգրվել են տոկոսային եկամուտները վաճառքի համար մատչելի պարտքային արժեթղթերի գծով	20 000
26	Ձևակերպվում է վաճառքի համար մատչելի ոչ ընթացիկ ակտիվների ընթացիկ մասի տեղափոխումը	50 000
27	Դրամարկղում ստացվել են վաճառքի համար մատչելի պարտքային արժեթղթերի գծով տոկոսների մարման գումարները	50 000
28	Հաշվարկային հաշվից վճարվել է առևտրական նպատակներով պահվող ֆինանսական ակտիվների ձեռք բերման համար	350 000
29.	Առևտրական նպատակով պահվող ածանցյալ գործիքները իրագործվել են կապակցված կողմի բաժնետոմսերի ձեռք	350 000

	բերման համար, որոնք կազմակերպությունը մտադիր չէ իրացնել մոտ ապագայում	
30.	Վաճառքի համար մատչելի ոչ ընթացիկ ֆինանսական ակտիվների իրական արժեքով վերաչափումից արժեքի աճը վերագրվել է սեփական կապիտալին	100 000
31.	Վաճառքի համար մատչելի ոչ ընթացիկ ֆինանսական ակտիվների իրական արժեքով վերաչափումից կուտակված շահույթը վերագրվել է հաշվետու ժամանակաշրջանի ֆինանսական արդյունքին	20 000
32.	Բաժնեմասնակցության մեթոդով հաշվառվող ոչ ընթացիկ ներդրումները վերադասակարգվել են սկզբնական արժեքով հաշվառվող ոչ ընթացիկ ներդրումների	300 000

ՍՏՈՒԳՈՂԱԿԱՆ ԱՈՍՁԱԴՐԱՆՔՆԵՐ, ՅԱՐՑԵՐ ԵՎ ՏԵՍՏԵՐ

Ստուգողական առաջադրանքներ

Առաջադրանք 1

«Ա» կազմակերպությունը ձեռք է բերել «Բ» կազմակերպության բաժնետոմսերը 2 500 000 դրամ ընդհանուր արժեքով: Բաժնետոմսերի ձեռք բերումից հետո «Ա» կազմակերպությունը նշանակալի ազդեցություն է ունենում «Բ» կազմակերպության քաղաքականության իրականացման վրա: Բաժնետոմսերի դիմաց տրամադրվել են հիմնական միջոցներ, որոնց սկզբնական արժեքը

1 400 000 դրամ է, իսկ կուտակված մաշվածությունը 250 000 դրամ: Ձեռք բերված բաժնետոմսերի դիմաց մնացած գումարը վճարվել է հաշվարկային հաշվից: Պահանջվում է կազմել կատարված գործառնությունների հաշվապահական ձևակերպումները:

Առաջադրանք 2

200Xթ. կազմակերպությունը ձեռք է բերել ֆոնդային բորսայում գնանշվող պարտատոմսեր, վճարելով հաշվարկային հաշվից 1 600 000 դրամ: 200Xթ. վերջի դրությամբ այդ պարտատոմսերի իրական արժեքը կազմել է 1 550 000 դրամ, հաջորդ տարվա մարտի վերջին 1 680 000 դրամ, իսկ հունիսին պարտատոմսերը վաճառվել են 1 750 000 դրամով:

Կազմել ֆինանսական ակտիվների իրական արժեքով վերաչափման և վաճառքի հետ կապված գործառնությունների հաշվապահական ձևակերպումները: Որոշել պարտատոմսերի վաճառքի ֆինանսական արդյունքը:

Առաջադրանք 3

Կազմակերպությունը ձեռք է բերել պարտատոմսեր 800 000 դրամ անվանական արժեքով, 3 տարի մարման ժամկետով, տարեկան 20% տոկոսադրույքով Պարտատոմսերի գծով վճարումները կատարվում են անուիտետի կիրառմամբ յուրաքանչյուր տարվա վերջում:

Կազմել ֆինանսական ներդրումների և չվաստակած եկամտի միջև վճարումների բաշխման ժամանակացույցը և ներդրումների հետ կապված գործառնությունների հաշվապահական ձևակերպումները:

Առաջադրանք 4

«Ա» կազմակերպությունը հաշվարկային հաշվից տրամադրել է կարճաժամկետ փոխառություն «Բ» կազմակերպությանը՝ 1 000 000 դրամ գումարով, 3 ամիս ժամկետով, տարեկան 15% տոկոսադրույքով: Տոկոսները հաշվեգրվում և վճարվում են յու-

րաքանչյուր ամսվա վերջում. Երրորդ ամսվա վերջում փոխառությունը մարվել է, գումարը մուտքագրվել է հաշվարկային հաշիվ:

Պահանջվում է կատարել հաշվարկները և կազմել հաշվապահական ձևակերպումները:

Առաջադրանք 5

Կազմակերպությունը վաճառել է ասոցիացված ընկերության բաժնետոմսերը, որոնք ձեռք էր բերել 1 տարի առաջ և պահում էր վաճառքի նպատակով՝ վաճառված բաժնետոմսերի սկզբնական արժեքը ձեռք բերման պահին կազմել է 1 000 000 դրամ, տարվա համար հաշվեգրված շահաբաժինները կազմել են 150 000 դրամ՝ Բաժնետոմսերը վաճառվել են 1 500 000 դրամով: Բաժնետոմսերի դիմաց վճարը մուտքագրվել է հաշվարկային հաշիվ: Հաշվետու անձի կողմից վճարվել են միջնորդավճարներ բաժնետոմսերի վաճառքի համար՝ 50 000 դրամ:

Պահանջվում է կազմել ֆինանսական ակտիվների վաճառքի հետ կապված գործառնությունների ձևակերպումները:

Ստուգողական հարցեր

1. Ո՞ր ակտիվներն են համարվում ֆինանսական
2. Ի՞նչ կատեգորիաների են դասակարգվում ֆինանսական ակտիվները:
3. Ինչպե՞ս է որոշվում ֆինանսական ակտիվների սկզբնական արժեքը:
4. Ե՞րբ է ճանաչվում ֆինանսական ակտիվը:
5. Ե՞րբ է ապաճանաչվում ֆինանսական ակտիվը:
6. Ո՞ր ֆինանսական ակտիվներն են չափվում իրական արժեքով.
7. Ինչպե՞ս է բացահայտվում կապակցված կողմը:
8. Որո՞նք են կապակցված կազմակերպություններում ներդրումների հաշվառման բաժնեմասնակցության մեթոդի առանձնահատկությունները
9. Որո՞նք են սկզբնական արժեքով ներդրումների հաշվառման առանձնահատկությունները :
10. Ինչպե՞ս են ձևակերպվում ներդրման օբյեկտի շահույթի կամ վնասի բաժնեմասը և հայտարարված շահաբաժինները բաժնեմասնակցության մեթոդով ներդրումների հաշվառման դեպքում:
11. Ինչպե՞ս են ձևակերպվում ֆինանսական ակտիվների իրական արժեքով վերաչափումից առաջացած աճը կամ նվազումը:
12. Ո՞րն է ֆինանսական ակտիվների ամորտիզացված արժեքը.
13. Ինչպե՞ս են որոշում չվաստակած ֆինանսական եկամուտը ամորտիզացված արժեքով հաշվառվող ներդրումների դեպքում՝ անուիտետով վճարման պայմաններում:
14. Ինչպե՞ս է որոշվում չվաստակած ֆինանսական եկամուտը ամորտիզացված արժեքով հաշվառվող ներդրումների գծով մարման ժամկետի վերջում միանվագ վճարումների պայմաններում.
15. Ինչպե՞ս է որոշվում ֆինանսական ակտիվի վաճառքի ֆինանսական արդյունքը

Տ Ե Ա Մ Ե Ր

Ստորև բերված տնտեսական գործառնությունների ձևակերպումների տարբերակներից ընտրել ճիշտ պատասխանը.

Յ/հ	Գործառնությունների բովանդակությունը	Պատասխան		
		Տարբերակ	Դտ	Կտ
1	2	3	4	5
1.	Ձեռք են բերվել այլ կազմակերպության բաժնետոմսերը, որոնք կազմում են ներդրման օբյեկտ հանդիսացող կազմակերպության կանոնադրական կապիտալի 50%-ը	Ա	141	521
		Բ	142	521
		Գ	141	252
2.	Ձեռք են բերվել ասոցիացված ընկերության բաժնետոմսերը մոտ ապագայում վաճառելու մտադրությամբ	Ա	141	521
		Բ	142	521
		Գ	142	252
3.	Հաշվարկային հաշվից փոխանցվել է բրոքերին կանխավճար «X» կազմակերպության բաժնետոմսերը ձեռք բերելու համար	Ա	252	152
		Բ	141	252
		Գ	152	252
4.	Կազմակերպությունը ձեռք է բերել ազատ շրջանառվող երկարաժամկետ պարտատոմսեր մոտ ապագայում վաճառելու մտադրությամբ	Ա	142	252
		Բ	143	521
		Գ	143	252
1	2	3	4	5
5.	Կազմակերպությունը կատարել է ներդրում համատեղ վերահսկվող միավորի կանոնադրական կապիտալում, տրամադրելով հիմնական միջոցներ: Ներդրումները հաշվառվում են սկզբնական արժեքով	Ա	141	111
		Բ	142	111
		Գ	142	621
6.	Դուրս է գրվել վաճառված վաճառքի համար մատչելի ընթացիկ ֆինանսական ակտիվի հաշվեշռային արժեքը	Ա	721	232
		Բ	722	143
		Գ	722	232
7.	Ձևակերպվել է ընթացիկ ֆինանսական ակտիվի վաճառքից եկամուտը	Ա	251	621
		Բ	221	622
		Գ	221	621
8.	Հաշվարկային հաշվից տրամադրվել է կարճաժամկետ փոխառություն այլ կազմակերպությանը	Ա	236	251
		Բ	145	252
		Գ	235	252
9.	Ձևակերպվել է ընթացիկ ֆինանսական ակտիվների արժեզրկումը	Ա	241	726
		Բ	726	241
		Գ	241	626
10.	Բաժնեմասնակցության մեթոդով հաշվառվող ներդրումները ձեռք են բերվել արտադրանքի հետ փոխանակմամբ	Ա	142	611
		Բ	141	611
		Գ	141	215
11.	Հաշվեզրվել են տոկոսային եկամուտները վաճառքի համար մատչելի երկարաժամկետ պարտքային արժեթղթերի գծով	Ա	143	147
		Բ	143	627
		Գ	627	143
12.	Դրամարկղից վճարվել է բրոքերին կոմիսիոն վարձատրությունը 5 տարի մարման ժամկետով	Ա	144	251
		Բ	145	251

	պարտատոմսեր ձեռք բերելու համար	Գ	233	251
13	Հաշվետու անձի կողմից վճարվել է միջնորդավճարը կապակցված կողմի բաժնետոմսերի ձեռք բերման համար, որոնք կազմակերպությունը մտադիր չէ իրացնել մոտ ապագայում	Ա	142	228
		Բ	141	228
		Գ	141	251
14	Ձևակերպվել է վաճառքի համար մատչելի ոչ ընթացիկ ակտիվների ընթացիկ մասի տեղափոխումը	Ա	143	232
		Բ	232	143
		Գ	231	143
15.	Ձևակերպվել է ընթացիկ ֆինանսական ակտիվների արժեզրկման հակադարձումը	Ա	241	626
		Բ	726	241
		Գ	626	241
16.	Հայտարարվել են շահաբաժիններ բաժնեմասնակցության մեթոդով հաշվառվող ներդրումների գծով	Ա	229	141
		Բ	141	222
		Գ	222	142
17.	Արտացույցվել է չվաստակած ֆինանսական եկամուտը տրամադրված կարճաժամկետ փոխառության գծով	Ա	235	238
		Բ	235	516
		Գ	516	235
18.	Հաշվարկային հաշվում ստացվել են վաճառքի համար մատչելի երկարաժամկետ պարտքային արժեթղթերի գծով հաշվեզրված տոկոսները	Ա	143	252
		Բ	252	143
		Գ	252	232
19.	Փոխանցված կանխավճարի դիմաց ձեռք են	Ա	142	152
1	2	3	4	5
	բերվել կապակցված կողմի բաժնետոմսեր՝ մոտ ապագայում վաճառելու մտադրությամբ	Բ	141	152
		Գ	152	252
20	Ձեռք են բերվել առևտրական նպատակով պահվող ֆինանսական ակտիվներ, որոնց դիմաց վճարվել է հաշվարկային հաշվից	Ա	232	252
		Բ	231	252
		Գ	233	252
21	Դրամարկղում ստացվել է կարճաժամկետ փոխառության մարման գումարը	Ա	251	235
		Բ	235	251
		Գ	251	236
22	Առևտրական նպատակներով պահվող ածանցյալ գործիքները իրագործվել են կապակցված կողմի բաժնետոմսերի ձեռք բերման համար, որոնք կազմակերպությունը մտադիր չէ իրացնել մոտ ապագայում	Ա	142	231
		Բ	231	252
		Գ	141	231
23.	Երկարաժամկետ փոխառություններին վերաբերող չվաստակած ֆինանսական եկամուտը վերագրվել է ընթացիկ ժամանակաշրջանի եկամուտներին	Ա	627	147
		Բ	147	627
		Գ	727	147
24	Արտացույցվել է կապակցված կողմի շահույթի բաժնեմասը բաժնեմասնակցության մեթոդով հաշվառվող ներդրումների գծով	Ա	141	629
		Բ	629	141
		Գ	729	141
25.	Արտացույցվել է կապակցված կողմի վնասի բաժնեմասը բաժնեմասնակցության մեթոդով հաշվառվող ներդրումների գծով	Ա	729	141
		Բ	141	629
		Գ	141	729
26.	Հաշվարկային հաշվից վճարվել է 6 ամիս մարման ժամկետ ունեցող պարտատոմսերի ձեռք բերման համար, որոնք կազմակերպությունը ձեռք	Ա	233	252
		Բ	232	252
		Գ	252	232

	է րեբել պահելու մտադրությամբ			
27	Վաճառքի համար մատչելի ոչ ընթացիկ ֆինանսական ակտիվների իրական արժեքով վերաչափումից արժեքի աճը վերագրվել է սեփական կապիտալին	Ա	322	143
		Բ	143	322
		Գ	322	232
28.	Վաճառքի համար մատչելի ոչ ընթացիկ ֆինանսական ակտիվների իրական արժեքով վերաչափումից արժեքի աճը վերագրվել է եկամուտներին	Ա	143	626
		Բ	726	143
		Գ	626	143
29.	Վաճառքի համար մատչելի ոչ ընթացիկ ֆինանսական ակտիվների իրական արժեքով վերաչափումից արժեքի նվազումը վերագրվել է սեփական կապիտալին	Ա	322	143
		Բ	143	322
		Գ	322	232
30	Վաճառքի համար մատչելի ոչ ընթացիկ ֆինանսական ակտիվների իրական արժեքով վերաչափումից արժեքի նվազումը վերագրվել է ծախսերին	Ա	143	726
		Բ	726	143
		Գ	726	144
31	Ձևակերպվել է առևտրական նպատակով պահվող ածանցյալ գործիքների իրական արժեքով վերաչափումից արժեքի աճը	Ա	232	626
		Բ	231	626
		Գ	626	231
32.	Ձևակերպվել է առևտրական նպատակով	Ա	726	231
1	2	3	4	5
	պահվող ածանցյալ գործիքների իրական արժեքով վերաչափումից արժեքի նվազումը	Բ	231	726
		Գ	231	626
33.	Ձևակերպվել են սկզբնական արժեքով հաշվառվող ֆինանսական ներդրումների գծով հայտարարված շահաբաժինները	Ա	222	627
		Բ	221	627
		Գ	627	222
34.	Հաշվարկային հաշվից տրամադրվել է այլ կազմակերպությանը փոխառություն 2 տարի ժամկետով	Ա	235	252
		Բ	236	252
		Գ	145	252
35.	Հաշվարկային հաշվում ստացվել են շահաբաժինները սկզբնական արժեքով հաշվառվող ներդրումների գծով	Ա	252	222
		Բ	252	627
		Գ	252	221
36.	Արտացոլվել է չվաստակած ֆինանսական եկամուտը տրամադրված երկարաժամկետ փոխառությունների գծով	Ա	145	147
		Բ	147	145
		Գ	147	627
37.	Հիմնադիրների կողմից կատարվել են ներդրումներ կանոնադրական կապիտալում կապակցված կողմերի բաժնետոմսերով: Կապակցված կազմակերպությունը տվյալ պահին գործում է խիստ սահմանափակումների պայմաններում	Ա	141	311
		Բ	142	311
		Գ	331	141
38.	Երկարաժամկետ տրամադրված փոխառությունների կարճաժամկետ մասը տեղափոխվել է ընթացիկ ակտիվների կազմ	Ա	145	235
		Բ	145	236
		Գ	236	145
39.	Բաժնեմասնակցության մեթոդով հաշվառվող ոչ ընթացիկ ներդրումները վերադասակարգվել են սկզբնական արժեքով հաշվառվող ոչ ընթացիկ	Ա	142	141
		Բ	141	143
		Գ	142	143

	Ներդրումների			
40	Հաշվարկային հաշվում ստացվել է տրամադրված երկարաժամկետ փոխառության մարման գումարը (մարումը կատարվել է պայմանագրով սահմանված ժամկետում)	Ա	251	145
		Բ	252	145
		Գ	252	236
41	Վաճառքի համար մատչելի ֆինանսական ակտիվների իրական արժեքով վերաչափումից չիրացված շահույթը վերագրվել է հաշվետու ժամանակաշրջանի ֆինանսական արդյունքներին	Ա	726	322
		Բ	322	626
		Գ	626	322
42	Վաճառքի համար մատչելի ֆինանսական ակտիվների իրական արժեքով վերաչափումից չիրացված վնասը վերագրվել է հաշվետու ժամանակաշրջանի ֆինանսական արդյունքներին	Ա	726	322
		Բ	726	321
		Գ	322	626
43	Պուրս է գրվել վաճառված՝ սկզբնական արժեքով հաշվառվող բաժնետոմսերի հաշվեկշռային արժեքը	Ա	721	142
		Բ	142	621
		Գ	142	721
44	Պուրս են գրվել արժեզրկումից կորուստները վաճառված՝ սկզբնական արժեքով հաշվառվող ներդրումների գծով	Ա	149	141
		Բ	142	149
		Գ	149	142

ԳԼՈՒԽ 9

ՊԱՇԱՐՆԵՐԻ ՀԱՇՎԱՌՈՒՄ

ԽՆԴԻՐ 9.1

Նյութերի ստացման վերաբերյալ ստորև բերված տվյալների հիման վրա կազմել մատակարարի հաշիվ-ապրանքագիրը և գնորդի մուտքի օրդերը.

Տվյալներ. Երևանի էլեկտրաշարժիչների գործարանը Ալավերդու պղնձամոլիբդենային կոմբինատից հունվարի 20-ին դուրսգրված թիվ 510 հաշիվ-ապրանքագրով ստացել է հետևյալ նյութերը

- պղինձ 20տ, 1տ գինը 80 000 դրամ, ընդհանուր արժեքը 1 600 000 դրամ, ԱՄՀ 20%: Երկաթգծի տարիֆը 20 000 դրամ, ԱՄՀ 20%

- մոլիբդեն 6տ, 1տ գինը 50 000 դրամ, ընդհանուր արժեքը 300 000 դրամ, ԱՄՀ 20% Երկաթգծի տարիֆը 6 000 դրամ, ԱՄՀ 20%:

Ստացված նյութերը հունքի պահեստ են մուտքագրվել թիվ 16 մուտքի օրդերով Պղնձի անվանացանկային համարը 201001, մոլիբդենինը 201004.

ԽՆԴԻՐ 9.2

Ստորև բերված տվյալների հիման վրա կազմել նյութերի բաց թողնման լիմիտային քարտերը:

Տվյալներ. Մեխանիկական արտադրամասը թիվ 1 պահեստից ստանում է գործիքային պողպատ 3 մմ հաստությամբ՝ S-14 արտադրանքի պատրաստման համար Նյութի անվանացանկային համարը 101122, չափի միավորը տոննա, մեկ տոննայի գինը 15 000 դրամ, 200Xթ. հունվար ամսվա համար բացթողնման լիմիտը սահմանվել է 20 տ. Կազմվել է թիվ 28 լիմիտային քարտը: Նյութի բացթողումը թույլատրել է մատակարարման բաժնի պետ Ա Սիմոնյանը, քարտը կազմել է տնտեսագետ Ս Սահակ-

յանը, նյութերը ստացել է բրիգադավար Թ. Բաբայանը: Հունվար ամսում նյութերի բացթողումը կազմել է

Ամսաթիվը	Քանակը
08.01	3
10.01	2
14.01	4
18.01	3
22.01	4
31.01	4

ԽՆԴԻՐ 9.3

Ստորև բերված տվյալների հիման վրա կազմել նյութերի բաց թողնման լիմիտային քարտերը

Տվյալներ.

Քաղվածք 200X ք. հունվար ամսվա լիմիտային քարտերից.

Լիմիտային քարտի համարը	Նյութի անվանացանկային համարը	Բաց թողնման ամսաթիվը	Չափի միավորը	Բաց թողնված նյութի քանակը	Ստացող արտադրամասը	Արտադրողատեսակը	Նյութի բացթողման լիմիտը	Նյութի գինը
1	2	3	4	5	6	7	8	9
29	101112	04.01	տ	2	1	S--14	15	20 000
		15.01	տ	4				
		22.01	տ	5				
		30.01	տ	4				
30	201414	04.01	կգ	300	1	S--16	1100	460
		16.01	կգ	200				
		21.01	կգ	450				
		31.01	կգ	150				
31	202114	05.01	կգ	600	2	S--14	2200	500
		10.01	կգ	450				
		18.01	կգ	300				
		22.01	կգ	250				
		27.01	կգ	300				
31.01	կգ	300						

ԽՆԴԻՐ 9.4

Ստորև բերված տվյալների հիման վրա կազմել նյութերի բացթողման պահանջագիր:

Տվյալներ. 200Xթ հունվարի 12-ին թիվ 8 պահանջագրով N3 պահեստից բաց են թողվել մաքրող նյութեր N1 արտադրամասին: Նյութի անվանացանկային համարը՝ 311142, բաց է թողնվել 800 կգ, 1կգ-ի գինը 1200 դրամ է: Նյութերը նախատեսված են

արտադրական սարքավորումների մաքրման համար. Նյութը պահանջել է N1 արտադրամասի պետ Ս Լալայանը, բաց է թողել պահեստապետ

Վ. Կասյանը, ստացել է N1 արտադրամասի կարգավորող բանվոր Շ Ստեփանյանը:

ԽՆԴԻՐ 9.5

Ստորև բերված տվյալների հիման վրա լրացնել նյութերի պահեստային հաշվառման քարտը:

Տվյալներ. Գործիքային պողպատի (անվանացանկային համարը՝ 101122) մնացորդը 200Xթ հունվարի 1-ի դրությամբ կազմել է 12 տոննա, 1 տոննայի գինը 60 000 դրամ է, ընդամենը արժեքը 720 000 դրամ Պողպատի համար բացվել է N45 պահեստային հաշվառման քարտը. Տարվա I եռամսյակի ընթացքում տեղի են ունեցել գործիքային պողպատի շարժի հետևյալ գործառնությունները (պողպատի ձեռք բերման գինը անփոփոխ է).

1. հունվարի 10-ին մուտքագրվել է թիվ 4 մուտքի օրդերով «Մետալուրգ» ԲԲԸ-ից 5տ,
2. հունվարի 12-ին թիվ 7 լիմիտային քարտով բաց է թողվել 2 տ հիմնական արտադրամասին՝ S-10 արտադրատեսակի պատրաստման համար,
3. հունվարի 15-ին թիվ 9 մուտքի օրդերով մուտքագրվել է «Գլանվածք» գործարանից 10տ,
4. հունվարի 18-ին թիվ 7 լիմիտային քարտով բաց է թողվել 4տ,
5. հունվարի 29-ին թիվ 14 պահանջագրով բաց է թողվել 1տ հիմնական արտադրամասի ընդհանուր կարիքների համար,
6. հունվարի 30-ին թիվ 7 լիմիտային քարտով բաց է թողվել 3տ,
7. փետրվարի 10-ին թիվ 17 մուտքի օրդերով մուտքագրվել է «Մետալուրգ» ԲԲԸ-ից՝ 15տ,
8. փետրվարի 10-ին թիվ 14 լիմիտային քարտով բաց է թողվել 4տ հիմնական արտադրամասին՝ S-10 արտադրատեսակի պատրաստման համար,
9. փետրվարի 28-ին թիվ 14 լիմիտային քարտով բաց է թողվել 6տ,
10. մարտի 1-ին թիվ 22 պահանջագրով բաց է թողվել 2տ վարչական կարիքների համար,
11. մարտի 1-30 թիվ 31 լիմիտային քարտով բաց է թողվել 14տ հիմնական արտադրամասին՝ S-10 արտադրատեսակի պատրաստման համար.

ԽՆԴԻՐ 9.6

Ստորև բերված տվյալների հիման վրա որոշել ձեռք բերված նյութերի ինքնարժեքը և կազմել հաշվապահական ձևակերպումները.

Տվյալներ. Դաշնամուրի գործարանը փայտամշակման կոմբինատից ստացել է փայտանյութ դաշնամուր պատրաստելու համար Ըստ մատակարարի թիվ 106 հաշիվ-ապրանքագրի ստացվել է փայտանյութ 150 խորանարդ մետր, 1 խորանարդ մետրի գինը 20 000 դրամ է, ԱԱՀ – 20%՝ երկաթգծի տարիՖը 150 000 դրամ է,

ԱԱՀ-ն՝ 20%՝ Ավտոտրանսպորտային կազմակերպությունը կատարել է երկաթգծի կայարանից մինչև կազմակերպության պահեստ փայտանյութի տեղափոխման ծառայությունները, որի համար ներկայացրել է հաշիվ 60 000 դրամ գումարով, գումարած 20% ԱԱՀ: Բեռնման-բեռնաթափման աշխատանքների համար բանվորներին հաշվարկվել է աշխատավարձ 40 000 դրամ, կատարվել են հատկացումներ պարտադիր սոցիալական ապահովագրության համար 10 000 դրամ

ԽՆԴԻՐ 9.7

Ստորև բերված տվյալների հիման վրա որոշել ձեռք բերված նյութերի ինքնարժեքը և մատակարարին ներկայացված բողոքարկման գումարը: Կազմել հաշվապահական ձևակերպումները:

Տվյալներ. Կազմակերպությունը մատակարարից ըստ հաշիվ-ապրանքագրի ստացել է ներկ 200 տուփ, յուրաքանչյուրը 5 կգ մաքուր քաշով, 1 կգ գինը 1 200 դրամ է, ներառյալ ԱԱՀ Նյութի փոխադրումը իրականացրել է տրանսպորտային կազմակերպությունը, որի համար հաշվետու անձի կողմից վճարվել է 60 000 դրամ, ներառյալ ԱԱՀ:

Ստացված ներկի բեռնաթափման համար բանվորներին հաշվարկվել է աշխատավարձ 24 000 դրամի չափով և կատարվել են հատկացումներ պարտադիր սոցիալական ապահովագրության համար 5 000 դրամի չափով:

Պահեստում ներկի ընդունման ժամանակ հայտնաբերվել է պակասորդ 10 տուփի չափով: Պակասորդի գումարով մատակարարին ներկայացվել է բողոքարկում: Պակասորդի արժեքը որոշելիս հաշվի են առնվել ներկի արժեքը ձեռք բերման գներով և փոխադրման ու բեռնաթափման ծախսումների բաժինը:

ԽՆԴԻՐ 9.8

Ստորև բերված տվյալների հիման վրա գնահատել նյութի մնացորդը հաշվետու ժամանակաշրջանի վերջում և որոշել ծախսված նյութերի ինքնարժեքը ԱՄԱԵ (Ֆիֆո), ՎՄԱԵ (Լիֆո) և միջին կշռված արժեքի մեթոդներով:

Տվյալներ. «Ա» տեսակի նյութի մնացորդը 200Xթ. I եռամսյակի սկզբի դրությամբ և նյութի մուտքը I եռամսյակի ընթացքում կազմել են.

Ամսաթիվը	Նյութի քանակը, կգ	Միավորի արժեքը, դրամ	Ընդհանուր արժեքը, դրամ
1	2	3	4
Մնացորդը առ 1.01.200Xթ.	100	10	
Մուտքը 5.01	120	10	
10.01	110	11	
25.01	120	12	
8.02	250	10	
24.02	240	12	
5.03	250	9	
12.03	300	10	
28.03	200	13	
Ընդամենը մուտքը	1 590	X	
Ընդամենը մուտքը մնացորդի հետ	1 690	X	

Եռամսյակի ընթացքում «Ա» տեսակի նյութից ծախսվել է 1 270 կգ, մարտի 31-ի դրությամբ պահեստում մնացել է 420 կգ:

ԽՆԴԻՐ 9.9

Ստորև բերված տվյալների հիման վրա գնահատել «Ա» նյութի մնացորդը հաշվետու ժամանակաշրջանի վերջում և որոշել ծախսված նյութի ինքնարժեքը ԱՄԱԵ, ՎՄԱԵ և միջին կշռված արժեքի մեթոդներով:

Տվյալներ. «Ա» նյութի մնացորդը 200Xթ. II եռամսյակի սկզբի դրությամբ և նյութի մուտքը II եռամսյակի ընթացքում կազմել են

Ամսաթիվը	Նյութի քանակը, հատ	Միավորի արժեքը, դրամ	Ընդհանուր արժեքը, դրամ
1	2	3	4
Մնացորդը առ 31.03.200Xթ.	25	1200	
Մուտքը 3 04	45	1200	
15.04	20	1100	
29 04	67	1200	
6.05	40	1150	
18.05	33	1250	
1	2	3	4
23 05	30	1230	
30 05	40	1250	
5 06	48	1300	
20.06	52	1250	
30.06	50	1311	
Ընդամենը մուտքը	425	X	
Ընդամենը մուտքը մնացորդի հետ	450	X	

Նյութի ծախսը հաշվետու ժամանակաշրջանում կազմել է 420 հատ, իսկ եռամսյակի վերջի դրությամբ պահեստում մնացել է 30 հատ.

ԽՆԴԻՐ 9.10

Որոշել արագամաշ գործիքների մնացորդը եռամսյակի վերջում և շահագործման հանձնված գործիքների ինքնարժեքը տարբեր մեթոդներով.

Տվյալներ. 200Xթ. I եռամսյակի սկզբում արագամաշ գործիքների մնացորդը և եռամսյակի ընթացքում արագամաշ գործիքների մուտքագրումը կազմել են

Ամսաթիվը	Արագամաշ գործիքների քանակը, հատ	Միավորի արժեքը, դրամ	Ընդհանուր արժեքը, դրամ
1	2	3	4
Մնացորդը առ 1 01 200Xթ.	20	2520	
Մուտքը I եռամսյակում 8.01	40	2500	
12.01	60	2600	
25 01	20	2620	

10 02	25	2620	
24.02	30	2650	
7.03	25	2620	
15.03	30	2590	
30.03	50	2540	
Ընդամենը մուտքը		X	
Ընդամենը մուտքը մնացորդի հետ			

Հաշվետու ժամանակաշրջանում շահագործման է հանձնվել 210 հատ գործիք

ԽՆԴԻՐ 9.11

Ստորև բերված տվյալների հիման վրա որոշել նյութերի մնացորդի և ծախսված նյութերի ինքնարժեքը միջին կշռված արժեքի մեթոդով և կազմել նյութերի ծախսի բաշխման տեղեկագիրը:

Տվյալներ. Նյութերի մնացորդը 200Xթ. I եռամսյակի սկզբի դրությամբ և նյութերի մուտքը I եռամսյակի ընթացքում կազմել են.

ա) պողպատ թերթավոր

Ամսաթիվը	Նյութի քանակը, տ	Միավորի արժեքը, դրամ	Ընդհանուր արժեքը, դրամ
1	2	3	4
Մնացորդը առ 1.01.200Xթ.	10	12 000	120 000
Մուտքը I եռամսյակում 5.01	14	12 500	175 000
15.01	12	12 000	144 000
22 01	10	13 000	130 000
2 02	14	11 800	165 200
18 02	10	12 100	121 000
25.02	10	12 400	124 000
6.03	8	12 600	100 800
25.03	12	12 500	150 000
Ընդամենը մուտքը	90	X	1 110 000
Ընդամենը մուտքը մնացորդի հետ	100	X	1 230 000

բ) պղինձ

Ամսաթիվը	Նյութի քանակը, տ	Միավորի արժեքը, դրամ	Ընդհանուր արժեքը, դրամ
1	2	3	4
Մնացորդը առ 1.01 200Xթ.	4	15 000	60 000
Մուտքը I եռամսյակում 10.01	10	15 000	150 000
25 01	6	15 200	91 200
12.02	14	15 500	217 000

26.02	10	14 780	147 800
5.03	12	14 800	177 600
25.03	9	14 600	131 400
Ընդամենը մուտքը	61	X	915 000
Ընդամենը մուտքը մնացորդի հետ	65	X	975 000

զ) մեքենայական յուղ

Ամսաթիվը	Նյութի քանակը, կգ	Միավորի արժեքը, դրամ	Ընդհանուր արժեքը, դրամ
1	2	3	4
Մնացորդը առ 1.01.200Xթ	50	400	20 000
Մուտքը I եռամսյակում 15 01	30	450	13 500
30 01	80	420	33 600
28 02	50	420	21 000
10 03	40	400	16 000
31 03	50	408	20 400
Ընդամենը մուտքը	250	X	104 500
Ընդամենը մուտքը մնացորդի հետ	300	X	124 500

դ) քարածուխ

Ամսաթիվը	Նյութի քանակը, տ	Միավորի արժեքը, դրամ	Ընդհանուր արժեքը, դրամ
1	2	3	4
Մնացորդը առ 1.01.200Xթ.	6	4 000	24 000
Մուտքը I եռամսյակում 30 01	20	4 800	96 000
10.02	30	4 500	135 000
25.02	50	3 800	190 000
20.03	40	4 205	168 200
Ընդամենը մուտքը	140	X	589 200
Ընդամենը մուտքը մնացորդի հետ	146	X	613 200

Քաղվածք 200Xթ. I եռամսյակյուն նյութերի ծախսի ձևակերպման լինիտային քարտերից

Փաստաթղթի		Ստացող արտադրամասը	Ելուքի անվանումը	Չափի միավորը	Քանակը	Միավորի միջին կշռված արժեքը, դրամ	Գումարը, դրամ	Ծախսի ուղղությունը
համարը	միջոցառում							
1	2	3	4	5	6	7	8	9
26	31 01	Մեխանիկական արտադրամաս	Պողպատ թերթավոր	տ	14			S-12 արտադրատեսակ
27	31.01	Մեխանիկական արտադրամաս	Պողպատ թերթավոր	տ	12			S-14 արտադրատեսակ
26	31.01	Մեխանիկական արտադրամաս	Պղինձ	տ	10			S-12 արտադրատեսակ
27	31.01	Մեխանիկական արտադրամաս	Պղինձ	տ	7			S-14 արտադրատեսակ
28	31.01	Կաթսայատուն	Քարածուխ	տ	45			Գոլորշու արտադրություն
29	28.02	Մեխանիկական արտադրամաս	Պողպատ թերթավոր	տ	12			S-12 արտադրատեսակ
30	28.02	Մեխանիկական արտադրամաս	Պողպատ թերթավոր	տ	10			S-14 արտադրատեսակ
29	28.02	Մեխանիկական արտադրամաս	Պղինձ	տ	12			S-12 արտադրատեսակ
30	28.02	Մեխանիկական արտադրամաս	Պղինձ	տ	6			S-14 արտադրատեսակ
31	28.02	Կաթսայատուն	Քարածուխ	տ	42			Գոլորշու արտադրություն
32	31.03	Մեխանիկական արտադրամաս	Պողպատ թերթավոր	տ	15			S-12 արտադրատեսակ
33	31.03	Մեխանիկական արտադրամաս	Պողպատ թերթավոր	տ	12			S-14 արտադրատեսակ

32	31.03	Մեխանիկական արտադրամաս	Պղինձ	տ	10			S-12 արտադրատեսակ
33	31 03	Մեխանիկական արտադրամաս	Պղինձ	տ	7			S-14 արտադրատեսակ
1	2	3	4	5	6	7	8	9
		դրամաս						
34	31.03	Կաթսայատուն	Քարածուխ	տ	38			Գոլորշու արտադրություն

Քաղվածք 200Xթ. I եռամսյակյուն նյութերի ծախսի ձևակերպման պահանջագրերից

Փաստաթղթի		Ստացող արտադրամասը	Լյուքի անվանումը	Չափի միավորը	Քանակը	Միավորի միջին կշռված արժեքը, դրամ	Գումարը, դրամ	Ծախսի ուղղությունը
համարը	միջնորդող							
1	2	3	4	5	6	7	8	9
16	5 01	Նորոգման արտադրամաս	Պողպատ թերթավոր	տ	1			Հիմնական արտադրամասի շենքի նորոգում
17	20 01	Մեխանիկական արտադրամաս	Պողպատ թերթավոր	տ	2			S-12 արտադրատեսակի խտանի ուղղում
18	22 01	Մեխանիկական արտադրամաս	Պղինձ	տ	2			S-14 արտադրատեսակի խտանի ուղղում
19	28 01	Վարչություն	Պողպատ թերթավոր	տ	1,5			Վարչական շենքերի տանիքի նորոգում
20	30 01	Մեխանիկական արտադրամաս	Մեքենայական յուղ	կգ	80			Սարքավորման սպասարկում
21	14.02	Մեխանիկական արտադրամաս	Պողպատ թերթավոր	տ	2,5			Շենքի նորոգում
22	28 02	Մեխանիկական արտադրամաս	Մեքենայական յուղ	կգ	60			Սարքավորման սպասարկում
23	10 03	Մեխանիկական արտադրամաս	Պղինձ	տ	1			Ներքին խտանի ուղղում S-12 արտադրատեսակի գծով
24	31 03	Մեխանիկական արտադրամաս	Մեքենայական յուղ	կգ	80			Սարքավորման սպասարկում
1	2	3	4	5	6	7	8	9

25	31 03	Նորոգման արտադրամաս	Մեքենայական յուղ	կգ	40		Սարքավորման սպասարկում
26	31 03	Կաթսայատուն	Քարածուխ	տ	3		Գերնորմատիվային բացթողում գոլորշու թողարկման համար

Նյութերի ծախսի բաշխման տեղեկագիրը կազմել ստորև բերված ձևով

Արտադրամասը	Դեքետ		Հաշիվների կոդերից			
	հաշիվը	արտադրատեսակի, ծախսի հոդվածի կոդը	2111	2112	2113	---
Մեխանիկական և այլն	8111	S--12				

ԽՆԴԻՐ 9.12

Ստորև բերված տվյալների հիման վրա որոշել նյութերի գույքագրման արդյունքները, կազմել համեմատական տեղեկագիրը և ձևակերպել գույքագրմամբ բացահայտված տարբերությունները.

Տվյալներ. Քաղվածք վառելիքի մնացորդների տեղեկագրից 200Xթ. նոյեմբերի 1-ի դրությամբ.

Նյութերի անվանացանկային համարը	Նյութերի անվանումը, տեսակը	Չափի միավորը	Միավորի փաստացի ինքնարժեքը, դրամ	Քանակը
1	2	3	4	5
310 001	Բենզին պրեմիում	լիտր	320	400
310 002	Բենզին ռեզուլյար	լիտր	280	350
310 003	Բենզին նորմալ	լիտր	260	320
320 001	Դիզելային վառելիք	լիտր	220	300
320 002	Նավթ տեխնիկական	լիտր	240	260

Քաղվածք վառելիքի գույքագրման ցուցակից, կազմված 200Xթ. նոյեմբերի 1-ի դրությամբ.

Նյութերի անվանացանկային համարը	Նյութերի անվանումը, տեսակը	Չափի միավորը	Միավորի փաստացի ինքնարժեքը, դր	Քանակը
1	2	3	4	5
310 001	Բենզին պրեմիում	լիտր	320	385,6

1	2	3	4	5
310 002	Բենզին ռեզուլյար	լիտր	280	300
310 003	Բենզին նորմալ	լիտր	260	370
320 001	Դիզելային վառելիք	լիտր	220	280
320 002	Նավթ տեխնի կական	լիտր	240	270

Վառելիքի բնական կորուստը հաշվարկելու համար պետք է հաշվի առնել, որ դրա ծախսի շրջանառությունը տարվա սկզբից մինչև նոյեմբերի 1-ը և բնական կորստի նորմաները կազմել են

Նյութերի անվանացանկային համարը	Նյութերի անվանումը, տեսակը	Չափի միավորը	Միավորի փաստացի ինքնարժեքը, դրամ	Շրջանառությունը (քանակ)	Բնական կորստի նորման (%)
1	2	3	4	5	6
310 001	Բենզին պրեմիում	լիտր	320	12 000	0,12
310 002	Բենզին ռեզուլյար	լիտր	280	9 800	0,12
320 001	Դիզելային վառելիք	լիտր	220	14 750	0,11

Վառելիքի վաճառքի մանրածախ գները.

Նյութերի անվանումը	Միավորի գինը (դրամ)
Բենզին պրեմիում	360
Բենզին ռեզուլյար	340
Բենզին նորմալ	320
Դիզելային վառելիք	240
Նավթ տեխնիկական	260

Համեմատական տեղեկագիրը կազմել ստորև բերված ուսումնական ձևով

Անվանացանկային համարը	Նյութերի անվանումը	Չափի միավորը	Միավորի գինը	Մնացորդը քանակով		Գույքագրման արդյունքը				Բնական կորուստը		Մեղավոր անձի հաշվին			
				ըստ հաշվառման տվյալների	փաստացի	ավելցուկ		պակասորդ		կողմ	ստորոշ	կողմ	ստորոշ	գումար	
						կողմ	գումար	կողմ	ստորոշ					կողմ	ստորոշ
				5	6	7	8	9	10	11	12	13	14	15	
1	2	3	4	5	6	7	8	9	10	11	12	13	14	15	

Գույքագրման արդյունքների արտացոլումը հաշվապահական հաշվառման մեջ.

Հ/հ	Գործառնությունների բովանդակությունը	Գումարը, դրամ
1	2	3
1	Դուրս է գրվել վառելիքի գույքագրման ժամանակ հայտնաբերված պակասորդը (ինքնարժեքով). ա) պրեմիում բենզինի գծով բ) ռեգուլյար բենզինի գծով գ) դիզելային վառելիքի գծով	? ? ?
	Ընդամենը	?
2.	Մուտքագրվել են վառելիքի գույքագրման ժամանակ հայտնաբերված ավելցուկները (ինքնարժեքով). ա) նորմալ բենզինի գծով բ) տեխնիկական նավթի գծով	? ?
	Ընդամենը	?
3.	Բնական կորստի նորմաները գերազանցող պակասորդը դուրս է գրվել մեղավոր անձի հաշվին (մանրածախ գներով) ա) ռեգուլյար բենզինի գծով բ) դիզելային վառելիքի գծով	? ?
	Ընդամենը պակասորդը մանրածախ գներով	?
4.	Դրամարկղում ստացվել է մեղավոր անձից վառելիքի պակասորդի դիմաց	?

ԽՆԴԻՐ 9.13

Կազմել նյութերի մուտքագրման գործառնությունների ձևակերպումները:

Հաշվետու ժամանակաշրջանում տեղի ունեցած տնտեսական որոշումները

Հ/հ	Գործառնությունների բովանդակությունը	Գումարը, դրամ
1	2	3
1	Մատակարարից ձեռք է բերվել պողպատ, որի ընդունման ժամանակ հայտնաբերվել է տրանսպորտային կազմակերպության մեղքով առաջացած պակասորդը փաստացի մուտքագրվել է ԱԱՀ	60 000 260 000 ?
	Ընդամենը	?
2.	Հաշվարկային հաշվից վճարվել է լաքերի և ներկերի գործարանից ստացված ներկերի համար ա) արժեքը գնման գներով բ) ԱԱՀ	400 000 ?
	Ընդամենը	?
3.	Ներկերի տեղափոխման ծախսումները վճարվել են հաշվետու անձի կողմից ա) տեղափոխման սակագինը բ) ԱԱՀ	35 000 ?
1	2	3

	Ընդամենը վճարվել է	?
4.	Հաշվետու անձի կողմից շինանյութերի մանրածախ խանութից ձեռք են բերվել արագամաշ շինարարական գործիքներ շենքերի նորոգման համար՝ ա) արժեքը գնման գներով բ) ԱԱՀ	? ?
	Ընդամենը վաճառքի գներով	144 000
5	«Նավթամթերք» ԲԲԸ-ից ձեռք է բերվել դիզելային վառելիք ա) արժեքը գնման գներով բ) ԱԱՀ	500 000 ?
	Ընդամենը	?
6	Հաշվարկային հաշվից վճարվել են վառելիքի տեղափոխման ծախսումները ա) սակագինը բ) ԱԱՀ	50 000 ?
	Ընդամենը	?
7.	Մատակարարից ձեռք են բերվել գունավոր մետաղներ, որոնց դիմաց վճարումը պետք է կատարվի 10 օրվա ընթացքում ա) արժեքը գնման գներով բ) երկաթուղային տարիֆը գ) ԱԱՀ	560 000 80 000 ?
	Ընդամենը վճարման ենթակա գումարը	?
8	Գունավոր մետաղների տեղափոխումը մինչև պահեստ կատարվել է սեփական տրանսպորտով, որի ծառայությունը դուրս է գրվել ինքնարժեքով	17 500
9	Հաշվարկվել է աշխատավարձ բանվորներին գունավոր մետաղների բեռնաթափման համար	12 000
10.	Հաշվարկվել են պարտադիր սոցիալական ապահովագրության հատկացումները գունավոր մետաղների բեռնաթափմամբ զբաղված բանվորների աշխատավարձի նկատմամբ	5 000
11	Այլ կազմակերպությունից անհատույց ստացվել են կիսապատրաստուքներ	140 000
12	Պահեստ են մուտքագրվել սեփական գործիքային արտադրամասի կողմից պատրաստված գործիքները, որոնց օգտագործման ժամկետը սահմանվել է 10 ամիս	470 000

ԽՆԴԻՐ 9.14

Ստորև բերված տվյալների հիման վրա կազմել հաշիվ-ապրանքագիրը պահեստից գնորդին բաց թողնված արտադրանքի վերաբերյալ.

Տվյալներ. «Էլեկտրաապարատներ» ԲԲԸ-ն իր արտադրանքը առաքել է «Լույս» ՓԲԸ-ին, որի համար 200Xթ փետրվարի 24-ին կազմվել է թիվ 28 հաշիվ-ապրանքագիրը

Վաճառող կազմակերպության տվյալները «Էլեկտրաապարատ» ԲԲԸ, գտնվում է ք Երևանում, Արարատյան փ., 14 հասցեյով, հեռ 36-14-12, հաշվարկային հաշվի հա-

մարը՝ 041052486112, որը բացված է «Ինվեստբանկի» Սպանդարյանի մասնաճյուղում, իդենտիֆիկացնող համարը 7814021761: Բեռը բաց է թողնվել պատրաստի արտադրանքի պահեստից:

Գնորդ կազմակերպության տվյալները. «Լույս» ՓԲԸ, գտնվում է Գյումրի քաղաքում, Մյասնիկյան պ., 58 հասցեյով, հեռ. 3-52-48, հաշվարկային հաշվի համարը 041052361418, որը բացված է «Երևանբանկի» Գյումրու մասնաճյուղում, իդենտիֆիկացնող համարը 9226163821:

Բեռի առաքումը կատարվել է ըստ N45 առաքման պայմանագրի, որը կնքվել է 200Xթ դեկտեմբերի 28-ին: Գնորդին առաքվել են

ա) էլեկտրական սալիկներ՝ 1200 հատ, միավորի բաց թողնման գինը՝ 2500 դրամ

բ) էլեկտրական ջեռոցներ՝ 20 հատ, միավորի բաց թողնման գինը՝ 18 000 դրամ:

Առանձին տողով նշվել է ԱԱՀ 20% դրույքաչափով:

Հաշիվ-ապրանքագիրը գրանցվել է N 2 առաքման գրքում, 2-րդ էջի 16 տողով:

ԽՆԴԻՐ 9.15

Պահանջվում է որոշել վաճառված պատրաստի արտադրանքի ինքնարժեքը և ձևակերպել վաճառքի հետ կապված գործառնությունները: Արտադրանքի պաշարները գնահատվում են միջին կշռված արժեքով:

Տվյալներ. «Ա» արտադրատեսակի վաճառքի գինը 3000 դրամ է, գումարած ԱԱՀ, «Բ» արտադրատեսակի վաճառքի գինը 2200 դրամ է, գումարած ԱԱՀ:

Պատրաստի արտադրանքի շարժը 200X թ. I եռամսյակում հետևյալն է

Ցուցանիշներ	«Ա» արտադրատեսակ			«Բ» արտադրատեսակ		
	քանակը, հատ	միավորի փոխարժեքը, դր	ընդհանուր. ինքնարժեքը, դրամ	քանակը, հատ	միավորի փոխարժեքը, դրամ	ընդհանուր ինքնարժեքը, դրամ
Մնացորդը առ 01.200Xթ.	100	2560	?	200	1650	?
Թողարկվել է եռամսյակի ընթացքում	500	2596	?	800	1625	?
Ընդամենը մնացորդի հետ	600	X	?	1000	X	?
Իրացվել է եռամսյակի ընթացքում	400	?	?	900	?	?
Մնացորդը առ 31.03.200Xթ	?	?	?	?	?	?

ԽՆԴԻՐ 9.16

Ստորև բերված տվյալների հիման վրա որոշել և ձևակերպել իրացված արտադրանքի ինքնարժեքը, արտադրանքի վաճառքից ճանաչված հասույթը, հասույթի ճշգրտումը կապված իրացված արտադրանքի վերադարձման հետ, իրացված և վերադարձված արտադրանքին վերաբերող ԱԱՀ գումարները:

Տվյալներ

Ցուցանիշներ	«Ա» արտադրատեսակ			«Բ» արտադրատեսակ		
	քանակը, հատ	միավորի ինքնարժեքը, դրամ	միավորի գինը, առանց ԱԱՀ, դրամ	քանակը, հատ	միավորի ինքնարժեքը, դրամ	միավորի գինը, առանց ԱԱՀ, դրամ
Իրացվել է հաշվետու եռամսյակում	250	8 500	10 000	800	12 500	14 500
Վերադարձվել է գնորդների կողմից	20	8 500	10 000	50	12 500	14 500

ԽՆԴԻՐ 9.17

Պահանջվում է ձևակերպել արտադրանքի թողարկման գործընթացի հետ կապված գործառնությունները, կատարել գրանցումներ հաշիվներում, որոշել պատրաստի արտադրանքի արտադրական ինքնարժեքը, ձևակերպել արտադրանքի իրացման գործառնությունները, կազմել սինթետիկ հաշիվների շրջանառության տեղեկագիրը և հաշվապահական հաշվեկշիռը հաշվետու ժամանակաշրջանի վերջի դրությամբ:

Տվյալներ.

I. Սինթետիկ հաշիվների մնացորդները առ 31 մարտի 200X թ

Հաշիվ ների ծածկ.	Հաշիվների անվանումը	Գումարը, դրամ
1	2	3
111	Շահագործման մեջ գտնվող մաշվող հիմնական միջոցներ	3 200 000
112	Շահագործման մեջ գտնվող հիմնական միջոցների մաշվածություն	900 000
211	Նյութեր	1 590 000
213	Արագամաշ առարկաներ	450 000
214	Անավարտ արտադրություն	635 000
215	Արտադրանք	420 000
221	Դեբիտորական պարտքեր վաճառքների գծով	665 000
228	Ընթացիկ դեբիտորական պարտքեր առհաշիվ տրված գումարների գծով	50 000
251	Դրամարկդ	125 000
252	Հաշվարկային հաշիվ	1 820 000
311	Կանոնադրական (բաժնեհավաք) կապիտալ	4 800 000
343	Հաշվետու տարվա գուտ շահույթ (վնաս)	1 500 000
521	Կրեդիտորական պարտքեր գնումների գծով	620 000
524	Կարճաժամկետ կրեդիտորական պարտքեր բյուջեին	155 000
525	Կարճաժամկետ կրեդիտորական պարտքեր պարտադիր սո-	80 000

	ցիալական ապահովագրության գծով	
527	Կրեդիտորական պարտքեր աշխատավարձի և աշխատակիցների այլ կարճաժամկետ հատուցումների գծով	900 000

II. Անավարտ արտադրության մնացորդը առ 31 մարտի 200Xթ. կազմել է

Յ/հ	Ծախսումների հոդվածները	010 արտադրատեսակ	020 արտադրատեսակ
1	2	3	4
1	Ուղղակի նյութական ծախսումներ	150 000	190 000
2	Աշխատանքի վարձատրության ուղղակի ծախսումներ	80 000	100 000
3	Ուղղակի ծախսումներ սոցիալական ապահովագրության հատկացումների գծով	10 000	15 000
4	Անուղղակի արտադրական ծախսումներ	40 000	50 000
	Ընդամենը անավարտ արտադրության ինքնարժեք	280 000	355 000

II. Հաշվետու եռամսյակում տեղի ունեցած տնտեսական գործառնությունները

Յ/հ	Գործառնությունների բովանդակությունը	Գումարը, դրամ
1	2	3
1	Անավարտ արտադրության մնացորդը տեղափոխվել է հիմնական արտադրության հաշիվ	?
2.	Նյութերի ծախսի բաշխման տեղեկագրի համաձայն ծախսվել են նյութեր	
	ա) հիմնական արտադրությունում 010 արտադրատեսակի պատրաստման համար	480 000
	բ) հիմնական արտադրությունում 020 արտադրատեսակի պատրաստման համար	600 000
	գ) օժանդակ արտադրության կարիքների համար (օժանդակ արտադրության բոլոր ծախսումները հաշվառվում են որպես ուղղակի)	120 000
	դ) հիմնական արտադրամասի շենքերի և սարքավորումների սպասարկման համար	80 000
	ե) վարչական շենքի սպասարկման համար	100 000
	Ընդամենը	1 380 000
3.	Նյութերի ծախսի բաշխման տեղեկագրի համաձայն պահեստից շահագործման են հանձնվել արագամաշ առարկաներ հետևյալ նպատակների համար	
	ա) հիմնական արտադրամասի կարիքների համար	50 000
	բ) օժանդակ արտադրամասի կարիքների համար	20 500
	գ) վարչական կարիքների համար	32 500
	Ընդամենը	103 000

4.	Աշխատավարձի բաշխման տեղեկագրի համաձայն հաշվարկ-վել է աշխատավարձ անձնակազմին ա) հիմնական արտադրության բանվորներին 010 արտադրատեսակի պատրաստման համար	250 000
1	2	3
	բ) հիմնական արտադրության բանվորներին 020 արտադրատեսակի պատրաստման համար	350 000
	գ) օժանդակ արտադրության աշխատողներին	65 000
	դ) հիմնական արտադրամասերի սարքավորումների սպասարկմամբ զբաղված բանվորներին և արտադրամասի ծառայողներին	100 000
	ե) վարչական անձնակազմին	250 000
	Ընդամենը	1 015 000
5.	Կատարվել են պարտադիր սոցիալական ապահովագրության հատկացումներ անձնակազմի աշխատավարձի նկատմամբ ա) 010 արտադրատեսակի պատրաստմամբ զբաղված հիմնական արտադրության բանվորների	30 000
	բ) 020 արտադրատեսակի պատրաստմամբ զբաղված հիմնական արտադրության բանվորների	45 000
	գ) օժանդակ արտադրության աշխատողների	15 000
	դ) հիմնական արտադրության այլ անձնակազմի	12 000
	ե) վարչական անձնակազմի	35 000
	Ընդամենը	137 000
6.	Հաշվարկված աշխատավարձից պահվել է ա) եկամտահարկը	100 000
	բ) սոցիալական ապահովագրության վճարը	30 450
	Ընդամենը	130 450
7.	Հաշվետու անձի կողմից ներկայացվել է հաշվետվություն գործուղման ծախսերի վերաբերյալ	50 000
8	Դրամարկղից տրվել է աշխատողին առհաշիվ գումար տնտեսական ծախսեր կատարելու համար	100 000
9	Հաշվետու անձի կողմից ներկայացվել է հաշվետվություն առհաշիվ գումարների օգտագործման վերաբերյալ ա) գրեմական պիտույքների ձեռք բերման համար	15 000
	բ) փոստային-հեռահաղորդակցական ծախսերի վճարման համար	50 000
	Ընդամենը	65 000
10	Հաշվարկային հաշվից վճարվել է «Ջրնուղ» ԲԲԸ-ին օգտագործված ջրի համար, որը սպառվել է ա) հիմնական արտադրամասում	18 000
	բ) օժանդակ արտադրությունում	10 000
	գ) վարչությունում	12 000
	Ընդամենը	40 000
11	Հաշվարկվել է շահագործման մեջ գտնվող հիմնական միջոցների մաշվածությունը ա) հիմնական արտադրության	64 000

	բ) օժանդակ արտադրության	29 500
	գ) վարչական նշանակության	42 500
	Ընդամենը	136 000
12.	Օժանդակ արտադրամասի ծառայությունները բաշխվել են	
1	2	3
	սպառողների միջև	
	ա) հիմնական արտադրամասերի (60%)	?
	բ) վարչության (40%)	?
	Ընդամենը	?
13	Հիմնական արտադրության անուղղակի արտադրական ծախսումները բաշխվել են արտադրատեսակների միջև բանվորների աշխատավարձի համամասնությամբ	
	ա) 010 արտադրատեսակին վերաբերող	?
	բ) 020 արտադրատեսակին վերաբերող	?
	Ընդամենը (բաշխման հաշվարկը կատարել թիվ 1 աղյուսակում)	?
14.	Հիմնական արտադրությունում թողարկված պատրաստի արտադրանքը հանձնվել է պահեստ փաստացի ինքնարժեքով	
	ա) 010 արտադրատեսակ	?
	բ) 020 արտադրատեսակ	?
	Ընդամենը (պատրաստի արտադրանքի ինքնարժեքի հաշվարկը կատարել թիվ 2 և թիվ 3 աղյուսակներում)	?
15.	Անավարտ արտադրության մնացորդը հաշվետու եռամսյակի վերջում տեղափոխվել է հաշվեկշռային հաշիվ	570 000
16.	Պահեստից առաքվել է գնորդներին պատրաստի արտադրանքը փաստացի ինքնարժեքով	1 200 000
17.	Ճանաչվել է հասույթը գնորդներին առաքված արտադրանքի գծով	2 000 000
18	Ձևակերպվել է իրացված արտադրանքին վերաբերող ԱԱՀ-ի գումարը	?
19.	Հաշվարկային հաշվում ստացվել է գնորդներից	2 000 000
20.	Դրամարկղում ստացվել է կանխիկ դրամ հաշվարկային հաշվից աշխատավարձ վճարելու համար	900 000
21.	Դրամարկղից վճարվել է աշխատավարձ անձնակազմին	900 000
22	Փակել եկամուտների հաշվառման հաշիվները	?
23.	Փակել ծախսերի հաշվառման հաշիվները	?
24.	Որոշել և ձևակերպել կազմակերպության գործունեության ֆինանսական արդյունքը	?
	Ընդամենը հաշվետու եռամսյակում	?

Անուղղակի արտադրական ծախսումների բաշխման հաշվարկ

Արտադրատեսակներ	Արտադրական բանվորների աշխատավարձ	Բաշխման գործակից	Անուղղակի արտադրական ծախսումներ
010			
020			
Ընդամենը			

Արտադրության ծախսումների հաշվառման քարտ 010 արտադրատեսակ

Ծախսումների հոդվածները	Անավարտ արտադրության մնացորդը առ 31.03.200Xթ.	Փաստացի ծախսումները II եռամսյակում	Թողարկված արտադրանքի փաստացի ինքնարժեքը	Անավարտ արտադրության մնացորդը առ 30.06.200Xթ.
Ուղղակի նյութական ծախսումներ				120 000
Ուղղակի ծախսումներ աշխատանքի վարձատրության գծով				75 000
Ուղղակի ծախսումներ պարտադիր սոցապի գծով				10 000
Անուղղակի արտադրական ծախսումներ				35 000
Ընդամենը				240 000

Արտադրության ծախսումների հաշվառման քարտ 020 արտադրատեսակ

Ծախսումների հոդվածները	Անավարտ արտադրության մնացորդը առ 31.03.200Xթ.	Փաստացի ծախսումները II եռամսյակում	Թողարկված արտադրանքի փաստացի ինքնարժեքը	Անավարտ արտադրության մնացորդը առ 30.06.200Xթ.
Ուղղակի նյութական ծախսումներ				180 000
Ուղղակի ծախսումներ աշխատանքի վարձատրության գծով				92 000
Ուղղակի ծախսումներ պարտադիր սոցապի գծով				13 000

Անուղղակի արտադրական ծախսումներ				45 000
Ընդամենը				330 000

ԽՆԴԻՐ 9.18

Պահանջվում է կազմել պաշարների շարժի հաշվառման ստորև բերված գործառնությունների ձևակերպումները.

Հ/հ	Գործառնությունների բովանդակությունը	Գումարը, դրամ
1	2	3
1.	Մատակարարներից ձեռք են բերվել նյութեր	
	ձեռք բերման գներով	100 000
1	2	3
	ԱԱՀ	20 000
	Ընդամենը ըստ մատակարարի հաշվի	120 000
2.	Ստացվել է տրանսպորտային կազմակերպության հաշիվը այդ նյութերի տեղափոխման համար	10 000
3.	Հաշվետու անձի կողմից վճարվել են նյութերի բեռնաթափման ծախսումները	4 000
4.	Մատակարարներից ստացվել են պահեստամասեր	50 000
	ձեռք բերման գներով	10 000
	ԱԱՀ	60 000
	Ընդամենը	60 000
5.	Պահեստ են հանձնվել օժանդակ գործիքային արտադրամասում պատրաստված պահեստամասերը	20 000
6.	Վերադարձվել է գնորդների մոտ հայտնաբերված խտան արտադրանքը	50 000
7.	Ծախսվել են նյութեր	200 000
	ա) հիմնական արտադրությունում արտադրանքի պատրաստման համար	
	բ) հիմնական արտադրությունում սարքավորումների և շենքերի սպասարկման ու նորոգման համար	50 000
	գ) օժանդակ արտադրությունում աշխատանքի կատարման համար	80 000
	դ) գնորդի կողմից վերադարձված խտան արտադրանքի շտկման համար	10 000
	ե) պատրաստի արտադրանքի փաթեթավորման համար	40 000
	զ) վարչական շենքի նորոգման համար	50 000
	Ընդամենը	?
8.	Մատակարարից ձեռք է բերվել արագամաշ գույք	80 000
	ձեռք բերման գներով	16 000
	ԱԱՀ	96 000
	Ընդամենը	96 000
9	Օժանդակ արտադրամասի կողմից թողարկվել և պահեստ են հանձնվել արագամաշ գործիքներ	50 000

10.	Շահագործման է հանձնվել արագամաշ գույքը՝	
	ա) հիմնական արտադրամասերին	30 000
	բ) օժանդակ արտադրամասերին	20 000
	գ) վարչությանը	30 000
	Ընդամենը (երկու ձևակերպում)	80 000
11.	Պահեստ են մուտքագրվել հաստոցների լուծարքից ստացված նյութերը	5 000
12.	Արտադրանքի պատրաստման համար	
	ա) հաշվարկվել է աշխատավարձ հիմնական արտադրության բանվորներին	100 000
	բ) կատարվել են հատկացումներ սոցիալական ապահովագրության համար	17 000
	Ընդամենը	117 000
13	Դուրս են գրվել հիմնական արտադրությանը վերաբերող	
1	2	3
	անուղղակի ծախսումները	?
14.	Պահեստ է հանձնվել հիմնական արտադրությունից ստացված պատրաստի արտադրանքը՝ փաստացի ինքնարժեքով	?
15.	Պահեստ է մուտքագրվել խոտանի շտկումից ստացված արտադրանքը	?
16.	Անավարտ արտադրության մնացորդը հիմնական արտադրության հաշվից տեղափոխվել է հաշվեկշռային հաշիվ	40 000
17.	Իրացվել է չօգտագործվող արագամաշ գույքը ինքնարժեքով	20 000
18.	Գնորդին ներկայացվել է հաշիվը իրացվող արագամաշ գույքի համար	
	ա) բացթողման գներով	25 000
	բ) ԱԱՀ	5 000
	Ընդամենը	30 000
19	Պատրաստի արտադրանքը առաքվել է գնորդին ինքնարժեքով	250 000
20	Գնորդին ներկայացվել է հաշիվը առաքված արտադրանքի համար	
	ա) բացթողման գներով	300 000
	բ) ԱԱՀ	60 000
	Ընդամենը	360 000
21	Գույքագրման ժամանակ հայտնաբերվել է՝	
	ա) նյութերի պակասորդ	10 000
	բ) վառելիքի ավելցուկ	12 000

ԽՆԴԻՐ 9.19

Պահանջվում է որոշել և ձևակերպել մեծածախ առևտրի կազմակերպությունում վաճառված ապրանքների ինքնարժեքը պաշարների ինքնարժեքի հաշվարկման ԱՄԱԵ (ֆիֆո) բանաձևով:

Տվյալներ. Շինանյութերի մեծածախ բազան ունի 2 պահեստ Երևանում և Տաշիրում: Շինանյութերի շարժը այդ պահեստներում հետևյալն է

Ցուցանիշներ	Ց ե մ ե ն տ			Գ ա ջ		
	քանակը, միավորներ	միավորի արժեքը, դրամ	ընդհանուր գումարը, դրամ	քանակը, միավորներ	միավորի արժեքը, դրամ	ընդհանուր գումարը, դրամ
1	2	3	4	5	6	7
<u>Երևանի պահեստ</u> Մնացորդը առ 31.03.200Xթ.	50	10 000		20	8 000	
<u>Մուտքը II եռամսյակում</u>						
ապրիլ	100	10 200		200	8 200	
մայիս	120	10 500		150	8 500	
1	2	3	4	5	6	7
հունիս	150	10 300		120	8 300	
<u>Ելքը II եռամսյակում</u>						
ապրիլ	140	X	X	180	X	X
մայիս	70	X	X	170	X	X
Մնացորդը առ 30.06.200Xթ.	210			140		
<u>Տաշիրի պահեստում</u> Մնացորդը առ 31.03.200Xթ.	30	10 100		30	8 000	
<u>Մուտքը II եռամսյակում</u>						
ապրիլ	80	10 200		150	8 200	
մայիս	60	10 500		180	8 500	
հունիս	100	10 300		220	8 300	
<u>Ելքը II եռամսյակում</u>						
ապրիլ	70	X	X	170	X	X
մայիս	70	X	X	150	X	X
հունիս	100	X	X	110	X	X
Մնացորդը առ 30.06.200Xթ.	30			150		

ԽՆԴԻՐ 9.20

Ստորև բերված տվյալների հիման վրա որոշել ապրանքների իրացման զուտ արժեքը և հաշվարկել ու ձևակերպել ապրանքների արժեքի նվազումից կորուստը մանրածախ առևտրում

Տվյալներ. Մանրածախ առևտրական կազմակերպությունում գույքագրման ժամանակ հայտնաբերվել են տղամարդու վերարկուներ և կանացի ձմեռային զգեստներ, որոնք հնացել են և չեն կարող վաճառվել ինքնարժեքից բարձր գներով:

Հայտնաբերվել է 20 հատ տղամարդու վերարկու և 30 հատ կանացի զգեստ: Տղամարդու մեկ վերարկուի վաճառքի գինը հաշվառման ընդունման պահին եղել է 30 000 դրամ, որից ԱԱՀ 5000 դրամ, առևտրական հավելագինը 2500 դրամ: Տվյալ պահին յուրաքանչյուր վերարկուն կարող է վաճառվել 18000 դրամով, սակայն վաճառքի նախապատրաստելու համար անհրաժեշտ է կատարել լրացուցիչ ծախսում 2000 դրամի չափով: Կանացի մեկ զգեստի վաճառքի գինը եղել է 24 000 դրամ, որից 4000

դրամը ԱԱՀ, իսկ առևտրային հավելագինը 2000 դրամ. Յուրաքանչյուր զգեստը տվյալ պահին հնարավոր է վաճառել 15 000 դրամով վաճառքի նախապատրաստելու համար 1500 դրամ լրացուցիչ ծախս կատարելու պայմանով

ԽՆԴԻՐ 9.21

Ստորև բերված տվյալների հիման վրա որոշել վաճառված ապրանքների ինքնարժեքը և ձևակերպել ապրանքների ձեռք բերման ու վաճառքի գործառնությունները մանրածախ առևտրում որոշել ու ձևակերպել վաճառքի ֆինանսական արդյունքը:

Տվյալներ. Ներկերի մանրածախ խանութը ձեռք է բերել 5 կգ քաշով 1000 տուփ հատակի դարչնագույն ներկ՝ վաճառքի նպատակով: Յուրաքանչյուր տուփի գնման գինը 3000 դրամ է, գումարած 20% ԱԱՀ: Խանութը պետք է վաճառի ներկի յուրաքանչյուր տուփը 4200 դրամով, ներառյալ ԱԱՀ-ն և առևտրական հավելագինը: Հաշվետու ժամանակաշրջանում ներկի ամբողջ խմբաքանակը վաճառվել է, հասույթը մուտքագրվել է դրամարկղ. Վաճառքի իրականացման համար ծախսվել են փաթեթավորման նյութեր 10000 դրամ, հաշվարկվել է աշխատավարձ 80000 դրամ, կատարվել են սոցիալական ապահովագրության հատկացումներ 20 000 դրամ:

ԽՆԴԻՐ 9.22

Ստորև բերված տվյալների հիման վրա որոշել վաճառված ապրանքների ինքնարժեքը, կատարել հաշվետու ժամանակաշրջանում իրացված ապրանքների և չիրացված ապրանքների մնացորդի միջև առևտրական հավելագնի բաշխման հաշվարկը, ձևակերպել ապրանքների ձեռք բերման և վաճառքի գործառնությունները մանրածախ առևտրում:

Տվյալներ. Մանրածախ առևտրի կազմակերպությունում չվաճառված մանկական վերարկուների մնացորդը 200Xթ. հունվարի մեկի դրությամբ կազմել է 20 հատ, յուրաքանչյուրի վաճառքի գինը՝ 18 000 դրամ, այդ թվում առևտրական հավելագինը 2 000 դրամ, ԱԱՀ 3 000 դրամ: Հունվար ամսում կարի ֆաբրիկայից ստացվել է 100 հատ վերարկու, իսկ փետրվարին 40 հատ. Յուրաքանչյուր վերարկուի գնման գինը 13 000 դրամ է, գումարած 20% ԱԱՀ. Հաշվետու եռամսյակում ձեռք բերված վերարկուները վաճառվելու են նույն գնով եռամսյակի ընթացքում վաճառվել է 150 հատ վերարկու: Վաճառքից հասույթը մուտքագրվել է խանութի դրամարկղ:

ԽՆԴԻՐ 9.23

Կազմել մանրածախ առևտրում ապրանքների շարժի գործառնությունների ձևակերպումները

Հ/հ	Գործառնությունների բովանդակությունը	Գումարը, դրամ
1	2	3
1.	Մատակարարներից ձեռք են բերվել ապրանքներ ա) գնման գներով բ) ԱԱՀ (20%)	200 000 ?
	Ընդամենը	?
2.	Ձևակերպվել է ձեռք բերված ապրանքների վաճառքի գնի և ինքնարժեքի տարբերությունը ա) առևտրական հավելագինը	20 000

	բ) ԱԱՀ -ն	44 000
	Ընդամենը	64 000
3.	Հաշվարկային հաշվից վճարվել է մատակարարին ձեռք բերված ապրանքների դիմաց (տես գործ 1)	?
4.	Վերածևակերպվել է մատակարարից ձեռք բերված և վճարված ապրանքներին վերաբերվող ԱԱՀ գումարը	?
5.	Վաճառվել են ապրանքներ: Վաճառքից գումարը մուտքագրվել է դրամարկղ վաճառքի գներով ԱԱՀ	240 000 ?
6	Ձևակերպվել է վաճառված ապրանքների ինքնարժեքի ծախս ճանաչումը՝ վաճառքի գներով	240 000
1	2	3
7.	Ձևակերպվել է վաճառված ապրանքների ինքնարժեքի ճշգրտումը ա) առևտրական հավելագնի գումարով բ) ԱԱՀ գումարով Ընդամենը	? ? ?
8.	Ապրանքների վաճառքից ստացված գումարը հանձնվել է խնայբանկի դրամարկղ՝ կազմակերպության հաշվարկային հաշվում մուտքագրելու համար	240 000
9.	Ապրանքների վաճառքից խնայբանկի դրամարկղ հանձնված գումարը մուտքագրվել է կազմակերպության հաշվարկային հաշվում	240 000

ՍՏՈՒԳՈՂԱԿԱՆ ԱՈՍԱՋԱԴՐԱՆՔՆԵՐ, ՀԱՐՑԵՐ ԵՎ ՏԵՍՏԵՐ
Ստուգողական առաջադրանքներ

Առաջադրանք 1

«Լույս» ԲԲԸ վաճառել է պահեստում մնացած չօգտագործվող նյութերը 120 000 դրամով, ներառյալ ԱԱՀ: Վաճառված նյութերի դիմաց վճարը մուտքագրվել է հաշվարկային հաշիվ նյութերը առաքելուց 10 օր անց: Վաճառված նյութերի ինքնարժեքը կազմել է 80 000 դրամ: Հաշվետու անձի կողմից վճարվել են նյութերի տեղափոխման ծախսերը 7 000 դրամ:

Պահանջվում է կազմել նյութերի վաճառքի գործառնությունների ձևակերպումները և որոշել վաճառքի ֆինանսական արդյունքը:

Առաջադրանք 2

Կազմակերպությունը հաշվետու ժամանակաշրջանում առաքել է գնորդին 250 միավոր արտադրանք: Արտադրանքի միավորի ինքնարժեքը կազմել է 2000 դրամ, իսկ բացթողման գինը (առանց ԱԱՀ)՝ 3000 դրամ: Տարբեր հիմնավորված պատճառներով գնորդը հետ է վերադարձրել 20 միավոր արտադրանքը:

Պահանջվում է ձևակերպել արտադրանքի վաճառքի և գնորդներից հետ վերադարձման գործառնությունները և որոշել արտադրանքի վաճառքի ֆինանսական արդյունքը:

Առաջադրանք 3

«Ա» նյութի մնացորդը ժամանակաշրջանի սկզբում և շարժը ժամանակաշրջանի ընթացքում կազմել են.

Ամսաթիվը	Նյութի միավորի արժեքը, դր.	Մուտքը, կգ	Ելքը, կգ	Մնացորդը, կգ
1	2	3	4	5
Մնացորդը առ 30.06.200Xթ.	1500			20
4.07 մուտք է եղել	1550	40	X	X
12.07 մուտք է եղել	1600	50	X	X
15.07 տրվել է արտադրությանը	X	X	60	X
25.07 մուտք է եղել	1620	60	X	X
1.08 տրվել է արտադրությանը	X	X	40	X
10.08 մուտք է եղել	1580	50	X	X
1	2	3	4	5
25 08 տրվել է արտադրությանը	X	X	70	X
11 09 մուտք է եղել	1550	20	X	X
15 09 տրվել է արտադրությանը	X	X	60	X
Մնացորդը առ 30.09.200Xթ.	X			10

Պահանջվում է գնահատել նյութի մնացորդը հաշվետու ժամանակաշրջանի վերջում և որոշել ծախսված նյութի ինքնարժեքը ԱՄԱԵ, ՎՄԱԵ և միջին կշռված արժեքի բանաձևերով.

Առաջադրանք 4

Մանրածախ խանութը մատակարարից ձեռք է բերել 100 հատ էլեկտրական մսադափ վաճառքի համար, յուրաքանչյուր միավորի համար ըստ հաշիվ-ապրանքագրի պետք է վճարվի 15 000 դրամ, գումարած ԱԱՀ: Ձեռք բերված ապրանքները մինչև խանութի պահեստ տեղափոխման և բեռնաթափման համար առաքիչի կողմից վճարվել է 20 000 դրամ: Մսադափի վաճառքի գինը սահմանվել է 21 840 դրամ, այդ թվում առևտրական հավելագինը՝ 3 000 դրամ, ԱԱՀ 3 640 դրամ: Հաշվետու ժամանակաշրջանում վաճառվել է 80 հատ մսադափ. Վճարը մուտքագրվել է խանութի դրամաձևով:

Պահանջվում է որոշել վաճառված ապրանքների ինքնարժեքը և ձևակերպել ապրանքների ձեռք բերման ու վաճառքի գործառնությունները մանրածախ առևտրում:

Ստուգողական հարցեր

1. Ո՞ր ակտիվներն են դասվում պաշարների թվին:
2. Ո՞ր ծախսումներն են ներառվում պաշարների ինքնարժեքի մեջ:
3. Որո՞նք են պաշարների ինքնարժեքի մեջ չներառվող ծախսերը:
4. Ինչու՞մ է կայանում պաշարների ինքնարժեքի որոշման ստանդարտ ծախսումների մեթոդը:
5. Որ՞ն է պաշարների ինքնարժեքի որոշման մանրածախ մեթոդի առանձնահատկությունը:
6. Նշել պաշարների ինքնարժեքի հաշվառման բանաձևերը:
7. Ինչպե՞ս են գնահատվում պաշարների մնացորդները ԱՄԱԵ բանաձևի կիրառման դեպքում:
8. Ինչպե՞ս են գնահատվում պաշարների մնացորդները ՎՄԱԵ բանաձևի կիրառման դեպքում:
9. Ինչպե՞ս են գնահատվում պաշարների մնացորդները միջին կշռված արժեքի բանաձևի կիրառման դեպքում:

10. Ո՞ր դեպքում պաշարները պետք է չափվեն իրացման զուտ արժեքով:
11. Ի՞նչ փաստաթղթերով են ձևակերպվում պաշարների մուտքագրումը կազմակերպության պահեստ:
12. Ո՞ր փաստաթղթերով են ձևակերպվում նյութերի և արագամաշ առարկաների պահեստից արտադրությանը բաց թողնման գործառնությունները:
13. Ինչպե՞ս է կազմակերպվում պաշարների պահեստային հաշվառումը:
14. Ո՞ր դեպքում պետք է ճանաչվի արտադրանքի, ապրանքի վաճառքից հասույթը.
15. Որո՞նք են արագամաշ առարկաների հաշվառման առանձնահատկությունները.
16. Ինչպե՞ս է ճշգրտվում հասույթը գնորդի կողմից արտադրանքի վերադարձման դեպքում:
17. Ո՞ր դեպքում է առաջանում առաքված արտադրանքի հաշվառման անհրաժեշտությունը:
18. Ինչպե՞ս են հաշվառում ապրանքների շարժը մեծածախ առևտրում.
19. Ինչպե՞ս են հաշվառում ապրանքների շարժը մանրածախ առևտրում:
20. Ինչպե՞ս են հաշվարկում վաճառված ապրանքների ինքնարժեքը մանրածախ առևտրում:
21. Ինչպե՞ս են ձևակերպվում պաշարների գույքագրման արդյունքները:
22. Ինչպե՞ս է ձևակերպվում պաշարների արժեքի նվազումը և դրա հակադարձումը:

Տ Ե Ս Տ Ե Ր

Տնտեսական գործառնությունների ձևակերպումների ներկայացված պատասխաններից ընտրել ճիշտ տարբերակը.

Հ/հ	Գործառնությունների բովանդակությունը	Պատասխան		
		Տարբերակ	Դտ	Կտ
1	2	3	4	5
1.	Գույքագրման ժամանակ հայտնաբերվել է նյութերի պակասորդ	Ա	211	714
		Բ	712	211
		Գ	714	211
2.	Տրանսպորտային կազմակերպության կողմից կատարվել է ձեռք բերված նյութերի տեղափոխում	Ա	211	251
		Բ	211	521
		Գ	521	211
3.	Պահեստից բաց են թողվել պահեստամասեր հիմնական արտադրանքի սարքավորման նորոգման համար	Ա	811	211
		Բ	813	211
		Գ	813	213
4.	Մատակարարից ստացված նյութերի ընդունման ժամանակ հայտնաբերվել է պակասորդ, որի գումարով մատակարարին ներկայացվել է բողոքարկում	Ա	521	211
		Բ	229	521
		Գ	521	229
5.	Պահեստ են մուտքագրվել սարքավորումների լուծարքից ստացված պահեստամասերը	Ա	211	614
		Բ	211	714
		Գ	211	111
6.	Դուրս են գրվել տարերային աղետի հետևանքով փչացած նյութերը	Ա	714	211
		Բ	211	714
		Գ	731	211
7.	Մատակարարից ստացվել է արագամաշ գույք	Ա	211	521
		Բ	111	521

		Գ	213	521
8	Հաշվետու անձի կողմից վճարվել են ձեռք բերված նյութերի բեռնման-բեռնաթափման ծախսումները	Ա	211	228
		Բ	228	211
		Գ	211	521
9.	Գույքագրման ժամանակ հայտաբերված նյութերի պակասորդը դուրս է գրվել մեղավոր անձի հաշվին	Ա	229	614
		Բ	222	211
		Գ	222	614
10.	Գույքագրման ժամանակ հայտնաբերվել է ապրանքների ավելցուկ	Ա	216	614
		Բ	714	216
		Գ	215	614
11.	Պահեստ են մուտքագրվել օժանդակ արտադրամասում պատրաստված	Ա	211	812
		Բ	213	811
1	2	3	4	5
	պահեստամասերը	Գ	213	812
12	Արտացույցվել է խանութի կողմից ձեռք բերված ապրանքների վաճառքի գնի և ինքնարժեքի տարբերությունը	Ա	217	216
		Բ	216	217
		Գ	711	217
13.	ճանաչվել է արտադրանքի վաճառքից հասույթը	Ա	222	614
		Բ	221	611
		Գ	251	611
14	Հիմնական արտադրության հաշվում առաջացած անավարտ արտադրության մնացորդը տեղափոխվել է հաշվեկշռային հաշիվ	Ա	811	214
		Բ	214	811
		Գ	214	215
15	Մանրածախ խանութի դրամարկղում ստացվել է հասույթը ապրանքների իրացումից	Ա	251	614
		Բ	221	611
		Գ	251	611
16	Պահեստից բաց են թողնվել շինանյութեր վարչական շենքի նորոգման համար	Ա	712	213
		Բ	713	211
		Գ	713	213
17	Ձևակերպվել է մեծածախ առևտրում իրացված ապրանքների ինքնարժեքի ճշգրտումը առևտրական հավելագնի գումարով	Ա	711	217
		Բ	217	711
		Գ	217	216
18	Պահեստից արտադրանքը առաքվել է գնորդին ինքնարժեքով	Ա	714	216
		Բ	714	215
		Գ	711	215
19	Վաճառվել են չօգտագործվող նյութեր ինքնարժեքով	Ա	711	211
		Բ	714	211
		Գ	712	211
20	ճանաչվել է չօգտագործվող նյութերի վաճառքից հասույթը	Ա	251	614
		Բ	221	614
		Գ	221	714
21.	Ձևակերպվել է պաշարների արժեքի նվազումը	Ա	714	218
		Բ	713	211
		Գ	218	614
22	Ձևակերպվել է նախկինում ճանաչված պաշարների արժեքի նվազման հակադարձումը	Ա	218	614
		Բ	614	218
		Գ	218	714

23.	Պահեստից բաց են թողվել նյութեր սարքավորումների տեղակայման համար	Ա	821	211
		Բ	822	211
		Գ	823	211
24.	Պահեստից բաց են թողվել նյութեր սարքավորումների վերակառուցման համար	Ա	812	211
		Բ	822	211
		Գ	823	211
25.	Կազմակերպության մասնակցից ստացվել են նյութեր նախապես տեղաբաշխված բաժնետոմսերի դիմաց	Ա	211	311
		Բ	211	312
		Գ	211	521
26.	Պահեստ է մուտքագրվել հիմնական արտադրությունից ստացված պատրաստի արտադրանքը	Ա	215	811
		Բ	215	812
		Գ	215	814

ԳԼՈՒԽ 10

ԴԵՔԻՏՈՐԱԿԱՆ ՊԱՐՏՔԵՐԻ ԵՎ ԴՐԱՄԱԿԱՆ ՄԻՋՈՑՆԵՐԻ ՀԱՇՎԱՈՒԽՄ

ԽՆԴԻՐ 10.1

Ստորև բերված տվյալների հիման վրա որոշել վաճառքների գծով դեբիտորական պարտքերի մնացորդը հաշվետու ժամանակաշրջանի վերջում:

Տվյալներ. Կազմակերպության վաճառքների գծով դեբիտորական պարտքի մնացորդը 200Xթ. մարտի 31-ի դրությամբ կազմել է. «Ա» գնորդինը 50 000 դրամ, «Բ» գնորդինը 160 000 դրամ, «Գ» գնորդինը 180 000 դրամ: Հաշվետու եռամսյակի ընթացքում առաքվել է արտադրանք «Ա» գնորդին 72 000 դրամ, «Բ» գնորդին

108 000 դրամ, իսկ «Գ» գնորդին 60 000 դրամ արժողությամբ: «Բ» գնորդի կողմից արտադրանքի մի մասը 36000 դրամ արժողությամբ, վերադարձվել է կազմակերպությանը որակի անհամապատասխանության պատճառով: «Գ» գնորդին հաշվետու եռամսյակում առաքված արտադրանքի համար պայմանագրով սահմանված պայմաններով տասնօրյա ժամկետում վճարում կատարելու համար տրվել է գների իջեցման 20% զեղչ: Հաշվետու եռամսյակի ընթացքում գնորդների կողմից կատարվել է վճարում առաքված արտադրանքի դիմաց «Ա» գնորդի կողմից 80 000 դրամ, «Բ» գնորդի կողմից 140 000 դրամ, «Գ» գնորդի կողմից 160 000 դրամ: Բոլոր գումարները ներկայացված են վաճառքի գներով (ներառյալ ԱԱՀ):

ԽՆԴԻՐ 10.2

Ստորև բերված տվյալների հիման վրա որոշել դեբիտորական պարտքերի հնարավոր կորուստների պահուստի մեծությունը հաշվետու տարվա վերջի դրությամբ և դրա փոփոխությունները, կազմել համապատասխան հաշվապահական ձևակերպումները: Որոշել դեբիտորական պարտքերի հաշվեկշռային արժեքը հաշվետու տարվա վերջի դրությամբ:

Տվյալներ. Վաճառքների գծով դեբիտորական պարտքերի մնացորդը 200Xթ. հունվարի 1-ի դրությամբ կազմել է

«Ա» գնորդի 24 000 դրամ (առաջացել է նախորդ տարվա նոյեմբերի 20-ին, վճարման ժամկետը 30 օր է),

«Բ» գնորդի 72 000 դրամ (առաջացել է նախորդ տարվա դեկտեմբերի 14-ին, վճարման ժամկետը 30 օր է)։

223 «Վաճառքների և այլ եկամուտների գծով դեբիտորական պարտքերի հնարավոր կորուստների պահուստ» հաշվի մնացորդը 0 է.

Հունվարի 20-ին «Ա» գնորդին ապառիկ վաճառվել է 60 000 դրամի արտադրանք, որի դիմաց վճարումը պետք է կատարվեր 10 օրվա ընթացքում: «Ա» գնորդի կողմից նախորդ տարվա պարտքի դիմաց ամբողջությամբ վճարումը իրականացվել է հունիսի 1-ին, իսկ հունվարի 20-ին առաքված արտադրանքի դիմաց սեպտեմբերի 1-ին կատարվել է մասնակի վճարում 40 000 դրամ:

Մարտի 15-ին «Բ» գնորդին վաճառվել է 36 000 դրամի արտադրանք 30 օրվա ժամկետում վճարելու պայմանով «Բ» գնորդի կողմից հունիսի 12-ին կատարվել է նախորդ տարվա պարտքի մասնակի վճարում 42 000 դրամ:

Ֆ ԽՆԴԻՐ 10.3

Կազմել դեբիտորական պարտքերի ձևավորման և մարման գործառնությունների ձևակերպումները:

Հաշվետու ժամանակաշրջանում տեղի են ունեցել հետևյալ գործառնությունները.

Հ/հ	Գործառնությունների բովանդակությունը	Գումարը, դրամ
1	2	3
1	Գնորդին ապառիկ վաճառվել է արտադրանք ա) բացթողման գներով բ) ԱԱՀ Ընդամենը վաճառքի գներով	140 000 ? ?
2.	Գնորդին վաճառվել է կազմակերպությանը պատկանող ավտոմեքենան ա) բացթողման գներով բ) ԱԱՀ Ընդամենը վաճառքի գներով	1 000 000 ? ?
3.	Հաշվարկային հաշվում ստացվել է գնորդից՝ վաճառված արտադրանքի արժեքը (տես գործ. 1)	?
4.	Հաշվարկային հաշվում ստացվել է գնորդից՝ վաճառված ավտոմեքենայի արժեքը (տես գործ. 2)	?
5.	Գնորդի կողմից հետ է վերադարձվել դեռևս չվճարված արտադրանքը ա) բացթողման գներով բ) ԱԱՀ Ընդամենը վաճառքի գներով	60 000 ? ?
6	Ձևակերպվել է գնորդին վաճառված արտադրանքի գների իջեցումը ա) բացթողման գներով բ) ԱԱՀ Ընդամենը վաճառքի գներով	20 000 ? ?
7.	Ձևակերպվել է արտադրանքի հետ վերադարձումից և գների իջեցումից հասույթի ճշգրտումը (տես գործ. 5 և 6)	?

	կարճաժամկետ վարկի հաշվին	
27.	Աշխատողի աշխատավարձից պահվել է ապառիկ գնված ապրանքի համար	25 000
28	Աշխատողի կողմից դրամարկղ է մուծվել՝ ապառիկ գնված ապրանքի գծով պարտքը մարելու համար	100 000

ԽՆԴԻՐ 10.4

Ստորև բերված տվյալների հիման վրա կազմել հաշվետու անձանց հետ հաշվարկների ձևակերպման փաստաթղթերը և դրանց հետ կապված հաշվապահական ձևակերպումները:

Տվյալներ «Իմպուլս» ԲԲԸ ֆինանսական տնօրեն Կ.Մալխասյանը ընկերության ղեկավարի ապրիլի 4-ի թիվ 0731 հրամանով 5 օր ժամկետով՝ ապրիլի 5-ից մինչև 9-ը, գործուղվել է Գյումրի քաղաք կոնֆերանսին մասնակցելու համար Ապրիլի 4-ին N 321 ելքի օրդերով Կ.Մալխասյանին տրվել է կանխավճար՝ 45000 դրամ: Գործուղումից վերադառնալուց հետո, ապրիլի 10-ին, նա ներկայացրել է N18 հաշվետվությունը առհաշիվ գումարների ծախսման մասին, որին կցել է հետևյալ փաստաթղթերը՝

- N12 գործուղման վկայականը,
- ավտոբուսի տոմսերը՝ 2 հատ, յուրաքանչյուրի արժեքը՝ 1 200 դրամ,
- հյուրանոցի հաշիվը 5 օրվա համար՝ 25 000 դրամ գումարով:

Տվյալ ժամանակաշրջանում ՀՀ տարածքում գործուղման դեպքում օրապահիկը սահմանված է 3 000 դրամ (պայմանական):

ԽՆԴԻՐ 10.5

Պահանջվում է ձևակերպել դրամարկղային ելքի օրդերը առհաշիվ գումարի տրամադրման վերաբերյալ և հաշվետու անձի հաշվետվությունը առհաշիվ գումարների ծախսման վերաբերյալ:

Տվյալներ «Մետալուրգ» ԲԲԸ ղեկավարի 200Xթ. հունիսի 6-ի թիվ 1428 հրամանով գլխավոր հաշվապահ Տ Սիմոնյանը հունիսի 8-ից մինչև 12-ը գործուղվել է ք.Մոսկվա ԱՊՀ երկրների հաշվառման և հաշվետվության կազմակերպման հարցերին նվիրված սեմինարին մասնակցելու համար: Հունիսի 7-ին N248 դրամարկղի ելքի օրդերով Սիմոնյանին վճարվել է 567 700 դրամ: Գործուղման հրամանով ծախսերը պետք է հատուցվեն նորմատիվի սահմաններում:

Գործուղումից վերադառնալուց հետո Սիմոնյանը ներկայացրել է N 68 հաշվետվությունը առհաշիվ գումարների ծախսման վերաբերյալ, որին կցել է՝

- գործուղման վկայականը,
- ավիատոմսերը՝ 2 հատ,
- հյուրանոցի հաշիվները:

Լրացուցիչ տվյալներ. Մոսկվա գործուղվելու դեպքում մեկնելու տոմսի արժեքը 82 000 դրամ է, ներառյալ ԱԱՀ-ն և 10 000 դրամ պետական տուրքը: Վերադարձի տոմսի արժեքը 73 500 դրամ է: Գիշերավարձի ծախսի նորման մեկ օրվա համար 144 ԱՄՆ դոլար է, իսկ օրապահիկինը՝ 85 դոլար: Հատուցման վճարման օրը ՀՀ ԿԲ-ի կողմից սահմանված ԱՄՆ դոլարի վաճառքի փոխարժեքը 360 դրամ է:

ԽՆԴԻՐ 10.6

Կազմել դրամարկղի մուտքի և ելքի օրդերները ստորև բերված տվյալների հիման վրա (մուտքի օրդերների համարակալումը սկսել 12-ից, իսկ ելքի օրդերներինը՝ 18-ից):

1. Հունվարի 24-ին թիվ 228412 չեկով հաշվարկային հաշվից ստացվել է 120 000 դրամ գործուղման ծախսերի և տնտեսական կարիքների համար:
2. Հունվարի 29-ին առաքիչ Տ.Սիմոնյանից ստացվել է առհաշիվ գումարի չօգտագործված մնացորդը՝ 15 000 դրամ: Առհաշիվ գումարի օգտագործման վերաբերյալ Սիմոնյանի կողմից ներկայացվել է N 46 հաշվետվությունը:
3. Փետրվարի 4-ին թիվ 228413 չեկով հաշվարկային հաշվից ստացվել է 1 200 000 դրամ՝ աշխատավարձ վճարելու համար:
4. Փետրվարի 5-ից 7-ը դրամարկղից վճարվել է աշխատավարձ ըստ N6-11 վճարային տեղեկագրերի՝ 1 100 000 դրամ:
5. NA-141 հրամանի համաձայն փետրվարի 12-ին ֆինանսական տնօրեն Կ.Պետրոսյանին գործուղման համար դրամարկղից տրվել է կանխավճար՝ 150 000 դրամ:

ԽՆԴԻՐ 10.7

Ստորև բերված տվյալների հիման վրա լրացնել դրամարկղային գիրքը և գանձապահի հաշվետվությունը 200Xթ. հունվարի 9-ից մինչև 20-ը ընկած ժամանակաշրջանի համար:

Տվյալներ. 1.Դրամարկղի մնացորդը առ 9 հունվարի 200Xթ. կազմել է 68 000 դրամ:

2.Հունվարի 9-ից մինչև 20-ը տեղի են ունեցել հետևյալ գործառնությունները.

Ամսաթիվ	Փաստաթղթի վճարի համար	Գործառնությունների բովանդակությունը	Գումարը, դրամ
9.01	10	Վճարվել է Սահակյանին առհաշիվ գումարի գերա-ծախսի դիմաց	20 000
10.01	16	Ստացվել է Պետրոսյանից առհաշիվ գումարի չօգտագործված մնացորդը	15 000
10.01	17	Ստացվել է հաշվարկային հաշվից N614420 չեկով գործուղման ծախսերի համար	150 000
10 01	11	Վճարվել է կանխավճար Կարապետյանին ծառայողական գործուղման համար	150 000
12.01	18	Աշխատողներից ստացվել է նրանց տրամադրված առողջարանի ուղեգրերի արժեքը	120 000
14 01	19	N614421 չեկով ստացվել է կանխիկ գումար հաշվարկային հաշվից՝ աշխատավարձ վճարելու համար	2 850 000
18.01	12-14	Վճարվել է աշխատավարձ անձնակազմին N4-6 վճարային տեղեկագրերով	2 720 000

18.01	20	Ստացվել է պահեստապետ Ստեփանյանից՝ պակասորդի գծով վնասի հատուցման համար	16 000
19 01	21	Ստացվել է կանխիկ գումար հաշվարկային հաշվից N614422 չեկով՝ պարզևատրում վճարելու համար	1 500 000
20.01	15-17	Վճարվել է պարզևատրում անձնակազմին N7-9 վճարային տեղեկագրերով	1 500 000
20 01	18	Կանխիկ մուծման N12461244 հայտով մուտքագրվել է հաշվարկային հաշիվ	300 000

ԽՆԴԻՐ 10.8

Ստորև բերված տվյալների հիման վրա կազմել և մշակել գանձապահի հաշվետվությունը 200Xթ. հոկտեմբերի 5-ից 10-ը ընկած ժամանակաշրջանի համար

Տվյալներ

Ամսաթիվը	Փաստաթղթի համարը	Գործառնությունների բովանդակությունը	Գումարը, դրամ
		Մնացորդը առ 5.10.200Xթ	50 000
5.01	415	Ստացվել է կանխիկ գումար հաշվարկային հաշվից N085412 չեկով՝ աշխատավարձ վճարելու համար	1 280 000
5.10	521	Վճարվել է հաշվետու անձ Իվանյանին գերաժախսի դիմաց	12 000
6.10	416	Ստացվել է հաշվետու անձ Դարբինյանից առհաշիվ գումարի չօգտագործված մնացորդը	8 000
7.10	522-523	Վճարվել է աշխատավարձ անձնակազմին N20-21 վճարային տեղեկագրերով	1 200 000
7.10	524	Վճարվել է առհաշիվ գումար ինժեներ Պողոսյանին՝ գործուղման համար	100 000
8.10	417	Ստացվել է գնորդից՝ վաճառված արտադրանքի դճ-Սաց	150 000
8.10	418	Ստացվել է պահեստապետ Սահակյանից՝ պակասորդի գծով վնասի հատուցման համար	15 000
9.10	419	Ստացվել է հասույթը չօգտագործվող նյութերի իրացումից	100 000
9.10	420	Մուտքագրվել է չօգտագործվող նյութերի վաճառքի արժեքում ներառված ԱԱՀ-ն	?
10 10	525	Վճարվել է ավանդագրված աշխատավարձը	80 000
10 10	526	Կանխիկ գումարը մուտքագրվել է հաշվարկային հաշիվ կանխիկ մուծման N0426350 հայտով	150 000

ԽՆԴԻՐ 10.9

Ստորև բերված պայմանական տվյալների հիման վրա կազմել վճարային հանձնարարագիր հաշվարկային հաշվից մատակարարին դրամական միջոցներ փոխանցելու վերաբերյալ՝ ստացված նյութերի դիմաց:

Տվյալներ. «Հայիաստոց» ՓԲԸ-ն N 65 պայմանագրի համաձայն 200Xթ հոկտեմբերի 10-ին N 4542 հաշիվ-ապրանքագրով «Երևանի ալյումինի կոմբինատ» ԲԲԸ-ից ստացել է ալյումին՝ 420 000 դրամ արժեքով: «Հայիաստոց» ՓԲԸ N 120412513512 հաշվարկային հաշիվը բացված է «Բարեգործ» բանկի կենտրոնի մասնաճյուղում (Երևան, Սպանդարյան փողոց, 14), իսկ ալյումինի կոմբինատի N 010410728121 հաշվարկային հաշիվը բացված է «Կրեդիտ» բանկի Արաբկիրի մասնաճյուղում (Երևան, Կոմիտասի պող., 21): Վճարային հանձնարարագիրը դուրս է գրվել հոկտեմբերի 11-ին:

ԽՆԴԻՐ 10.10

Պահանջվում է ձևակերպել վճարային հանձնարարագիր շահութահարկի գծով կանխավճարը բյուջե փոխանցելու վերաբերյալ:

Տվյալներ. Վճարային հանձնարարագիրը դուրս է գրվել 200Xթ փետրվարի 18-ին և համարակալվել է 24: Վճարողը՝ «Լույս» ԲԲԸ, հաշվարկային հաշիվ N 316421614312, բացված «Երևան» բանկում, իդենտիֆիկացնող համարը՝ 345614624. Ստացողը՝ Արաբկիրի հարկային տեսչություն, ընթացիկ հաշիվ N 110829644212: Վճարի տեսակը՝ շահութահարկի կանխավճար՝ 1 800 000 դրամ գումարով:

ԽՆԴԻՐ 10.11

Ստորև բերված տվյալների հիման վրա ստուգել և նշակել հաշվարկային հաշվից քաղվածքները, նշելով թղթակցող հաշիվները:

Տվյալներ. 1. Հաշվարկային հաշվով կատարվող գործառնությունների ծածկագրերը.

01	մուտքագրում (կրեդիտում) կամ ելքագրում (դեբետում) վճարային հանձնարարագրով
02	ստացում (կրեդիտում) կամ վճարում (դեբետում) կանխիկ գումարով
03	ստացում (կրեդիտում) կամ վճարում (դեբետում) հաշվարկային չեկերով
04	ակրեդիտիվի բացում (դեբետում) կամ ակրեդիտիվի չօգտագործված մնացորդների մուտքագրում (կրեդիտում)

II. Քաղվածքներ «Լույս» ԲԲԸ N316421614312 հաշվարկային հաշվից.

ա) Քաղվածք N 10 փետրվարի 1-4 200Xթ.

Մնացորդը առ 01.02. 200Xթ.			1 650 250 դրամ		
Ամսաթիվը	Փաստաթղթի համարը	Գործառնության տեսակը	Թղթակցող հաշիվը	Դեբետ	Կրեդիտ
01/02/200Xթ.	132	01	135 160 200		1 250 000
03/02/200Xթ.	432	02	220 140 238	858 000	
04/02/200Xթ.	175	01	142 840 128		420 000
Ընդամենը				?	?
Մնացորդը 05.02. 200Xթ. դրությամբ					?

բ) Քաղվածք N 11 փետրվարի 5-8 200Xթ.

Մնացորդը առ 05.02. 200Xթ.			? դրամ		
Ամսաթիվը	Փաստաթղթի համարը	Գործառնության տեսակը	Թղթակցող հաշիվը	Դեբետ	Կրեդիտ
1	2	3	4	5	6
05/02/200Xթ.	014	01	128 820 535	550 000	
07/02/200Xթ.	017	02	220 140 238		600 000
08/02/200Xթ.	215	01	142 840 128		828 550
1	2	3	4	5	6
Ընդամենը				?	?
Մնացորդը 09.02. 200Xթ. դրությամբ					?

գ) Քաղվածք N 12 փետրվարի 9-12 200Xթ.

Մնացորդը առ 09.02. 200Xթ.			? դրամ		
Ամսաթիվը	Փաստաթղթի համարը	Գործառնության տեսակը	Թղթակցող հաշիվը	Դեբետ	Կրեդիտ
09/02/200Xթ.	045	04	312 135 142	1 500 000	
10/02/200Xթ.	046	01	001 125 120	128 000	

11/02/200Xթ.	047	01	301 110 215	140 000	
Ընդամենը				?	?
Մնացորդ 13.02.200Xթ դրությամբ					?

III. Հաշվարկային հաշվի քաղվածքներին կցված փաստաթղթերի տվյալները

• քաղվածք N 10.

1. «Մետալուրգ» ԲԲԸ N 132 վճարային հանձնարարագիր, որի հիման վրա ձևակերպվել է առաքված արտադրանքի դիմաց վճարի մուտքագրումը՝ 1 250 000 դրամ,

2. N 528432 չեկ, որով բաց է թողնվել կանխիկ գումար՝ 858 000 դրամ,

3. «Ուրարտու» առևտրական կազմակերպության N 175 վճարային հանձնարարագիրը, որի հիման վրա ձևակերպվել է կանխավճարի ստացումը՝

420 000 դրամ,

• քաղվածք N 11.

1. N14 վճարային հանձնարարագիր, որի հիման վրա փոխանցվել է «Գրատուն» տպարանին 550 000 դրամ՝ տպագրական ծառայությունների դիմաց,

2. կանխիկ մուծման N 17 հայտ, որով մուտքագրվել է կանխիկ գումարի մնացորդը դրամարկղից՝ 600 000 դրամ,

3. «Ուրարտու» առևտրական կազմակերպության N 215 վճարային հանձնարարագիր, որի հիման վրա մուտքագրվել է հասույթը վաճառված արտադրանքի դիմաց՝ 828 550 դրամ,

• քաղվածք N 12.

1. N 45 վճարային հանձնարարագիր, որի հիման վրա բացվել է ակրեդիտիվ շինարարական կազմակերպության համար՝ 1 500 000 դրամ,

2. N 46 վճարային հանձնարարագիր, որի հիման վրա բյուջե է փոխանցվել ԱԱՀ-ի գումարը՝ 128 000 դրամ,

3. N 47 վճարային հանձնարարագիր, որի հիման վրա մատակարարին է փոխանցվել ձեռքբերված նյութերի արժեքը՝ 140 000 դրամ:

ԽՆԴԻՐ 10.12

Պահանջվում է կազմել դրամական միջոցների շարժի գործառնությունների ձևակերպումները՝

Տվյալներ. 200Xթ. I եռամսյակում տեղի ունեցած գործառնությունները.

Յ/հ	Գործառնությունների բովանդակությունը	Գումարը, դրամ
1	2	3
1.	Դրամարկղ է մուտքագրվել պահեստի առաքիչ Պետրոսյանից առհաշիվ գումարի չօգտագործված մնացորդը	16 000
2.	Դրամարկղից վճարվել է առհաշիվ գումար ֆինանսական տնօրեն Ա.Սիմոնյանին՝ գործուղման համար	460 000
3.	Առհաշիվ գումարի օգտագործման վերաբերյալ հաշվետվության համաձայն ֆինանսական տնօրեն Ա.Սիմոնյանի կողմից ծախսվել է գործուղման համար	452 000
4	Ֆինանսական տնօրեն Ա.Սիմոնյանի կողմից առհաշիվ տրված գումարի չօգտագործված մնացորդը վերադարձվել	?

	է դրամարկդ	
5	Դրամարկդում ստացվել է կանխիկ գումար հաշվարկային հաշվից N 085412 չեկով՝ աշխատավարձ վճարելու համար	1 500 000
6	Դրամարկդից վճարվել է աշխատավարձ անձնակազմին	1 500 000
7	Դրամարկդի գույքագրման ժամանակ հայտնաբերվել է՝	
	ա) կանխիկ դրամի ավելցուկ	8 500
	բ) կանխիկ արտարժույթի պակասորդ (10\$ x 300)	3 000
	գ) դրամական փաստաթղթերի պակասորդ	4 000
8.	Կանխիկ արտարժույթի և դրամական փաստաթղթերի պակասորդը դուրս է գրվել զանձապահի հաշվին	7 000
9.	Դրամարկդ է մուտքագրվել զանձապահից՝ պակասորդի դիմաց	7 000
10	Դրամարկդ է մուտքագրվել պահեստապետ Կ Սահակյանից նյութերի պակասորդի գծով պարտքի հատուցման համար	4 000
11	Կանխիկ գումարի մնացորդը դրամարկդից մուտքագրվել է հաշվարկային հաշիվ	250 000
12	Հաշվարկային հաշվից փոխանցվել է պարտքի դիմաց՝	
	ա) բյուջեին	35 000
	բ) սոցապ մարմիններին	18 000
13	Հաշվարկային հաշվից փոխանցվել է տուրիստական գործակալությանը հանգստյան տների ուղեգրերի համար	150 000
14.	Հաշվարկային հաշվից փոխանցվել են դատարանի կատարողական փաստաթղթերով աշխատողների աշխատավարձից պահված ալիմենտների գումարները	65 000
15	Հաշվարկային հաշվում ստացվել է՝	
	ա) վաճառված արտադրանքի դիմաց	200 000
	բ) ԱԱՀ	?
16	Հաշվարկային հաշվից փոխանցվել է ձեռք բերված նյութերի դիմաց՝	
	ա) արժեքը	140 000
1	2	3
	բ) ԱԱՀ	?
17	Հաշվարկային հաշվից փոխանցվել է բանկի կարճաժամկետ վարկի մարման գումարը	250 000
18	Դրամարկդից վճարվել է վարձատուին վարձավճարը վարչական շենքի գործառնական վարձակալության գծով	150 000
19.	Հաշվարկային հաշվում մուտքագրվել է պահեստապետից՝ նյութերի պակասորդի հատուցման դիմաց	20 000
20	Հաշվարկային հաշվից փոխանցվել է էլեկտրաէներգիայի դիմաց, որը օգտագործվել է՝	
	ա) հիմնական արտադրամասի կարիքների համար	120 000
	բ) օժանդակ արտադրամասի կարիքների համար	56 000
	գ) վարչական կարիքների համար	95 000
21	Հանգստյան տների ուղեգրերը տրամադրվել են աշխատողներին	100 000
22	Աշխատողների կողմից դրամարկդ է մուծվել հանգստյան	100 000

	տների ուղեգրերի արժեքը	
23.	Արտարժույթային հաշվում մուտքագրվել է բանկի երկարա- ժամկետ վարկը (1.000\$ x 300)	300 000
24.	Արտարժույթային հաշվից փոխանցվել է մատակարարին (200\$ x 305)	61 000
25	Հաշվարկային հաշվից բացվել է ակրեդիտիվ «Մետալուրգ» ԲԲԸ-ի հետ հաշվարկներ կատարելու համար	500 000
26.	«Մետալուրգ» ԲԲԸ-ից ստացվել են սև մետաղներ՝ ա) ձեռքբերման արժեքը բ) ԱԱՀ	320 000 ?
27.	«Մետալուրգ» ԲԲԸ-ի պարտքը վճարվել է ակրեդիտիվից	?
28.	Հաշվարկային հաշվում մուտքագրվել է «Մետալուրգ» ԲԲԸ- ի համար բացված ակրեդիտիվի չօգտագործված մնացորդը	?
29	Ձևակերպվել է դրական փոխարժեքային տարբերությունը՝ ա) դրամարկղում եղած արտարժույթի գծով բ) արտարժույթային հաշվում եղած արտարժույթի գծով	12 000 23 000

ԽՆԴԻՐ 10.13

Պահանջվում է ձևակերպել արտարժույթային հաշվի գործառնությունները, կատարել գրանցումներ սինթետիկ հաշիվներում, կազմել սինթետիկ հաշիվների շրջանառության տեղեկագիրը և հաշվեկշիռը հաշվետու եռամսյակի վերջի դրությամբ:

Տվյալներ. I. Սինթետիկ հաշիվների մնացորդները առ 30 09. 200Xթ

Հաշ. ծածկ.	Հաշիվների անվանումը	Գումարը, դրամ
1	2	3
111	Շահագործման մեջ գտնվող մաշվող հիմնական միջոցներ	13 200 000
112	Շահագործման մեջ գտնվող հիմնական միջոցների մաշվածություն	1 200 000
1	2	3
252	Հաշվարկային հաշիվ	7 900 000
253	Արտարժույթային հաշիվ	2 100 000
311	Կանոնադրական (բաժնետերերի) կապիտալ	17 000 000
343	Հաշվետու տարվա զուտ շահույթ	5 000 000

253 «Արտարժույթային հաշիվ» հաշվի մնացորդը կազմել է 7 000 \$, փակման ամսաթվի դրությամբ ԿԲ սահմանված ԱՄՆ դոլարի փոխարժեքը՝ 300 դրամ:

II. Հաշվետու եռամսյակի ընթացքում տեղի ունեցած տնտեսական գործառնությունները.

Գործ. N	Գործառնությունների բովանդակությունը	Գումարը, դրամ
1.	Արտարժույթային հաշվում մուտքագրվել է բաժնետերերից՝ տեղաբաշխված սովորական բաժնետոմսերի դիմաց (1 000	?

	\$ x 302)	
2.	Արտարժութային հաշվում ստացվել է գնորդից (500 \$ x 305)	?
3.	Կանխիկ մուծման հայտով կանխիկ արտարժույթը դրամարկղից մուտքագրվել է արտարժութային հաշիվ (300\$ x 304)	?
4.	Արտարժութային հաշվում ստացվել է պատվիրատուից (800\$ x 304)	?
5.	Արտարժութային հաշվից փոխանցվել է մատակարարին (400 \$ x 303)	?
6.	Արտարժութային հաշվից մարվել է ներգրավված երկարաժամկետ փոխառությունը (500\$ x 304)	?
7.	Ձևակերպվել է արտարժութային հաշվում առաջացած փոխարժեքային տարբերությունը (եռամսյակի վերջին օրվա ՀՀ ԿԲ սահմանված փոխարժեքը 305 դրամ է)	?

ՍՏՈՒԳՈՂԱԿԱՆ ԱՌԱՋԱԴՐԱՆՔՆԵՐ, ՀԱՐՑԵՐ ԵՎ ՏԵՍՏԵՐ

Ստուգողական առաջադրանքներ

Առաջադրանք 1

Վաճառքների գծով դեբիտորական պարտքերի մնացորդը 200Xթ. դեկտեմբերի 31-ի դրությամբ կազմել է

«Ա» գնորդինը 240 000 դրամ (առաջացել է նախորդ տարվա դեկտեմբերի 10-ին, վճարման ժամկետը 30 օր է),

«Բ» գնորդինը 120 000 դրամ (առաջացել է նախորդ տարվա հունիսի 14-ին, վճարման ժամկետը 30 օր է)

Հունվարի 20-ին «Ա» գնորդին ապառիկ վաճառվել է 150 000 դրամի արտադրանք, որի դիմաց վճարումը պետք է կատարվեր 10 օրվա ընթացքում Սեպտեմբերի 1-ին կատարվել է այդ արտադրանքի գծով մասնակի վճարում 100 000 դրամ.

Մարտի 15-ին «Բ» գնորդին վաճառվել է 350 000 դրամի արտադրանք 30 օրվա ժամկետում վճարելու պայմանով: «Բ» գնորդի կողմից հունիսի 12-ին կատարվել է նախորդ տարվա պարտքի լրիվ մարում:

Պահանջվում է որոշել դեբիտորական պարտքերի հնարավոր կորուստների պահուստի մեծությունը նախորդ և հաշվետու տարվա վերջի դրությամբ և դրա փոփոխությունները, կազմել համապատասխան հաշվապահական ձևակերպումները և որոշել դեբիտորական պարտքերի հաշվեկշռային արժեքը հաշվետու տարվա վերջի դրությամբ:

Առաջադրանք 2

Վաճառքների գծով դեբիտորական պարտքերի մնացորդը 2007թ. վերջի դրությամբ կազմել է «Ա» գնորդի պարտքը 120 000 դրամ (առաջացել է 2007թ հոկտեմբերի 15-ին, մարման ժամկետը 30 օր է), «Բ» գնորդի պարտքը 100 000 դրամ (առաջացել է 2007թ. հունվարի 10-ին, մարման ժամկետը սահմանված չէ).

Որոշել դեբիտորական պարտքերի հնարավոր կորուստների պահուստի մեծությունը, կազմել համապատասխան ձևակերպումները և որոշել վաճառքների գծով

դեբիտորական պարտքերի հաշվեկշռային արժեքը հաշվետու տարվա վերջի դրությամբ

Առաջադրանք 3

2007թ վերջի դրությամբ «Ա» գնորդի պարտքը կազմել է 320 000 դրամ (կետանցվել է 85 օրով), «Բ» գնորդինը՝ 180 200 դրամ (կետանցվել է 185 օրով), իսկ «Գ» գնորդինը՝ 100 000 դրամ (կետանցվել է 420 օրով): 223 «Վաճառքների և այլ եկամուտների գծով դեբիտորական պարտքերի հնարավոր կորուստների պահուստ» հաշվի մնացորդը նախորդ տարվա վերջի դրությամբ կազմել է 120 000 դրամ:

Որոշել դեբիտորական պարտքերի հնարավոր կորուստների պահուստի մեծությունը, ձևակերպել դրա փոփոխությունը և որոշել վաճառքների գծով դեբիտորական պարտքերի հաշվեկշռային արժեքը հաշվետու տարվա վերջի դրությամբ

Ստուգողական հարցեր

- 23. Ո՞րն է դեբիտորական պարտքը:
- 24. Ո՞ր դեպքում է առաջանում դեբիտորական պարտքը
- 25. Որո՞նք են դեբիտորական պարտքերի ճանաչման չափանիշները.
- 26. Ինչպիսի՞ն է դեբիտորական պարտքերի դուրս գրման կարգը.
- 27. Ո՞ր դեպքում է դեբիտորական պարտքը համարվում կետանցված:
- 28. Ո՞ր դեպքում է դեբիտորական պարտքը համարվում անհուսալի:
- 29. Ինչպե՞ս է ձևավորվում դեբիտորական պարտքերի հնարավոր կորուստների պահուստը:
- 30. Ինչպե՞ս է ձևակերպվում դեբիտորական պարտքերի հնարավոր կորուստների պահուստի ստեղծումը և հակադարձումը:
- 31. Ո՞ր է ծառայողական գործուղումը:
- 32. Ի՞նչ ծախսեր են փոխհատուցում ծառայողական գործուղման դեպքում
- 33. Ո՞ր փաստաթղթերով է ձևակերպվում առհաշիվ տրված գումարների օգտագործումը:
- 34. Ինչ փաստաթղթերով են ձևակերպվում դրամարկղային գործառնությունները
- 35. Ինչպե՞ս է լրացվում դրամարկղային գիրքը
- 36. Ինչ է գանձապահի հաշվետվությունը և ինչպե՞ս է այն մշակվում:
- 37. Ինչ է բանկային հաշվի քաղվածքը և ինչպե՞ս է այն մշակվում.
- 38. Ինչպե՞ս են հաշվառում արտարժույթային հաշվում առաջացած փոխարժեքային տարբերությունները:
- 39. Ինչ է ակրեդիտիվը և ինչպե՞ս են հաշվառում ակրեդիտիվով իրականացվող հաշվարկները:
- 40. Ինչ է չեկային գրքույթը և ինչպե՞ս են հաշվառում դրանով իրականացվող հաշվարկները.

Տ ե ս տ ե ր

Տնտեսական գործառնությունների ձևակերպումների ներկայացված տարբերակներից ընտրել ճիշտ պատասխանը.

Ձ/հ	Գործառնությունների բովանդակությունը	Պատասխան		
		Տարբերակ	Դտ	Կտ
1	2	3	4	5
1.	Գույքագրման ժամանակ հայտնաբերվել է կան-	Ա	251	714

	խիկ դրամի պակասորդ դրամարկղում	Բ Գ	714 251	251 614
2.	Դրամարկղում ստացվել է կանխիկ դրամ հաշվարկային հաշվից՝ աշխատավարձ վճարելու համար	Ա Բ Գ	251 252 251	253 251 252
3.	Դրամարկղ է մուտքագրվել հաշվետու անձից առհաշիվ գումարի չօգտագործված մնացորդը	Ա Բ Գ	528 251 251	251 228 528
4.	Դրամարկղից վճարվել է հաշվետու անձին՝ գործուղման համար	Ա Բ Գ	528 229 228	251 251 251
5.	Հաշվետվության համաձայն ձևակերպվում է առհաշիվ գումարի օգտագործումը գործուղման համար	Ա Բ Գ	228 713 228	251 228 713
6.	Դրամարկղից վճարվել է աշխատավարձ անձնակազմին	Ա Բ Գ	527 251 713	251 527 527
7.	Դրամարկղի գույքագրման ժամանակ հայտնաբերվել է արտարժույթի ավելցուկ՝	Ա Բ Գ	614 253 251	251 614 614
8.	Դրամարկղի գույքագրման ժամանակ հայտնաբերված պակասորդը դուրս է գրվել գանձապահի հաշվին	Ա Բ Գ	222 527 614	614 614 222
9.	Դրամարկղ է մուտքագրվել գանձապահից՝ պակասորդի դիմաց	Ա Բ Գ	222 251 251	251 222 527
10.	Հաշվարկային հաշվից փոխանցվել է բյուջե՝ պարտքի դիմաց	Ա Բ Գ	524 521 524	251 252 252
11.	Հաշվարկային հաշվից փոխանցվել է ապառիկ	Ա	211	252
1	2	3	4	5
	ծեռք բերված նյութերի արժեքը	Բ Գ	521 531	252 252
12.	Հաշվարկային հաշվում ստացվել է գնորդից՝ ապառիկ վաճառված արտադրանքի դիմաց	Ա Բ Գ	221 252 252	252 221 222
13.	Հաշվարկային հաշվից մարվել է բանկի կարճաժամկետ վարկը	Ա Բ Գ	512 252 511	252 511 252
14.	Դրամարկղից վճարվել է վարձատուին վարձավճարը վարչական շենքի գործառնական վարձակալության գծով	Ա Բ Գ	713 713 713	531 251 224
15.	Հաշվարկային հաշվից փոխանցվել է էլեկտրաէներգիայի արժեքը, որը օգտագործվել է հիմնական արտադրամասի կարիքների համար	Ա Բ Գ	713 521 813	252 252 252
16.	Հաշվարկային հաշվից բացվել է ակրեդիտիվ մատակարարի հետ հաշվարկներ կատարելու	Ա Բ	254 252	252 251

	համար	Գ	252	254
17.	Մատակարարի պարտքը վճարվել է ակրեդիտի- վից	Ա Բ Գ	531 521 521	254 252 254
18.	Հաշվարկային հաշվում մուտքագրվել է ակրեդի- տիվի չօգտագործված մնացորդը	Ա Բ Գ	252 254 521	254 252 252
19.	Ձևակերպվել է արտարժութային հաշվում առա- ջացած դրական փոխարժեքային տարբերու- թյունը	Ա Բ Գ	253 625 253	725 253 625
20.	Ձևակերպվել է արտարժութային հաշվում առա- ջացած բացասական փոխարժեքային տարբե- րությունը	Ա Բ Գ	253 725 253	725 253 625
21.	Գնորդին վաճառվել է կազմակերպությանը պատ- կանող ավտոմեքենան բաց թողնման գներով	Ա Բ Գ	251 221 221	614 621 721
22.	Հաշվարկային հաշվում ստացվել է գնորդից՝ վա- ճառված արտադրանքի արժեքը	Ա Բ Գ	252 251 252	221 221 614
23.	Գնորդի կողմից հետ է վերադարձվել դեռևս չվճարված արտադրանքը բաց թողնման գներով	Ա Բ Գ	612 611 612	252 221 221
24.	Ձևակերպվել է արտադրանքի հետ վերադարձու- մից և գների իջեցումից հասույթի ճշգրտումը	Ա Բ Գ	612 611 611	221 612 221
25.	Կատարվել են մասհանումներ դեբիտորական պարտքերի հնարավոր կորուստների պահուս- տին	Ա Բ Գ	714 223 223	223 714 614
26.	Ձևակերպվում է դեբիտորական պարտքերի կորուստների պահուստի հակադարձումը	Ա Բ	714 614	223 223
1	2	3	4	5
		Գ	223	614
27.	Վաճառքի գծով անհուսալի դեբիտորական պարտքը դուրս է գրվել պահուստի հաշվին	Ա Բ Գ	223 221 714	221 223 221
28.	Գույքագրման ժամանակ հայտնաբերված նյու- թերի պակասորդը դուրս է գրվել պահեստի պա- տասխանատու աշխատողի հաշվին	Ա Բ Գ	222 222 614	614 714 222
29.	Պահեստապետի աշխատավարձից պահվել է պակասորդի փոխհատուցման համար	Ա Բ Գ	222 222 527	614 527 222
30.	Մատակարարից նյութերի ստացման ժամանակ հայտնաբերվել է պակասորդ, որի գումարով մատակարարին ներկայացվել է բողոքարկում	Ա Բ Գ	229 211 521	521 521 222
31.	Արտացոլվում են բաժնեմասնակցության մեթո- դով հաշվառվող ներդրումների գծով հայտարար- ված շահաբաժինները	Ա Բ Գ	229 141 222	141 627 627

32.	Աշխատողի կողմից ապառիկ գնված ապրանքի համար առևտրական կազմակերպության պարտքը վճարվել է բանկի կարճաժամկետ վարկի հաշվին	Ա	222	511
		Բ	229	511
		Գ	511	229
33.	Աշխատողի աշխատավարձից պահվել է ապառիկ գնված ապրանքի համար	Ա	527	511
		Բ	229	527
		Գ	527	229
34	Աշխատողի կողմից դրամարկղ է մուծվել ապառիկ գնված ապրանքի գծով պարտքը մարելու համար	Ա	251	511
		Բ	251	229
		Գ	527	229

ԳԼՈՒԽ 11

ԵԿԱՄՈՒՏՆԵՐԻ ԵՎ ԾԱԽՍԵՐԻ ՀԱՇՎԱՌՈՒՄ: ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ԱՐԴՅՈՒՆՔԻ ԲԱՑԱՀԱՅՏՈՒՄ

ԽՆԴԻՐ 11.1

Ստորև բերված տվյալների հիման վրա ձևակերպել հիմնական միջոցների վաճառքի գործառնությունների հետ կապված ծախսերը և եկամուտները՝ Որոշել և ձևակերպել հիմնական միջոցների վաճառքից ստացված ֆինանսական արդյունքը:

Տվյալներ. «Արև» ՍՊԸ-ն վաճառել է սարքավորումներ, որոնց վերագնահատված արժեքը վաճառքի պահի դրությամբ կազմել է 2 450 000 դրամ, իսկ կուտակված մաշվածությունը 1 220 000 դրամ: Սարքավորումները վաճառվել են 1 540 000 դրամով, այդ թվում ԱԱՀ 20% Սարքավորումների ապատեղակայման և տեղափոխման համար կատարվել են հետևյալ ծախսումները

ա) հաշվարկվել է աշխատավարձ բանվորներին 130 000 դրամ,

բ) կատարվել են հատկացումներ սոցիալական ապահովագրության համար 20 000 դրամ,

գ) տրանսպարտային արտադրամասի կողմից կատարվել են սարքավորումների տեղափոխման ծառայությունները 20 000 դրամ:

Գնորդի կողմից վճարումը կատարվելու է 1 ամսվա ընթացքում:

ԽՆԴԻՐ 11.2

Ստորև բերված տվյալների հիման վրա ձևակերպել հիմնական միջոցների լուծարման գործառնությունների հետ կապված ծախսերը և եկամուտները և որոշել լուծարման ֆինանսական արդյունքը.

Տվյալներ. Կազմակերպությունը լուծարել է հոսքային գիծը, որը այլևս պիտանի չէ հետագա օգտագործման համար. Հոսքային գծի սկզբնական արժեքը 4 900 000 դրամ է, իսկ կուտակված մաշվածությունը 4 750 000 դրամ. Հոսքային գծի ապատեղակայման համար հաշվարկվել է աշխատավարձ բանվորներին 108 000 դրամ, կատարվել են հատկացումներ սոցիալական ապահովագրության համար

15 000 դրամ: Լուծարքից ստացվել են պահեստամասեր 60 000 դրամ, և սև մետաղի ջարդոն 40 000 դրամ արժեքով.

ԽՆԴԻՐ 11.3

Ստորև բերված տվյալների հիման վրա որոշել ներդրումային գույքի կուտակված մաշվածությունը վաճառքի պահի դրությամբ և ձևակերպել վաճառքի հետ կապված գործառնությունները.

Տվյալներ Կազմակերպությունը 200Xթ. հունվարին ձեռք է բերել ավտոտնակի շինություն գործառնական վարձակալության տալու նպատակով. Այդ շինությունը ձեռք բերելու համար հաշվարկային հաշվից վճարվել է 30 000 000 դրամ, ներառյալ ԱԱՀ: Շինության հետագա չափումը իրականացվել է սկզբնական արժեքի մոդելով: Մաշվածությունը հաշվարկվել է գծային մեթոդով, օգտակար ծառայությունը սահմանվել է 10 տարի: 4 տարի անց կազմակերպությունը որոշել է վաճառել ավտոտնակի շինությունը: Շենքը վաճառվել է 25 000 000 դրամով, ներառյալ ԱԱՀ: Շենքի վաճառքի համար հաշվարկային հաշվից վճարվել են միջնորդավճարներ 250 000 դրամ:

ԽՆԴԻՐ 11.4

Պահանջվում է ձևակերպել ներդրումային գույքի իրական արժեքով վերաչափման և վաճառքի հետ կապված գործառնությունները և որոշել վաճառքի ֆինանսական հետևանքը:

Տվյալներ. Կազմակերպությունում կիրառվում է ներդրումային գույքի հետագա չափման իրական արժեքի մոդելը: 2007թ. դեկտեմբերի վերջի դրությամբ ներդրումային գույքի հաշվեկշռային արժեքը 50 000 000 դրամ է, շուկայական գինը՝ 52 500 000 դրամ, իսկ 2008թ. վերջում շուկայական գինը կազմել է 48 500 000 դրամ: 2009թ. սկզբում գույքը վաճառվել է 50 000 000 դրամով, ներառյալ ԱԱՀ: Վաճառքից գումարը ստացվելու է մեկ ամսվա ընթացքում:

ԽՆԴԻՐ 11.5

Ստորև բերված տվյալների հիման վրա պահանջվում է ձևակերպել իրական արժեքով չափվող ֆինանսական ակտիվների իրացման գործառնությունները և չիրացված շահույթի վերագրումը հաշվետու ժամանակաշրջանի եկամուտներին:

Տվյալներ. Կազմակերպությունը իրացրել է վաճառքի համար մատչելի երկարաժամկետ ֆինանսական ակտիվները, որոնց իրական արժեքը վաճառքի պահին 800 000 դրամ է, արժեզրկումից կուտակված կորուստները՝ 40 000 դրամ: Հաշվարկային հաշվից վճարվել է միջնորդավճար ակտիվների վաճառքի համար՝ 30 000 դրամ: Վաճառքից եկամուտը կազմել է 820 000 դրամ: Իրական արժեքով վերաչափումից սեփական կապիտալում հաշվառված աճը կազմել է 20 000 դրամ:

ԽՆԴԻՐ 11.6

Կազմել ֆինանսական ակտիվների վաճառքի հետ կապված գործառնությունների ձևակերպումները.

Տվյալներ. Կազմակերպությունը վաճառել է դուստր ընկերության բաժնետոմսերը, որոնք ձեռք էր բերել 1 տարի առաջ և պահում էր վաճառքի նպատակով: Այդ բաժնետոմսերի սկզբնական արժեքը ձեռք բերման պահին կազմել է 2 000 000 դրամ, տարվա համար հաշվեգրված շահաբաժինները կազմել են

300 000 դրամ: Բաժնետոմսերը վաճառվել են 2 200 000 դրամով, Գնորդից ստացված վճարը մուտքագրվել է հաշվարկային հաշիվ: Հաշվետու անձի կողմից վճարվել են միջնորդավճարները բաժնետոմսերի վաճառքի համար՝ 50 000 դրամ

ԽՆԴԻՐ 11.7

Ստորև բերված տվյալների հիման վրա որոշել և ձևակերպել իրացված արտադրանքի ինքնարժեքը, արտադրանքի վաճառքից ճանաչված հասույթը, հասույթի ճշգրտումը կապված իրացված արտադրանքի վերադարձման հետ, իրացված և վերադարձված արտադրանքին վերաբերող ԱԱՀ գումարները, արտադրանքի վաճառքի ֆինանսական արդյունքը.

Տվյալներ. Կազմակերպությունը հաշվետու եռամսյակում առաքել է գնորդին 350 միավոր արտադրանք: Արտադրանքի միավորի ինքնարժեքը կազմել է 2000 դրամ, իսկ բացթողման գինը (առանց ԱԱՀ)՝ 3000 դրամ. Տարբեր հիմնավորված պատճառներով գնորդը հետ է վերադարձրել 50 միավոր արտադրանքը:

ԽՆԴԻՐ 11.8

Ստորև բերված տվյալների հիման վրա որոշել վաճառված ապրանքների ինքնարժեքը և ձևակերպել ապրանքների ձեռք բերման ու վաճառքի գործառնությունները մանրածախ առևտրում. Որոշել ու ձևակերպել վաճառքի ֆինանսական արդյունքը:

Տվյալներ. Մանրածախ մթերային խանութը ձեռք է բերել 50 կգ քաշով 400 պարկ չաքարավազ վաճառքի նպատակով: Շաքարավազի 1 կգ գնման գինը 150 դրամ է, գումարած 20% ԱԱՀ, իսկ վաճառքի գինը սահմանվել է 240 դրամ, ներառյալ ԱԱՀ և առևտրական հավելագինը: Հաշվետու ժամանակաշրջանում վաճառվել է 150000 կգ չաքարավազ, հասույթը մուտքագրվել է դրամարկղ: Վաճառքի իրականացման համար կատարվել են հետևյալ ծախսերը. փաթեթավորման նյութեր 10 000 դրամ, աշխատավարձ վաճառողներին 80 000 դրամ, սոցիալական ապահովագրության հատկացումներ 20 000 դրամ.

ԽՆԴԻՐ 11.9

Ստորև բերված տվյալների հիման վրա որոշել վաճառված ապրանքների ինքնարժեքը, կատարել հաշվետու ժամանակաշրջանում իրացված ապրանքների և չիրացված ապրանքների մնացորդի միջև առևտրական հավելագնի բաշխման հաշվարկը, ձևակերպել ապրանքների ձեռք բերման և վաճառքի գործառնությունները մանրածախ առևտրում: Որոշել ու ձևակերպել վաճառքի ֆինանսական արդյունքը:

Տվյալներ. Շինանյութերի մանրածախ առևտրի խանութում չվաճառված ցեմենտի մնացորդը 200Xթ. հունվարի մեկի դրությամբ կազմել է 20 տ, 1 տ վաճառքի գինը՝ 48 000 դրամ, այդ թվում առևտրական հավելագինը 4 000 դրամ, ԱԱՀ 8 000 դրամ: Հունվար ամսում ցեմենտի գործարանից ստացվել է 100 տ, իսկ փետրվարին 40 տ ցեմենտ: 1 տ ձեռք բերման գինը 35 000 դրամ է, գումարած 20% ԱԱՀ: Հաշվետու եռամսյակում ձեռք բերված ցեմենտը վաճառվել է նույն գնով՝

48 000 դրամով: Եռամսյակի ընթացքում վաճառվել է 150 տ ցեմենտ: Վաճառքից հասույթը մուտքագրվել է խանութի դրամարկղ:

ԽՆԴԻՐ 11.10

Ստորև բերված տվյալների հիման վրա ձևակերպել արտասովոր դեպքի հետ կապված գործառնությունները և որոշել արտասովոր դեպքից առաջացած ֆինանսական արդյունքը.

Տվյալներ. Ջրիեղեղի պատճառով վնասվել է նյութերի պահեստի շենքը, և դրանում պահվող նյութերը փչացել են: Շենքի սկզբնական արժեքը 12 000 000 դրամ է, կուտակված մաշվածությունը՝ 8 000 000 դրամ: Փչացած նյութերի արժեքը

1 000 000 դրամ է: Ապահովագրական ընկերությունների կողմից փոխհատուցվել է շենքի կորուստի 80%-ը և նյութերի կորուստի 90%-ը:

ԽՆԴԻՐ 11.11

Ստորև բերված տվյալների հիման վրա ձևակերպել արտադրանքի իրացման գործառնությունները և որոշել գործառնական գործունեության ֆինանսական արդյունքը.

Հ/հ	Գործառնությունների բովանդակությունը	Գումարը, դրամ
1	2	3
1.	Պատրաստի արտադրանքի պահեստից գնորդին է առաքվել արտադրանք. ա) բացթողման գներով բ) ԱԱՀ Ընդամենը	25 000 000 ? ?
1	2	3
2.	Դուրս է գրվել գնորդին առաքված արտադրանքի ինքնարժեքը	20 000 000
3	Պահեստ է մուտքագրվել գնորդի կողմից վերադարձված արտադրանքը՝ ինքնարժեքով	200 000
4.	Արտաքուլվել է գնորդի կողմից վերադարձված արտադրանքի ա) արժեքը՝ բացթողման գներով բ) ԱԱՀ Ընդամենը արժեքը վաճառքի գներով	250 000 ? ?
5.	Հաշվարկային հաշվում ստացվել է գնորդից՝ պարտքի դիմաց	8 500 000
6.	Հաշվարկվել է պատրաստի արտադրանքի պահեստի շենքի, սառնարանային սարքավորումների և գույքի մաշվածությունը	60 200
7.	Պահեստում արտադրանքի փաթեթավորման համար. ա) ծախսվել են նյութեր բ) հաշվարկվել է աշխատավարձ բանվորներին գ) կատարվել են հատկացումներ պարտադիր սոցիալական ապահովագրության համար	80 000 100 000 14 000
8.	Ստացվել է տրանսպորտային կազմակերպության հաշիվը իրացվող արտադրանքի տեղափոխման համար	85 000
9.	Կատարվել են վարչական նշանակության ծախսեր ա) հաշվարկվել է հիմնական միջոցների մաշվածությունը բ) հաշվարկվել է աշխատավարձ վարչական աշխատողներին գ) կատարվել են հատկացումներ պարտադիր սոցիալական	55 000 250 000 30 000

	ապահովագրության համար դ) ծախսվել են նյութեր շենքերի սպասարկման համար	50 000
10.	Հաշվարկվել է մաշվածություն գործառնական վարձակալության հանձնված հիմնական միջոցների համար	20 000
11	Հաշվեգրվել են դեբիտորներից ստացման ենթակա տույժերը	120 000
12	Հաշվեգրվել է գործառնական վարձակալության գծով ստացվելիք վարձավճարը	250 000
13.	Անհուսալի ճանաչված դեբիտորական պարտքը դուրս է գրվել հաշվետու ժամանակաշրջանի ծախսերի հաշվին	240 000
14.	Վաճառվել են պահեստում մնացած չօգտագործվող նյութերը՝ դուրս է գրվել վաճառված նյութերի ինքնարժեքը	250 000
15.	ճանաչվել է նյութերի վաճառքից ստացված եկամուտը. ա) բացթողման գներով բ) ԱԱՀ	300 000 ?
16.	Հաշվետու ժամանակաշրջանի ծախսերը դուրս են գրվել ֆինանսական արդյունքին՝ ա) իրացված արտադրանքի ինքնարժեքը բ) իրացման ծախսերը գ) վարչական ծախսերը դ) գործառնական այլ ծախսերը	? ? ? ?
17.	ձևակերպվել է հաշվետու ժամանակաշրջանում գնորդների կողմից արտադրանքի վերադարձումից հասույթի ճշգրտումը	?
18.	Հաշվետու ժամանակաշրջանի եկամուտները դուրս են գրվել	
1	2	3
	ֆինանսական արդյունքին. ա) արտադրանքի իրացումից հասույթը բ) գործառնական այլ եկամուտները	? ?
19.	Որոշել և ձևակերպել գործառնական գործունեությունից շահույթը կամ վնասը	?

ԽՆԴԻՐ 11.12

Ստորև բերված տվյալների հիման վրա ձևակերպել գործառնությունները և որոշել ոչ գործառնական գործունեության ֆինանսական արդյունքը:

Յ/հ	Գործառնությունների բովանդակությունը	Գումարը, դրամ
1	2	3
1.	Վաճառվել են հիմնական միջոցներ. ա) սկզբնական արժեքը բ) կուտակված մաշվածությունը	8 500 000 2 500 000
2.	ճանաչվել է եկամուտը հիմնական միջոցների վաճառքից ա) բացթողման գներով բ) ԱԱՀ	6 800 000 ?
3.	Հաշվեգրվել է հաշվետու ժամանակաշրջանի եկամուտը վաճառքի համար մատչելի երկարաժամկետ արժեթղթերի գծով	150 000
4.	Արտացուցվել է կապակցված կողմերի շահույթի բաժնետնասը բաժնետնասնակցության մեթոդով հաշվառվող ֆինանսական	850 000

	ներդրումների գծով	
5.	Երկարաժամկետ փոխառություններին վերաբերող չվաստակած ֆինանսական եկամուտը հաշվեգրվել է ընթացիկ ժամանակաշրջանի եկամուտներին	125 000
6.	Վաճառքի համար մատչելի ոչ ընթացիկ ֆինանսական ակտիվների իրական արժեքով վերաչափումից արժեքի աճը վերագրվել է հաշվետու ժամանակաշրջանի եկամուտներին	60 000
7.	Վաճառվել են 6 ամիս մարման ժամկետ ունեցող պետական պարտատոմսերը՝ Դուրս է գրվել դրանց. ա) հաշվեկշռային արժեքը բ) չվաստակած ֆինանսական եկամտի մնացորդը	150 000 20 000
8.	ճանաչվել է եկամուտը կարճաժամկետ պարտատոմսերի վաճառքից	160 000
9.	Արտադրանքի պատրաստման տեխնոլոգիայի իրավունքը վաճառվել է այլ կազմակերպությանը ա) սկզբնական արժեքը բ) կուտակված ամորտիզացիան գ) հաշվեկշռային արժեքը	2 550 000 1 000 000 ?
10.	ճանաչվել է եկամուտը տեխնոլոգիայի վաճառքից ա) բացթողման գներով բ) ԱԱՀ Ընդամենը վաճառքի գներով	2 000 000 ? ?
11.	Ոչ նյութական ակտիվները հանձնվել են այլ	
1	2	3
	կազմակերպությանը որպես ներդրում կանոնադրական կապիտալում համաձայնեցված արժեքով	800 000
12.	Դուրս են գրվել հաշվեկշռից այլ կազմակերպությանը որպես ներդրում կանոնադրական կապիտալում տրամադրված ոչ նյութական ակտիվները ա) սկզբնական արժեքը բ) կուտակված ամորտիզացիան գ) հաշվեկշռային արժեքը	1 000 000 100 000 ?
13.	Ձևակերպվել է որպես ներդրումային գույք հաշվառվող շենքի իրական արժեքով վերաչափումից արժեքի նվազումը	220 000
14.	Ձևակերպվել է որպես ներդրումային գույք հաշվառվող հողամասի իրական արժեքով վերաչափումից արժեքի աճը	150 000
15.	Ֆինանսական վարձակալության գծով չկրած տոկոսային ծախսերը հաշվեգրվել են ժամանակաշրջանի ծախսերին	125 000
16.	Ձևակերպվել է դրական փոխարժեքային տարբերությունը արտարժույթային հաշվում պահվող արտարժույթի գծով	12 000
17.	Հաշվետու ժամանակաշրջանի ծախսերը դուրս են գրվել ֆինանսական արդյունքին	?
18.	Հաշվետու ժամանակաշրջանի եկամուտները դուրս են գրվել ֆինանսական արդյունքին	?
19.	Որոշել և ձևակերպել ոչ գործառնական գործունեությունից շահույթը կամ վնասը	?

ԽՆԴԻՐ 11.13

11.11 և 11.12 խնդիրների տվյալների հիման վրա կազմել ֆինանսական արդյունքի մասին հաշվետվությունը: Շահութահարկի գծով ծախսը որոշելիս հաշվի առնել, որ հաշվապահական շահույթը համընկնում է հարկային շահույթի հետ:

ԱՏՈՒԳՈՂԱԿԱՆ ԱՌԱՋԱԴՐԱՆՔՆԵՐ, ՀԱՐՑԵՐ ԵՎ ՏԵՍՏԵՐ

Ատուգողական առաջադրանքներ

Առաջադրանք 1

Կազմակերպությունը իր ներդրումային գույքի կազմում հաշվառում է շինություն, որի սկզբնական արժեքը 4 000 000 դրամ է, մնացորդային արժեքը՝

200 000 դրամ, իսկ օգտակար ծառայությունը 10 տարի. Կազմակերպությունը 5 տարի անց որոշել է վաճառել շենքը: Շենքը վաճառվել է 3 600 000 դրամով, ներառյալ ԱԱՀ: Հաշվարկային հաշվից փոխանցվել են միջնորդավճարները շենքի վաճառքի համար 120 000 դրամ: Գնորդից վճարը ստացվել է հաշվարկային հաշվում: Որոշել ներդրումային գույքի կուտակված մաշվածությունը վաճառքի պահի դրությամբ և ձևակերպել գույքի վաճառքի գործառնությունները Որոշել և ձևակերպել վաճառքի ֆինանսական հետևանքը.

Առաջադրանք 2

200Xթ. կազմակերպությունը ձեռք է բերել ֆոնդային բորսայում գնանշվող պարտատոմսեր, վճարելով հաշվարկային հաշվից 1 000 000 դրամ 200Xթ. վերջի դրությամբ այդ պարտատոմսերի իրական արժեքը կազմել է 1 250 000 դրամ, հաջորդ տարվա մարտի վերջին 1 280 000 դրամ, իսկ հունիսին պարտատոմսերը վաճառվել են 1 500 000 դրամով: Կազմել ֆինանսական ակտիվների իրական արժեքով վերաչափման և վաճառքի հետ կապված գործառնությունների հաշվապահական ձևակերպումները: Որոշել պարտատոմսերի վաճառքի ֆինանսական արդյունքը:

Առաջադրանք 3

Վաճառվել է համակարգիչ՝ 420 000 դրամով: Համակարգչի սկզբնական արժեքը 500 000 դրամ է, վաճառքի պահին կուտակված մաշվածությունը՝ 225 000 դրամ: Վաճառքից գումարը ստացվելու է առաջիկա ամսվա ընթացքում: Հաշվետու անձի կողմից վճարվել է միջնորդավճար համակարգչի վաճառքի համար՝ 10 000 դրամ: Ձևակերպել համակարգչի վաճառքի հետ կապված գործառնությունները և որոշել վաճառքի ֆինանսական հետևանքը.

Առաջադրանք 4

Կազմակերպությունը հաշվետու ժամանակաշրջանում առաքել է գնորդին 100 միավոր արտադրանք: Արտադրանքի միավորի ինքնարժեքը կազմել է 3500 դրամ, իսկ բացթողման գինը (առանց ԱԱՀ)՝ 4000 դրամ: Վաճառքի իրականացման համար ծախսվել են փաթեթավորման նյութեր 40 000 դրամ, հաշվարկվել է աշխատավարձ 150 000 դրամ, կատարվել են սոցիալական ապահովագրության հատկացումներ 30000 դրամ: Տրանսպորտային կազմակերպության կողմից կատարվել են արտադրանքի փոխադրման ծառայությունները, որոնց համար հաշվարկային հաշվից վճարվել է 50 000 դրամ: Որոշել և ձևակերպել ֆինանսական արդյունքը արտադրանքի վաճառքից:

Առաջադրանք 5

Կազմակերպությունը վաճառել է պահեստում մնացած չօգտագործվող նյութերը 360 000 դրամով, ներառյալ ԱԱՀ: Գնորդից վճարը մուտքագրվել է հաշվարկային հաշիվ նյութերը առաքելուց 15 օր անց: Վաճառված նյութերի ինքնարժեքը կազմել է 250

000 դրամ: Հաշվետու անձի կողմից վճարվել են նյութերի տեղափոխման ծախսերը 15 000 դրամ: Կազմել նյութերի վաճառքի գործառնությունների ձևակերպումները: Որոշել նյութերի վաճառքի ֆինանսական արդյունքը:

Առաջադրանք 6

Լուծարվել է պահեստի շենքը, որի սկզբնական արժեքը 4 500 000 դրամ է, իսկ կուտակված մաշվածությունը՝ 4 200 000 դրամ: Շենքը քանդելու համար հաշվարկվել է աշխատավարձ բանվորներին՝ 120 000 դրամ, կատարվել են հատկացումներ սոցալի համար՝ 30 000 դրամ, օգտագործվել են արագամաշ գործիքներ՝ 20 000 դրամ: Շենքի լուծարքից ստացված պիտանի շինանյութերը գնահատվել են 100 000 դրամ և հանձնվել են պահեստ: Ձևակերպել շենքի լուծարքի հետ կապված գործառնությունները և որոշել լուծարքի ֆինանսական հետևանքը:

Առաջադրանք 7

Կազմակերպությունը հաշվետու ժամանակաշրջանում առաքել է արտադրանք գնորդներին՝ 18 500 000 դրամ ինքնարժեքով: Արտադրանքի արժեքը բացթողման գներով (առանց ԱԱՀ) կազմել է 25 000 000 դրամ: Վաճառքի իրականացման համար ծախսվել են փաթեթավորման նյութեր 150 000 դրամ, հաշվարկվել է աշխատավարձ 600 000 դրամ, կատարվել են սոցիալական ապահովագրության հատկացումներ 90 000 դրամ: Հաշվարկային հաշվից վճարվել է արտադրանքի փոխադրման համար 500 000 դրամ: Վարչական նպատակներով կատարվել են հետևյալ ծախսերը. հաշվարկվել է աշխատավարձ անձնակազմին՝ 1 000 000 դրամ, կատարվել են սոցիալական ապահովագրության հատկացումներ 150 000 դրամ, ծախսվել են նյութեր շենքի վերանորոգման համար՝ 250 000 դրամ, հաշվարկվել է հիմնական միջոցների մաշվածությունը՝ 200 000 դրամ: Որոշել և ձևակերպել գործառնական գործունեության ֆինանսական արդյունքը:

Ստուգողական հարցեր

1. Տալ եկամտի սահմանումը:
2. Ինչպե՞ս են դասակարգվում եկամուտները:
3. Ե՞րբ է ճանաչվում եկամուտը ֆինանսական հաշվետվությունում:
4. Որո՞նք են եկամտի ճանաչման չափանիշները:
5. Ե՞րբ է ճանաչվում արտադրանքի, ապրանքների վաճառքից հասույթը ըստ ՀՀՀՀՍ 18 ստանդարտի:
6. Տալ ծախսի սահմանումը:
7. Ինչպե՞ս են դասակարգվում ծախսերը:
8. Ե՞րբ է ճանաչվում ծախսը ֆինանսական հաշվետվությունում:
9. Ինչպե՞ս է չափվում ծախսը:
10. Ինչպե՞ս է որոշվում իրացված արտադրանքի ինքնարժեքը:
11. Որո՞նք են իրացման ծախսերը և ինչպիսի՞ն է դրանց կազմը:
12. Որո՞նք են վարչական ծախսերը և ինչպիսի՞ն է դրանց կազմը:
13. Ինչպե՞ս են որոշում սովորական գործունեությունից ֆինանսական արդյունքը:
14. Ինչպե՞ս են որոշում գործառնական գործունեությունից ֆինանսական արդյունքը:
15. Ինչպե՞ս են որոշում ոչ գործառնական գործունեությունից ֆինանսական արդյունքը:
16. Ինչպե՞ս են որոշում արտասովոր դեպքերից ֆինանսական արդյունքը:
17. Ինչպե՞ս է արտացոլվում հաշվառման մեջ էական սխալների ճշգրտումը և հաշվապահական հաշվառման քաղաքականության փոփոխությունը:

Տ Ե Ա Մ Ե Ր

Տնտեսական գործառնությունների ձևակերպումների ներկայացված տարբերակներից ընտրել ճիշտ պատասխանը

Չ/հ	Գործառնությունների բովանդակությունը	Պատասխան		
		Տարբերակ	Դտ	Կտ
1	2	3	4	5
1.	Պահեստից բաց են թողվել նյութեր վարչական շենքի նորոգման համար	Ա	211	713
		Բ	713	211
		Գ	813	211
2	Հաշվարկվել է աշխատավարձ վարչական շենքի նորոգմամբ զբաղված բանվորներին	Ա	713	527
		Բ	527	713
		Գ	813	527
3.	Կատարվել են սոցիալական ապահովագրության հատկացումներ վարչական շենքի նորոգմամբ զբաղված բանվորների համար	Ա	525	713
		Բ	527	525
		Գ	713	525
4.	Հաշվարկվել է վարչական նշանակության հիմնական միջոցների մաշվածությունը	Ա	813	112
		Բ	713	112
		Գ	112	713
1	2	3	4	5
5.	Ստացվել է տրանսպորտային կազմակերպության հաշիվը իրացված արտադրանքի տեղափոխման համար	Ա	521	712
		Բ	521	252
		Գ	712	521
6	Դուրս են գրվել նորոգման արտադրանասի կողմից կատարված վարչական շենքի նորոգման ծախսերը	Ա	713	812
		Բ	812	713
		Գ	713	521
7.	Վարչական ծախսերը դուրս են գրվել ֆինանսական արդյունքին	Ա	331	343
		Բ	331	713
		Գ	713	331
8	Հաշվարկվել է մաշվածություն գործառնական վարձակալության տրված հիմնական միջոցների համար	Ա	714	112
		Բ	813	112
		Գ	111	112
9	Դուրս է գրվել իրացված սարքավորման հաշվեկշռային արժեքը	Ա	111	112
		Բ	721	111
		Գ	111	721
10.	Հաշվարկային հաշվից վճարվել են իրացվող սարքավորման տեղափոխման ծախսերը	Ա	721	252
		Բ	712	252
		Գ	111	252
11	Հաշվարկային հաշվում ստացվել է եկամուտը սարքավորման իրացումից	Ա	252	721
		Բ	252	627
		Գ	252	621
12.	Դուրս է գրվել լուծարված հաստոցի հաշվեկշռային արժեքը	Ա	714	111
		Բ	721	111
		Գ	111	112
13.	Հաստոցի լուծարքի համար ծախսվել են նյութեր	Ա	721	211
		Բ	714	211

		Գ	111	211
14.	Հաստոցի լուծարքի համար հաշվարկվել է աշխատավարձ բանվորներին	Ա Բ Գ	721 714 111	527 527 527
15.	Կատարվել են սոցիալական ապահովագրության հատկացումներ հաստոցի լուծարմամբ զբաղված բանվորների համար	Ա Բ Գ	721 714 111	525 525 525
16.	Հաստոցի լուծարքից ստացվել են նյութեր, որոնք հանձնվել են պահեստ	Ա Բ Գ	211 211 211	714 614 111
17.	Շենքի ֆինանսական վարձակալության գծով հաշվետու տարվա ֆինանսական վճարը վերագրվում է ծախսերին	Ա Բ Գ	727 414 414	414 727 413
18.	Հաշվարկվել է ֆինանսական վարձակալությամբ ստացված հիմնական միջոցների մաշվածությունը, որոնք օգտագործվում են վարչական նպատակներով	Ա Բ Գ	121 713 713	713 112 121
19.	Հաշվարկվել է ֆինանսական վարձակալությամբ ստացված շենքի մաշվածությունը, որը օգտագործվում է որպես պատրաստի արտադրանքի պահեստ	Ա Բ Գ	712 713 712	112 112 121
20.	Արտացույցվել է վարձավճարը գործառնական	Ա	713	531
1	2	3	4	5
	վարձակալությամբ ընդունված միկրոավտոբուսի համար, որը օգտագործվում է վարչական նպատակներով	Բ Գ	712 713	251 252
21.	Ձևակերպվել է հաշվետու տարվա եկամուտը սառնարանային սարքավորման ֆինանսական վարձակալության գծով	Ա Բ Գ	147 627 147	146 147 627
22.	Ձևակերպվել է շենքի գործառնական վարձակալությունից ստացման ենթակա վարձավճարը	Ա Բ Գ	222 229 614	614 614 521
23.	Հիմնական միջոցների գույքագրման ժամանակ հայտնաբերվել են չհաշվառված գործիքներ, որոնք մուտքագրվել են իրական արժեքով	Ա Բ Գ	614 111 111	111 714 614
24.	Հիմնական միջոցների գույքագրման ժամանակ հայտնաբերվել է հեռուստացույցի կորուստ, որը դուրս է գրվել հաշվեկշռային արժեքով	Ա Բ Գ	614 714 111	111 111 614
25.	Հիմնական միջոցների վերագնահատման հետևանքով տեղի է ունեցել արժեքի աճ, որը վերագրվել է եկամուտներին	Ա Բ Գ	111 111 624	321 624 111
26.	Հաշվարկվել է վարչական նշանակության ոչ նյութական ակտիվների ամորտիզացիան	Ա Բ Գ	713 712 713	132 112 131
27.	Դուրս է գրվել իրացված ոչ նյութական ակտիվի հաշվեկշռային արժեքը	Ա Բ Գ	721 721 714	132 131 131

28.	Դրամարկղում ստացվել է եկամուտը ոչ նյութական ակտիվի իրացումից	Ա Բ Գ	251 251 251	621 721 614
29.	Ոչ նյութական ակտիվների վերագնահատման հետևանքով տեղի է ունեցել արժեքի աճ, որը վերագրվել է եկամտին	Ա Բ Գ	131 131 624	624 311 131
30.	Ոչ նյութական ակտիվների վերագնահատման հետևանքով տեղի է ունեցել արժեքի նվազում, որը վերագրվել է ծախսերին	Ա Բ Գ	721 724 714	131 131 131
31.	Ձևակերպվում է որպես ներդրումային գույք հաշվառվող հողամասի իրական արժեքով վերաչափումից արժեքի աճը	Ա Բ Գ	115 122 122	624 624 614
32.	Դուրս է գրվել իրացված ներդրումային գույքի հաշվեկշռային արժեքը	Ա Բ Գ	721 714 724	122 122 122
33.	Ձևակերպվել է ներդրումային գույքի վաճառքի համար բրոքերին վճարման ենթակա միջնորդավճարը	Ա Բ Գ	724 721 714	251 521 521
34.	Ձևակերպվել է ներդրումային գույքի վաճառքից ստացվող եկամուտը	Ա Բ Գ	221 252 621	621 621 221
35.	Արտացոլվում է կապակցված կողմերի շահույթի բաժնեմասը բաժնեմասնակցության մեթոդով	Ա Բ	141 141	621 629
1	2	3	4	5
	հաշվառվող ներդրումների գծով	Գ	629	141
36.	Հայտարարվել են շահաբաժինները սկզբնական արժեքով հաշվառվող ներդրումների գծով	Ա Բ Գ	627 141 222	222 529 627
37.	Երկարաժամկետ փոխառություններին վերաբերող չվաստակած ֆինանսական եկամուտը հաշվեգրվել է ընթացիկ ժամանակաշրջանի եկամուտներին	Ա Բ Գ	147 145 147	145 147 627
38.	Հաշվեգրվել են տոկոսային եկամուտները վաճառքի համար մատչելի երկարաժամկետ պարտքային արժեթղթերի գծով	Ա Բ Գ	143 147 627	627 627 143
39.	Վաճառքի համար մատչելի ոչ ընթացիկ ֆինանսական ակտիվների իրական արժեքով վերաչափումից արժեքի աճը վերագրվել է հաշվետու ժամանակաշրջանի եկամուտներին	Ա Բ Գ	143 626 726	626 143 143
40.	Պահեստից առաքվել է գնորդներին պատրաստի արտադրանքը փաստացի ինքնարժեքով	Ա Բ Գ	711 221 215	215 215 611
41.	Ճանաչվել է հասույթը արտադրանքի վաճառքից	Ա Բ Գ	221 252 215	611 611 611
42.	Ծախսվել են նյութեր պատրաստի արտադրանքի փաթեթավորման համար	Ա Բ Գ	215 712 211	211 211 215

43.	Դուրս է գրվել իրացված արագամաշ գույքի ինքնարժեքը	Ա	721	213
		Բ	714	213
		Գ	711	213
44.	ճանաչվել է եկամուտը գնորդին վաճառված արագամաշ գույքի գծով	Ա	251	611
		Բ	221	614
		Գ	221	621
45.	Գույքագրման ժամանակ հայտնաբերվել է նյութերի պակասորդ	Ա	714	211
		Բ	731	211
		Գ	711	211
46.	Գույքագրման ժամանակ հայտնաբերվել է վառելիքի ավելցուկ	Ա	211	222
		Բ	211	614
		Գ	211	628
47.	Ապրանքների վաճառքից հասույթը մուտքագրվել է դրամարկը	Ա	251	611
		Բ	251	614
		Գ	251	621
48.	Ձևակերպվել է արտադրանքի հետ վերադարձումից և գների իջեցումից հասույթի ճշգրտումը	Ա	612	611
		Բ	611	612
		Գ	612	251
49.	Կատարվել են մասհանումներ դեբիտորական պարտքերի հնարավոր կորուստների պահուստին	Ա	714	222
		Բ	721	221
		Գ	714	223
50	Ձևակերպվել է դեբիտորական պարտքերի կորուստների պահուստի հակադարձումը	Ա	222	223
		Բ	221	611
		Գ	223	614
1	2	3	4	5
51.	Վաճառքների գծով անհուսալի դեբիտորական պարտքը դուրս է գրվել հաշվետու ժամանակաշրջանի ծախսերի հաշվին	Ա	714	221
		Բ	614	221
		Գ	221	223
52.	Գույքագրման ժամանակ հայտնաբերված նյութերի պակասորդը դուրս է գրվել պահեստի պատասխանատու աշխատողի հաշվին	Ա	222	614
		Բ	222	527
		Գ	527	222
53.	Դրամարկղի գույքագրման ժամանակ հայտնաբերվել է կանխիկ դրամի ավելցուկ	Ա	251	614
		Բ	251	343
		Գ	614	251
54.	Դրամարկղի գույքագրման ժամանակ հայտնաբերվել է կանխիկ արտարժույթի պակասորդ	Ա	253	714
		Բ	614	251
		Գ	714	251
55.	Հաշվարկային հաշվում ստացվել է գնորդից՝ վաճառված արտադրանքի դիմաց	Ա	251	614
		Բ	252	611
		Գ	221	252
56.	Ձևակերպվել է դրական փոխարժեքային տարբերությունը դրամարկղում գտնվող արտարժույթի գծով	Ա	251	725
		Բ	625	253
		Գ	251	625
57	Ձևակերպվել է բացասական փոխարժեքային տարբերությունը արտարժութային հաշվի գծով	Ա	725	253
		Բ	725	251
		Գ	253	725
58	Իրացման ծախսերը դուրս են գրվել ֆինանսական արդյունքին	Ա	331	713
		Բ	331	712

		Գ	712	331
59	Իրացված արտադրանքի ինքնարժեքը դուրս է գրվել ֆինանսական արդյունքին	Ա	711	215
		Բ	711	331
		Գ	331	711
60.	Արտադրանքի իրացումից հասույթը դուրս է գրվել ֆինանսական արդյունքին	Ա	331	611
		Բ	611	331
		Գ	331	215
61	Ձևակերպվել է հաշվետու ժամանակաշրջանի գործունեության ֆինանսական արդյունքը՝ շահույթը	Ա	331	343
		Բ	343	331
		Գ	331	342
62	Ձևակերպվել է հաշվետու ժամանակաշրջանի գործունեության ֆինանսական արդյունքը՝ վնասը	Ա	331	343
		Բ	343	331
		Գ	331	342

ԳԼՈՒԽ 12

ՍԵՓԱԿԱՆ ԿԱՊԻՏԱԼԻ ՀԱՇՎԱՌՈՒՄ

ԽՆԴԻՐ 12.1

Ստորև բերված տվյալների հիման վրա որոշել կանոնադրական կապիտալի մեծությունը և ձևակերպել դրա ձևավորման գործառնությունները՝

Տվյալներ. Գրանցվել է «Օմեգա» ԲԲԸ, որի կանոնադրական կապիտալի ձևավորման համար թողարկվել է 12000 հատ սովորական բաժնետոմս՝ 2000 դրամ անվանական արժեքով, և 2000 հատ արտոնյալ բաժնետոմս՝ 3000 դրամ անվանական արժեքով: Տեղաբաշխված բաժնետոմսերի դիմաց հիմնադիրների կողմից կատարված վճարումները մուտքագրվել են հաշվարկային հաշիվ՝

ԽՆԴԻՐ 12.2

Ստորև բերված տվյալների հիման վրա որոշել կանոնադրական կապիտալի մեծությունը և ձևակերպել դրա ձևավորումը:

Տվյալներ. «Իմպուլս» ԲԲԸ կանոնադրական կապիտալի ձևավորման համար թողարկվել է 5 000 հատ սովորական և 1 000 հատ արտոնյալ բաժնետոմս. Յուրաքանչյուր սովորական բաժնետոմսի անվանական արժեքը 2 000 դրամ է, իսկ արտոնյալ բաժնետոմսինը՝ 1000 դրամ: Բաժնետոմսերի դիմաց ներդրումները մուտքագրվել են հաշվարկային հաշիվ՝

ԽՆԴԻՐ 12.3

Պահանջվում է ձևակերպել կանոնադրական կապիտալի ավելացման գործառնությունները՝

Տվյալներ. «Ալեն» ԲԲԸ կայացրել է որոշում կանոնադրական կապիտալի մեծացման մասին: Թողարկվել է 1000 հատ սովորական բաժնետոմս 2000 դրամ անվանական արժեքով, որոնք տեղաբաշխվել են 2500 դրամով: Վճարը բաժնետերերից ստացվել է հաջորդ ամսում: Ընդ որում, 800 բաժնետոմսի դիմաց բաժնետերերից մեկը տրամադրել է մարդատար ավտոմեքենա, իսկ մնացած ներդրումները կատարվել են դրամով: Գումարը մուտքագրվել է դրամարկի:

ԽՆԴԻՐ 12.4

Պահանջվում է ստորև բերված տվյալների հիման վրա ձևակերպել կանոնադրական կապիտալի ավելացման գործառնությունները:

Տվյալներ. «Իմպուլս» ԲԲԸ կայացրել է որոշում կանոնադրական կապիտալի մեծացման մասին: Թողարկվել է 1000 հատ սովորական բաժնետոմս 1000 դրամ անվանական արժեքով, որոնք տեղաբաշխվել են չորս բաժնետերերի միջև 1200 դրամով: Տեղաբաշխված բաժնետոմսերի դիմաց բաժնետերերի կողմից վճարումը կատարվել է 6 ամսվա ընթացքում: «Ա» բաժնետերը ձեռք է բերել 400 հատ բաժնետոմս, որոնց դիմաց նա տրամադրել է հաստոց, որը գնահատվել է 200 000 դրամ, իսկ մնացած ներդրումները կատարել է կանխիկ դրամով: «Բ» բաժնետերը ձեռք է բերել 300 հատ բաժնետոմս: Դրանց դիմաց նա տրամադրել է մարդատար ավտոմեքենա, որը գնահատվել է 350 000 դրամ, իսկ տարբերությունը վճարել է դրամով: «Գ» և «Դ» բաժնետերերը ձեռք են բերել համապատասխանաբար 100 հատ և 200 հատ բաժնետոմս: «Բ», «Գ» և «Դ» բաժնետերերից ստացված գումարները մուտքագրվել են հաշվարկային հաշիվ:

ԽՆԴԻՐ 12.5

Պահանջվում է ստորև բերված տվյալների հիման վրա ձևակերպել կանոնադրական կապիտալի ավելացման գործառնությունները և որոշել կանոնադրական կապիտալի հաշվեկշռային արժեքը:

Տվյալներ. «Իմպուլս» ԲԲԸ-ի կանոնադրական կապիտալը ձևավորված է 1000 դրամ անվանական արժեք ունեցող 25000 հատ սովորական բաժնետոմսերով: 200Xթ. ընկերությունը կայացրել է որոշում կանոնադրական կապիտալի մեծացման մասին: Հայտարարված կապիտալի սահմաններում լրացուցիչ թողարկվել է 10 000 հատ սովորական բաժնետոմս: Դրանցից 3000 հատը տեղաբաշխվել է հիմնական բաժնետերերի միջև անվանական արժեքով: Տեղաբաշխված բաժնետոմսերի դիմաց բաժնետերերի կողմից տրամադրվել են հիմնական միջոցներ (1000 հատի դիմաց) և նյութեր (2000 հատի դիմաց): 4000 հատ բաժնետոմսը վաճառվել է ֆոնդային բորսայի միջոցով, յուրաքանչյուրը 1200 դրամով: Բաժնետերերից ստացված գումարները մուտքագրվել են հաշվարկային հաշիվ: Թողարկված մնացած բաժնետոմսերը չեն տեղաբաշխվել:

ԽՆԴԻՐ 12.6

Պահանջվում է ստորև բերված տվյալների հիման վրա ձևակերպել կանոնադրական կապիտալի ավելացման գործառնությունները և որոշել կանոնադրական կապիտալի հաշվեկշռային արժեքը:

Տվյալներ. «Իմպուլս» ԲԲԸ-ի կանոնադրական կապիտալը ձևավորված է 1000 դրամ անվանական արժեք ունեցող 50000 հատ սովորական բաժնետոմսերով և 2000 դրամ անվանական արժեք ունեցող 10000 հատ արտոնյալ բաժնետոմսերով: «Իմպուլս» ԲԲԸ լրացուցիչ թողարկել է 8000 հատ սովորական բաժնետոմս՝ նույն անվանական արժեքով, և 3000 հատ արտոնյալ բաժնետոմս՝ յուրաքանչյուրը 1500 դրամ անվանական արժեքով: Սովորական բաժնետոմսերը տեղաբաշխվել են 1200 դրամով, ընդ որում 3000 հատը փոխանակվել է հողամասի հետ, իսկ մնացածը տեղաբաշխվել է ֆոնդային բորսայի միջոցով: Վերջիններիս դիմաց վճարումը մուտքագրվել է հաշվարկային հաշիվ: Արտոնյալ բաժնետոմսերը տեղաբաշխվել են 2000

դրամով: Այդ բաժնետոմսերի դիմաց բաժնետերերը պարտավորվել են վճարել 6 ամսվա ընթացքում:

ԽՆԴԻՐ 12.7

Ստորև բերված տվյալների հիման վրա ձևակերպել սեփական բաժնետոմսերի հետ գնման և մարման գործառնությունները:

Տվյալներ. «Իմպուլս» ԲԲԸ բորսայում հետ է գնել իր սեփական բաժնետոմսերը՝ շրջանառության մեջ գտնվող բաժնետոմսերի քանակը կրճատելու նպատակով: Հետ է գնվել 1000 դրամ անվանական արժեք ունեցող 500 հատ սովորական բաժնետոմս՝ յուրաքանչյուրի համար վճարելով հաշվարկային հաշվից 1100 դրամ: Հետ գնված բաժնետոմսերը մարվել են:

ԽՆԴԻՐ 12.8

Ստորև բերված տվյալների հիման վրա ձևակերպել սեփական բաժնետոմսերի հետ գնման և հետ գնված բաժնետոմսերի վաճառքի գործառնությունները:

Տվյալներ. «Իմպուլս» ԲԲԸ հետ է գնել բաժնետերերից մեկին պատկանող 600 հատ սեփական սովորական բաժնետոմս՝ 1000 դրամ անվանական արժեք ունեցող յուրաքանչյուր բաժնետոմսի համար վճարելով հաշվարկային հաշվից 900 դրամ: Հետ գնված 400 հատ բաժնետոմսը նորից վաճառվել է՝ յուրաքանչյուրը 1050 դրամով: Վաճառքից գումարը մուտքագրվել է դրամարկի:

ԽՆԴԻՐ 12.9

Ստորև բերված տվյալների հիման վրա ձևակերպել սեփական բաժնետոմսերի հետ գնման և հետ գնված բաժնետոմսերի վաճառքի ու մարման գործառնությունները:

Տվյալներ. «Իմպուլս» ԲԲԸ հետ է գնել 2000 դրամ անվանական արժեք ունեցող 800 հատ սովորական բաժնետոմս, և 2500 դրամ անվանական արժեք ունեցող 200 արտոնյալ բաժնետոմս: Յուրաքանչյուր սովորական բաժնետոմսի համար հաշվարկային հաշվից վճարվել է 2200 դրամ, իսկ յուրաքանչյուր արտոնյալ բաժնետոմսի համար՝ 3000 դրամ: Հետ գնված սովորական բաժնետոմսերը նորից վաճառվել են՝ յուրաքանչյուրը 2100 դրամով: Վաճառքից գումարը վճարվելու է 2 ամսվա ընթացքում: Արտոնյալ բաժնետոմսերը մարվել են:

ԽՆԴԻՐ 12.10

Ստորև բերված տվյալների հիման վրա ձևակերպել սեփական բաժնետոմսերի հետ գնման և հետ գնված բաժնետոմսերի վաճառքի գործառնությունները:

Տվյալներ. ԲԲԸ հետ է գնել 2500 դրամ անվանական արժեք ունեցող 500 հատ սովորական բաժնետոմս: Յուրաքանչյուր բաժնետոմսի համար դրամարկից վճարվել է 2200 դրամ: Հետ գնված բաժնետոմսերից 400 հատը նորից վաճառվել է, յուրաքանչյուրը 2 500 դրամով: Վաճառքից գումարը մուտքագրվել է դրամարկի:

ԽՆԴԻՐ 12.11

Պահանջվում է ձևակերպել միջանկյալ և տարեկան շահաբաժինների հայտարարումը և վճարումը: Կատարել գրանցումներ համապատասխան հաշիվներում:

Տվյալներ. Բաժնետիրական ընկերության խորհուրդի որոշմամբ 200Xթ. վճարվել են միջանկյալ շահաբաժիններ. I եռամսյակում՝ 100 000 դրամ, II եռամսյակում՝ 80 000 դրամ, III եռամսյակում՝ 100 000 դրամ. Միջանկյալ շահաբաժինները վճարվել են դրամարկղից: Հաջորդ տարվա սկզբում ընկերության ընդհանուր ժողովը հայտարարել է շահաբաժինների հաշվետու տարվա արդյունքներով՝ 450 000 դրամի չափով: Շահաբաժինների դիմաց բաժնետերերին տրամադրվել է 100 հատ սեփական սովորական բաժնետոմս՝ 1000 դրամ անվանական արժեքով: Շահաբաժինների մնացած գումարը վճարվել է դրամարկղից:

ԽՆԴԻՐ 12.12

Պահանջվում է որոշել սովորական բաժնետոմսերի կշռված միջին թիվը և մեկ բաժնետոմսին բաժին ընկնող շահույթը:

Տվյալներ. Հաշվետու տարվա գուտ շահույթը կազմել է 2 500 000 դրամ, արտոնյալ բաժնետոմսերի գծով հայտարարված շահաբաժինները կազմել են

100 000 դրամ: Տարվա սկզբի դրությամբ շրջանառության մեջ գտնվող սովորական բաժնետոմսերի թիվը կազմել է 1000 հատ, մարտի 30-ին թողարկվել են նոր բաժնետոմսեր՝ 600 հատ, իսկ հոկտեմբերի 30-ին 300 հատ բաժնետոմս հետ է գնվել:

ԽՆԴԻՐ 12.13

Պահանջվում է որոշել սովորական բաժնետոմսերի կշռված միջին թիվը և մեկ բաժնետոմսին բաժին ընկնող բազային շահույթը:

Տվյալներ. Կազմակերպության գուտ շահույթը հաշվետու տարում կազմել է 20 000 000 դրամ: Տարվա սկզբի դրությամբ շրջանառության մեջ գտնվող սովորական բաժնետոմսերի թիվը կազմել է 15 000 հատ: Մայիսի 10-ին թողարկվել են նոր բաժնետոմսեր՝ 1600 հատ, իսկ հոկտեմբերի 30-ին շրջանառությունից հանվել է 2 500 հատ բաժնետոմս:

ԽՆԴԻՐ 12.14

Պահանջվում է որոշել սովորական և պոտենցիալ սովորական բաժնետոմսերի միջին թիվը և մեկ բաժնետոմսին բաժին ընկնող բազային և նոսրացված շահույթը:

Տվյալներ. Կազմակերպության գուտ շահույթը հաշվետու տարում կազմել է 50 000 000 դրամ: Տարվա սկզբի դրությամբ շրջանառության մեջ գտնվող սովորական բաժնետոմսերի թիվը կազմել է 20 000 հատ: Հունիսի 1-ին թողարկվել են նոր բաժնետոմսեր՝ 1600 հատ, իսկ նոյեմբերի 30-ին շրջանառությունից հանվել է 2500 հատ բաժնետոմս: Բացի այդ, կազմակերպությունը թողարկել է պարտատոմսեր, հետագայում սովորական բաժնետոմսերով փոխարկելու պայմանով: Դրանց կշռված միջին թիվը կազմել է 5000 հատ: Յուրաքանչյուր 10 պարտատոմսը պետք է փոխարկվի է 4 սովորական բաժնետոմսի: Պարտատոմսերի գծով ընթացիկ ժամանակաշրջանի տոկոսների վճարման ծախսերը կազմել են

50 000 դրամ, իսկ այդ ծախսերի հետևանքով պակաս ճանաչված հարկի գծով ծախսերը կկազմեն 10 000 դրամ:

ԽՆԴԻՐ 12.15

Ա. Ստորև բերված տվյալների հիման վրա պահանջվում է ձևակերպել կանոնադրական կապիտալի ձևավորման գործառնությունները և կազմել կազմակերպության մեկնարկային հաշվեկշիռը:

Տվյալներ. 2004 թ. հունվարին գրանցվել է ԲԲԸ 10 մլն դրամ կանոնադրական կապիտալով: Թողարկվել է 8000 հատ սովորական բաժնետոմս՝ 1000 դրամ անվանական արժեքով, և 1000 հատ արտոնյալ բաժնետոմս՝ 2000 դրամ անվանական արժեքով: Բաժնետերերից մեկը 3000 սովորական բաժնետոմսերի դիմաց տրամադրել է հիմնական միջոցներ, մնացած բաժնետոմսերի դիմաց ներդրումները կատարվել են դրամով, որը մուտքագրվել է հաշվարկային հաշիվ:

Բ. Ընկերությունում մի քանի տարի անց միջոցների և դրանց գոյացման աղբյուրների վերաբերյալ կան հետևյալ տվյալները

Տվյալներ 2008թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ ընկերությունում սինթետիկ հաշիվների մնացորդները կազմել են.

Հաշ. ծածկ.	Հաշիվների անվանումը	Գումարը, դրամ
1	2	3
111	Շահագործման մեջ գտնվող մաշվող հիմնական միջոցներ	6 000 000
112	Շահագործման մեջ գտնվող հիմնական միջոցների մաշվածություն	500 000
1	2	3
142	Սկզբնական արժեքով հաշվառվող ոչ ընթացիկ ներդրումներ կապակցված կազմակերպությունների կանոնադրական կապիտալում	1 000 000
211	Նյութեր	800 000
215	Արտադրանք	400 000
221	Դեբիտորական պարտքեր վաճառքների գծով	200 000
251	Դրամարկդ	300 000
252	Հաշվարկային հաշիվ	6 400 000
311	Կանոնադրական (բաժնեհավաք) կապիտալ	10 000 000
314	Էմիսիոն եկամուտ	2 100 000
343	Հաշվետու տարվա զուտ շահույթ (վնաս)	1 710 000
344	Միջանկյալ շահաբաժիններ	200 000
521	Կրեդիտորական պարտքեր գումարների գծով	200 000
524	Կարճաժամկետ կրեդիտորական պարտքեր բյուջեին	150 000
525	Կարճաժամկետ կրեդիտորական պարտքեր պարտադիր սոցիալական ապահովագրության գծով	140 000
527	Կրեդիտորական պարտքեր աշխատավարձի և աշխատակիցների այլ կարճաժամկետ հատուցումների գծով	500 000

Բերված տվյալների հիման վրա պահանջվում է.

- կազմել կազմակերպության հաշվապահական հաշվեկշիռը 2008թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ:
- բացել հաշիվները, գրանցել սկզբնական մնացորդները, հաշվետու տարվա (2009թ.) I եռամսյակում տեղի ունեցած գործառնությունների գումարները, որոշել շրջանառությունները և վերջնական մնացորդները,

- կազմել սինթետիկ հաշիվների շրջանառության տեղեկագիրը,
- կազմել հաշվապահական հաշվեկշիռը 2009թ. մարտի 31-ի դրությամբ:

✓ 2009թ. I եռամսյակում տեղի ունեցած գործառնությունները.

Յ/հ	Գործառնությունների բովանդակությունը	Գումարը, դրամ
1	2	3
1	Ձևակերպվել է նախորդ տարվա շահույթի տեղափոխումը ^{24 345 497} 345	?
2.	Նախորդ տարվա շահույթից հատկացվել է պահուստային կապիտալին (շահույթի 5%-ի չափով)	805 ?
3.	Բաժնետերերի ընդամուր ժողովը կայացրել է որոշում ընկերության կանոնադրական կապիտալի մեծացման վերաբերյալ: Թողարկվել և տեղաբաշխվել է 1000 հատ հասարակ բաժնետոմս՝ յուրաքանչյուրը 1100 դրամով. ա) տեղաբաշխման գներով - բ) անվանական արժեքով - գ) էմիսիոն եկամուտը -	? ? ?
4.	Ընկերության բաժնետերերը տեղաբաշխված բաժնետոմսերի դիմաց տրամադրել են՝	
1	2	3
	ա) սարքավորումներ	500 000
	բ) կապակցված կազմակերպության բաժնետոմսեր	300 000
	Ընդամենը	800 000
5.	Հաշվարկային հաշվում մուտքագրվել է բաժնետերերից՝ լրացուցիչ թողարկված ու տեղաբաշխված սովորական բաժնետոմսերի գծով մնացած պարտքի դիմաց	?
6.	Հայտարարվել են շահաբաժիններ նախորդ տարվա արդյունքներով	300 000
7.	Դուրս են գրվել նախորդ տարում վճարված միջանկյալ շահաբաժինները	?
8.	Դրամարկղից վճարվել են բաժնետերերին տարեկան շահաբաժինները	?
9.	Հետ է գնվել 800 հատ սովորական բաժնետոմս, յուրաքանչյուրի համար վճարելով հաշվարկային հաշվից 1200 դրամ	?
10.	Հետ գնված 500 հատ սովորական բաժնետոմսեր վաճառվել են, յուրաքանչյուրը 1400 դրամով: Գումարը մուտքագրվել է հաշվարկային հաշիվ. ա) հետ գնման գներով բ) վաճառքի գներով գ) վաճառքի և հետ գնման գների տարբերությունը	? ? ?
11.	Հետ գնված 300 հատ սովորական բաժնետոմսեր վաճառվել են, յուրաքանչյուրը 1100 դրամով, վճառումները 6 ամսվա ընթացքում կատարելու պայմանով . ա) հետ գնման գներով բ) վաճառքի գներով գ) վաճառքի և հետ գնման գների տարբերությունը	? ? ?

12.	Դրամարկղում ստացվել է բաժնետերերից վերավաճառված բաժնետոմսերի դիմաց	200 000
13.	Ընկերությունը հետ է գնվել 500 հատ արտոնյալ բաժնետոմս, յուրաքանչյուրի համար վճարելով հաշվարկային հաշվից 2800 դրամ	1 400 ?
14	Ջեռ գնված արտոնյալ բաժնետոմսերը մարվել են՝ ա) անվանական արժեքը բ) հետ գնման արժեքը գ) տարբերությունը	1 400 ? 1 400 ? 1 400 ?

ԽՆԴԻՐ 12.17

Ստորև բերված տվյալների հիման վրա պահանջվում է ձևակերպել շահույթի և պահուստային կապիտալի շարժի գործառնությունները.

Գործ. N	Գործառնությունների բովանդակությունը	Գումարը, դրամ
1	2	3
1	Ձևակերպվել է նախորդ տարվա շահույթի տեղափոխումը	1 200 000
2	Վաճառված հիմնական միջոցներին վերաբերող	
1	2	3
	վերագնահատումից արժեքի աճը վերագրվել է չբաշխված շահույթին	85 000
3.	Զբաղիված շահույթից հատկացվել է պահուստային կապիտալին	60 000
4	Կանոնադրական կապիտալի հաշվին ծածկվել է նախորդ տարվա վնասը	150 000
5	Պահուստային կապիտալի հաշվին ծածկվել է նախորդ տարվա վնասը	50 000
6.	Պահուստային կապիտալի հաշվին ավելացվել է կանոնադրական կապիտալը	2 000 000
7	Զբաղիված շահույթի հաշվին ավելացվել է կանոնադրական կապիտալը	1 000 000
8.	Ընկերության խորհուրդը որոշում է կայացրել միջանկյալ շահաբաժիններ վճարելու վերաբերյալ	80 000
9	Դրամարկղից վճարվել են բաժնետերերին միջանկյալ շահաբաժինները	80 000
10.	Բաժնետիրական ընկերության ընդհանուր ժողովը հայտարարել է տարեկան շահաբաժիններ չբաշխված շահույթի հաշվին	180 000
11	Պահուստային կապիտալի հաշվին հայտարարվել են շահաբաժիններ արտոնյալ բաժնետոմսերի գծով	50 000
12.	Մարվել է բաժնետերերի հանդեպ պարտքը տարեկան շահաբաժինների գծով՝ ա) հաշվանցվել են միջանկյալ շահաբաժինները բ) տրամադրվել են սեփական կապիտալի բաժնետոմսեր գ) վճարվել է հաշվարկային հաշվից	? 100 000 ?

ԽՆԴԻՐ 12.18

Ստորև բերված տվյալների հիման վրա պահանջվում է ձևակերպել սեփական կապիտալի շարժի գործառնությունները:

Յ/հ	Գործառնությունների բովանդակությունը	Գումարը, դրամ
1	2	3
1.	Բաժնետիրական ընկերությունը կանոնադրական կապիտալի ավելացման նպատակով թողարկել և տեղաբաշխել է 200 հատ հասարակ բաժնետոմս, որոնց դիմաց վճարը մուտքագրվել է հաշվարկային հաշիվ.	
	ա) վաճառքի գներով (յուրաքանչյուրը՝ 1100 դրամ)	?
	բ) անվանական արժեքով (յուրաքանչյուրը՝ 1000 դրամ)	?
	գ) էմիսիոն եկամուտը	?
2.	Բաժնետիրական ընկերությունը կանոնադրական կապիտալի ավելացման նպատակով թողարկել և տեղաբաշխել է 500 հատ հասարակ բաժնետոմս, յուրաքանչյուրը 2000 դրամ անվանական արժեքով: Ընկերության բաժնետերերը տեղաբաշխված բաժնետոմսերի դիմաց տրամադրել են՝	
1	2	3
	ա) սարքավորումներ	450 000
	բ) կապակցված կազմակերպության բաժնետոմսեր	200 000
	գ) կանխիկ դրամ	?
	Ընդամենը	?
3	Բաժնետիրական ընկերությունը կանոնադրական կապիտալի ավելացման նպատակով թողարկել և տեղաբաշխել է 1000 հատ հասարակ բաժնետոմս, որոնց դիմաց վճարումները բաժնետերերի կողմից կատարվելու են 1 տարվա ընթացքում .	
	ա) արժեքը վաճառքի գներով (յուրաքանչյուրը՝ 1200 դրամ)	?
	բ) անվանական արժեքով (յուրաքանչյուրը՝ 1000 դրամ)	?
	գ) էմիսիոն եկամուտը	?
4.	Տարվա ընթացքում բաժնետերերի կողմից մարվել է պարտքը տեղաբաշխված բաժնետոմսերի գծով՝	
	ա) տրամադրվել են հիմնական միջոցներ (500 հատի դիմաց)	?
	բ) տրամադրվել են նյութեր (100 հատի դիմաց)	?
	գ) գումարը մուտքագրվել է հաշվարկային հաշվում (400 հատի դիմաց)	?
5.	Զբաղված շահույթի հաշվին ավելացվել է կանոնադրական կապիտալը	300 000
6.	Պահուստային կապիտալի հաշվին ավելացվել է կանոնադրական կապիտալը	250 000
7.	Կանոնադրական կապիտալը նվազեցվել է թողարկված, բայց չտեղաբաշխված բաժնետոմսերի հաշվին	100 000
8.	Յետ է գնվել 100 հատ արտոնյալ բաժնետոմս, յուրաքանչյուրի համար վճարելով հաշվարկային հաշվից 2 700 դրամ	?
9.	Յետ գնված արտոնյալ բաժնետոմսերը մարվել են՝	
	ա) անվանական արժեքը (1 հատը՝ 2 500 դրամ)	?

	բ) անվանական արժեքը գերազանցող գումարը	?
10.	Յետ են գնվել 350 հատ սեփական հասարակ բաժնետոմսեր, որոնց դիմաց վճարվել է դրամարկղից՝ յուրաքանչյուրի համար 2 400 դրամ	?
11.	Յետ գնված 200 հատ հասարակ բաժնետոմսեր վաճառվել են, յուրաքանչյուրը 2500 դրամով: Գումարը մուտքագրվել է հաշվարկային հաշիվ. ա) արժեքը հետ գնման գներով բ) արժեքը վաճառքի գներով գ) վաճառքի և հետ գնման գների տարբերությունը	? ? ?
12.	Յետ գնված 50 հատ հասարակ բաժնետոմսեր վաճառվել են, յուրաքանչյուրը 2200 դրամով: Գումարը մուտքագրվել է հաշվարկային հաշիվ. ա) արժեքը հետ գնման գներով բ) արժեքը վաճառքի գներով գ) վաճառքի և հետ գնման գների տարբերությունը	? ? ?
13.	Յետ գնված 100 հատ հասարակ բաժնետոմսեր վաճառվել են, յուրաքանչյուրը 2450 դրամով, վճառումները 6 ամսվա ընթացքում կատարելու պայմանով.	
1	2	3
	ա) արժեքը հետ գնման գներով բ) արժեքը վաճառքի գներով գ) վաճառքի և հետ գնման գների տարբերությունը	? ? ?
14	Դրամարկղում ստացվել է բաժնետերերից վերավաճառված բաժնետոմսերի դիմաց՝ ա) տրամադրվել են ապրանքներ (40 հատ բաժնետոմսի դիմաց) բ) գումարը մուտքագրվել է հաշվարկային հաշիվ (մնացած 60 հատի դիմաց)	? ?
15	Վաճառված հիմնական միջոցներին վերաբերող վերագնահատումից արժեքի աճը վերագրվել է չբաշխված շահույթին	150 000
16	Կանոնադրական կապիտալի հաշվին ծածկվել է նախորդ տարվա վնասը	200 000
17.	Չբաշխված շահույթից հատկացվել է պահուստային կապիտալին	150 000
18.	Պահուստային կապիտալի հաշվին հայտարարվել են շահաբաժիններ արտոնյալ բաժնետոմսերի գծով	200 000
19	Բաժնետիրական ընկերության ընդհանուր ժողովը հայտարարել է տարեկան շահաբաժիններ չբաշխված շահույթի հաշվին	500 000
20.	Մարվել է բաժնետերերի հանդեպ պարտքը տարեկան շահաբաժինների գծով՝ ա) տրամադրվել են սեփական կապիտալի բաժնետոմսեր բ) վճարվել է դրամարկղից	300 000 ?
21.	Պահուստային կապիտալի հաշվին ծածկվել է նախորդ տարվա վնասը	120 000

22.	Հայտնաբերվել է էական սխալ նախորդ տարում ստացված նյութերի գնահատման մեջ, որը պետք է ավելացվի չբաշխված շահույթի մնացորդին	52 000
23.	Հայտնաբերվել է էական սխալ նախորդ տարում ձեռք բերված ապրանքների գնահատման մեջ, որը պետք է նվազեցվի չբաշխված շահույթի մնացորդից	12 500
24.	Կազմակերպությունը վերանայել է իր հաշվային քաղաքականությունը և փոփոխել է հիմնական միջոցների մաշվածության հաշվարկման եղանակը, որի հետևանքով առաջացած տարբերությունը պետք է ավելացվի չբաշխված շահույթի մնացորդին	24 000
25.	Ձևակերպվել է չբաշխված շահույթի մնացորդի ճշգրտումը նախորդ տարում հայտնաբերված էական սխալների ուղղումների և հաշվային քաղաքականության փոփոխության արդյունքում	?

ՍՏՈՒԳՈՂԱԿԱՆ ԱՌԱՋԱԴՐԱՆՔՆԵՐ, ՀԱՐՑԵՐ ԵՎ ՏԵՍՏԵՐ

Ստուգողական առաջադրանքներ

Առաջադրանք 1

ԲԲԸ կանոնադրական կապիտալի սկզբնական մեծությունը 24 000 000 դրամ է: 200Xթ. հունվարին ընկերությունը որոշել է մեծացնել կանոնադրական կապիտալը և թողարկել է 2000 հատ սովորական բաժնետոմս՝ 2000 դրամ անվանական արժեքով: Բաժնետոմսերը տեղաբաշխվել են 2500 դրամով: Բաժնետերերից վճարը ստացվել է հաջորդ ամսվա ընթացքում և մուտքագրվել է հաշվարկային հաշիվ: Պահանջվում է ձևակերպել կանոնադրական կապիտալի ավելացման գործառնությունները:

Առաջադրանք 2

ԲԲԸ կանոնադրական կապիտալի ավելացման համար թողարկվել է 1000 հատ սովորական բաժնետոմս՝ 1000 դրամ անվանական արժեքով, որոնք տեղաբաշխվել են 1200 դրամով: Բաժնետերերը կանոնադրական կապիտալում ներդրումների գծով պարտքը մարել են՝

ա) սարքավորումներով, 400 բաժնետոմսի դիմաց,

բ) կապակցված կազմակերպության բաժնետոմսերով, 200 բաժնետոմսի դիմաց,

գ) այլ կազմակերպության պարտատոմսերով, 100 բաժնետոմսի դիմաց,

դ) դրամով, որը մուտքագրվել է հաշվարկային հաշիվ, 300 բաժնետոմսի դիմաց:

Պահանջվում է ձևակերպել սեփական բաժնետոմսերի տեղաբաշխման և ներդրումների կատարման գործառնությունները:

Առաջադրանք 3

ԲԲԸ հետ է գնել սեփական կապիտալի 800 հատ սովորական բաժնետոմս, վճարելով դրամարկղից 2800 դրամ՝ յուրաքանչյուրի համար: Մեկ բաժնետոմսի անվանական արժեքը 2500 դրամ է: Հետ գնված բաժնետոմսերը մարվել են: Պահանջվում է ձևակերպել սեփական բաժնետոմսերի հետ գնման և հետ գնված բաժնետոմսերի մարման գործառնությունները:

Առաջադրանք 4

«Իմպուլս» ԲԲԸ հետ է գնել սեփական կապիտալի 500 հատ սովորական բաժնետոմս, 2000 դրամ անվանական արժեք ունեցող յուրաքանչյուր բաժնետոմսի համար վճարելով դրամարկղից 2200 դրամ: Հետ գնված բաժնետոմսերից 200 հատը նորից վաճառվել է՝ յուրաքանչյուրը 2500 դրամով: Վաճառքից գումարը մուտքագրվել է

դրամարկը՝ Պահանջվում է ձևակերպել սեփական բաժնետոմսերի հետ գնման և հետ գնված բաժնետոմսերի վաճառքի գործառնությունները.

Առաջադրանք 5

Ընկերությունը հետ է գնել 1000 դրամ անվանական արժեք ունեցող 400 հատ սովորական բաժնետոմս և 2500 դրամ անվանական արժեք ունեցող 300 հատ արտոնյալ բաժնետոմս: Դրամարկից վճարվել է հետ գնված բաժնետոմսերի արժեքը. յուրաքանչյուր սովորական բաժնետոմսի համար՝ 1200 դրամ, իսկ յուրաքանչյուր արտոնյալ բաժնետոմսի համար՝ 3000 դրամ. Հետ գնված սովորական բաժնետոմսերը վաճառվել են՝ յուրաքանչյուրը 1100 դրամով. Բաժնետերերի կողմից վճարումները այդ բաժնետոմսերի դիմաց կատարվելու են երկու ամսվա ընթացքում: Արտոնյալ բաժնետոմսերը մարվել են. Պահանջվում է ձևակերպել սեփական բաժնետոմսերի հետ գնման, հետ գնված բաժնետոմսերի վաճառքի և մարման գործառնությունները

Առաջադրանք 6

Բաժնետիրական ընկերության խորհուրդը I կիսամյակի վերջում ընդունել է որոշում միջանկյալ շահաբաժիններ վճարելու վերաբերյալ՝ 250 000 դրամի չափով Միջանկյալ շահաբաժինները վճարվել են դրամարկից:

Ընկերության ընդհանուր ժողովը հայտարարել է շահաբաժիններ հաշվետու տարվա արդյունքներով՝ 500 000 դրամի չափով. Շահաբաժինների դիմաց բաժնետերերին տրամադրվել է 50 հատ սեփական սովորական բաժնետոմս՝ 2000 դրամ անվանական արժեքով: Շահաբաժինների մնացած գումարը վճարվել է դրամարկից. Պահանջվում է ձևակերպել միջանկյալ և տարեկան շահաբաժինների հայտարարումը և վճարումը:

Ստուգողական հարցեր

1. Որո՞նք են սեփական կապիտալի բաղադրիչները:
2. Ի՞նչ է իրենից ներկայացնում կանոնադրական կապիտալը:
3. Որո՞նք են կանոնադրական կապիտալի նվազագույն չափերը:
4. Ինչպե՞ս է թի հաշվառում կանոնադրական կապիտալի ձևավորումը.
5. Ինչպիսի՞ միջոցներով են կատարվում ներդրումները կանոնադրական կապիտալում:
6. Ինչպե՞ս են գնահատվում ակտիվները, որոնք տրամադրվում են բաժնետերերի կողմից որպես ներդրում կանոնադրական կապիտալում:
7. Ինչպե՞ս է ձևակերպվում կանոնադրական կապիտալի ավելացումը, երբ վերջինիս ավելացման և բաժնետերերի կողմից ներդրումների կատարման պահերը չեն համընկնում:
8. Ի՞նչ աղբյուրների հաշվին կարող է մեծացվել կանոնադրական կապիտալը:
9. Ինչպե՞ս է ձևակերպվում կանոնադրական կապիտալի ավելացումը սեփական կապիտալի այլ տարրերի հաշվին:
10. Ի՞նչ արժեքով են հաշվառում հետ գնված բաժնետոմսերը:
11. Կազմակերպությունները ի՞նչ նպատակով են հետ գնում սեփական բաժնետոմսերը:
12. Ինչպե՞ս են հաշվառում բաժնետոմսերի հետ գնումը.
13. Ինչպե՞ս են հաշվառում հետ գնված բաժնետոմսերի վաճառքը:
14. Ինչպե՞ս են հաշվառում հետ գնված բաժնետոմսերի մարումը.
15. Ե՞րբ և ինչու՞ է առաջանում էմիսիոն եկամուտը:
16. Ինչպե՞ս է որոշվում «կանոնադրական կապիտալ» հոդվածի հաշվեկշռային արժեքը:

17. Ինչպե՞ս է որոշվում կազմակերպության ֆինանսատնտեսական գործունեության վերջնական ֆինանսական արդյունքը:
18. Ինչպե՞ս են հաշվառում կուտակված շահույթը.
19. Ի՞նչ նպատակների համար է օգտագործվում կուտակված շահույթը:
20. Ինչպե՞ս են հաշվառում կուտակված շահույթի օգտագործումը:
21. Ինչպե՞ս են ձևակերպում վնասների ծածկումը.
22. Ինչպե՞ս է որոշվում շրջանառության մեջ գտնվող բաժնետոմսերի կշռված միջին թիվը:
23. Ինչպե՞ս է որոշվում մեկ բաժնետոմսին բաժին ընկնող բազային շահույթը:
24. Ինչպե՞ս է որոշվում մեկ բաժնետոմսին բաժին ընկնող նուսրացված շահույթը:

Տ Ե Ս Ս Ե Ր

Տնտեսական գործառնությունների ձևակերպումների ներկայացված տարբերակներից ընտրել ճիշտ պատասխանը

Յ/հ	Գործառնությունների բովանդակությունը	Պատասխան		
		Տարբերակ	Պտ	Կտ
1	2	3	4	5
1.	Կազմակերպության կանոնադրական կապիտալի ձևավորման նպատակով թողարկվել և տեղաբաշխվել են հասարակ բաժնետոմսեր, որոնց դիմաց ներդրումները կատարվել են կանխիկ դրամով	Ա Բ Գ	251 311 251	312 251 311
2.	Կազմակերպության կանոնադրական կապիտալի ձևավորման նպատակով թողարկվել և տեղաբաշխվել են հասարակ բաժնետոմսեր, որոնց դիմաց ներդրողները տրամադրել են հիմնական միջոցներ	Ա Բ Գ	111 111 111	312 311 313
3.	Կանոնադրական կապիտալը մեծացվել է չբաշխված շահույթի հաշվին	Ա Բ Գ	311 342 311	343 311 342
4.	Պահուստային կապիտալի հաշվին ավելացվել է կանոնադրական կապիտալը	Ա Բ Գ	312 311 351	311 351 311
5.	Բաժնետիրական ընկերությունը կանոնադրական կապիտալի ավելացման նպատակով թողարկել և վաճառել է հասարակ բաժնետոմսեր անվանական արժեքով, որոնց դիմաց վճարը մուտքագրվել է հաշվարկային հաշիվ	Ա Բ Գ	311 252 252	252 311 312
6.	Հաշվարկային հաշվում մուտքագրվել է լրացուցիչ տեղաբաշխված հասարակ բաժնետոմսերի վաճառքի և անվանական արժեքի դրական տարբերությունը	Ա Բ Գ	252 252 252	314 311 312
7.	Տեղաբաշխված հասարակ բաժնետոմսերի դիմաց ընկերության բաժնեգրված բաժնետերերը տարվա ընթացքում տրամադրել են կապակցված կազմակերպության բաժնետոմսեր	Ա Բ Գ	141 141 311	312 311 312

8.	Տեղաբաշխված հասարակ բաժնետոմսերի դիմաց ընկերության բաժնեգրված բաժնետերը տարվա ընթացքում տրամադրել է հողամաս	Ա Բ Գ	111 115 115	312 312 311
9.	Տեղաբաշխված հասարակ բաժնետոմսերի դիմաց ընկերության բաժնեգրված բաժնետերը տարվա ընթացքում տրամադրել է հողամասի օգտագործման իրավունքը	Ա Բ Գ	115 131 131	312 311 312
10.	Կանոնադրական կապիտալի ավելացման նպատակով թողարկվել և տեղաբաշխվել են	Ա Բ	312 141	311 311
1	2	3	4	5
	հասարակ բաժնետոմսեր՝ անվանական արժեքով, որոնց դիմաց վճարումները բաժնետերերի կողմից կատարվելու են 1 տարվա ընթացքում	Գ	311	312
11.	Կանոնադրական կապիտալը նվազեցվել է թողարկված, բայց չտեղաբաշխված բաժնետոմսերի հաշվին	Ա Բ Գ	311 312 313	312 311 311
12.	Հետ են գնվել արտոնյալ բաժնետոմսերը, որոնց դիմաց վճարվել է հաշվարկային հաշվից	Ա Բ Գ	312 313 311	252 252 252
13.	Ձևակերպվել է հետ գնված արտոնյալ բաժնետոմսերի մարումը՝ անվանական արժեքի սահմաններում	Ա Բ Գ	312 313 311	311 311 313
14.	Ձևակերպվել է հետ գնված և մարված արտոնյալ բաժնետոմսերի անվանական արժեքը գերազանցող գումարի դուրս գրումը	Ա Բ Գ	314 313 311	313 314 313
15.	Հետ գնված հասարակ բաժնետոմսերի վաճառքից գումարը մուտքագրվել է հաշվարկային հաշիվ	Ա Բ Գ	252 252 252	311 312 313
16.	Հաշվարկային հաշվում մուտքագրվել է հետ գնված հասարակ բաժնետոմսերի վերավաճառքի և հետ գնման արժեքի դրական տարբերությունը	Ա Բ Գ	252 252 252	314 313 311
17.	Ձևակերպվել է հետ գնված հասարակ բաժնետոմսերի վերավաճառքի և հետ գնման արժեքի բացասական տարբերությունը	Ա Բ Գ	311 313 314	313 314 313
18.	Վաճառված հիմնական միջոցների մ վերաբերող վերագնահատումից արժեքի աճը վերագրվել է չբաշխված շահույթին	Ա Բ Գ	321 342 321	342 321 343
19.	Կանոնադրական կապիտալի հաշվին ծածկվել է նախորդ տարվա վնասը	Ա Բ Գ	312 342 311	342 311 342
20.	Չբաշխված շահույթից հատկացվել է պահուստային կապիտալին	Ա Բ Գ	342 351 343	351 342 351
21.	Բաժնետիրական ընկերության ընդհանուր ժողովը	Ա	344	529

	հայտարարել է տարեկան շահաբաժիններ չբաշխված շահույթի հաշվին	Բ Գ	342 529	529 342
22.	Պրամարկդից վճարվել են շահաբաժիններ բաժնետերերին	Ա Բ Գ	344 342 529	251 251 251
23.	Բաժնետերերին շահաբաժինների գծով պարտքի դիմաց տրամադրվել են սեփական կապիտալի բաժնետոմսեր	Ա Բ Գ	529 311 344	311 529 311
24.	Պահուստային կապիտալի հաշվին ծածկվել է նախորդ տարվա վնասը	Ա Բ Գ	351 342 351	342 351 343
25.	Ձևակերպվել է նախորդ տարվա շահույթի տեղափոխումը	Ա Բ	342 343	343 342
1	2	3	4	5
		Գ	341	342
26.	Ձևակերպվել է նախորդ տարվա վնասի տեղափոխումը	Ա Բ Գ	342 343 342	343 342 341
27.	Ընկերության խորհուրդը ընդունել է որոշում միջանկյալ շահաբաժիններ վճարելու մասին	Ա Բ Գ	342 351 344	529 529 529
28.	Պահուստային կապիտալի հաշվին հայտարարվել են շահաբաժիններ արտոնյալ բաժնետոմսերի գծով	Ա Բ Գ	529 351 351	351 529 344

ԳԼՈՒԽ 13

ՊԱՐՏԱՎՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՀԱՇՎԱՌՈՒՄ

ԽՆԴԻՐ 13.1

Պահանջվում է ձևակերպել կարճաժամկետ վարկի ստացման, օգտագործման և մարման գործառնությունները:

Տվյալներ. «Իմպուլս» ՓԲԸ 01.04.200Xթ. կնքված վարկային պայմանագրի համաձայն «Արևիկ» առևտրային բանկից ստացել է վարկ՝ 1 000 000 դրամ գումարով, 3 ամիս ժամկետով, տարեկան 16% տոկոսադրույքով: Կարճաժամկետ վարկի հաշվին

ա) մարվել է մատակարարի պարտքը՝ 300 000 դրամ գումարով,

բ) տրվել է կանխավճար մատակարարին՝ նյութեր ձեռք բերելու համար՝ 200 000 դրամ,

գ) մնացած գումարը մուտքագրվել է հաշվարկային հաշիվ:

Վարկը մարվել է սահմանված ժամկետում՝ 01.07.200Xթ., գումարը փոխանցվել է հաշվարկային հաշվից: Պայմանագրի համաձայն վարկի տոկոսները վճարվել են հաշվարկային հաշվից վարկի մարման օրը:

ԽՆԴԻՐ 13.2

Պահանջվում է ձևակերպել կարճաժամկետ վարկի ստացման և մարման գործառնությունները: Կազմել վարկի մարման և վարկի գծով տոկոսային ծախսերի հաշվեգրման ժամանակացույցը:

Տվյալներ «Լույս» ՍՊԸ-ն «Արևիկ» առևտրային բանկից 01 07 200Xթ. վարկային պայմանագրով ստացել է կարճաժամկետ վարկ 900 000 դրամ գումարով, 6 ամիս մարման ժամկետով, տարեկան 18% տոկոսադրույքով. Վարկի և տոկոսների մարումը կատարվում է անուիտետով, ըստ կազմված ժամանակացույցի:

ԽՆԴԻՐ 13.3

Պահանջվում է ձևակերպել երկարաժամկետ վարկի ստացման և մարման գործառնությունները: Կազմել վարկի մարման և վարկի գծով տոկոսային ծախսերի հաշվեգրման ժամանակացույցը:

Տվյալներ «Լույս» ՍՊԸ-ն առևտրային բանկից 03.01.200Xթ. վարկային պայմանագրով ստացել է վարկ 2 000 000 դրամ գումարով, 2 տարի մարման ժամկետով, տարեկան 20% տոկոսադրույքով. Վարկի և տոկոսների մարումը կատարվում է միանվագ կարգով՝ վարկի մարման ժամկետի վերջում. Վարկի տոկոսները ճանաչվում են որպես ժամանակաշրջանի ծախս:

ԽՆԴԻՐ 13.4

Ստորև բերված տվյալների հիման վրա ձևակերպել երկարաժամկետ վարկի ստացման, մարման և տոկոսային ծախսերի հաշվառման գործառնությունները:

Տվյալներ Արտադրամասի նոր շենքի կառուցման համար կազմակերպությունը ստացել է առևտրային բանկից երկարաժամկետ վարկ 01 07 200Xթ. կնքված վարկային պայմանագրով՝ 5 000 000 դրամ գումարով, 5 տարի մարման ժամկետով, տարեկան 20% տոկոսադրույքով: Վարկի և տոկոսների մարումը կատարվում է անուիտետով, ըստ կազմված ժամանակացույցի, յուրաքանչյուր տարվա վերջում: Վարկի գումարը մուտքագրվել է հաշվարկային հաշվում: Ստացված գումարից 3 000 000 դրամը նույն օրը ներ է դրվել է դեպոզիտային հաշվում 1 տարի ժամկետով, տարեկան 12% տոկոսադրույքով: Փոխառության ծախսումները հաշվառվում են այլընտրանքային մոտեցմամբ. Շենքի կառուցումը ավարտվել է 3-րդ տարվա վերջում, որից հետո վարկի տոկոսների կապիտալացումը դադարեցվել է:

ԽՆԴԻՐ 13.5

Պահանջվում է ստորև բերված տվյալների հիման վրա կազմել երկարաժամկետ փոխառության մարման և դրա գծով տոկոսային ծախսերի հաշվեգրման ժամանակացույցը:

ա) անուիտետով վճարումներ կատարելու դեպքում,

բ) մարման ժամկետի վերջում միանվագ կարգով վճարումներ կատարելու դեպքում:

Ձևակերպել երկարաժամկետ փոխառության ստացման, մարման և տոկոսային ծախսերի հաշվեգրման գործառնությունները:

Տվյալներ. Կազմակերպությունը թողարկել և տեղաբաշխել է երկարաժամկետ պարտատոմսեր 1 000 000 դրամ գումարով, 3 տարի մարման ժամկետով, տարեկան

20% տոկոսադրույթով: Փոխառության գումարը մուտքագրվել է հաշվարկային հաշուն:

ԽՆԴԻՐ 13.6

Ստորև բերված տվյալների հիման վրա ձևակերպել երկարաժամկետ վարկի ստացման, մարման և տոկոսային ծախսերի հաշվառման գործառնությունները: Որոշել փոխառության ծախսումների կապիտալացման դրույթը և կապիտալացման ենթակա գումարը:

Տվյալներ. Վարչական նոր մասնաշենքի կառուցման համար 01.02.200Xթ կազմակերպությունը ստացել է առևտրային բանկից երկարաժամկետ վարկ

8 000 000 դրամ գումարով, 4 տարի մարման ժամկետով, տարեկան 20% տոկոսադրույթով: Վարկի գումարը մուտքագրվել է հաշվարկային հաշվում. Վարկի և տոկոսների մարումը կատարվում է անուիտետով, ըստ կազմված ժամանակացույցի, յուրաքանչյուր տարվա վերջում: Երկու ամիս անց ստացված գումարից 4 000 000 դրամը 10 ամիս ժամկետով տրամադրվել է այլ կազմակերպությանը որպես փոխառություն, տարեկան 10% տոկոսադրույթով: Վերը նշված վարկի գումարից բացի շենքի շինարարության համար օգտագործվել է 1 000 000 դրամ ընդհանուր նպատակներով ներգրավված փոխառությունից: Փոխառությունը ներգրավվել է 200Xթ. մարտի 1-ին պարտատոմսերի թողարկման և տեղաբաշխման ճանապարհով՝ 3 000 000 դրամ գումարով, 2 տարի ժամկետով, տարեկան 16% տոկոսադրույթով, յուրաքանչյուր տարվա վերջում վճարումներ կատարելու պայմանով: Շենքի կառուցումը ավարտվել է 2-րդ տարվա վերջում, որից հետո վարկի տոկոսների կապիտալացումը դադարեցվել է.

ԽՆԴԻՐ 13.7

Պահանջվում է ձևակերպել պետական շնորհի ստացման, ամորտիզացման և վերադարձման գործառնությունները:

Տվյալներ. Կազմակերպությանը 200Xթ. սկզբում տրամադրվել է պետական շնորհ 25 000 000 դրամ գումարով՝ նոր սարքավորումներ ձեռք բերելու նպատակով: Ստացված շնորհի հաշվին ձեռք բերված սարքավորումների օգտակար ծառայությունը սահմանվել է 5 տարի: Երրորդ տարվա վերջում կառավարությունը պահանջել է վերադարձնել շնորհը՝ նախատեսված պայմանը չկատարելու պատճառով.

ԽՆԴԻՐ 13.8

Պահանջվում է ձևակերպել կարճաժամկետ վարկերի և փոխառությունների ստացման և մարման գործառնությունների ձևակերպումները և կատարել գրանցումներ հաշիվներում: Կազմել շրջանառության տեղեկագիրը և հաշվապահական հաշվեկշիռը հաշվետու եռամսյակի վերջի դրությամբ:

Տվյալներ. I. Կազմակերպությունում 200X թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ սինթետիկ հաշիվների մնացորդները կազմել են՝

Հաշ. ծածկ.	Հաշիվների անվանումը	Գումարը, դրամ
111	Շահագործման մեջ գտնվող մաշվող հիմնական միջոցներ	6 000 000
112	Շահագործման մեջ գտնվող հիմնական միջոցների մաշվածություն	268 000
131	Ոչ նյութական ակտիվներ	450 000

211	Նյութեր	789 000
213	Արագամաշ առարկաներ	130 000
214	Անավարտ արտադրություն	120 000
215	Արտադրանք	110 000
221	Դեբիտորական պարտքեր վաճառքների գծով	280 000
251	Դրամարկդ	20 000
252	Հաշվարկային հաշիվ	1 850 000
311	Կանոնադրական կապիտալ	7 800 000
342	Նախորդ տարիների չբաշխված շահույթ	420 000
351	Պահուստային կապիտալ	415 000
411	Երկարաժամկետ բանկային վարկերի գծով վճարվելիք համախառն գումարներ	200 000
414	Չկրած տոկոսային ծախսեր անորտիզացված արժեքով հաշվառվող երկարաժամկետ ֆինանսական պարտավորությունների գծով	48 000
513	Կարճաժամկետ փոխառությունների գծով վճարվելիք համախառն գումարներ	100 000
516	Չկրած տոկոսային ծախսեր անորտիզացված արժեքով հաշվառվող կարճաժամկետ ֆինանսական պարտավորությունների գծով	20 000
521	Կրեդիտորական պարտքեր գնումների գծով	92 000
524	Կարճաժամկետ կրեդիտորական պարտքեր բյուջեին	160 000
525	Կարճաժամկետ կրեդիտորական պարտքեր պարտադիր սոց. ապահովագրության գծով	62 000
527	Կրեդիտորական պարտքեր աշխատավարձի և աշխատակիցների այլ կարճաժամկետ հատուցումների գծով	300 000

II. Հաջորդ տարվա I եռամսյակի ընթացքում կատարվել են հետևյալ տնտեսական գործառնությունները, կապված կարճաժամկետ վարկերի և փոխառությունների ստացման և մարման հետ

Հ/հ	Գործառնությունների բովանդակությունը	Գումարը, դրամ
1	2	3
1.	Կազմակերպությունը հունվարին թողարկել և վաճառել է կարճաժամկետ պարտատոմսեր 12 ամիս մարման ժամկետով, տարեկան 24% տոկոսադրույքով: Պարտատոմսերի վաճառքից ստացված գումարը մուտքագրվել է հաշվարկային հաշվում	200 000
2	Արտացուցվել են կարճաժամկետ պարտատոմսերի գծով չկրած տոկոսային ծախսերը: Փոխառությունը մարվելու է միանվագ կարգով՝ հաշվետու տարվա դեկտեմբերի 30-ին	?
3	Հաշվեգրվել են տոկոսային ծախսերը կարճաժամկետ պարտատոմսերի գծով հաշվետու տարվա I եռամսյակի համար	?
4	Մատակարարից ապառիկ ստացվել են նյութեր	160 000
5.	Մատակարարի պարտքը մարվել է մուրհակով, որը տրվել է հունվարի 30-ին՝ 3 ամիս մարման ժամկետով: Մարումը կա-	160 000

	տարվելու է ամեն ամիս՝ հավասարաչափ	
6.	Արտացոլվել են կարծաժամկետ մուրհակի գծով չկրած տոկոսային ծախսերը (տարեկան 24 %)	?
7.	Հաշվեգրվել են տոկոսային ծախսերը կարծաժամկետ մուրհակի գծով փետրվար-մարտ ամիսների համար	?
8.	Հաշվարկային հաշվից մարվել է պարտքը կարծաժամկետ մուրհակի դիմաց՝ փետրվար ամսվա համար	?
9.	Հաշվարկային հաշվից մարվել է պարտքը կարծաժամկետ մուրհակի դիմաց՝ մարտ ամսվա համար	?
10.	Կարծաժամկետ վարկի հաշվին բացվել է ակրեդիտիվ	100 000
11.	Մատակարարի պարտքը մարվել է ակրեդիտիվից	82 000
12.	Մատակարարից ապառիկ ձեռք են բերվել պահեստամասեր	150 000
13.	Մատակարարի պարտքը պահեստամասերի դիմաց մարվել է կարծաժամկետ վարկի հաշվին. Վարկը տրամադրվել է հաշվետու տարվա մարտի 1-ին՝ 3 ամիս ժամկետով, տարեկան 15% տոկոսադրույքով, ժամկետի վերջում միանվագ մարման պայմանով	150 000
14.	Արտացոլվել են կարծաժամկետ վարկին վերաբերող չկրած տոկոսային ծախսերը (տես գործ. 13)	?
15.	Կարծաժամկետ վարկի գծով մարտ ամսվան վերաբերող չկրած տոկոսային ծախսերը հաշվեգրվել են ժամանակաշրջանի ծախսերին	?
16.	Վարկերի և փոխառությունների գծով ծախսերը դուրս են գրվել ֆինանսական արդյունքին	?
17.	Որոշել և ձևակերպել հաշվետու եռամսյակի շահույթը կամ վնասը	?
	Ընդամենը	?

ԽՆԴԻՐ 13.9

Պահանջվում է կազմել վարկերի և փոխառությունների ստացման և մարման գործառնությունների ձևակերպումները և կատարել գրանցումներ հաշիվներում:

Հ/հ	Գործառնությունների բովանդակությունը	Գումարը, դրամ
1	2	3
1.	Հաշվարկային հաշվում ստացվել է բանկից վարկ 3 տարի ժամկետով, տարեկան 20% տոկոսադրույքով, յուրաքանչյուր տարվա վերջում մարումներ կատարելու պայմանով	1 000 000
2.	Արտացոլվում են երկարաժամկետ վարկերի գծով չկրած տոկոսային ծախսերը	?
3.	Երկարաժամկետ վարկերի ընթացիկ տարվա մասը տեղափոխվում է ընթացիկ պարտավորությունների կազմ	?
4.	Հաշվարկային հաշվից մարվել է երկարաժամկետ վարկերի ընթացիկ մասը	?
5.	Երկարաժամկետ վարկին վերաբերող չկրած տոկոսային ծախսերը հաշվեգրվել են ընթացիկ ժամանակաշրջանի ծախսերին	?
6.	Հաշվարկային հաշվից ժամկետից շուտ մարվել է երկարաժամկետ վարկը.	

	ա) փաստացի վճարումը	500 000
	բ) չկրած տոկոսային ծախսերի մնացորդի դուրս գրումը	20 000
	գ) վճարված գումարի և վարկերի հաշվեկշռային արժեքի տարբերությունը	?
	Ընդամենը երկարաժամկետ վարկերի գծով վճարվելիք համախառն գումարը	550 000
7	Կարճաժամկետ վարկի հաշվին բացվել է ակրեդիտիվ	125 000
8.	Մատակարարի պարտքը մարվել է ակրեդիտիվից	120 000
9.	Մատակարարի պարտքը մարվել է կարճաժամկետ վարկի հաշվին: Վարկը տրամադրվել է 3 ամիս ժամկետով, տարեկան 24% տոկոսադրույքով	200 000
10	Արտացուլվել են կարճաժամկետ վարկին վերաբերող չկրած տոկոսային ծախսերը	?
11.	Կարճաժամկետ վարկին վերաբերող չկրած տոկոսային ծախսերը հաշվեգրվել են ժամանակաշրջանի ծախսերին	?
12.	Հաշվարկային հաշվից մարվել է կարճաժամկետ վարկը, ներառյալ տոկոսները	?
13	Արտարժույթային հաշվում ստացվել է կարճաժամկետ փոխառություն այլ կազմակերպությունից	1 000 000
14.	Արտացուլվել են չկրած տոկոսային ծախսերը ստացված կարճաժամկետ փոխառության գծով	200 000
15.	Կարճաժամկետ փոխառությանը վերաբերող չկրած տոկոսային ծախսերը հաշվեգրվել են ժամանակաշրջանի ծախսերին	20 000
16.	Մատակարարի պարտքը մարվել է երկարաժամկետ մուրհակով	250 000
17.	Արտացուլվել են չկրած տոկոսային ծախսերը երկարաժամկետ մուրհակի գծով	75 000
18	Երկարաժամկետ մուրհակի գծով չկրած տոկոսային ծախսերը հաշվեգրվել են ժամանակաշրջանի ծախսերին	50 000
1	2	3
19	Հաշվարկային հաշվում ստացվել է այլ կազմակերպությունից երկարաժամկետ փոխառություն արտադրական շինությունների վերակառուցման համար` 2 տարի ժամկետով, տարեկան 18% տոկոսադրույքով, ժամկետի վերջում պարտքի մարման պայմանով	1 500 000
20.	Արտացուլվում են չկրած տոկոսային ծախսերը ստացված երկարաժամկետ փոխառության գծով (տես գործ. 19)	?
21	Կապիտալացվում են երկարաժամկետ փոխառության գծով հաշվետու տարվան վերաբերող տոկոսային ծախսերը (տես գործ. 19)	?

ԽՆԴԻՐ 13.10

Պահանջվում է կազմել գնումների գծով կրեդիտորական պարտքերի առաջացման և մարման գործառնությունների ձևակերպումները, կատարել գրանցումներ սինթետիկ և անալիտիկ հաշիվներում, ստուգել հաշիվներում կատարված գրանցումների ճշտությունը՝ շրջանառության տեղեկագիր կազմելու միջոցով և հաշիվների ստուգ-

ված մնացորդների հիման վրա կազմել հաշվապահական հաշվեկշիռ հաշվետու ժամանակաշրջանի վերջի դրությամբ:

Տվյալներ. I. Սինթետիկ հաշիվների մնացորդները առ 31 դեկտեմբերի 200X թ.

Հաշ. ծածկ.	Հաշիվների անվանումը	Գումարը, դրամ
111	Շահագործման մեջ գտնվող մաշվող հիմնական միջոցներ	3 000 000
112	Շահագործման մեջ գտնվող հիմնական միջոցների մաշվածություն	700 000
211	Նյութեր	990 000
213	Արագամաշ առարկաներ	450 000
214	Անավարտ արտադրություն	335 000
215	Արտադրանք	1 220 000
221	Դեբիտորական պարտքեր վաճառքների գծով	665 000
251	Դրամարկդ	180 000
252	Հաշվարկային հաշիվ	1 820 000
311	Կանոնադրական (բաժնեհավաք) կապիտալ	5 000 000
343	Հաշվետու տարվա զուտ շահույթ (վնաս)	1 000 000
521	Կրեդիտորական պարտքեր գնումների գծով	620 000
524	Կարճաժամկետ կրեդիտորական պարտքեր բյուջեին	460 000
525	Կարճաժամկետ կրեդիտորական պարտքեր պարտադիր սոցիալական ապահովագրության գծով	80 000
527	Կրեդիտորական պարտքեր աշխատավարձի և աշխատակիցների այլ կարճաժամկետ հատուցումների գծով	800 000

II. Հաջորդ տարվա I եռամսյակում տեղի ունեցած տնտեսական գործառնությունները.

N	Տնտեսական գործառնությունների բովանդակությունը	Գումարը, դրամ
1	2	3
1.	Հաստոցաշինական գործարանից ստացվել և պահեստ են հանձնվել հաստոցներ, որոնց համար մատակարարին դեռևս վճարում չի իրականացվել`	550 000 ? ?
	ա) ձեռք բերման արժեքը	
	բ) ԱԱՀ	
	Ընդամենը	
2.	«Ադամանդ» ԲԲԸ-ից ձեռք է բերվել արտոնագիր`	250 000 ? ?
	ա) ձեռք բերման արժեքը	
	բ) ԱԱՀ	
	Ընդամենը	
3.	«Սետալուրգ» ԲԲԸ-ից ձեռք են բերվել նյութեր: Նյութերի մուտքագրման ժամանակ հայտնաբերվել է պակասորդ`	200 000 40 000 60 000
	ա) փաստացի մուտքագրվել է` ձեռք բերման գներով	
	բ) ԱԱՀ	
	գ) պակասորդը	

	Ընդամենը ըստ մատակարարի հաշվի	300 000
4.	Հաշվարկային հաշվից փոխանցվել է կանխավճար «Ավտոպահեստամասեր» մեծածախ առևտրական կազմակերպությանը՝ պահեստամասերի ձեռք բերման համար	100 000
5.	«Ավտոպահեստամասեր» մեծածախ առևտրական կազմակերպությունից ստացվել են պահեստամասեր	
	ա) ձեռք բերման գներով բ) ԱԱՀ	250 000 50 000
	Ընդամենը	300 000
6.	«Ավտոպահեստամասեր» կազմակերպության պարտքը ձեռք բերված պահեստամասերի դիմաց մարվել է՝	
	ա) վճարված կանխավճարի հաշվանցմամբ բ) հաշվարկային հաշվից	? ?
	Ընդամենը	?
7.	Հաշվարկային հաշվից բացվել է ակրեդիտիվ կահույքի ֆաբրիկայի համար	600 000
8.	Կահույքի ֆաբրիկայից ձեռք է բերվել արագամաշ գույք	
	ա) ձեռք բերման գներով բ) ԱԱՀ	350 000 ?
	Ընդամենը	?
9.	Ձեռք բերված արագամաշ գույքի դիմաց կահույքի ֆաբրիկայի պարտքը մարվել է ակրեդիտիվից	420 000
10.	Հաշվարկային հաշվում մուտքագրվել է երկարաժամկետ բանկային վարկը	3 000 000
11.	Արտացույցվել են չկրած տոկոսային ծախսերը երկարաժամկետ վարկերի գծով	1 000 000
12.	Հաշվարկային հաշվից փոխանցվել է կանխավճար կապալառուին՝ շենքի շինարարության համար	1 000 000
13.	Կապալառուից ընդունվել և շահագործման է հանձնվել	
1	2	3
	կառուցված շենքը՝	
	ա) ձեռք բերման գներով բ) ԱԱՀ	2 500 000 ?
	Ընդամենը	?
14.	Կապալառուի պարտքը մարվել է վճարված կանխավճարի հաշվանցմամբ	?
15.	Կապալառուի հանդեպ պարտքի մնացած մասը մարվել է հաշվարկային հաշվից	?
16.	«Մետալուրգ» ԲԲԸ-ի պարտքը մարվել է ընդունված բողոքարկման գծով դեբիտորական պարտքի հաշվանցմամբ	?
17.	Ձեռք բերված հաստոցների դիմաց մատակարարի պարտքը մարվել է երկարաժամկետ մուրհակով	660 000
18.	Արտացույցվել են չկրած տոկոսային ծախսերը երկարաժամկետ մուրհակի գծով	150 000
19.	Վերածևակերպվել է մատակարարներից ձեռք բերված և վճարված ակտիվներին վերաբերող հաշվանցման ենթակա ԱԱՀ գումարը	?

20.	Արտադրանքը պահեստից առաքվել է գնորդին՝ ինքնարժեքով	800 000
21.	ճանաչվել է հասույթը արտադրանքի վաճառքից՝	1 000 000
	ա) բացթողման գներով	?
	բ) ԱԱՀ-ն	?
	Ընդամենը	?
22	Հաշվանցվել է բյուջեի կողմից փոխհատուցման ենթակա ԱԱՀ	?
23	Փոխհատուցման ենթակա ԱԱՀ-ի չփոխհատուցված գումարը վերաձևակերպվել է որպես դեբիտորական պարտք	?
24.	Երկարաժամկետ վարկի և մուրհակի գծով չկրած տոկոսային ծախսերը հաշվեգրվել են ժամանակաշրջանի ծախսերին	200 000
25.	Հաշվետու ժամանակաշրջանի ծախսերը դուրս են գրվել ֆինանսական արդյունքին	?
26	Հաշվետու ժամանակաշրջանի եկամուտները դուրս են գրվել ֆինանսական արդյունքին	?
27.	Ձևակերպվել է հաշվետու եռամսյակի շահույթը կամ վնասը	?
	Ընդամենը	?

ԽՆԴԻՐ 13.11

Պահանջվում է հաշվարկել աշխատավարձ ժամանակավարձով վարձատրվող բանվորին:

Տվյալներ. V տարակարգի բանվոր Կ.Ստեփանյանը հաշվարկային ամսում աշխատել է 180 ժամ, որից 20 ժամը համարվել է գիշերային աշխատանք: V տարակարգի ժամային տարիֆային դրույքը սահմանված է 250 դրամ: Գիշերային աշխատանքի յուրաքանչյուր ժամը վարձատրվում է մեկուկես դրույքի չափով: Բացի այդ, բանվորին հաշվարկվել է պարգևավճար՝ հաշվարկված աշխատավարձի 50%-ի չափով:

ԽՆԴԻՐ 13.12

Պահանջվում է հաշվարկել աշխատավարձ պաշտոնային դրույքաչափով վարձատրվող ծառայողին:

Տվյալներ. Հավաքման արտադրամասի պետ Արտակ Կարապետյանի ամսական պաշտոնային դրույքաչափը սահմանված է 280 000 դրամ. Հաշվարկային ամսում 22 աշխատանքային օր է, որից նա աշխատել է 20 օր: Ա Կարապետյանը ներկայացրել է ժամանակավոր անաշխատունակության թերթիկ՝ 4 օրացուցային օրվա համար ժամանակավոր անաշխատունակության նպաստը որոշելիս հաշվի առնել, որ աշխատողի նախորդ 3 ամսվա աշխատավարձը կազմել է 950 000 դրամ, իսկ ապահովագրական ստաժը՝ 12 տարի:

ԽՆԴԻՐ 13.13

Պահանջվում է հաշվարկել գործավարձով վարձատրվող բանվորի աշխատավարձը:

Տվյալներ. IV տարակարգի բանվոր Թ.Սահակյանը հաշվարկային ամսում կատարել է հետևյալ աշխատանքները:

ԽՆԴԻՐ 13.16

Ստորև բերված տվյալների հիման վրա պահանջվում է հաշվարկել ժամանակավոր անաշխատունակության նպաստի գումարը:

Տվյալներ. Հավաքման արտադրամասի ինժեներ Գ.Պողոսյանը 200Xթ. նոյեմբերի 10-ից 16-ը բացակայել է հիվանդության պատճառով՝ համաձայն բուժհիմնարկի կողմից տրված ժամանակավոր անաշխատունակության թերթիկի՝ Գ.Պողոսյանի ամսական պաշտոնային դրույքաչափը 125 000 դրամ է, անաշխատունակությանը նախորդող 3 ամիսներին բացակայություններ և այլ շեղումներ չեն եղել, և աշխատողին հաշվարկվել է աշխատավարձ սահմանված դրույքաչափով: Այդ ժամանակահատվածում աշխատողին հաշվարկվել են պարգևավճարներ 300 000 դրամի չափով: Աշխատողի ապահովագրական ստաժը 7 տարի է:

ԽՆԴԻՐ 13.17

Ստորև բերված տվյալների հիման վրա պահանջվում է հաշվարկել աշխատողների աշխատավարձի և դրանից կատարվող պահումների գումարները և լրացնել աշխատավարձի հաշվարկային տեղեկագիրը օգոստոս ամսվա համար:

Տվյալներ.

1. Ընկերության տնօրեն Կ.Սիմոնյանի ամսական պաշտոնային դրույքաչափը սահմանված է 320 000 դրամ: Օգոստոս ամսում նա աշխատել է ամսվա բոլոր օրերը Պաշտոնային դրույքաչափից բացի, նրան հաշվարկվել է պարգևավճար պաշտոնային դրույքաչափի 80%-ի չափով: Ամսվա առաջին կեսի համար նրան վճարվել է կանխավճար՝ 100 000 դրամ:

2. Գլխավոր հաշվապահ Մ.Վարդանյանի ամսական պաշտոնային դրույքաչափը սահմանված է 280 000 դրամ: Օգոստոս ամսում նա աշխատել է 11 օր, իսկ օգոստոսի 15-ից նրան տրամադրվել է արձակուրդ 28 օրացուցային օրով: Բացի այդ, նրան հաշվարկվել է պարգևավճար՝ պաշտոնային դրույքաչափի 80%-ի չափով: Արձակուրդային աշխատավարձը որոշելիս հաշվի առնել, որ արձակուրդին նախորդող 12 լրիվ ամիսների աշխատավարձի հանրագումարը կազմել է 3 540 000 դրամ:

3. Արտադրամասի տեխնոլոգ Ա.Կարապետյանի ամսական պաշտոնային դրույքաչափը սահմանված է 160 000 դրամ: Օգոստոս ամսում նա աշխատել է 20 օր, իսկ 2 օր բացակայել է ժամանակավոր անաշխատունակության պատճառով ժամանակավոր անաշխատունակության նպաստը հաշվարկելիս հաշվի առնել, որ մայիս-հուլիս ամիսներին նրան հաշվարկված աշխատավարձի հանրագումարը կազմել է 500 000 դրամ, իսկ այդ ժամանակահատվածում հաշվարկված և վճարված պարգևավճարը կազմել է 200 000 դրամ: Բացի այդ, օգոստոս ամսվա համար նրան հաշվարկվել է պարգևավճար՝ պաշտոնային դրույքաչափի 80%-ի չափով: Ամսվա առաջին կեսի համար վճարվել է կանխավճար 50 000 դրամի չափով:

4. Արտադրամասի IV տարակարգի բանվոր Ա.Ստեփանյանը վարձատրվում է գործավարձով: Օգոստոս ամսում նա մշակել է 1200 դետալ, յուրաքանչյուր դետալի վարձաչափը սահմանված է 100 դրամ: Հաշվարկվել է նաև պարգևավճար հաշվարկված աշխատավարձի 80%-ի չափով: Ամսվա առաջին կեսի համար վճարվել է կանխավճար՝ 25 000 դրամ:

5. Արտադրամասի V տարակարգի բանվոր Ա.Գևորգյանը զբաղված է ապարատուրային գործընթացում և վարձատրվում է ժամավարձով: Օգոստոս ամսում նա աշխատել է 240 ժամ, որից 40 ժամը՝ արտաժամյա: V տարակարգի ժամային տարիֆային դրույքը սահմանված է 200 դրամ: Արտաժամյա աշխատանքի յուրաքանչյուր

ԽՆԴԻՐ 13.16

Ստորև բերված տվյալների հիման վրա պահանջվում է հաշվարկել ժամանակավոր անաշխատունակության նպաստի գումարը:

Տվյալներ. Հավաքման արտադրամասի ինժեներ Գ.Պողոսյանը 200Xթ. նոյեմբերի 10-ից 16-ը բացակայել է հիվանդության պատճառով՝ համաձայն բուժփիմնարկի կողմից տրված ժամանակավոր անաշխատունակության թերթիկի Գ.Պողոսյանի ամսական պաշտոնային դրույքաչափը 125 000 դրամ է, անաշխատունակությանը նախորդող 3 ամիսներին բացակայություններ և այլ շեղումներ չեն եղել, և աշխատողին հաշվարկվել է աշխատավարձ սահմանված դրույքաչափով: Այդ ժամանակահատվածում աշխատողին հաշվարկվել են պարգևավճարներ 300 000 դրամի չափով: Աշխատողի ապահովագրական ստաժը 7 տարի է:

ԽՆԴԻՐ 13.17

Ստորև բերված տվյալների հիման վրա պահանջվում է հաշվարկել աշխատողների աշխատավարձի և դրանից կատարվող պահումների գումարները և լրացնել աշխատավարձի հաշվարկային տեղեկագիրը օգոստոս ամսվա համար:

Տվյալներ.

1. Ընկերության տնօրեն Կ.Սիմոնյանի ամսական պաշտոնային դրույքաչափը սահմանված է 320 000 դրամ: Օգոստոս ամսում նա աշխատել է ամսվա բոլոր օրերը Պաշտոնային դրույքաչափից բացի, նրան հաշվարկվել է պարգևավճար պաշտոնային դրույքաչափի 80%-ի չափով: Ամսվա առաջին կեսի համար նրան վճարվել է կանխավճար՝ 100 000 դրամ:

2. Գլխավոր հաշվապահ Մ.Վարդանյանի ամսական պաշտոնային դրույքաչափը սահմանված է 280 000 դրամ: Օգոստոս ամսում նա աշխատել է 11 օր, իսկ օգոստոսի 15-ից նրան տրամադրվել է արձակուրդ 28 օրացուցային օրով: Բացի այդ, նրան հաշվարկվել է պարգևավճար՝ պաշտոնային դրույքաչափի 80%-ի չափով: Արձակուրդային աշխատավարձը որոշելիս հաշվի առնել, որ արձակուրդին նախորդող 12 լրիվ ամիսների աշխատավարձի հանրագումարը կազմել է 3 540 000 դրամ:

3. Արտադրամասի տեխնոլոգ Ա.Կարապետյանի ամսական պաշտոնային դրույքաչափը սահմանված է 160 000 դրամ: Օգոստոս ամսում նա աշխատել է 20 օր, իսկ 2 օր բացակայել է ժամանակավոր անաշխատունակության պատճառով: Ժամանակավոր անաշխատունակության նպաստը հաշվարկելիս հաշվի առնել, որ մայիս-հուլիս ամիսներին նրան հաշվարկված աշխատավարձի հանրագումարը կազմել է 500 000 դրամ, իսկ այդ ժամանակահատվածում հաշվարկված և վճարված պարգևավճարը կազմել է 200 000 դրամ: Բացի այդ, օգոստոս ամսվա համար նրան հաշվարկվել է պարգևավճար՝ պաշտոնային դրույքաչափի 80%-ի չափով: Ամսվա առաջին կեսի համար վճարվել է կանխավճար 50 000 դրամի չափով:

4. Արտադրամասի IV տարակարգի բանվոր Ա.Ստեփանյանը վարձատրվում է գործավարձով: Օգոստոս ամսում նա մշակել է 1200 դետալ, յուրաքանչյուր դետալի վարձաչափը սահմանված է 100 դրամ: Հաշվարկվել է նաև պարգևավճար հաշվարկված աշխատավարձի 80%-ի չափով: Ամսվա առաջին կեսի համար վճարվել է կանխավճար՝ 25 000 դրամ:

5. Արտադրամասի V տարակարգի բանվոր Ա.Գևորգյանը զբաղված է ապարատուրային գործընթացում և վարձատրվում է ժամավարձով: Օգոստոս ամսում նա աշխատել է 240 ժամ, որից 40 ժամը՝ արտաժամյա: V տարակարգի ժամային տարիֆային դրույքը սահմանված է 200 դրամ: Արտաժամյա աշխատանքի յուրաքանչյուր

Ժամը վարձատրվում է 1,5 ժամային դրույքաչափով Հաշվարկվել է նաև պարգևավճար հաշվարկված աշխատավարձի 80%-ի չափով: Ամսվա առաջին կեսի համար վճարվել է կանխավճար՝ 15 000 դրամ:

6. Հաշվարկային բաժնի հաշվապահ Կ Լալայանի ամսական պաշտոնային դրույքաչափը սահմանված է 220 000 դրամ: Օգոստոս ամսում նա աշխատանքի է ներկայացել բոլոր օրերին: Նրան հաշվարկվել է նաև պարգևավճար պաշտոնային դրույքաչափի 80%-ի չափով: Ամսվա առաջին կեսի համար նրան վճարվել է կանխավճար՝ 40 000 դրամ: Աշխատավարձից պահվել են ալիմենտներ՝ 25%-ի չափով:

ԽՆԴԻՐ 13.18

Պահանջվում է կազմել աշխատավարձի հաշվարկման, վճարման, պահումների կատարման գործառնությունների ձևակերպումները

Հ/հ	Գործառնությունների բովանդակությունը	Գումարը, դրամ
1	2	3
1.	Հաշվարկային հաշվից ստացվել է դրամարկղում կանխիկ դրամ փետրվար ամսվա աշխատավարձը վճարելու համար	2 850 000
2.	Դրամարկղից վճարվել է աշխատողներին փետրվարի աշխատավարձը	2 720 000
3	Ավանդագրվել է ժամանակին չվճարված աշխատավարձը	?
4	Դրամարկղից վերադարձվել է հաշվարկային հաշիվ ժամանակին չվճարված աշխատավարձի գումարը	?
5.	Հաշվարկային հաշվից փոխանցվել են	220 000
	ա) բյուջեին՝ աշխատավարձից պահված հարկերը բ) սոցիալական ապահովագրության մարմիններին՝ սոցիալական ապահովագրության վճարները	410 000
6	Դրամարկղից աշխատողներին վճարվել է կանխավճար մարտ ամսվա համար	820 000
7.	Մարտ ամսվա համար հաշվարկվել է աշխատավարձ հիմնական արտադրամասի աշխատողներին.	
	ա) արտադրական բանվորներին՝ M-010 արտադրատեսակի պատրաստման համար	650 000
	բ) արտադրական բանվորներին՝ M-050 արտադրատեսակի պատրաստման համար	430 000
	գ) արտադրական բանվորներին՝ գնորդների կողմից հետ վերադարձված M-050 արտադրատեսակի խոտանի շտկման	
1	2	3
	համար	50 000
	դ) կառավարման և սպասարկող անձնակազմին	250 000
8.	Մարտ ամսվա համար հաշվարկվել է աշխատավարձ օժանդակ արտադրամասի աշխատողներին.	
	ա) արտադրական բանվորներին՝ N 1 պատվերի կատարման համար	250 000
	բ) արտադրական բանվորներին՝ N 2 պատվերի կատարման համար	120 000
	գ) կառավարման և սպասարկող անձնակազմին	100 000
9	Մարտ ամսվա համար հաշվարկվել է աշխատավարձ վարչու-	820 000

	թյան աշխատողներին	
10.	Մարտ ամսվա համար պահեստի բանվորներին հաշվարկվել է աշխատավարձ պատրաստի արտադրանքի փաթեթավորման համար	180 000
11	Հաշվարկվել են ժամանակավոր անաշխատունակության նպաստներ հիվանդության պատճառով բացակայած աշխատողներին	140 000
12.	Կատարվել են սոցիալական ապահովագրության հատկացումներ	
	ա) M-010 արտադրատեսակի պատրաստմամբ զբաղված հիմնական արտադրամասի արտադրական բանվորների համար	100 000
	բ) M-050 արտադրատեսակի պատրաստմամբ զբաղված հիմնական արտադրամասի արտադրական բանվորների համար	60 000
	գ) M-010 արտադրատեսակի խոտանի շտկմամբ զբաղված արտադրական բանվորների համար	11 500
	դ) հիմնական արտադրամասի կառավարման և սպասարկող անձնակազմի համար	40 000
	ե) N 1 պատվերի կատարմամբ զբաղված օժանդակ արտադրամասի արտադրական բանվորների համար	40 000
	զ) N 2 պատվերի կատարմամբ զբաղված օժանդակ արտադրամասի արտադրական բանվորների համար	26 000
	է) օժանդակ արտադրամասի կառավարման և սպասարկող անձնակազմի համար	19 000
ը) վարչության աշխատողների համար	135 000	
	թ) պատրաստի արտադրանքի փաթեթավորմամբ զբաղված պահեստի բանվորների համար	35 000
13	Հաշվարկված աշխատավարձից կատարվել են հետևյալ պահումները.	
	ա) եկամտահարկի	350 000
	բ) սոցիալական ապահովագրության վճարի (3%)	?
	գ) ալիմենտների	50 000
	դ) նյութական վնասի հատուցման համար	20 000
	ե) ապառիկ վաճառված ապրանքների դիմաց	150 000
	Ընդամենը	?

ԽՆԴԻՐ 13.19

Ստորև բերված տվյալների հիման վրա պահանջվում է որոշել ակտիվի հաշվեկշռային արժեքը և հարկային բազան, ձևակերպել հետաձգված հարկային ակտիվի ճանաչումը և մարումը ըստ տարիների:

Տվյալներ. Կազմակերպությունը ձեռք է բերել սարքավորումներ, որոնց սկզբնական արժեքը 650 000 դրամ է: Ըստ կազմակերպության հաշվային քաղաքականության ձեռքբերված սարքավորման օգտակար ծառայությունը սահմանվել է 3 տարի, իսկ մաշվածության հաշվարկը կատարվում է գծային եղանակով:

ԽՆԴԻՐ 13.20

Ստորև բերված տվյալների հիման վրա պահանջվում է որոշել ակտիվի հաշվեկշռային արժեքը և հարկային բազան, ձևակերպել հետաձգված հարկային ակտիվի ճանաչումը և մարումը ըստ տարիների.

Տվյալներ. Կազմակերպությունը ձեռք է բերել սարքավորումներ, որոնց սկզբնական արժեքը 500 000 դրամ է: Ըստ կազմակերպության հաշվային քաղաքականության ձեռքբերված սարքավորման օգտակար ծառայությունը սահմանվել է 5 տարի, իսկ մաշվածության հաշվարկը կատարվում է նվազող մնացորդի եղանակով Արագացման գործակիցը 2 է.

ԽՆԴԻՐ 13.21

Ստորև բերված տվյալների հիման վրա պահանջվում է որոշել ակտիվի հաշվեկշռային արժեքը և հարկային բազան, ձևակերպել հետաձգված հարկային պարտավորության ճանաչումը և մարումը ըստ տարիների:

Տվյալներ. Կազմակերպությունը ձեռք է բերել սարքավորումներ, որոնց սկզբնական արժեքը 500 000 դրամ է: Ըստ կազմակերպության հաշվային քաղաքականության ձեռքբերված սարքավորման օգտակար ծառայությունը սահմանվել է 5 տարի, իսկ մաշվածության հաշվարկը կատարվում է գծային եղանակով Սարքավորման մնացորդային արժեքը գնահատվել է 50 000 դրամ.

ԽՆԴԻՐ 13.22

Պահանջվում է կազմել անուղղակի հարկերի գծով բյուջեի հանդեպ կրեդիտորական պարտքերի առաջացման և մարման գործառնությունների ձևակերպումները, կատարել գրանցումներ սինթետիկ հաշիվներում, ստուգել հաշիվներում կատարված գրանցումների ճշտությունը շրջանառության տեղեկագիր կազմելու միջոցով, և հաշիվների ստուգված մնացորդների հիման վրա կազմել հաշվապահական հաշվեկշիռ հաշվետու ժամանակաշրջանի վերջի դրությամբ:

Տվյալներ I. Սինթետիկ հաշիվների մնացորդները առ 31 դեկտեմբերի 200X թ.

Հաշ. ծածկ.	Հաշիվների անվանումը	Գումարը, դրամ
1	2	3
111	Շահագործման մեջ գտնվող մաշվող հիմնական միջոցներ	3 200 000
112	Շահագործման մեջ գտնվող հիմնական միջոցների մաշվածություն	900 000
211	Նյութեր	1 590 000
213	Արագամաշ առարկաներ	450 000
214	Անավարտ արտադրություն	635 000
1	2	3
215	Արտադրանք	1 420 000
221	Դեբիտորական պարտքեր վաճառքների գծով	665 000
228	Ընթացիկ դեբիտորական պարտքեր առհաշիվ տրված գումարների գծով	50 000
251	Դրամարկղ	125 000
252	Հաշվարկային հաշիվ	1 820 000

311	Կանոնադրական (բաժնեհավաք) կապիտալ	5 800 000
343	Հաշվետու տարվա գուտ շահույթ (վնաս)	1 500 000
521	Կրեդիտորական պարտքեր գնումների գծով	620 000
524	Կարճաժամկետ կրեդիտորական պարտքեր բյուջեին	155 000
525	Կարճաժամկետ կրեդիտորական պարտքեր պարտադիր սոցիալական ապահովագրության գծով	80 000
527	Կրեդիտորական պարտքեր աշխատավարձի և աշխատակիցների այլ կարճաժամկետ հատուցումների գծով	900 000

II. Ընթացիկ տարվա I եռամսյակում տեղի ունեցած տնտեսական գործառնությունները

N	Տնտեսական գործառնությունների բովանդակությունը	Գումարը, դրամ
1	2	3
1.	Մատակարարից ստացվել և պահեստ են հանձնվել տեղակայում չպահանջող սարքավորումներ, որոնց համար մատակարարին դեռևս վճարում չի իրականացվել` ա) ձեռք բերման արժեքը բ) ԱԱՀ	500 000 ?
	Ընդամենը	?
2.	Ծրագրավորող կազմակերպությունից ձեռք է բերվել համակարգչային ծրագիր ա) ձեռք բերման արժեքը բ) ԱԱՀ	450 000 ?
	Ընդամենը	?
3	Մատակարարից ձեռք են բերվել նյութեր ա) ձեռք բերման գներով բ) ԱԱՀ	250 000 ?
	Ընդամենը ըստ մատակարարի հաշվի	?
4.	Մատակարարից ստացվել են պահեստամասեր ա) ձեռք բերման գներով բ) ԱԱՀ	50 000 ?
	Ընդամենը	?
5.	Ձեռք է բերվել արագամաշ գույք, որի համար վճարվել է հաշվարկային հաշվից ա) ձեռք բերման գներով բ) ԱԱՀ	120 000 ?
	Ընդամենը	?
1	2	3
6.	Իրացվել է չօգտագործվող արագամաշ գույքը, որը դուրս է գրվել ինքնարժեքով	60 000
7.	ճանաչվել է եկամուտը արագամաշ գույքի վաճառքից` բաց թողնման գներով վաճառքի գնի մեջ ներառված ԱԱՀ	80 000 ?
	Ընդամենը	?

8	Պատրաստի արտադրանքը առաքվել է գնորդին ինքնարժեքով	900 000
9.	Գնորդին ներկայացվել է հաշիվ-ապրանքագիր առաքված արտադրանքի համար ա) բացթողման գներով բ) ԱԱՀ	1 200 000 ?
	Ընդամենը	?
10	Գնորդին վաճառվել է կազմակերպությանը պատկանող ավտոմեքենան ա) բացթողման գներով բ) ԱԱՀ	1 000 000 ?
	Ընդամենը վաճառքի գներով	?
11	Դուրս է գրվել վաճառված ավտոմեքենայի՝ ա) հաշվեկշռային արժեքը բ) կուտակված մաշվածությունը	650 000 350 000
12	Հաշվարկային հաշվում ստացվել է գնորդից՝ վաճառված արտադրանքի արժեքը	1 440 000
13.	Գնորդի կողմից հետ է վերադարձվել դեռևս չվճարված արտադրանքը ա) ինքնարժեքով բ) բացթողման գներով գ) ԱԱՀ	90 000 120 000 ?
	14.	Ձևակերպվել է արտադրանքի հետ վերադարձումից հասույթի ճշգրտումը
15.	Հաշվարկային հաշվից վճարվել է մատակարարներին ձեռք բերված նյութերի, սարքավորումների և համակարգչային ծրագրի արժեքը	1 440 000
16	Վերաձևակերպվել են մատակարարների վճարված հաշիվներում առանձնացված և հաշվանցման ենթակա ԱԱՀ-ի գումարները	?
17.	Հաշվանցվել է բյուջեի կողմից փոխհատուցման ենթակա ԱԱՀ-ի գումարը	?
18.	Հաշվարկային հաշվից փոխանցվել է բյուջե ԱԱՀ-ի գումարը	?
19.	Փակվել են ծախսերի հաշվառման հաշիվները	?
20	Փակվել են եկամուտների հաշվառման հաշիվները	?
21	Որոշվել և ձևակերպվել է հաշվետու եռամսյակի շահույթը կամ վնասը	?
	Ընդամենը	?

ԽՆԴԻՐ 13.23

Պահանջվում է կազմել գործառնական կրեդիտորական պարտքերի առաջացման և մարման գործառնությունների ձևակերպումները.

Հ/հ	Գործառնությունների բովանդակությունը	Գումարը, դրամ
1	2	3
1	Մատակարարից ապառիկ ձեռք են բերվել համակարգիչներ,	

	որոնք հանձնվել են պահեստ. ա) ձեռք բերման արժեքը բ) ԱԱՀ Ընդամենը	800 000 ? ?
2.	Մետալուրգիական գործարանից ձեռք են բերվել նյութեր: Նյութերի մուտքագրման ժամանակ հայտնաբերվել է պակասորդ՝ փաստացի մուտքագրվել է ձեռք բերման գներով ԱԱՀ Ընդամենը ըստ մատակարարի հաշվի	25 000 150 000 ? ?
3.	Հաշվարկային հաշվից փոխանցվել է կանխավճար մեծածախ առևտրական կազմակերպությանը՝ նյութեր ձեռք բերելու համար	50 000
4.	Հաշվարկային հաշվից փոխանցվել է կանխավճար հաստոցաշինական գործարանին՝ սարքավորումներ ձեռք բերելու համար	500 000
5.	Մեծածախ առևտրական կազմակերպությունից ստացվել են նյութեր. ա) ձեռք բերման գներով բ) ԱԱՀ	140 000 ?
6.	Առևտրական կազմակերպության պարտքը մարվել է. ա) հաշվանցվել է կանխավճարը բ) պարտքի դիմաց մնացած գումարը փոխանցվել է հաշվարկային հաշվից Ընդամենը	? ? ?
7.	Հաստոցաշինական գործարանից ձեռք են բերվել սարքավորումներ. ա) ձեռք բերման գներով բ) ԱԱՀ	1 000 000 ?
8.	Հաստոցաշինական գործարանի պարտքը մարվել է. ա) հաշվանցվել է կանխավճարը բ) պարտքի դիմաց մնացած գումարը փոխանցվել է հաշվարկային հաշվից	? ?
9.	Հաշվարկային հաշվից բացվել է ակրեդիտիվ	250 000
10.	Մատակարարից ձեռք են բերվել գնովի կիսապատրաստուքներ. ա) ձեռք բերման գներով բ) ԱԱՀ	200 000 ?
11.	Ակրեդիտիվից մարվել է մատակարարի պարտքը ձեռք բերված	
1	2	3
	գնովի կիսապատրաստուքների դիմաց	?
12.	Ակրեդիտիվի չօգտագործված գումարը մուտքագրվել է հաշվարկային հաշիվ	?
13.	Մատակարարի պարտքը մարվել է ընդունված բողոքարկման գծով դեբիտորական պարտքի հաշվանցմամբ	25 000
14.	Մատակարարի պարտքը մարվել է երկարաժամկետ մուրհա-	130 000

	կով	
15.	Մատակարարի պարտքը մարվել է երկարաժամկետ վարկի հաշվին	240 000
16.	Մատակարարի պարտքը մարվել է կարճաժամկետ վարկի հաշվին	120 000
17.	Վերածևակերպվել է մատակարարներից ձեռք բերված և վճարված ակտիվներին վերաբերվող հաշվանցման ենթակա ԱԱՀ գումարը	165 000
18.	Արտադրանքը պահեստից առաքվել է գնորդին՝ ինքնարժեքով	850 000
19.	ճանաչվել է հասույթը արտադրանքի վաճառքից՝ ա) բացթողման գներով բ) ԱԱՀ	1 200 000 ?
20.	Հաշվանցվել է բյուջեի կողմից փոխհատուցման ենթակա ԱԱՀ	425 000
21.	Փոխհատուցման ենթակա ԱԱՀ-ի չփոխհատուցված գումարը վերածևակերպվել է որպես դեբիտորական պարտք	25 000
22.	Իրացվել է չօգտագործվող արագամաշ գույքը, որը դուրս է գրվել ինքնարժեքով	125 000
23.	ճանաչվել է եկամուտը արագամաշ գույքի վաճառքից. ա) բացթողման գներով բ) ԱԱՀ	150 000 ?
24.	Հաշվարկային հաշվից բյուջե է փոխանցվել ԱԱՀ-ի գումարը	650 000
25.	Դրամարկդից վճարվել է աշխատողների աշխատավարձը	2 450 000
26.	Ավանդագրվել է ժամանակին չվճարված աշխատավարձը	85 000
27.	Հաշվարկվել է աշխատավարձ	
	ա) հիմնական արտադրամասի արտադրական բանվորներին՝ արտադրանքի պատրաստման համար	850 000
	բ) օժանդակ արտադրամասի արտադրական բանվորներին	250 000
	գ) արտադրամասերի կառավարման և սպասարկող անձնակազմին	350 000
	դ) հիմնական արտադրամասի արտադրական բանվորներին՝ գնորդի կողմից հետ վերադարձված խոտանի շտկման համար	54 000
	ե) վարչության աշխատողներին	450 000
զ) պահեստի բանվորներին՝ պատրաստի արտադրանքի փաթեթավորման համար	120 000	
է) հիմնական միջոցների լուծարմամբ զբաղված բանվորներին	36 000	
28.	Հաշվարկվել են ժամանակավոր անաշխատունակության նպաստներ հիվանդության պատճառով բացակայած աշխատողներին	85 000
1	2	3
29.	Կատարվել են սոցիալական ապահովագրության հատկացումներ.	
	ա) հիմնական արտադրամասի արտադրական բանվորների համար	100 000
	բ) օժանդակ արտադրամասի բանվորների համար	30 000
	գ) արտադրամասերի կառավարման և սպասարկող անձնա-	40 000

	կազմի համար դ) խոտանի շտկմամբ զբաղված հիմնական արտադրամասի արտադրական բանվորների համար ե) վարչության աշխատողների համար զ) պատրաստի արտադրանքի փաթեթավորմամբ զբաղված պահեստի բանվորների համար է) հիմնական միջոցների լուծարմամբ զբաղված բանվորների համար	10 000 50 000 15 000 5 000
30.	Հաշվարկված աշխատավարձից կատարվել են հետևյալ պահումները. ա) եկամտահարկի բ) սոցիալական ապահովագրության վճարի գ) ալիմենտների դ) նյութական վնասի հատուցման համար ե) ապառիկ վաճառված ապրանքների դիմաց	320 000 ? 50 000 20 000 30 000
31	Հաշվարկային հաշվից փոխանցվել են ա) բյուջե՝ աշխատավարձից պահված հարկերը բ) սոցիալական ապահովագրության մարմիններին՝ սոցիալական ապահովագրության վճարները (գործ.27,28, 29)	320 000 ?
32.	Հաշվետու ժամանակաշրջանի վերջում աշխատավարձի գծով գերավճարը վերաձևակերպվել է որպես դեբիտորական պարտք	14 000
33.	Աշխատողների աշխատավարձից պահվել է նախորդ ժամանակաշրջանի գերավճարը	23 000
34	Հաշվետու ժամանակաշրջանի վերջում սոցիալական ապահովագրության հատկացումների գծով գերավճարը վերաձևակերպվել է որպես դեբիտորական պարտք	55 000
35.	Սոցիալական ապահովագրության վճարների գծով պարտքը մարվել է նախորդ ժամանակաշրջանի գերավճարի հաշվին	55 000
36	Արտացոլվել է բյուջեի հանդեպ պարտավորությունը շահութահարկի գծով	1 500 000
37.	Արտացոլվել են հարկերի գծով բյուջե վճարման ենթակա տույժերը և տուգանքները	65 000
38.	Բյուջեի հանդեպ շահութահարկի գծով պարտքը մարվել է կանխավճարի հաշվին	140 000

ՍՏՈՒԳՈՂԱԿԱՆ ԱՈՍՁԱԴՐԱՆՔՆԵՐ, ՀԱՐՑԵՐ ԵՎ ՏԵՍՏԵՐ

Ստուգողական առաջադրանքներ

Առաջադրանք 1

Կազմակերպությունը առևտրային բանկից 200Xթ. հունվարին վարկային պայմանագրով ստացել է կարճաժամկետ վարկ 300 000 դրամ գումարով, 1 տարի մարման ժամկետով, տարեկան 18% տոկոսադրույքով: Վարկի և տոկոսների մարումը կատարվում է ամեն ամիս հավասարաչափ, ըստ կազմված ժամանակացույցի.

Պահանջվում է կազմել կարճաժամկետ վարկի մարման և վարկի գծով տոկոսային ծախսերի հաշվեգրման ժամանակացույցը և ձևակերպել վարկի ստացման և մարման գործառնությունները:

Առաջադրանք 2

Կազմակերպությունը առևտրային բանկից 200Xթ. հունվարին վարկային պայմանագրով ստացել է երկարաժամկետ վարկ 1 000 000 դրամ գումարով, 4 տարի մարման ժամկետով, տարեկան 20% տոկոսադրույքով: Վարկի և տոկոսների մարումը կատարվում է միանվագ կարգով՝ վարկի մարման ժամկետի վերջում. վարկի տոկոսները ճանաչվում են որպես ժամանակաշրջանի ծախս:

Պահանջվում է կազմել երկարաժամկետ վարկի մարման և վարկի գծով տոկոսային ծախսերի հաշվեգրման ժամանակացույցը և ձևակերպել վարկի ստացման և մարման գործառնությունները:

Առաջադրանք 3

Մեխանիկական արտադրամասի ինժեների անսական պաշտոնային դրույքաչափը սահմանված է 150 000 դրամ: Հաշվարկային ամսում 20 աշխատանքային օր է, որից նա աշխատել է 15 օր, իսկ մնացած օրերը չի աշխատել հիվանդության պատճառով Աշխատողը ներկայացրել է ժամանակավոր անաշխատունակության թերթիկ՝ 7 օրացուցային օրվա համար. ժամանակավոր անաշխատունակությանը նախորդ 3 ամսվա աշխատողի աշխատավարձի գումարը կազմել է 510 000 դրամ, իսկ ապահովագրական ստաժը՝ 7 տարի:

Պահանջվում է հաշվարկել աշխատավարձի և ժամանակավոր անաշխատունակության նպաստի գումարները պաշտոնային դրույքաչափով վարձատրվող ծառայողին:

Առաջադրանք 4

Հավաքման արտադրամասի V տարակարգի բանվորը հաշվարկային ամսում հավաքել է 2 տեսակի հանգույց՝ ԱՍ-1 և Պ-4: Առաջին տեսակից նա պատրաստել է 20 հատ, մեկ հատի վարձաչափը սահմանված է 2 000 դրամ, իսկ երկրորդ տեսակից պատրաստել է 30 հատ, մեկ հատի վարձաչափը սահմանված է 2 500 դրամ:

Պահանջվում է հաշվարկել գործավարձով վարձատրվող բանվորի աշխատավարձը և կատարել եկամտահարկի և պարտադիր սոցիալական ապահովագրության վճարի պահումներ:

Առաջադրանք 5

Արտադրամասի տեխնոլոգին տրամադրվել է արձակուրդ օգոստոսի 10-ից՝ 28 օրացուցային օրով: Նրա անսական պաշտոնային դրույքաչափը 110 000 դրամ է. Օգոստոսի 1-ից մինչև 10-ը ընկած ժամանակահատվածում 6 աշխատանքային օր է: Անձնական հաշիվների տվյալների համաձայն, արձակուրդին նախորդող 12 լրիվ ամիսներին աշխատողին հաշվարկված աշխատավարձի գումարները կազմել են 1 980 000 դրամ: Պահանջվում է հաշվարկել աշխատողի օգոստոս ամսվա աշխատավարձը, արձակուրդային աշխատավարձը և կատարել եկամտահարկի և պարտադիր սոցիալական ապահովագրության վճարի պահումներ:

Առաջադրանք 6

Կազմակերպության աշխատողներին հաշվարկային ամսում հաշվարկված աշխատավարձը խմբավորվել է հետևյալ կերպ.

ա) մինչև 100 հազ դրամ աշխատավարձ հաշվարկվել է 20 աշխատողին՝ ընդամենը 1 850 000 դրամ գումարով,

բ) 100 հազ. դրամից ավելի աշխատավարձ հաշվարկվել է 12 աշխատողին՝ ընդամենը 1 500 000 դրամ գումարով:

Նույն ամսում հաշվարկվել են ժամանակավոր անաշխատունակության նպաստներ 320 000 դրամի չափով:

Պահանջվում է հաշվարկել և ձևակերպել գործատուի և վարձու աշխատողների հաշվին կատարվող սոցիալական ապահովագրության վճարները, դրանց հաշվին կատարված նպաստների վճարումը և սոցիալական ապահովագրության վճարների գծով պարտավորությունների մարումը

Առաջադրանք 7

Կազմակերպությունը ձեռք է բերել սարքավորումներ, որոնց սկզբնական արժեքը 350 000 դրամ է Ըստ կազմակերպության հաշվային քաղաքականության ձեռքբերված սարքավորման օգտակար ծառայությունը սահմանվել է 4 տարի, իսկ մաշվածության հաշվարկը կատարվում է գծային եղանակով:

Պահանջվում է որոշել ակտիվի հաշվեկշռային արժեքը և հարկային բազան, ձևակերպել հետաձգված հարկային ակտիվի ճանաչումը և մարումը ըստ տարիների.

Ստուգողական հարցեր

- 1 Ո՞ր պարտավորություններն են համարվում ֆինանսական
- 2 Ի՞նչ կատեգորիաների են դասակարգվում ֆինանսական պարտավորությունները:
- 3 Ինչպե՞ս է որոշվում ֆինանսական պարտավորությունների սկզբնական արժեքը:
- 4 Ե՞րբ է ճանաչվում ֆինանսական պարտավորությունը:
- 5 Ե՞րբ է ապաճանաչվում ֆինանսական պարտավորությունը
- 6 Ի՞նչ արժեքով են հաշվառվում պարտավորությունները վարկերի և փոխառությունների գծով
- 7 Ո՞րն է ֆինանսական պարտավորությունների ամորտիզացված արժեքը.
8. Ինչպե՞ս են որոշում չկրած տոկոսային ծախսերը ամորտիզացված արժեքով հաշվառվող ֆինանսական պարտավորությունների գծով՝ անուիտետի պայմաններում.
- 9 Ինչպե՞ս են որոշում չկրած տոկոսային ծախսերը ամորտիզացված արժեքով հաշվառվող ֆինանսական պարտավորությունների գծով՝ մարման ժամկետի վերջում միանվագ վճարումների պայմաններում
- 10 Ինչպե՞ս են հաշվառում փոխառության ծախսումները
- 11 Ինչպե՞ս են հաշվարկում աշխատավարձի գումարները վարձատրության տարբեր ձևերի ու համակարգերի պայմաններում:
- 12 Ինչպե՞ս են հաշվարկում արձակուրդային աշխատավարձը:
- 13 Ինչպիսի՞ պահումներ են կատարվում հաշվարկված աշխատավարձից և ինչպե՞ս են դրանք հաշվարկվում.
- 14 Ինչպե՞ս են հաշվարկում հատկացումները պարտադիր սոցիալական ապահովագրության համար
- 15 Ինչպե՞ս են հաշվարկում ժամանակավոր անաշխատունակության նպաստները
- 16 Ինչպիսի՞ հարկեր են վճարում կազմակերպությունները բյուջեին.
- 17 Ինչպե՞ս են հաշվարկում և հաշվառում շահութահարկը
- 18 Ե՞րբ են առաջանում հետաձգված հարկային պարտավորությունները և ինչպե՞ս են դրանք հաշվառվում.
19. Ե՞րբ են առաջանում հետաձգված հարկային ակտիվները և ինչպե՞ս են դրանք հաշվառվում.
- 20 Ինչպե՞ս են հաշվարկում և հաշվառում ավելացված արժեքի հարկը
21. Ինչպե՞ս են հաշվարկում և հաշվառում եկամտահարկը:

Տ ե ս տ ե ր

Տնտեսական գործառնությունների ձևակերպումների ներկայացված տարբերակներից ընտրել ճիշտ պատասխանը

Ձ/հ	Գործառնությունների բովանդակությունը	Պատասխան		
		Տարբերակ	Դտ	Կտ
1	2	3	4	5
1	Հաշվարկային հաշվում ստացվել է բանկից երկարաժամկետ վարկ	Ա	251	411
		Բ	252	411
		Գ	251	511
2.	Արտացույցվում են երկարաժամկետ վարկերի գծով չկրած տոկոսային ծախսերը	Ա	411	414
		Բ	511	411
		Գ	414	411
3.	Երկարաժամկետ վարկերի ընթացիկ տարվա մասը տեղափոխվում է ընթացիկ պարտավորությունների կազմ	Ա	512	511
		Բ	411	512
		Գ	512	411
4	Հաշվարկային հաշվից մարվել է երկարաժամկետ վարկերի ընթացիկ մասը	Ա	512	252
		Բ	252	512
		Գ	411	252
5.	Դուրս է գրվել չկրած տոկոսային ծախսերի մնացորդը ժամկետից շուտ մարված երկարաժամկետ վարկերի գծով	Ա	411	414
		Բ	411	252
		Գ	414	411
6	Երկարաժամկետ վարկին վերաբերող չկրած տոկոսային ծախսերը հաշվեգրվել են ժամանակաշրջանի ծախսերին	Ա	727	414
		Բ	414	727
		Գ	714	414
7	Կարճաժամկետ վարկի հաշվին բացվել է ակրեդիտիվ	Ա	511	254
		Բ	254	512
		Գ	254	511
8	Մատակարարի պարտքը մարվել է կարճաժամկետ վարկի հաշվին	Ա	511	521
		Բ	521	511
		Գ	521	513
9	Արտացույցվել են կարճաժամկետ վարկին վերաբերող չկրած տոկոսային ծախսերը	Ա	516	511
		Բ	516	414
		Գ	511	516
1	2	3	4	5
10	Կարճաժամկետ վարկին վերաբերող չկրած տոկոսային ծախսերը հաշվեգրվել են ժամանակաշրջանի ծախսերին	Ա	727	516
		Բ	516	727
		Գ	727	414
11	Հաշվարկային հաշվից մարվել է կարճաժամկետ վարկը	Ա	511	252
		Բ	511	251
		Գ	252	511
12.	Արտարժութային հաշվում ստացվել է կարճաժամկետ փոխառություն այլ կազմակերպությունից	Ա	253	511
		Բ	513	252
		Գ	253	513
13	Արտացույցվել են չկրած տոկոսային ծախսերը ստացված կարճաժամկետ փոխառության գծով	Ա	516	513
		Բ	513	516

		գ	516	511
14.	Մատակարարի պարտքը մարվել է երկարաժամկետ մուրհակով	Ա Բ գ	521 521 521	252 412 411
15	Արտացուլվել են չկրած տոկոսային ծախսերը մատակարարին տրված երկարաժամկետ մուրհակի գծով	Ա Բ գ	252 414 412	414 412 414
16	Կապիտալացվել են շենքի կառուցման համար ներգրավված երկարաժամկետ փոխառությանը վերաբերող չկրած տոկոսային ծախսերը	Ա Բ գ	821 821 727	414 516 414
17	Մատակարարից ստացվել և պահեստ են հանձնվել հաստոցներ	Ա Բ գ	111 113 521	521 521 113
18	Արտացուլվել է մատակարարից ստացված և դեռևս չվճարված ակտիվին վերաբերող ավելացված արժեքի հարկը	Ա Բ գ	261 226 521	521 521 226
19	Մատակարարից ձեռք բերված նյութերի մուտքագրման ժամանակ հայտնաբերվել է պակասորդ	Ա Բ գ	521 211 229	229 229 521
20.	Մատակարարի պարտքը ձեռք բերված նյութերի դիմաց մարվել է հաշվարկային հաշվից	Ա Բ գ	521 252 252	252 521 221
21.	Մատակարարի պարտքը ձեռք բերված նյութերի դիմաց մարվել է նախապես վճարված կանխավրճարի հաշվանցմամբ	Ա Բ գ	521 521 521	252 224 152
22	Մատակարարի պարտքը ձեռք բերված նյութերի դիմաց մարվել է ակրեդիտիվից	Ա Բ գ	521 521 254	251 254 521
23	Կառուցված շենքի համար կապալառուի պարտքը մարվել է նախապես վճարված կանխավճարի հաշվանցմամբ	Ա Բ գ	521 521 152	252 152 521
24	Մատակարարի պարտքը մարվել է ընդունված բողոքարկման գծով դեբիտորական պարտքի հաշվանցմամբ	Ա Բ գ	229 229 521	521 252 229
25	Վերաձևակերպվել է մատակարարներից ձեռք բերված և վճարված ակտիվներին վերաբերող	Ա Բ	261 226	521 521
1	2	3	4	5
	հաշվանցման ենթակա ԱԱՀ գումարը	գ	226	261
26	Արտացուլվել է վաճառված արտադրանքի արժեքում ներառված ԱԱՀ-ն	Ա Բ գ	221 524 524	524 221 252
27	Հաշվանցվել է բյուջեի կողմից փոխհատուցման ենթակա ԱԱՀ-ն	Ա Բ գ	524 226 524	226 524 261
28	Արտացուլվել է մատակարարից ձեռքբերված և վճարված ակտիվին վերաբերող ավելացված արժեքի հարկը	Ա Բ գ	261 226 261	521 252 252

29.	Դրամարկղից վճարվել է աշխատողների աշխատավարձը	Ա Բ Գ	527 527 527	251 252 524
30	Ավանդագրվել է ժամանակին չվճարված աշխատավարձը	Ա Բ Գ	527 1 527 1 527 4	252 5274 251
31	Հաշվարկային հաշվից փոխանցվել է բյուջեին աշխատավարձից պահված եկամտահարկը	Ա Բ Գ	524 521 527	252 252 524
32	Հաշվարկային հաշվից փոխանցվել են սոցիալական ապահովագրության վճարները	Ա Բ Գ	525 252 525	251 525 252
33	Հաշվարկվել է աշխատավարձ հիմնական արտադրամասի բանվորներին	Ա Բ Գ	811 812 811	525 527 527
34	Հաշվարկվել է աշխատավարձ հիմնական արտադրամասի կառավարման և սպասարկող անձնակազմին	Ա Բ Գ	811 813 527	527 527 811
35	Հաշվարկվել է աշխատավարձ օժանդակ արտադրամասի բանվորներին	Ա Բ Գ	811 812 811	525 527 527
36.	Հաշվարկվել է աշխատավարձ վարչության աշխատողներին	Ա Բ Գ	811 812 713	525 527 527
37.	Հաշվարկվել է աշխատավարձ պահեստի բանվորներին պատրաստի արտադրանքի փաթեթավորման համար	Ա Բ Գ	712 812 713	527 527 527
38	Աշխատողներին հաշվարկվել են ժամանակավոր անաշխատունակության նպաստներ	Ա Բ Գ	525 527 813	527 525 525
39	Կատարվել են սոցապ հատկացումներ հիմնական արտադրամասի արտադրական բանվորների համար	Ա Բ Գ	811 812 811	525 527 527
40	Կատարվել են սոցապ հատկացումներ օժանդակ արտադրամասի արտադրական բանվորների համար	Ա Բ Գ	811 812 812	525 525 527
41	Կատարվել են սոցապ հատկացումներ հիմնական	Ա	811	525
1	2	3	4	5
	արտադրամասի սպասարկող անձնակազմի համար	Բ Գ	813 813	525 527
42	Կատարվել են սոցապ հատկացումներ վարչության աշխատողների համար	Ա Բ Գ	712 713 713	525 525 527
43	Հաշվարկված աշխատավարձից կատարվել են	Ա	524	527

	Եկամտահարկի պահումներ	Բ	527	525
		Գ	527	524
44.	Հաշվարկված աշխատավարձից կատարվել են սոցիալական ապահովագրության վճարի պահումներ	Ա	524	527
		Բ	527	525
		Գ	527	524
45.	Հաշվարկված աշխատավարձից կատարվել են ալիմենտների պահումներ	Ա	527	531
		Բ	527	525
		Գ	527	524
46	Հաշվարկված աշխատավարձից կատարվել են պահումներ նյութական վնասի հատուցման համար	Ա	527	222
		Բ	527	525
		Գ	527	524
47.	Արտացոլվել է շահութահարկի գծով ծախսը	Ա	751	524
		Բ	524	725
		Գ	751	225
48.	Արտացոլվել է հետաձգված հարկային պարտավորությունների առաջացումը շահութահարկի գծով	Ա	751	524
		Բ	524	422
		Գ	751	422
49	Արտացոլվել է շահութահարկի գծով հետաձգված հարկային պարտավորությունների մարումը	Ա	751	524
		Բ	422	751
		Գ	751	422
50	Արտացոլվել է հետաձգված հարկային ակտիվների առաջացումը շահութահարկի գծով	Ա	751	524
		Բ	151	751
		Գ	751	151
51	Արտացոլվել է շահութահարկի գծով հետաձգված հարկային ակտիվների մարումը	Ա	751	524
		Բ	151	751
		Գ	751	151

ԳԼՈՒԽ 14

ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆՆԵՐ

Միջանցիկ խնդիր

Կազմակերպությունում հաշվապահական հաշվառում վարելու և ֆինանսական հաշվետվություններ կազմելու վերաբերյալ

1. Կազմակերպության ստեղծումը

Երկու գործընկեր համատեղ որոշում են բացել ընկերություն: Նոր կազմակերպությունը բացելու համար ընկերները.

- 2008թ. հոկտեմբերի 7-ին կազմում և ստորագրում են հիմնադիր պայմանագիր՝ սահմանափակ պատասխանատվությամբ ընկերություն ստեղծելու մասին, որի հիմնական գործունեությունն է լինելու հաշվապահական և հարկային խորհրդատվության տրամադրումը,

- որոշում են ստեղծվող կազմակերպության անվանումը՝ «Ճշմարիտ» ՍՊԸ, հաստատում են կանոնադրությունը, կանոնադրական կապիտալի չափը՝ 100000 դրամ և յուրաքանչյուր բաժնետիրոջ մասնակցության չափը կանոնադրական կապիտալում՝ 50 000 դրամ,

- «Ճշմարիտ» ՍՊԸ անունով բացում են հաշվարկային հաշիվ և վճարում կանոնադրական կապիտալը (ընկերներից յուրաքանչյուրը վճարում է կանոնադրական կապիտալում որոշված իր մասնակցության՝ 50 000 դրամի չափով)։

Այնուհետև, հոկտեմբերի 15-ին գումարվում է «Ճշմարիտ» ՍՊԸ-ի ընդհանուր ժողով, որով որոշվում է ընկերության տնօրեն նշանակել հիմնադիրներից մեկին՝ ամսական 70 000 դրամ աշխատավարձով, գրասենյակային գույք ձեռք բերելու նպատակով անտոկոս փոխառություն վերցնել՝ 2 500 000 դրամի չափով, գործունեության իրականացման համար վարձակալել տարածք և մարդատար ավտոմեքենա։

Տնօրենը հոկտեմբերի 16-ին հիմնադիր փաստաթղթի (կանոնադրության), պետական ռեգիստրի վկայականի կրկնօրինակները դիմումով ներկայացնում է հարկային մարմին՝ հաշվառման կանգնելու և հարկ վճարողի հաշվառման համարը (ՀՎՀՀ) ստանալու համար, իսկ հոկտեմբերի 17-ին՝ տարածքային սոցիալական մարմին՝ հաշվառման կանգնելու և ապահովարդի հաշվառման համար ստանալու։

ՀՎՀՀ ստանալուց հետո «Ճշմարիտ» ՍՊԸ-ի տնօրենը դիմում և ստանում է կնիք ու դրոշմակնիք, որի համար վճարում է 21000 դրամ։

Տնօրենը դիմում է հարկային մարմին և վերջինս հաստատում է «Ճշմարիտ» ՍՊԸ-ի դրամարկղային գիրքը։

«Ճշմարիտ» ՍՊԸ-ի տնօրենը գործունեության իրականացման համար փնտրում և հոկտեմբերի 18-ին գրասենյակի համար անհրաժեշտ տարածք է գտնում Երևան քաղաքի Կոմիտասի պողոտայի բնակելի շենքերից մեկի առաջին հարկում։

Տարածքի սեփականատիրոջ հետ պայմանավորվածություն է ձեռք բերվում նրա բնակարանը վարձակալելու համար։ Տարածքի սեփականատերը ՀՀ Կառավարության առընթեր անշարժ գույքի կադաստրի պետական կոմիտեի տարածքային ստորաբաժանում է դիմում վարձակալության տալու մտադրությամբ և այնտեղից ստանում «միասնական» տեղեկանք առ այն, որ իր գույքը վաճառված, գրավ դրված, վարձակալության, այլ անձի անհատույց օգտագործման տրված կամ այլ կերպ ծանրաբեռնված չէ, վեճի առարկա չէ և արգելքի տակ չի գտնվում։

«Ճշմարիտ» ՍՊԸ-ի՝ դեմս տնօրենի, և տարածքի սեփականատիրոջ միջև ստորագրվում է անշարժ գույքի (բնակելի շինության) վարձակալության պայմանագիր, որը վավերացվում է նոտարական կարգով. Այնուհետև պայմանագիրը ներկայացվում է ՀՀ Կառավարության առընթեր անշարժ գույքի կադաստրի պետական կոմիտեի տարածքային ստորաբաժանում և նոյեմբերի 1-ին «Ճշմարիտ» ՍՊԸ-ն ստանում է անշարժ գույքի վարձակալության իրավունքի գրանցման վկայական։ Պայմանագրով նոտարական վավերացման և պետական գրանցման գծով ծախսերը կատարում է վարձատուն։

Համաձայն պայմանագրի՝ վարձավճարը կազմում է ամսական 50000 դրամ և վարձատուին վճարումը կատարվում է յուրաքանչյուր ամսվա սկզբին

2. Աշխատողների հավաքագրումը

«Ճշմարիտ» ՍՊԸ-ի տնօրենը, ելնելով գործունեության իրականացման հնարավոր ծավալներից, հրամանով սահմանում է հաստիքացուցակը և պաշտոնային դրույքները՝

h/h	Պաշտոնը	Պաշտոնային դրույքը
1	տնօրեն	70000 դրամ
2	գլխ հաշվապահ	60000 դրամ
3	գործավար	30000 դրամ
4	խորհրդական	80000 դրամ
5	աուդիտոր	90000 դրամ
6	հավաքարար	30000 դրամ

Նույնբերի 1-ին հրավիրվում են աշխատակիցները, նրանց հետ կնքվում են աշխատանքային պայմանագրեր, և «Ճշմարիտ» ՍՊԸ-ի տնօրենի կողմից տրվում է հրաման՝ աշխատակիցներին աշխատանքի ընդունելու վերաբերյալ Հաստիքացուցակը համալրվում է ամբողջությամբ:

Կնքված աշխատանքային պայմանագրի համաձայն՝ գործավարին հանձնարարվում է նաև գանձապահի պարտականությունների կատարումը:

Տնօրենը գլխավոր հաշվապահի հետ մշակում է «Ճշմարիտ» ՍՊԸ-ի հաշվապահական հաշվառման քաղաքականությունը, որը ներկայացնում է ամբողջական տեղեկատվություն այն կոնկրետ սկզբունքների, հիմունքների, եղանակների, կանոնների, ձևերի և ընթացակարգերի մասին, որոնք անհրաժեշտ են ընկերության կողմից հաշվապահական հաշվառումը վարելու և ֆինանսական հաշվետվությունները պատրաստելու ու ներկայացնելու համար:

Տնօրենը 2008թ. նոյեմբերի 3-ին հաստատում է այն և ներկայացնում հարկային մարմին՝ Հարկային մարմնում նրա կողմից լրացվում է նաև տեղեկանք «Ճշմարիտ» ՍՊԸ-ի գործունեության հասցեի, տնօրենի և գլխավոր հաշվապահի մասին տեղեկություններով:

Գլխավոր հաշվապահը «Ճշմարիտ» ՍՊԸ-ի արդեն առկա փաստաթղթերի հիման վրա տալիս է համապատասխան հաշվապահական ձևակերպումները

ա) կանոնադրական կապիտալի ձևավորման,

բ) կնիքի և դրոշմակնիքի ստացման գծով ծախսերի:

Հաշվարկային հաշվից դրամարկը գումար է մուտքագրվում և վճարվում տնօրենի կողմից կնիքի և դրոշմակնիքի պատրաստման համար մուծված գումարը:

Լրացվում են դրամարկի մուտքի և ելքի օրդերներ, կանխիկ դրամի շարժը գրանցվում է դրամարկային գրքում:

3. Փոխառու միջոցների ներգրավումը

«Ճշմարիտ» ՍՊԸ-ի տնօրենը 2008թ. հոկտեմբերի 30-ին ֆիզիկական անձի հետ փոխառության պայմանագիր է կնքում և ընկերության համար 2 500 000 դրամի անտոկոս փոխառություն է վերցնում 2 տարով, տարեկան փոխառության գումարի 1/2 մասը վերադարձնելու պայմանով:

Նույնբերի 1-ին փոխառության գումարը մուտքագրվում է դրամարկը, լրացվում է մուտքի օրդեր և անդորրագիրը տրամադրում է փոխառու ֆիզիկական անձին:

Կազմել համապատասխան հաշվապահական ձևակերպումները:

ա) փոխառության գումարի ստացման,

բ) երկարաժամկետ փոխառությունների գծով վճարվելիք համախառն գումարների կարճաժամկետ մասի (որը ենթակա է մարման 12 ամսվա ընթացքում) տեղափոխման:

4. Տրանսպորտային միջոցի վարձակալությունը

Ծառայության մատուցման համար «Ճշմարիտ» ՍՊԸ-ն վարձակալում է ֆիզիկական անձի սեփականությունը հանդիսացող մարդատար ԳԱԶ 3110 մակնիշի ավտոմեքենան Ֆիզիկական անձի հետ 2008թ. նոյեմբերի 2-ին կնքվում է տրանսպորտային միջոցի վարձակալության պայմանագիր, որով ամսական վարձավճարը սահմանվում է 25000 դրամ: Վարձավճարի վճարման ժամկետ է սահմանվում յուրաքանչյուր եռամսյակի վերջը:

Տնօրենի հրամանով ծառայությունների մատուցման նպատակով մեքենան կարող են վարել բոլոր այն աշխատակիցները, որոնք ունեն վարորդական վկայական (առանց հավելավճարի):

5. Հիմնական միջոցների ձեռքբերումը

«Ճշմարիտ» ՍՊԸ-ն ձեռք է բերում հիմնական միջոցներ, որոնց համար «Մատակարար» ՍՊԸ-ն դուրս է գրվում հաշվարկային փաստաթուղթ (հարկային հաշիվ):

Նախնական պայմանավորվածության համաձայն ձեռք բերված ակտիվները նոյեմբերի 2-ին «Ճշմարիտ» ՍՊԸ-ի գրասենյակ է տեղափոխում մատակարարը:

Ներկայացված փաստաթղթերի հիման վրա տրվում է հաշվապահական ձևակերպումը հիմնական միջոցների ձեռքբերման մասին, որոնք միանգամից հանձնվում են շահագործման:

Մատակարար	«Մատակարար» ՍՊԸ	Հաշիվ ապրանքագիր N 7 02.11.2008		
Հասցե	ք Երևան, Հալաբյան 34			
Հ/Հ	24700-00044360060			
Բանկ	«Արդշինինվեստբանկ» ՓԲԸ			
ՀՎՀՀ	01245679			
Վճարող	«Ճշմարիտ» ՍՊԸ	Պայմանագիր/պատվեր N օր		
Հասցե	ք.Երևան, Նոր Նորքի Գայի պող 125 շ , բն 55			
Հ/Հ	15100-02849510100			
Բանկ	ԱրարատԲանկ ԲԲԸ			
ՀՎՀՀ	01244689			
Լրացում՝				
Անվանումը	Քանակը	Միավ.	Գինը	Գումարը
Համակարգիչ՝ մոնիտորով	3	հատ	120 000	360 000
Տպիչ սարք	1	հատ	40 800	40 800
Գրասեղան	4	հատ	16 000	64 000
Աթոռ	6	հատ	11 000	66 000
Գրապահարան	2	հատ	30 000	60 000

	Ընդամենը	590 800
	20.00% ԱԱՀ՝	118 160
	Վճարման գումարը՝	<u>708 960</u>
Գումարը բառերով՝ Յոթ հարյուր ութ հազար ինը հարյուր վաթսուց ՅՅ դրամ		
Կ Տ	Կ Տ	
կազմակերպության անվանումը	կազմակերպության անվանումը	
կազմակերպության ղեկավար	կազմակերպության ղեկավար	
Գլխավոր հաշվապահ	Գլխավոր հաշվապահ	

Հաշվապահը կազմում և լրացնում է նաև «Հիմնական միջոցների շահագործման հանձնման- ընդունման ակտ», Ձև ՀՄ -3: Որոշվում է վճարումը կատարել բանկային փոխանցմամբ: Այդ նպատակով դրամարկղից 700000 դրամ գումար մուտքագրվում է հաշվարկային հաշիվ և վճարման հանձնարարագրի հիման վրա փոխանցվում է «Մատակարար» ՍՊԸ-ին:

ՎճԱՐՄԱՆ ՀԱՆՁՆԱՐԱՐԱԳԻՐ N 1		0401002
"03" նոյեմբերի 2008թ.		
Վճարող՝ «Ճշմարիտ» ՍՊԸ ՀՎՀՀ - 01244689	ԴԵԲԵՏ h2 N h2 N 02849510256	ԳՈՒՄԱՐ (AMD) 708 960
Վճարողի բանկը ԱրարատԲանկ ԲԲԸ	Բանկի կոդ՝ 15100	ԿՐԵԴԻՏ h2 N 00044360060
Ստացող՝ «Մատակարար» ՍՊԸ ՀՎՀՀ - 01245679		
Ստացողի բանկը «Արդշինինվեստբանկ» ՓԲԸ	Բանկի կոդ՝ 24700	օրվա տույժ %-ից
Փոստով-հեռագրով (ընդգծել)		գումարը տույժով
Գումարը բառերով՝ <i>Յոթ հարյուր ութ հազար ինը հարյուր վաթսուց ՅՅ դրամ</i>		
Ապրանքի ստացման, կատարված ծառայության Ա/Թ		
Վճարման նպատակը, կատարված ծառայությունների, աշխատանքների, ապրանքի անվանումը, ապրանքային փաստաթղթերի գումարները և NN Պարտավորության մարում		

Կ Տ, Հաճախորդի ստորագրություններ

Անցկացված է բանկով
« _____ » _____ 20 թ

Բանկի ստորագր _____

Լրացնել դրամարկղի ելքի օրդերը:

Կազմել համապատասխան հաշվապահական ձևակերպումները.

ա) դրամարկղից կանխիկ դրամի մուտքագրում հաշվարկային հաշվին,

բ) գնումների գծով կրեդիտորական պարտքի մարում հաշվարկային հաշվից:

6. Գովազդի ծախսերը

Հաճախորդներ գտնելու նպատակով ընկերությունը 2008թ. նոյեմբերի 3-ին հանրապետության թերթերից մեկին 72 000 դրամ կանխավճար է մուծում՝ գովազդային հայտարարություն տպագրելու համար: Գովազդային հայտարարությունը տպագրելուց հետո թերթի խմբագրության կողմից 2008թ. նոյեմբերի 6-ին հարկային հաշիվ է ներկայացվում ընկերությանը, որում նշվում է գովազդի արժեքը՝ 60 000 դրամ և առանձին տողով ԱԱՀ-ն՝ 12 000 դրամ

Կազմել հետևյալ հաշվապահական ձևակերպումները

ա) գովազդի համար կանխավճարի վճարում,

բ) գովազդի ծախսի ձևակերպում.

7. Կանխավճարի ստացումը

Հաշվապահական և հարկային ծառայությունների կարիք ունեցող երկու հաճախորդներ «Ճշմարիտ» ՍՊԸ-ի հետ 2008թ. նոյեմբերի 9-ին կնքում են ծառայությունների մատուցման պայմանագրեր. Ծառայության մատուցումը սկսվում և շարունակվում է մինչև դեկտեմբեր ամսվա վերջը:

Համաձայն կնքված պայմանագրի՝ առաջին հաճախորդը «Ճշմարիտ» ՍՊԸ-ի հաշվարկային հաշվին փոխանցում է 1 600 000 դրամ կանխավճար

Ձևակերպել պատվիրատուից կանխավճարի ստացումը

8. Աշխատավարձի, եկամտահարկի և պարտադիր սոցիալական ապահովագրության վճարի հաշվարկը

Հաշվարկել և ձևակերպել տնօրենի հոկտեմբեր ամսվա աշխատավարձը, սոցիալական ապահովագրության վճարը, եկամտահարկը և գործատուի սոցիալական ապահովագրության հատկացումները:

Նոյեմբերի 30-ին և դեկտեմբերի 31-ին համապատասխանաբար, նոյեմբեր և դեկտեմբեր ամիսների համար հաշվապահը հաշվարկում է աշխատավարձը, եկամտահարկը և պարտադիր սոցիալական ապահովագրության վճարը, ինչպես նաև կազմում է աշխատավարձերի հաշվարկի համապատասխան տեղեկագրերը:

«Ճշմարիտ» ՍՊԸ-ի 2008թ. նոյեմբեր ամսվա աշխատավարձի հաշվարկ¹

դրամ

Պաշտոնը	Անունը, Ազգանունը	Աշխատավարձ	Վարձու աշխատողի սոցապ վճար	Գործատուի սոցապ վճար	Եկամտահարկ	Ենթակա է վճարման

¹ Նույն ձևով կազմվում է նաև դեկտեմբեր ամսվա աշխատավարձի հաշվարկը

				3%		
1	տնօրեն		70000	2100		
2	գլխ հաշվապահ		60000	1800		
3	գործավար		30000	900		
4	խորհրդական		80000	2400		
5	աուդիտոր		90000	2700		
6	հավաքարար		30000	900		
	Ընդամենը		360000	10800		

Ծառայության մատուցմանը մասնակցել են նաև տնօրենը, գլխավոր հաշվապահը (հաշվապահական հաշվառմանը վերաբերվող հարցերով) և գործավարը (պայմանագրի նախագիծ է խմբագրել համակարգչով):

Ինչպես նշվեց նման դեպքերում ծառայության մատուցման բնագավառում կառավարչական որոշումներ ընդունելու և ծառայության ինքնարժեքը հնարավորինս ճիշտ հաշվարկելու նպատակներով, ծառայություն մատուցող կազմակերպությունները ծախսումները հավաքագրում են կառավարչական հաշվառման հաշիվներում և հաշվետու ժամանակաշրջանի վերջում որոշակի հիմքով բաշխում և վերագրում են մատուցվող ծառայության ինքնարժեքին և վարչական ծախսերին: **Բաշխման համար հիմք կարող է հանդիսանալ, օրինակ, վարչական անձնակազմի կողմից ծառայության մատուցմանը հատկացվող աշխատատեղերի տեսակարար կշռի հարաբերության գնահատումը ամբողջ աշխատատեղերի մեջ:** Նման մոտեցում է ամրագրվել նաև «Ճշմարիտ» ՍՊԸ-ի հաշվապահական հաշվառման քաղաքականությամբ: Մասնավորապես՝ սահմանված է, որ բոլոր ծախսումները հավաքագրվում են կառավարչական հաշիվներում և բաշխվում են հետևյալ համամասնությամբ՝

- ծառայության ինքնարժեքին՝ 85 % ,
- վարչական ծախսերին՝ 15%:

Նույններ և դեկտեմբեր ամիսներից յուրաքանչյուրի համար կազմել հետևյալ հաշվապահական ձևակերպումները՝

- ա) աշխատավարձի գծով ծախսումների,
- բ) գործատուի պարտադիր սոցիալական ապահովագրության վճարի,
- գ) աշխատողի պարտադիր սոցիալական ապահովագրության վճարի,
- դ) աշխատավարձից պահվող (գանձվող) եկամտահարկի:

9. Աշխատավարձի, եկամտահարկի և պարտադիր սոցիալական ապահովագրության վճարի գծով պարտավորությունների մարումը

2008թ. նոյեմբերի 3-ին դրամարկղի ելքի օրդերով վճարվում է տնօրենի հոկտեմբեր ամսվա աշխատավարձը:

2008թ. նոյեմբերի 5-ին հաշվարկային հաշվից փոխանցվում է տնօրենի հոկտեմբեր ամսվա աշխատավարձի նկատմամբ հաշվարկված եկամտահարկը և պարտադիր սոցիալական ապահովագրության վճարները:

Կազմել հետևյալ հաշվապահական ձևակերպումները.

- ա) եկամտահարկի գծով պարտավորության մարում,
- բ) պարտադիր սոցիալական ապահովագրության վճարի գծով պարտավորության մարում:

2008թ. դեկտեմբերի 3-ին աշխատավարձի վճարման տեղեկագրով վճարվում է նույններ ամսվա աշխատավարձը, որի հիման վրա դուրս է գրվում դրամարկղի ելքի օրդեր:

Կազմել աշխատավարձի վճարման տեղեկագիր և դրամարկղի ելքի օրդեր:

2008թ. դեկտեմբերի 4-ին հաշվարկային հաշվից փոխանցվում է նույնները ամսին աշխատավարձից պահված եկամտահարկը և աշխատավարձի նկատմամբ հաշվարկված պարտադիր սոցիալական ապահովագրության վճարները:

Կազմել հետևյալ հաշվապահական ձևակերպումները.

ա) եկամտահարկի գծով պարտավորության մարում,

բ) պարտադիր սոցիալական ապահովագրության վճարի գծով պարտավորության մարում:

2008 թ. դեկտեմբերի 31-ին աշխատավարձի վճարման տեղեկագրով վճարվում է դեկտեմբեր ամսվա աշխատավարձը. Նույն օրը հաշվարկային հաշվից փոխանցվում է դեկտեմբեր ամիսներին վճարված աշխատավարձից պահված եկամտահարկը և դեկտեմբեր ամսվա աշխատավարձի նկատմամբ հաշվարկված պարտադիր սոցիալական ապահովագրության վճարները

Կազմել հետևյալ հաշվապահական ձևակերպումները.

ա) եկամտահարկի գծով պարտավորության մարում,

բ) պարտադիր սոցիալական ապահովագրության վճարի գծով պարտավորության մարում:

10. Գործուղման ծախսերը

Հաճախորդների սպասարկման նպատակով տնօրենի 2008թ. նոյեմբերի 17-ի հրամանով 2008թ. նոյեմբերի 22-ից դեկտեմբերի 20-ը ներառյալ ՀՀ տարբեր մարզեր են գործուղվել «Ճշմարիտ» ՍՊԸ-ի աուդիտորը և խորհրդականը, յուրաքանչյուրը 28 օրով: Գործուղման սկզբում հաշվարկվում է, որ գործուղվող աշխատակիցներից յուրաքանչյուրին պետք է վճարվի օրապահիկի՝ 84 000 դրամ (օրական 3000 դրամ օրապահիկի գումարի չափով) և գիշերավարձի՝ 150 000 դրամ գումարներ: Ընդամենը գործուղման համար պետք է վճարվի ~~234000~~ ⁶⁶⁹⁰⁰⁰ ((84000 + 150000) x 2 աշխատակից) դրամ:

2008թ. նոյեմբերի 20-ին հաշվարկային հաշվից դրամարկը է մուտքագրվում 500 000 դրամ Դրամարկից գործուղման մեկնելու համար գործուղվող անձանց վճարվում է 468 000 դրամ (յուրաքանչյուրին՝ 234 000 դրամ).

Գործուղումից վերադառնալուց հետո գործուղված աշխատակիցները ներկայացնում են առհաշիվ գումարների ծախսման մասին հաշվետվություններ, որոնց հիման վրա կատարվում են գործուղման գծով ծախսի ձևակերպումները:

Կազմել հետևյալ հաշվապահական ձևակերպումները.

ա) կանխիկ դրամի ստացում բանկային հաշվից,

բ) գործուղվող անձանց առհաշիվ գումարների տրամադրում,

գ) առհաշիվ գումարների օգտագործումը:

Սովորաբար գործուղման ծախսերի ձևակերպման համար կիրառվում է 713 «Վարչական ծախսեր» հաշիվը, սակայն քանի որ օրինակում գործուղման նպատակը ծառայության մատուցման մեջ ընդգրկված աշխատակիցների կողմից բացառապես հաճախորդների սպասարկումն է, գործուղման ծախսը ձևակերպվում է 813 հաշվով

11. Պաշարների ձեռքբերումը և օգտագործումը

Վառելիք

«Ճշմարիտ» ՍՊԸ-ի տնօրենը 2008թ. նոյեմբերի 6-ին, դրամարկից նախօրոք ստացված 150 000 դրամ կանխիկ գումարի հաշվին, լցավորման կայանից ձեռք է բերում 60 լիտր բենզին, որի համար լցակայանը տրամադրում է 20 400 դրամի ՀԴՄ կտրոն: Տնօրենը լցակայանի աշխատակիցներից ճշտում է «Լցակայան» ՍՊԸ-ի գտնվելու վայրը: Բենզինի ձեռքբերման փաստաթղթավորման համար գլխավոր հաշվապահը կազմում է մուտքի օրդեր և դրան կցում ՀԴՄ կտրոնը:

«Ճշմարիտ» ՍՊԸ-ի կողմից 2008թ. նոյեմբերի 10-ին ձեռք է բերվում ևս 1000 լիտր բենզին, որը վառելիքի վաճառքով զբաղվող կազմակերպության հետ կնքված պայմանագրի համաձայն ի պահ է թողնում վերջինիս մոտ՝ անհրաժեշտության դեպքում տրամադրված կտրոնների միջոցով «Ճշմարիտ» ՍՊԸ-ի վարձակալված մարդատար ավտոմեքենայի լցավորման պայմանով:

Մատակարար կազմակերպության կողմից ներկայացված հաշվարկային փաստաթղթի (հարկային հաշվի) համաձայն՝ ձեռքբերված վառելիքի արժեքը

283 334 դրամ է, ԱԱՀ-ն 56 666 դրամ, ընդամենը ենթակա է վճարման՝ 340 000 դրամ, որը վճարվում է հաշվարկային հաշվից՝ հաշվարկային փաստաթղթի (հարկային հաշվի) ներկայացման օրը:

Կազմել համապատասխան հաշվապահական ձևակերպումները.

ա) վառելիքի ձեռքբերում.

բ) կրեդիտորական պարտքերի մարում հաշվարկային հաշվից:

Նոյեմբեր-դեկտեմբեր ամիսներին վարձակալված ավտոմեքենան շահագործվել է (լրացվել են ավտոմեքենայի ուղեգրեր), որի արդյունքում կատարվել է 6100 կմ վազք, ընդ որում նոյեմբերի վազքը կազմել է 2500 կիլոմետր, իսկ դեկտեմբերինը՝ 3600 կիլոմետր:

Ավտոմեքենայի վառելիքի ծախսը յուրաքանչյուր 100 կիլոմետր վազքի համար կազմել է 13 լիտր: Այսինքն՝ չորրորդ եռամսյակում ծախսվել է ընդամենը 793 (6100/100x13) լիտր բենզին:

«Ճշմարիտ» ՍՊԸ-ն հաշվապահական հաշվառման քաղաքականությամբ ամրագրել է փոխադարձ փոխարկելի հանդիսացող պաշարների ինքնարժեքի որոշման միջին կշռված արժեքի բանաձևը: Հետևաբար, բենզինի մեկ լիտրի արժեքը կազմում է ? (գումարը որոշել): Հաշվարկվում է ծախսված բենզինի հաշվեկշռային արժեքը, որը դուրս է գրվում հաշվապահական հաշվեկշռից և ճանաչվում ծախս.

Կազմել ծախսված վառելիքի հաշվեկշռային արժեքի դուրս գրման համապատասխան հաշվապահական ձևակերպումը:

Գրենական պիտույքներ

«Ճշմարիտ» ՍՊԸ-ի կողմից 2008թ. նոյեմբերի 8-ին ձեռք է բերվել գրենական պիտույքներ, որոնց համար տնօրենը կանխիկ վճարել է 120000 դրամ: Գրախանութի կողմից տրված գնման չեկում (որին կցված է նաև ՀԴՄ կտրոն) առանձին տողով արտացոլված է նաև «այդ թվում՝ ԱԱՀ 20000 դրամ» գրառումը:

«Ճշմարիտ» ՍՊԸ 2008թ. 4-րդ եռամսյակում ամբողջությամբ օգտագործել է ձեռք բերված գրենական պիտույքները:

Կազմել գրենական պիտույքների ձեռքբերման և դուրս գրման համապատասխան հաշվապահական ձևակերպումները:

12. Հեռահաղորդակցության գծով ծախսերը

«Ճշմարիտ» ՍՊԸ-ն վարձակալված գրասենյակում տարածքի սեփականատիրոջ համաձայնությամբ հեռախոսագծի օգտագործման իրավունքի համար «ԱրմենՏել» ՀԶ ՓԲԸ-ի հետ 2008թ. նոյեմբերի 2-ին կնքում է պայմանագիր:

Նոյեմբեր-դեկտեմբեր ամիսներին «ԱրմենՏել» ՀԶ ՓԲԸ-ի կողմից ներկայացված հաշիվ-ապրանքագրերի համաձայն հեռախոսակապի գծով ծախսը կազմում է 42 500 դրամ, ԱԱՀ-ն՝ 8500 դրամ, ընդամենը ենթակա է վճարման 51 000 դրամ, որից հաշվարկային հաշվից դեկտեմբերի 23-ին վճարվում է միայն նոյեմբեր ամսվանը՝ 24 000 դրամ:

«Ճշմարիտ» ՍՊԸ-ն դեկտեմբեր ամսվա հեռախոսակապի գծով 2009թ. հունվարի 10-ին (մինչև ԱԱՀ-ի հաշվարկի ներկայացումը) ստացված հարկային հաշիվը (հաշվարկային փաստաթուղթը) ձևակերպվում է 2008թ. դեկտեմբերի 30-ով՝ պահպանելով հաշվեգրման սկզբունքը: Քանի որ գործարքի համար վճարված չէ, հաշվապահը հարկային հաշվում առանձնացված ԱԱՀ-ի գումարը ձևակերպում է որպես ընթացիկ ակտիվ հետաձգված հարկերի գծով:

Կազմել համապատասխան հաշվապահական ձևակերպումները

- ա) նոյեմբեր ամսվա հեռախոսակապի գծով ծախսումների ձևակերպում,
- բ) դեկտեմբեր ամսվա հեռախոսակապի գծով ծախսումների ձևակերպում,
- գ) կրեդիտորական պարտքի մարում:

13. Վարձավճարները

Տարածքի վարձակալություն

Քանի որ ՀՀ կառավարության առընթեր անշարժ գույքի կադաստրի պետական կոմիտեի տարածքային ստորաբաժանման կողմից գրանցվել ու վարձակալության իրավունքի գրանցման վկայականը տրամադրվել է 2008թ. նոյեմբերի 1-ին, անշարժ գույքի վարձակալության պայմանագիրը ուժի մեջ է մտնում այդ օրվանից և գրասենյակի ամսական 50000 դրամ վարձավճարը հաշվարկվում է նշված ժամկետից.

«Ճշմարիտ» ՍՊԸ-ն վարձավճարի յուրաքանչյուր վճարման դեպքում որպես հարկային գործակալ վարձատուից պետք է պահի (գանձի) և վարձատուի փոխարեն բյուջե փոխանցի եկամտահարկը: Այսինքն՝ յուրաքանչյուր ամսվա համար պահվող եկամտահարկը կազմում է 5000 դրամ (50000x10%) և վարձատուին վճարման ենթակա գումարը՝ 45000 դրամ.

Հաշվի առնելով նշված հանգամանքը և պայմանագրով նախատեսված վարձավճարը ամսվա սկզբին վճարելու պարտավորությունը, «Ճշմարիտ» ՍՊԸ-ն 2008թ. նոյեմբերի 2-ին վարձատուին միանգամից վճարում է 90000 դրամ նոյեմբեր և դեկտեմբեր ամիսների համար:

Կազմել տրված ընթացիկ կանխավճարների հաշվապահական ձևակերպումը

Վարձակալված տարածքի համար վարձակալը և վարձատուն նոյեմբեր-դեկտեմբեր ամիսների համար կազմում են վարձակալության ակտ.

Ակտ N 1

Անշարժ գույքի վարձակալության

Ք Երևան

30 Դեկտեմբեր 2008 թ.

ՀՀ քաղաքացի Սուրեն Գևորգյանը (որպես վարձատու), մի կողմից և «Ճշմարիտ» ՍՊԸ-ն ի դեմս տնօրեն Աշոտ Գրիգորյանի (որպես Վարձակալ), մյուս կողմից, համաձայն կողմերի միջև հոկտեմբերի 18-ին կնքված անշարժ գույքի վարձակալության պայմանագրի, կազմեցին սույն ակտը հետևյալի մասին.

Սուրեն Գևորգյանի ոչ բնակելի տարածքը (հասցե՝ Կոմիտասի պողոտա, 2 շենք, 4 բն, գրանցման վկայական՝ թիվ xxxxxx) «Ճշմարիտ» ՍՊԸ-ի կողմից վարձակալությանը օգտագործվել է 2008 թ. նոյեմբեր, դեկտեմբեր ամիսներին, որի համար վերոհիշյալ պայմանագրի կողմերը առարկություններ չունեն:

Համաձայն սույն ակտի՝ վարձակալության դիմաց Վարձակալը Վարձատուին պետք է վճարի հետևյալ գումարները.

Ամիս	Ամսական վարձավճարի չափը	Պահված եկամտահարկի գումարը	Վճարման ենթակա գումարը (2-3)
1	2	3	4
Նոյեմբեր 2008	50 000	5 000	45 000
Դեկտեմբեր 2008	50 000	5 000	45 000
Ընդամենը IV եռամսյակի համար ենթակա է վճարման ԻճՆՍՈՆ հազար 33 դրամ			

Վարձատու՝

Վարձակալ՝

անձնագիր՝ XX XXXXXX, տրված 000-ի կողմից XX XXX XXXX թ Երեվան, Կոմիտասի պողոտա, շենք 2, բն 4

«Ճշմարիտ» ՍՊԸ հ/հ15100-02849510100 ԱրարատԲանկ ԲԲԸ
ՀՎՀՀ 01244689

Տնօրեն՝

Սուրեն Գևորգյան

Աշոտ Գրիգորյան

30 12 2008

30 12 2008

Նոյեմբերի 30-ին և դեկտեմբերի 30-ին համապատասխանաբար հաշվեգրվում և փոխանցվում են նոյեմբեր և դեկտեմբեր ամիսների վարձավճարի գծով եկամտահարկի գումարները.

Կազմել նոյեմբերի 30-ի համապատասխան հաշվապահական ձևակերպումները, որոնք կրկնվում են նաև դեկտեմբերի 30-ին.

ա) նոյեմբեր ամսվա վարձավճարի գծով ծախսումների ձևակերպում,

բ) վարձավճարի գծով նոյեմբեր ամսին ֆիզիկական անձին վճարված եկամուտներից պահված (գանձված) եկամտահարկի ձևակերպում,

գ) եկամտահարկի գծով պարտավորության մարում

Տրանսպորտային միջոցների վարձակալություն

Մարդատար ավտոմեքենայի համար վարձավճար է սահմանվել ամսական 25000 դրամ: Յուրաքանչյուր ամսվա համար պահվող եկամտահարկը կազմում է 2500 (25 000x10%) դրամ և վարձատուին վճարման ենթակա գումարը՝ 22 500 դրամ:

2008թ. դեկտեմբերի 30-ին կազմվում է չորրորդ եռամսյակի (նոյեմբեր, դեկտեմբեր ամիսների) տրանսպորտային միջոցի վարձակալության ակտ, կատարվում է վարձավճարների գծով պարտավորության մարում (կազմվում են դրամարկղի ելքի օրդերներ) և վճարվում է հաշվեգրված եկամտահարկի գումարը:

Նոյեմբերի 30-ին հաշվեգրվում է նոյեմբեր ամսվա վարձավճարի գծով ծախսումը և տրվում են հետևյալ հաշվապահական ձևակերպումները, որոնք դեկտեմբեր ամսվա համար կրկնվում են դեկտեմբերի 30-ին.

ա) վարձավճարի գծով ծախսումների ձևակերպում,

բ) վարձավճարի գծով ֆիզիկական անձին վճարված եկամուտներից պահված եկամտահարկի ձևակերպում:

Դեկտեմբերի 30-ին մարվում է նոյեմբեր, դեկտեմբեր ամիսների վարձավճարի գծով պարտավորությունը և հաշվարկային հաշվից փոխանցվում է դրամ վերաբերվող եկամտահարկը:

Կազմել համապատասխան հաշվապահական ձևակերպումները

ա) նոյեմբեր, դեկտեմբեր ամիսների վարձավճարների գծով պարտավորության մարում,

բ) եկամտահարկի գծով պարտավորության մարում:

14. Հիմնական միջոցների վրա կատարվող ընթացիկ ծախսերը

Դեկտեմբեր ամսին փչանում է ընկերության համակարգիչներից մեկը: Հրավիրվում է համակարգչային տեխնիկայի մասնագետ, որը պարզում է, որ համակարգչի հարթ սկավառակն աշխատացնող սարքը փչացել է և վերանորոգման ենթակա չէ, այլ անհրաժեշտ է փոխարինել նորով:

Համակարգչի համար կազմվում է հիմնական միջոցի թերությունների բացահայտման ակտ, որտեղ արձանագրվում է թերությունը:

Ընկերությունը 2008թ. դեկտեմբերի 15-ին շուկայից (գնման ակտով) կանխիկ դրամով ձեռք է բերում հարթ սկավառակն աշխատացնող սարք:

Շուկայում ֆիզիկական անձին վճարվել է 16 020 (18 000 – 18 000 x 11%) դրամ:

Շուկայից ձեռք բերված պահեստամասի գծով ֆիզիկական անձին վճարված եկամտից «պահվում (գանձվում)» է 11% եկամտահարկ՝ 1 980 (18 000 x 11%) դրամ գումարով:

Տրվում են հետևյալ հաշվապահական ձևակերպումները.

ա) դրամարկղից հաշվետու անձին առհաշիվ գումարի վճարում,

բ) հաշվետու անձի միջոցով պահեստամասերի ձեռք բերում,

գ) շուկայում գնված պահեստամասերի ձեռք բերման համար հաշվեգրված եկամտահարկի գումարի ձևակերպում,

դ) հաշվարկային հաշվից եկամտահարկի գծով պարտավորության մարում:

Համակարգչային տեխնիկայի մասնագետը՝ անհատ ձեռնարկատիրոջ հետ կնքում է նշված սարքի տեղադրման պայմանագիր, ըստ որի, այդ ծառայության սակագինը կազմում է 8000 դրամ: Աշխատանքներն ավարտվում են 2008թ. դեկտեմբերի 20-ին և համակարգչային տեխնիկայի մասնագետը կատարողական ակտով հանձնում է աշխատանքը, որի դիմաց նույն օրը դրամարկղից կատարվում է վճարում:

Հաշվապահական ձևակերպումներ տալու համար անհրաժեշտ է գնահատել, թե հիմնական միջոցների վրա կատարված ծախսումները կապիտալ բնույթի են, թե՞ ընթացիկ: Օրինակից երևում է, որ համակարգչի վրա կատարված 26 000 (18000 + 8000) դրամ գումարով ծախսումները՝ ընթացիկ ծախսումներ են: Կազմել հետևյալ հաշվապահական ձևակերպումները.

ա) հիմնական միջոցների վրա կատարված ընթացիկ նորոգման ծախսումների ձևակերպում,

բ) դրամարկղից կրեդիտորական պարտքի մարում:

15. Հիմնական միջոցների մաշվածությունը

«Ճշմարիտ» ՍՊԸ-ի հաշվապահական հաշվառման քաղաքականությամբ (ֆինանսական հաշվառման նպատակով) սահմանվել է հիմնական միջոցների մաշվածության հաշվարկման գծային մեթոդը և օգտակար ծառայության հետևյալ ժամկետները - համակարգչային տեխնիկա՝ 1 տարի,

- արտադրական, տնտեսական գույք՝ 5 տարի:

Քաղաքականությամբ սահմանվել է նաև, որ հարկման նպատակով ընդունվում են «Շահութահարկի մասին» ՀՀ օրենքով սահմանված հիմնական միջոցների ամորտիզացիոն նվազագույն ժամկետները:

Հիմնական միջոցների մաշվածության հաշվարկման մեթոդի, մաշվածության գումարի վերաբերյալ և այլ տեղեկությունները լրացվում են «Հիմնական միջոցների հաշվառման գույքային քարտում» (ձև ՀՄ-9):

«Ճշմարիտ» ՍՊԸ-ի հիմնական միջոցները ձեռք են բերվել նույնբեր ամսվա ընթացքում և շահագործման հանձնվել: Քանի որ մաշվածության հաշվարկը ամսական է, ապա մաշվածությունը հաշվարկվում է միայն դեկտեմբեր ամսվա համար: Ձևակերպել հաշվարկված հիմնական միջոցների մաշվածությունը:

16. Եկամուտների հաշվեգրումը

Գործունեության արդյունքում 2008թ. դեկտեմբերի 29-ին «Ճշմարիտ» ՍՊԸ-ն երկու հաճախորդներից յուրաքանչյուրին մատուցված ծառայությունների դիմաց ներկայացնում է հաշվարկային փաստաթուղթ (կատարողական ակտ):

Առաջին հաճախորդին՝ 2 400 000 դրամ,

ներառյալ ԱԱՀ-ն՝ 400 000 դրամ:

Երկրորդ հաճախորդին՝ 650 000 դրամ,

ներառյալ ԱԱՀ-ն՝ 108 333 դրամ:

Հաճախորդները ստորագրում են ծառայության մատուցման հաշիվները և ընդունում մատուցված ծառայությունը:

Նշված երկու գործարքների արդյունքում «Ճշմարիտ» ՍՊԸ-ի հասույթի գումարը կազմում է 2 541 667 (2 000 000+541 667) դրամ, ԱԱՀ՝ 508 333 (400 000 +108 333) դրամ և վաճառքների գծով դեբիտորական պարտքը 3 050 000 (2 400 000+650 000) դրամ:

Կազմել գործարքի գծով դեբիտորական պարտքի առաջացման, հասույթի ճանաչման և ԱԱՀ-ի գծով պարտավորությունների առաջացման գործառնությունների հաշվապահական ձևակերպումները:

17. Դեբիտորական պարտքերի մարումը

Առաջին հաճախորդի գծով ձևավորված դեբիտորական պարտքից 1 600 000 դրամը հաշվանցվում է նրա կողմից տրված կանխավճարի հաշվին, իսկ պարտավորության մնացած գումարը վերջինս 2008թ. դեկտեմբերի 29-ին փոխանցում է «Ճշմարիտ» ՍՊԸ-ի հաշվարկային հաշիվ: Կազմել համապատասխան հաշվապահական ձևակերպումները:

Երկրորդ հաճախորդը հաշվարկային փաստաթուղթը ստանալու օրը կանխիկ դրամով վճարում է իր պարտքի դիմաց 400000 դրամը և պայմանավորվում է «Ճշմարիտ» ՍՊԸ-ի տնօրենի հետ, որ մնացած 250000 դրամը կվճարի հաջորդ ամսվա ընթացքում: Կազմել համապատասխան հաշվապահական ձևակերպումը:

Տնօրենի առհաշիվ գումարների ծախսման վերաբերյալ հաշվետվությամբ պարզվում է, որ նա ընկերությանը պարտք է 129600 դրամ, որն էլ մուտքագրվում է դրամարկղ: Ձևակերպել առհաշիվ ստացված կանխիկ դրամի չծախսված մասի մուտքագրում դրամարկղ:

18. Ավելացված արժեքի հարկի գծով պարտավորության հաշվարկը

Հաշվետու ժամանակաշրջանի (օրինակում 4-րդ եռամսյակի) վերջում կատարվում է ավելացված արժեքի հարկի գծով պարտավորության հաշվարկ: «Ճշմարիտ»

ՍՊԸ-ի 2008թ 4-րդ եռամսյակում 20% դրույքաչափով հարկվող գործարքների նկատմամբ հաշվարկված ԱԱՀ-ն կազմում է 508 333 դրամ, որից հաշվանցվում են մատակարարների հարկային հաշիվներում առանձնացված ԱԱՀ-ի գումարները: Կազմել հաշվանցման ենթակա ԱԱՀ-ի հաշվապահական ձևակերպումը.

Հաշվանցման ձևակերպումից հետո ԱԱՀ-ի գծով 524 «Կարճաժամկետ կրեդիտորական պարտք բյուջեին» հաշվի մնացորդը ենթակա է բյուջե վճարման մինչև հաշվետու ժամանակաշրջանին հաջորդող ամսվա 20-ը

19. Հաշվետու ժամանակաշրջանի ֆինանսական արդյունքների ամփոփումը

Հաշվետու ժամանակաշրջանի վերջում կառավարչական հաշվառման հաշիվներում կուտակված ծախսումները բաշխվում են ծառայության ինքնարժեքի և վարչական ծախսերի, հաշվապահական հաշվառման քաղաքականությամբ սահմանված համապատասխանաբար՝ 85 % և 15 % համամասնությամբ:

Սկզբում 813 «Անուղղակի արտադրական ծախսումներ» հաշվում կուտակված ծախսումների գումարը վերագրվում է 811 «Հիմնական արտադրություն» հաշվին Ձևակերպել անուղղակի արտադրական ծախսումների վերագրումը հիմնական արտադրությանը:

Այնուհետև 811 «Հիմնական արտադրություն» հաշվում կուտակված ծախսումները բաշխվում են ծառայության ինքնարժեքի և վարչական ծախսերի միջև Ձևակերպել հիմնական արտադրության հաշվում կուտակված ծախսումների վերագրումը ծառայության ինքնարժեքին և վարչական ծախսերին.

Կազմել հետևյալ հաշվապահական ձևակերպումները

ա) եկամուտների վերագրումը ֆինանսական արդյունքին,

բ) ծախսերի վերագրումը ֆինանսական արդյունքին,

գ) շահույթից շահութահարկի վճարման գծով պարտավորության առաջացումը,

դ) շահութահարկի գծով ծախսի վերագրումը ֆինանսական արդյունքին,

ե) հաշվետու տարվա զուտ շահույթի հաշվարկը և ձևակերպումը:

20. Ֆինանսական հաշվետվությունների կազմումը

Կազմել ֆինանսական հաշվետվությունների ձև 1-ը՝ «Հաշվապահական հաշվեկշիռ» և ձև 2-ը՝ «Ֆինանսական արդյունքների մասին»: Այդ նպատակով պահանջվում է կատարել գրանցումներ սինթետիկ հաշիվներում և կազմել շրջանառության տեղեկագիր:

Հ Ա Վ Ե Լ Վ Ա Օ 1
ՆԵՐԿԱ ԱՐԺԵՔԻ ԱՂՅՈՒՍԱԿ

1\$ դիսկոնտավորված արժեքը հաշվարկվում է հետևյալ բանաձևով $\frac{1}{(1+r)^n}$ կամ $(1+r)^{-n}$
որտեղ r - դիսկոնտի դրույքն է, n – մինչև վճարումն ընկած ժամանաշրջանների քանակը

Ժամանակաշրջանը

Դիսկոնտի դրույքը

n	1%	2%	3%	4%	5%	6%	7%	8%	9%	10%
1	0.990	0.980	0.971	0.961	0.951	0.942	0.933	0.923	0.914	0.905
2		0	1	2	2	0.943	0.935	0.926	0.917	0.909
3		1	3	5	7	0.890	0.873	0.857	0.842	0.826
4		2	5	9	4	0.840	0.816	0.794	0.772	0.751
5		4	8	5	3	0.792	0.763	0.735	0.708	0.683
6		6	3	2	4	0.747	0.713	0.681	0.650	0.621
7		8	7	0	6	0.705	0.666	0.630	0.596	0.564
8		1	3	0	1	0.665	0.623	0.583	0.547	0.513
9		3	9	1	7	0.627	0.582	0.540	0.502	0.467
10		7	6	3	5	0.592	0.544	0.500	0.460	0.424
11		0	4	6	4	0.558	0.508	0.463	0.422	0.386
12		4	2	0	5	0.527	0.475	0.429	0.388	0.350
13		8	1	5	7	0.497	0.444	0.397	0.356	0.319
14		3	1	1	0	0.469	0.415	0.368	0.326	0.290
15		8	1	7	5	0.442	0.388	0.340	0.299	0.263
		3	2	5	1	0.417	0.362	0.315	0.275	0.239
	11%	12%	13%	14%	15%	16%	17%	18%	19%	20%
1	0.901	0.893	0.885	0.877	0.870	0.862	0.855	0.847	0.840	0.833
2	0.812	0.797	0.783	0.769	0.756	0.743	0.731	0.718	0.706	0.694
3	0.731	0.712	0.693	0.675	0.658	0.641	0.624	0.609	0.593	0.579
4	0.659	0.636	0.613	0.592	0.572	0.552	0.534	0.516	0.499	0.482
5	0.593	0.567	0.543	0.519	0.497	0.476	0.456	0.437	0.419	0.402

6	0.535	0.507	0.480	0.456	0.432	0.410	0.390	0.370	0.352	0.335
7	0.482	0.452	0.425	0.400	0.376	0.354	0.333	0.314	0.296	0.279
8	0.434	0.404	0.376	0.351	0.327	0.305	0.285	0.266	0.249	0.233
9	0.391	0.361	0.333	0.308	0.284	0.263	0.243	0.225	0.209	0.194
10	0.352	0.322	0.295	0.270	0.247	0.227	0.208	0.191	0.176	0.162
11	0.317	0.287	0.261	0.237	0.215	0.195	0.178	0.162	0.148	0.135
12	0.286	0.257	0.231	0.208	0.187	0.168	0.152	0.137	0.124	0.112
13	0.258	0.229	0.204	0.182	0.163	0.145	0.130	0.116	0.104	0.093
14	0.232	0.205	0.181	0.160	0.141	0.125	0.111	0.099	0.088	0.078
15	0.209	0.183	0.160	0.140	0.123	0.108	0.095	0.084	0.074	0.065

Հ Ա Վ Ե Լ Վ Ա Օ 2

ԱՆՈՒԻՏԵՏՆԵՐԻ ԱՂՅՈՒՄԱԿ

1\$ դիսկոնտավորված արժեքը հաշվարկվում է հետևյալ բանաձևով $\frac{1}{(1+r)^n}$ կամ

$(1+r)^{-n}$

որտեղ r- դիսկոնտի դրույքն է, n – մինչև վճարումն ընկած ժամանաշրջանների քանակը

Ժամանակաշրջանը

Դիսկոնտի դրույքը

n	1%	2%	3%	4%	5%	6%	7%	8%	9%	10%
1	0.990	0.980	0.971	0.962	0.952	0.943	0.934	0.926	0.917	0.909
2	1.970	1.942	1.913	1.886	1.859	1.833	1.808	1.783	1.759	1.736
3	2.941	2.884	2.829	2.775	2.722	2.673	2.624	2.577	2.532	2.488
4	3.902	3.808	3.717	3.630	3.546	3.465	3.387	3.312	3.240	3.170
5	4.853	4.711	4.580	4.452	4.327	4.212	4.100	3.993	3.891	3.793
6	5.795	5.600	5.417	5.076	4.917	4.767	4.623	4.483	4.348	4.215
7	6.728	6.472	6.230	6.002	5.788	5.582	5.398	5.206	5.038	4.868
8	7.652	7.325	7.020	6.733	6.463	6.210	5.971	5.747	5.535	5.333
9	8.566	8.162	7.786	7.435	7.108	6.802	6.515	6.247	5.999	5.757
10	9.471	8.983	8.530	8.111	7.722	7.360	7.024	6.710	6.418	6.145
11	10.37	9.878	9.253	8.760	8.306	7.887	7.499	7.139	6.800	6.499
12	11.26	10.588	9.954	9.385	8.866	8.384	7.943	7.536	7.161	6.814
13	12.13	11.355	10.63	9.986	9.394	8.853	8.358	7.904	7.487	7.103

14	13.00	12.1	11.30	10.56	9.89	9.295	8.745	8.244	7.78	7.36
		1			9				6	7
15	13.87	12.8	11.94	11.12	10.3	9.712	9.108	8.559	8.06	7.60
		5			8				1	6
	11%	12%	13%	14%	15%	16%	17%	18%	19%	20%
1	0.901	0.893	0.885	0.877	0.870	0.862	0.855	0.847	0.840	0.833
2	1.713	1.690	1.668	1.647	1.626	1.605	1.585	1.566	1.547	1.528
3	2.444	2.402	2.361	2.322	2.283	2.246	2.210	2.174	2.140	2.106
4	3.102	3.037	2.974	2.914	2.855	2.798	2.743	2.690	2.639	2.589
5	3.696	3.605	3.517	3.433	3.352	3.274	3.199	3.127	3.058	2.991
6	4.231	4.111	3.998	3.889	3.784	3.685	3.589	3.498	3.410	3.326
7	4.712	4.564	4.423	4.288	4.160	4.039	3.922	3.812	3.706	3.605
8	5.146	4.968	4.799	4.639	4.487	4.344	4.207	4.078	3.954	3.837
9	5.537	5.328	5.132	4.946	4.772	4.607	4.451	4.303	4.163	4.031
10	5.889	5.650	5.426	5.216	5.019	4.833	4.659	4.494	4.339	4.192
11	6.207	5.938	5.687	5.453	5.234	5.029	4.836	4.656	4.486	4.327
12	6.492	6.194	5.918	5.660	5.421	5.197	4.988	4.793	4.611	4.439
13	6.750	6.424	6.122	5.842	5.583	5.342	5.118	4.910	4.715	4.533
14	6.982	6.628	6.302	6.002	5.724	5.468	5.229	5.008	4.802	4.611
15	7.191	6.811	6.462	6.142	5.847	5.575	5.324	5.092	4.876	4.675

Գ Ր Ա Կ Ա Ն Ո Ւ Թ Յ Ո Ւ Ն

1. «ՀՀ օրենքը հաշվապահական հաշվառման մասին», Եր 2002թ
- 2 «ՀՀ հաշվապահական հաշվառման ստանդարտներ», Եր. 2001թ.
3. «Հաշվապահական հաշվառման ստանդարտների համառոտ ուղեցույց», Եր 2001թ
4. «Կազմակերպությունների ֆինանսատնտեսական գործունեության հաշվապահական հաշվառման հաշվային պլան», Եր 2001թ
- 5 «ՀՀ օրենքը աշխատանքի վարձատրության մասին», Եր 2001 թ.
- 6 «ՀՀ օրենքը բաժնետիրական ընկերությունների մասին», Եր 2001թ
7. Հրահանգ կազմակերպությունների տարեկան (ամբողջ փաթեթով միջանկյալ) ֆինանսական հաշվետվությունների ձևերի լրացման, Եր 2002 թ.
- 8 «ՀՀ գերատեսչական նորմատիվ ակտերի տեղեկագիր» , 2000-2009 թ թ
- 9 Ժորժետ Թ. Բեյլի, Կեն Ուայլդ, «Ֆինանսական հաշվետվությունների կազմումը համաձայն միջազգային ստանդարտների». Եր – 2000թ
- 10 Կարագյան Կ Պ «Հաշվապահական հաշվառման տեսություն», Եր -1982 թ
11. Համբարձումյան Ռ., Սարգսյան Ա և ուրիշ «Ֆինանսական հաշվառում»
- 12 Հաշվապահական հաշվառում ուսումնական ձեռնարկ Ա Սարգսյանի խմբագրությանը Եր. 2008թ.
- 13 ճուղուրյան Ա Գ., Եղիկյան Ա Թ «Կառավարչական հաշվառման հիմունքներ» Եր. 2003թ
14. ճուղուրյան Ա Գ «Կառավարչական հաշվառում» Եր. 2005թ
- 15 ճուղուրյան Ա Գ. «Հաշվապահական հաշվառում» Եր. 2007թ

16. Գուրգուրյան Ա Գ., Հակոբյան Ա Ա. «Հարկային հաշվապահություն և պլանավորում», Եր.- 2001թ
- 17 Գուրգուրյան Ա.Գ , Հակոբյան Ա Ա , «Հաշվապահություն և վերլուծություն», Եր 2003թ.
18. Մարջանյան Ա. Հաշվապահական հաշվառման խնդիրների ժողովածու. Եր 2003թ.
19. Մելիքյան Հ. «Հարկային օրենսդրություն», Եր.2003թ
20. Մովսիսյան Թ. «հաշվապահական հաշվառման ձեռնարկ», գիրք 1,2,3 Եր – 2001 թ.
- 21 Չիլինգարյան Ա. «Հայաստանի հարկային համակարգը», Եր -2000 թ
- 22 Սարգսյան Ա , Սարգսյան ԱԼ , Մարջանյան Ա. «Ֆինանսական հաշվառման հիմունքներ», Եր - 1999թ
23. Սարգսյան Ա., Մարջանյան Ա. «Ոչ ընթացիկ ակտիվների հաշվառումը», Եր 2003թ
- 24 Вахрушина М А. „Бухгалтерский управленческий учет" М , 2002 г
- 25 Волкова О.Н. „Управленческий учет" М , 2005 г
- 26 Дж.К Ван Хорн „Основы управления финансами”, М -1999 г
- 27 Ивашкевич В Б „ Учет и анализ дебиторских и кредиторских задолженностей”, М 2002г.
- 28 Ивашкевич В Б „Бухгалтерский управленческий учет" М , 2003 г
29. Б Нидлз, Х Андерсон, Д Колдуелл, „Приинципы бухгалтерского учета” М- 1999г
- 30 Качалин В В , „Финансовый учет и отчетность в соответствии со стандартами GAAP”, М - 1998г
31. Палий В Ф. „Международные стандарты финансовой отчетности”, М 2007 г
- 32 Палий В Ф „Современный бухгалтерский учет" М 2003г
- 33 Стуков С.А , Стуков Л С , „Международная стандартизация и гармонизация учета и отчетности”, М.- 1999г.
34. „Управленческий учет" Уч пособие под ред. А Д Шеремета Москва 1999г.



Հրատարակիչ «Բավիղ» ՍՊԸ
Տպագրված է «Բավիղ» ՍՊԸ տպարանում
Թուղթը՝ 70 գր. օֆսեթ 70/100, 1/16 15 տպագրական մանուկ
Տպաքանակը՝ 100 օրինակ

Հասցե՝ ք. Երևան, Ուլնեցու 68,
հեռ.՝ (010) 20-80-85, (091) 41-25-06
www.bavigh.am E-mail: bavigh@mail.ru